

Կ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՈՐՎԱԳԾԵՐ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Г. МЕЛИКСЕТЯН, О. С. КАРАПЕТЯН

О Ч Е Р К И  
П О И С Т О Р И И  
С О В Е Т С К О Й А Р М Е Н И И

**ВЫПУСК ВТОРОЙ**

**(1926—1934)**

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Գ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Հ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

9(47.925) 2  
ՈԼ-95

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 1958 թ.

A 11  
34951


ՈՒՐՎԱԳԾԵՐ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

(1926—1934)




Տպագրվում է Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:



## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության  
ինստիտուտը 1954 թվականին հրատարակել է «Ուրվագծեր Սովե-  
տական Հայաստանի պատմության» կոլեկտիվ աշխատության  
առաջին պրակը (1—3-րդ գլուխները), որն ընդգրկում է 1917—  
1925 թվականների պատմությունը:

Սույն գիրքը հանդիսանում է «Ուրվագծեր»-ի երկրորդ պրակը,  
որն ընդգրկում է Սովետական Հայաստանի 1926—1934 թվական-  
ների պատմությունը: Զորրորդ գլուխը գրել է պատմական գիտու-  
թյունների թեկնածու Վ. Գ. Մելիքսեբյանը, հինգերորդ գլուխը՝ պատ-  
մական գիտությունների թեկնածու Հ. Ս. Կարապետյանը:



Գ Լ Ո Ւ Ե Զ Ո Ր Ր Ո Ր Գ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ  
(1926—1929)

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարության մեր հրկրի աշխատավորության անձնվեր աշխատանքի շնորհիվ հաջողության միջոցով ՍՍՌՄ-ի, այդ թվում նաև նրա անբաժանելի մասը կազմող Հայկական ՍՍՌ-ի, ժողովրդական տնտեսության վերականգնումը:

1925 թ. դեկտեմբերին ՀԿ(բ) պարտիայի 4-րդ համագումարը ամփոփեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի արդյունքները և նշեց «...ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը: Տնտեսության բարձրացումը առաջադրում է մեզ սրահացնելու ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարգացումը. ներկայումս կուսակցության համար իր ամբողջությամբ դրված է այն խնդիրը, որ ավելացվեն մեր տնտեսության մեջ սոցիալիստական էլեմենտները ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, որի համար համագումարը առաջարկում է ձեռք առնել մի շարք տնտեսական ձեռնարկումներ»<sup>1</sup>:

Սակայն վերականգնման շրջանի տարիներին ձեռք բերված հաջողությունները բացարձակապես անբավարար էին Սովետական Միությունում սոցիալիզմի կառուցման հաստատուն բազա ստեղծելու համար:

<sup>1</sup> ՄՄԿԳ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 1, թ. 336:

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հիմնադիր Վլադիմիր Իլյիչ Լենինը ուրվագծել էր Սովետական Միության սոցիալիստական ինդուստրացման, հատկապես ծանր ինդուստրիայի զարգացման ծրագիրը: «Ծանր ինդուստրիան,— գրել է Վ. Ի. Լենինը,— սոցիալիզմի հիմնական բաղան է»<sup>1</sup>:

Խոշոր արդյունաբերության, ծանր ինդուստրիայի հզոր զարգացումը, նշում էր Վ. Ի. Լենինը, մեր երկրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական միջոցն է: Միմիայն նա կարող էր վերակառուցել նաև գյուղատնտեսությունը:

Վիթխարի նշանակություն ունի ծանր ինդուստրիան երկրի տեխնիկա-տնտեսական անկախությունը ասպահովելու և մեր Հայրենիքի հզոր պաշտպանությունն ասպահովելու գործում: Առանց ծանր արդյունաբերության հուժկու զարգացման «մենք չենք կարող կառուցել ոչ մի արդյունաբերություն,— գրել է Վ. Ի. Լենինը,— իսկ առանց ծանր արդյունաբերության մենք ընդհանրապես կկործանվինք, որպես ինքնուրույն երկիր»<sup>2</sup>:

Հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը բաղմակողմանիորեն հիմնավորել է նաև ծանր արդյունաբերությունն արագ տեմպերով զարգացնելու անհրաժեշտությունը: Լենինը դիտականորեն հիմնավորել է մեր հայրենիքի ինդուստրացման համար սոցիալիստական կուսակուսման ձեռք բերելու ուղիները, նա առանձնապես ընդգծում էր խնայողության խստագույն ռեժիմի պահպանման հսկայական նշանակությունը:

Վ. Ի. Լենինը, իր բաղմամբիվ ելույթներում և աշխատություններում մշտական նշանակություն է տվել Սովետական Միության էլեկտրիֆիկացիայի բուռն զարգացմանը: «Կոմունիզմը— դա Սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»<sup>3</sup>— ընդգծում էր Լենինը: Սովետական Միության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի էլեկտրիֆիկացումը կսանձի կոմունիստական հասարակարգի հիմքերի վերջնական հաղթանակը: «Էլեկտրիֆիկացիան կվերածնի Ռուսաստանը: Էլեկտրիֆիկացիան սովետական կարգի հիման վրա կստեղծի մեր երկրում կոմունիզմի հիմքերի, առանց շահագործողների, առանց կապիտալիստների, առանց կալվածատերերի, առանց փաճառականների կոլտուրական կյանքի հիմունքների վերջնական հաղթանակը»<sup>4</sup>:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 437:

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 506:

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 654:

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 468:

ՀամԿ(բ) պարտիայի XIV համագումարը (1925 թ. դեկտեմբեր) Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա մանրամասն ուրվագծեց մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը: Պատմական ամենակարճ ժամանակամիջոցում ոչ միայն վերացվելու էր ՍՍՌՄ տնտեսական հետաձեռնացությունը, այլև ինդուստրիալ ադյունաբերության վիթխարի շինարարություն էր կատարվելու այնպիսի մասշտաբներով, որ Սովետական Միությունը մեքենաներ և մեքենայական սարքավորում ներմուծող երկրից դառնար մեքենաներ և մեքենայական սարքավորում արտադրող երկիր:

Մշակելով երկրի սոցիալիստական ինդուստրացման քաղաքականությունը, Կոմունիստական պարտիան, ղեկավարվելով լենինյան ազդեցին քաղաքականության սկզբունքներով, Սովետական Միության բոլոր ազգերին ու ժողովուրդներին համատեղ պայքարի դուրս բերեց սոցիալիզմի կառուցման համար: Պարտիան ծանրությամբ կենտրոնը փոխադրեց մեր երկրի ազգերի իսկական հավասարությունն ապահովելու վրա՝ անցյալում հետամնաց ժողովուրդներին առավել զարգացած ռեսուրսիկաների կողմից բազմակողմանի օգնություն ցույց տալու միջոցով: Գործադրվում էր բոլոր նշարավոր միջոցները, որպեսզի հասնեինք այն բանին, որ ադյունաբերությունը զարգանա յուրաքանչյուր միութենական ազգային բնագավառիկայում:

Սովետական Միության ծանր արդյունաբերության զարգացումը, տեղի էր ունենալու մեր սեփական միջոցներով, ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների միահամուռ ու յարմած աշխատանքով:

Մեր Հայրենիքի ինդուստրացումը պիտի ընթանա արժանապատիվ շուտաջ ծանր արդյունաբերության առավելագույն զարգացման հանապարհով, արտադրամիջոցների արտադրության զարգացման ուղիով, մետալուրգիայի, վառելիքի, մեքենաշինության զարգացման աննստիչ թաղանթով: Միայն այդ պայմաններում էր հնարավոր ապահովելու սոցիալիզմի նշուխտ-տեխնիկական բազան, մեր Հայրենիքի հզոր պաշտպանությունը, հասնելու Սովետական Միության տնտեսական անկախությանը, պաշտպանելու նրան իմպերիալիստական պետություններից, որոնք փորձում էին մեր Հայրենիքը դարձնել կիսադաղութային կցորդ:

Որպեսզի մեր երկրի ինդուստրացումը հզոր թափով առաջ տարվեր, հարկավոր էր ոչ միայն վերակառուցել հին գործարաններն ու ֆաբրիկաները, այլև մեծ մասշտաբներով կառուցել նոր, խոշոր մեքենաշինական, դաղգահաշինական, ավտոմոբիլային,

տրակատրային գործարաններ, ստեղծել քիմիական արդյունաբերություն, բոլոր հնարավոր միջոցներով վարգաքցնել էներգետիկայի, մետաղի, նավթի, ածուխի արտադրությունը: Իսկ այդպիսի ծավալուն արդյունաբերության անդադար զարգացման համար պահանջվում էր գտնել հսկայական գումարի նյութական, ֆինանսական միջոցներ: Կոմունիստական պարտիան, Սովետական պետությունը գտան այդ միջոցները:

Հայտնի է, որ կապիտալիստական երկրների ինդուստրացման ուղիները մեզ համար բացարձակապես խորթ էին ու անհամատեղելի, քանի որ դրանք դադուծային ժողովուրդների ամենագիշատիչ շահագործման ու թալանի, ռազմական կոնտրիբուցիաների և ստրկազնոդ նոր փոխառությունների ուղիներ էին: Բացի այդ, կապիտալիստական երկրներում ինդուստրացումը սովորաբար սկսում էին թիֆև արդյունաբերության զարգացումով, քանի որ թիֆև արդյունաբերության զարգացումը մեծ ներդրումներ չի պահանջում և ավելի արդյունք է բերում: Միայն երկարատև ժամանակամիջոցից հետո, երբ թիֆև արդյունաբերությունից ստացված եկամուտները կուտակվում են մեծ չափերով, միայն այն ժամանակ սկսվում է այդ ազատ ներդրումների օգտագործումը ծանր ինդուստրիայի համար:

Ինդուստրացման կապիտալիստական մեթոդը Սովետների երկրի համար բոլորովին ընդունելի չէր, քանի որ դա երկարատև ուղի էր, ձգվում էր տասնամյակներ. դա սոցիալիզմ կառուցող երկրի համար կործանարար ուղի էր:

Այսպիսով, ՍՍՌՄ-ում ինդուստրացման զարգացումը ղեաց իր ճանապարհով. մեր երկրի միլիոնավոր աշխատավորներ, սոցիալիստական ինդուստրացման գործում կարող էին հույսը դնել միայն իրենց ուժերի վրա, առանց կապիտալիստական երկրների ստրկազնոդ միջոցների, օտարերկրյա կապիտալ ներդրումների:

Մեր Հայրենիքի հզոր ինդուստրացման համար սեփական միջոցներ են հանդիսանում ամենից առաջ ազգայնացված արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, բանկերի կուտակումները, գյուղատնտեսությունից ստացված միջոցները: Այդ կուտակումները գործադրվեցին ինդուստրացման հետագա ընդլայնման համար: Սովետական Միության բազմամիլիոն աշխատավոր գյուղացիությունը, որը ղեռ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից ազատվել էր նախկինում հողի համար վճարվող հսկայական գումարների հասնող վարձակալական հարկերից, օգնեց իր Բանվո-

րա-Գյուղացիական պետութեանը կառուցելու նոր, հզոր արդյունաբերութեան, մանավանդ որ ինքն էլ շահագրգռված էր տրակտորներ և ժամանակակից այլ գյուղատնտեսական մեքենաներ ստանալու համար: Այս արդյունքների շնորհիվ, տնտեսական խիստ ռեժիմի անցկացման միջոցով, տարեց տարի ավելի ղգալի միջոցներ էին ներդրվում կապիտալ շինարարութեան՝ երկրի ինդուստրիալ կառուցումների համար:

«Պայքար մեր Հայրենիքի հզոր ինդուստրացման համար» լուրուհը դարձավ երկրի ղարգացման օրենք և այն խոր կերպով մշտավ սովետական մտղղկանց ղիտակցութեան մէջ: ՍՍՄՄ-ի աշխատավորները որոշեցին պետութեանը ֲիոխարինարար տալ իրենց անձնական խնայողութեանները այդ մեծ ժողովրդական, տնտեսական-քաղաքական խնդրի արագ լուծման համար: 1927 թ. հոկտեմբերին առաջին անգամ սկսվեց ինդուստրացման ֲիոխառութեան քաժանորդագրութեանը, որը թողարկված էր 200 միլիոն ռուբլու ղաֲիով:

1926 թվականից Սովետական Միութեանը թեակոխեց սոցիալիստական ինդուստրացման էտապը: Այդ նույն տարում Սովետական Միութեան ինդուստրալ արդյունաբերութեան արտադրանքը նախորդ տարվա համեմատութեամբ ավելացավ 50 տոկոսով: Սուանձնակի ուշադրութեան էր դարձվում մետաղաձուլութեան ղարգացման վրա: Եթե 1924 թ. մետաղաձուլութեան արտադրանքը կիսով ղաֲի ուղակա էր նախապատերաղմյանից, ապա 1926 — 1927 տնտեսական տարում այն արդեն ղերաղանցում էր մետաղի արդյունաբերութեան ու վերամշակման նախապատերաղմյան մակարղակը:

Ակներե էր դառնում այն պատմական իրողութեանը, որ սոցիալիստական արտադրութեան ղարգացման նպատակը մեր հասարակութեան նյութական ու կուլտուրական պահանջմունքների առավելադույն բավարարման ապահովումն է, իսկ սոցիալիստական արտադրութեան անընդհատ աճը (հզոր սոցիալիստական ինդուստրիալի բաղալի վրա) այդ նպատակին հասնելու ամենահիմնական և վճարական միջոցը:

Սոցիալիստական ինդուստրիալի ղարգացումը ղէր սահմանաֲիակվում միայն արդյունաբերական կենտրոնական վալրերով: Ինդուստրիալի ղարգացումը պետք է ընդղրկեր Սովետական Միութեան բոլոր աղղալին ղեսպղուրլիկաները, օկրուղներն ու մարղերը:

Համղ(բ) պարտիալի XIV համաղումարում կենտղմի հաղվետվութեան մեջ ասված է՝ «Եթե ղարձակներ տնտեսական ղինարա-

րության գծով տեղերում թաքնված ուժերը, եթե ամեն կերպ շաջակցենք տեղական արդյունաբերութեանը՝ սկսած շրջաններից ու օկրուգներից, եթե շարձակենք այդ բոլոր ուժերը, մենք անկարող կլինենք հասնելու մեր երկրի տնտեսական շինարարութեան այն ընդհանուր վերելքին, որի մասին խոսում էր Լենինը: Առանց դրա, առանց կենտրոնի շահերն ու օգուտները տեղերի շահերի ու օգուտների հետ զոդելու, մենք չենք կարող լսածել շինարարական նախաձեռնութիւնը ծավալելու պրոբլեմը, երկրի ընդհանուր տնտեսական վերելքի պրոբլեմը, Երկրի ամենաարագ ինդուստրացման պրոբլեմը»<sup>1</sup>:

Չարդացման տարրեր մակարդակի վրա կանգնած ազգային սեսպուրլիկաները, ձեռնամուխ եղան մեր երկրի սոցիալիստական ինդուստրիայի կառուցմանը:

Պարտիայի XIV համագումարից հետո ՍՍՌՄ ողջ աշխատավորութիւնը պայքար ծավալեց մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման վերելքը պարտիայի դիրեկտիվները կենսագործելու համար:

Սոցիալիստական ինդուստրիայի զարգացումը մեծ ծավալով առաջ էր գնում ողջ երկրով մեկ: Կառուցվում էին նորանոր խոշոր գոմէնշան հնոցներ, հիդրոէլեկտրակայաններ, շահագործման Լին սերվում նոր ամիսահորեր, ընդարձակվում էր նաւթարդյունաբերութիւնը, հիւմք էր դրվում մեքենաշինական, ավտոմոբիլային, արակատրային գործարաններին, կառուցվում էին երկաթուղային նոր մալիստրալներ:

Սոցիալիստական ինդուստրացումը մեծ թափ ընդունեց նաև ազգային սեսպուրլիկաներում, որոնց թվում ճաև Սովետական Հայաստանում:

Սովետական Հայաստանի աշխատավորութիւնը, ՍՍՌՄ ժողովուրդների միասնական ընտանիքում, աշխատանքային նոր եռանդով լծվեց սոցիալիստական ինդուստրիայի կառուցմանը:

Մեծ շափով ավելանում էին սոցիալիստական շինարարութեան մեջ կապիտալ ներդրումները: Սովետական Հայաստանի ժողովրդական սնանութեան մեջ կատարված կապիտալ ներդրումների գումարը, եթե 1921—1925 թթ. կազմել էր 25,22 միլիոն ռուբլի<sup>2</sup>,

<sup>1</sup> Ի. Վ. Ս ա ա լ ի ն, Երկեր, հատ. 7, էջ 348:

<sup>2</sup> „Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода“. Ереван, 1926, стр. 39.

ապա միայն 1925—1926 տնտեսական տարում կազմեց մոտ 11 միլիոն ռուբլի: Այդ գումարը երկու և կես անգամ դերազանցում էր նախորդ յուրաքանչյուր տարվա ներդրած գումարից: Հաջորդ 1926—1927 տնտեսական տարում ներդրումները կազմեցին 18,5 միլիոն ռուբլի, 1927—1928 տնտեսական տարում 24,6 միլիոն ռուբլի, իսկ եթե վերջենք մինչ առաջին հնդամյակին նախորդող 8 տարին (ներառյալ 1927—28), կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում կազմեցին 73,1 միլիոն ռուբլի<sup>1</sup>:

Եթե 1921—1925 թթ. ներդրումների զգալի մասը՝ ավելի քան 40%, հատկացվում էր գյուղատնտեսությանը, իսկ արդյունաբերության և էներգետիկ տնտեսության մեջ ներդրումների գումարը շատ ավելի պակաս էր գյուղատնտեսության մեջ ներդրված գումարից, ապա ինդուստրացման ժամանակաշրջանի առաջին տարիներից ներդրումների հարաբերությունը փոխվեց հօդուտ սոցիալիստական արդյունաբերության: Որպես օրինակ կարելի է բերել ինդուստրացման ժամանակաշրջանի առաջին տարին՝ 1925—1926 տնտեսական տարին: Ինչպես նշեցինք, այդ տարում ժողովրդական տնտեսության մեջ ներ էր դրվել մոտ 11 միլիոն ռուբլի: Այդ գումարի 60% հատկացվեց խոշոր արդյունաբերության զարգացմանը: Հաջորդ տարիներին ավելի է մեծանում արդյունաբերության մեջ կատարված ներդրումների գումարը, առանձնապես ավելացվում են էներգետիկ, քիմիական, լեռնահանքային, շինանյութերի, մետաղամշակման և արդյունաբերության այլ ճյուղերի համար կատարվող հատկացումները: Արդյունաբերական այդ ճյուղերի մեծ մասը նոր էր հիմնադրվում Հայաստանում:

Սովետական իշխանության հենց առաջին տարիներից սկսած, ելնելով ողջ երկրի լեռնինջան էլեկտրիֆիկացիայի պլանից, Կոմունիստական պարտիան առանձնակի ուշադրություն էր դարձնում ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում հզոր էներգետիկ քաղա ստեղծելու հարցին:

Վերականգնման շրջանի տարիներին Անդրկովկասի և Հայաստանի պարտիական կազմակերպությունները, կենսագործելով Վ. Ի. Լենինի, Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի ցուցումները,

<sup>1</sup> Տե՛ս „Социалистическое строительство АрмССР (1920—1940)“, изд. УНХУ, Ереван, 1940, стр. 19.

դդալի քայլեր կատարելիցին Հայաստանում էներգետիկ բազա ստեղծելու գործում:

Այդ շրջանում արդեն Հայաստանում էլեկտրոէներգիայի արտադրությունը մի քանի տնդամ գերազանցել էր նախապատերազմյան մակարդակը, բայց այդ բնավ չէր բավարարում բուն թափով աճող արդյունաբերության կարիքները և ժողովրդի կուլտ-կենցաղային պահանջները:

Կոմունիստական սրարտիայի ղեկավարությամբ Սովետական Հայաստանի կառավարությունը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի զարգացման շինարարական աշխատանքներին:

Արդյունաբերական նշանակություն ունեցող էլեկտրակայաններից առաջինը Երևանի հիդրո-էլեկտրակայանն էր, որի կառուցման աշխատանքներն սկսվել էին 1923 թ. և այն շահագործման հանձնվեց 1926 թ.<sup>1</sup>:

1926 թ. մայիսի 16-ին, Երևանի մոտ, Հրազդան գետի ձախափին, նոր հիդրոկայանի վայրն էին հավաքվել մայրաքաղաքի և նրա շրջակա գյուղերի հազարավոր աշխատավորներ: Հիդրոկայանի բացմանը ներկա էին Անդրերկրմի և Անդրֆեդերացիայի կառավարության ներկայացուցիչները:

Հիդրոկայանի բացման առթիվ տեղի ունեցած մեծ միտինգում հանդես գալով ողջունի ճառով Վ. Ի. Լենինի աշակերտ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ս. Օրջոնիկիձեն ասաց՝

«Երևանի հիդրոկայանի կառուցումով Հայաստանի աշխատավորությունը քայլ է անում դեպի Հայաստանի էլեկտրիֆիկացիայի գործը: Նա դրանով լրացործում է մեծ Լենինի խոշոր ավանդներուց մեկը՝ «Սովետական իշխանությունն, պլյուս էլեկտրիֆիկացիա, հավասար է կոմունիզմի»: Ընդունեցեք իմ ջերմ ողջունները ույսօրվա ձեր հաղթանակի առթիվ...»<sup>2</sup>:

Երևանի առաջին հիդրոկայանի նշանակությունը մեծ էր: Նա Հայկական ՍՍՌ-ի այն ժամանակվա հերթական մեծ կառուցումներից մեկն էր, որը ղդալի դեր խաղաց մայրաքաղաքի արդյունաբերության զարգացման գործում:

1925 թ. սկսվեց նաև Լենինականի հիդրոկայանի կառուցումը: Լենինականի դավառի աշխատավորության եռանդուն աշխատանքի

<sup>1</sup> Էլեկտրակայանի շինքի կառուցումը կատարվում էր ականավոր ճարտարապետ Ալ. Թամանյանի նախադրով:

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», № 163, 18 մայիսի 1926:

շնորհիվ, 1928 թ. նոյեմբերին, Հայաստանում սովետական կարգի հաստատման 8-րդ տարեդարձին, շահագործման հանձնվեց նաև այդ կայանը, որը նշանակալից շափով օգնեց Լենինականի և նրա դավառի արդյունաբերական տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացմանը: Լենինականի աշխատավորության պահանջով հիդրոկայանը կոչվեց Ս. Օրջոնիկիձեի անվամբ:

1927 թ. հիմք դրվեց Հայաստանի այն ժամանակվա հիդրոկայաններից ամենահզորի՝ Չորագէսի շինարարությանը: Կայանի հիմնադրման հանդեսին ներկա էին ՍՍՌՄ-ի, ԱՍՏՍՌ-ի, Հայկական ՍՍՌ կառավարությունների ներկայացուցիչները: Կայանի հիմնադրման առթիվ բոլշևիկյան պարտիայի անձնվեր մարտիկ, սլետական խոշոր գործիչ Վալերիյ Կուլչիշևը իր ողջույնի հեռագրում ասում էր. «Ողջունում եմ Չորագէսի հիդրոկայանի աշխատանքների հիմնադրումը: Հիդրոկայանը խոշոր գեր պիտի խաղա Հայաստանի տնտեսության վերելքի ասպարեզում: Իմ ցանկությունն է՝ լրիվ արագ և էժան կառուցել հիդրոկայանը»<sup>1</sup>:

Չորագէսի հիդրոկայանի կառուցման գործում մեծ դժվարություններ էր ներկայացնում գլանող շլյուզող ամրարտակի և լեռնաժայռերի մեջ փորվող ջրաճնշիչ թունելի շինարարությունը: Սակայն հիդրոկայանի շինարարների անձնուրաց աշխատանքի շնորհիվ հաղթահարվում էին բոլոր դժվարությունները, արագ թափով առաջ էր գնում կայանի կառուցումը:

Սովետական Հայաստանում էլեկտրաշինարարության մեջ կապիտալ ներդրումներն ամուսնում էին բավական արագ:

1926—1928 թթ. էլեկտրաարդյունաբերության մեջ ներդրումների գումարը մի րանի անգամ ավելի էր նախորդ տարիների ներդրումներից:

1928 թվականին արտադրված էլեկտրոէներգիայի քանակը շորս անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, իսկ մի շնչին հասնող էլեկտրոէներգիայի քանակը 1913 թ. համեմատությամբ կազմեց 326%: Բնակչության կուլտուր-կենցաղային կարիքների համար սպառված էներգիայի քանակը համարյա հրեք և կես անգամ ավելի էր նախապատերազմյանի համեմատությամբ<sup>2</sup>:

Լենինգետիկ բազայի հիման վրա Սովետական Հայաստանում զարգանում էր խոշոր արդյունաբերությունը:

<sup>1</sup> «Շնորհրդային Հայաստան», № 170, 27 հուլիսի 1927:

<sup>2</sup> ՏԼՍ «Социстическое АрмССР», стр. 19.

վերականգնման շրջանի տարիներին միայն առաջին քայլն էր կատարված պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ: ՍՍՌՄ ինդուստրիալ արդյունաբերության զարգացմանն օգնելու համար անհրաժեշտ էր ոչ միայն ամբողջապես վերականգնել Հայաստանի պղնձարդյունաբերությունը, այլև սլայմաններ ստեղծել նրա հետագա զարգացման համար: ՀամԿ(Բ)Պ Անդրկովկասի Երկրային Կոմիտեն և Անդրկովկասի Ժողկոմսովետը հատուկ ուշադրություն էին դարձնում Հայաստանի պղնձարդյունաբերության զարգացման վրա: 1926 թվականին, բացի սլանային կարգով հատկացված ներդրումներից, պղնձարդյունաբերության մեջ լրացուցիչ կարգով ներդրվեցին խոշոր գումարներ: 1926—1928 թթ. ներդրվեց մոտ 3 միլիոն ռուբլի:

1927 թ. զգալի չափով ընդարձակվեց շինանյութերի արդյունաբերությունը: Այդ արդյունաբերության համար բազա դարձան Արթիկի տուֆը, Անիի պեմզան, Գավալուի կրաքարը, մարմարը և այլ շինանյութեր: 1928 թ. սկսվեց Արթիկ-տուֆի հանքերի մշակումը: Սովետական կառավարությունը խոշոր միջոցներ հատկացրեց տուֆի արդյունաբերությունն ընդարձակելու համար:

ՍՍՌՄ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի առաջադրանքով Սովետական Միության Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատը 1928 թ. սկսեց Լենինական—Արթիկ, ապա Մահ-մուղջուղ (Պեմզաշեն) երկաթգծի կառուցումը, որն ավարտվեց կարճ ժամկետում և հնարավորություն ստեղծեց ընդլայնելու Արթիկ-տուֆի հանքամշակումն ու քարի առաքումը:

Արթիկի տուֆը լայնորեն օգտագործվում է ռեսպուբլիկայի շինարարության կարիքների համար: Մեծ քանակությամբ տուֆ է ուղարկվում Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների շինարարություններին: Դնեպրոդէսի և նրա բազմաթիվ օժանդակ շենքերի կառուցման համար օգտագործվել է նաև Արթիկի տուֆը:

Պեմզա հանքաքարի մշակումը մեծ չափով ընդարձակվեց 1928—1929 թթ. երբ շահագործման հանձնվեց Անի կայարանից պեմզայի հանքերը տանող երկաթգծի ճյուղը: 1926—1927 և 1927—1928 թթ. արդյունահանվել է ավելի քան 8400 տոննա պեմզա<sup>1</sup>: Երկաթգծի շահագործումից հետո պեմզայի արդյունահանությունը և առաքումը կրկնապատկվեց<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀՀԽՍՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926—1927, 1928—1929 թթ.»: Աշխատանքի միջակադրական բյուրո, Երևան, 1930 թ., էջ 205:

<sup>2</sup> Նույն տեղում:

15285  
A  
4000

Կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի մարմարի հարուստ հանքերի մշակումը: 1928 թ. շահագործման հանձնվեց մարմարի մշակման առաջին գործարանը Երևանում: Դավալուի բարձրորակ կրաքարի բաղաչի վրա նախագծվում է ցեմենտի գործանի կառուցումը: 1928 թ. շահագործման հանձնվեց Ջաջուտի կրի գործարանը: Շահագործման հանձնվեցին նաև Երևանի և Լենինականի մեխանիկական գործարանները, որոնք դասվեցին ռեսպուբլիկայի արդյունաբերության առաջին նորակառույցների շարքերում: Մեխանիկական գործարաններն ունենին շուգունի և պղնձի ձուլման, կաթսայի և էլեկտրազոդման ցեխեր: Այդ գործարանները, բացի նրանից, որ արտադրում էին դյուղառետեսական գործիքներ, տրակտորի որոշ մասեր, մանվածքային և գործվածքային մեքենաների պահեստի մասեր, արտադրում էին նաև ճանապարհաշինարարության սարք ձևի մեքենաներ, հարթիչ մեքենայի թափանխվներ, իսկ Երևանի մեխանիկական գործարանը դերազանցապես արտադրում էր փոքր արամաշափի շոգեկաթսաներ:

Ռեսպուբլիկայի ժողովրդական անտեսության մեջ այս ժամանակաշրջանում որոշակի տեղ էր դրախում լայն սպառման ապրանքներ արտադրող արդյունաբերությունը և նրա հիմնական ճյուղ՝ տեքստիլ արդյունաբերությունը:

ՄԱՌԿ ինդուստրացման բաղաչի վրա Հայաստանում բնդարձակվում էր տեքստիլ արդյունաբերությունը, որն այն ժամանակ դերազանցապես կենտրոնացված էր Լենինականում: 1924—1928 թթ. Լենինականի տեքստիլ արդյունաբերության մեջ ներդրվել է ավելի քան 5 միլիոն սուբլի: 1927—1928 տնտեսական տարում մանարան գործարանն արտադրեց 400 տոննա մանվածք, իսկ գործվածքայինը՝ ավելի քան 2,2 միլիոն մետր կտավ: Թեթև արդյունաբերության ճյուղերից ընդարձակվեց նաև տրիկոտաժի և մետաքսի արդյունաբերությունը: Լենինականի տրիկոտաժ գործարանը սարքավորվեց Լենինգրադից ստացված հայրենական նոր տիպի մեքենաներով: 1928 թվականին շահագործման հանձնվեց Երևանի մետաքսի գործարանը:

Չճառի քաղեր արվեցին սնունդ-համի արդյունաբերության զարգացման բնագավառում: Հատուկ տեղ էր դրախում սպիրտի, կոնյակի և գինու արտադրությունը, որն այդ ժամանակ ամբողջապես կենտրոնացված էր «Արարատ» տրեստի սիստեմում:

<sup>1</sup> ՏՊ՝ «Соцстроительство АрмССР», стр. 38.



1926—1927 տնտեսական տարում «Արարատ» արևսափ արտադրանքը զերազանցեց նախապատերազմյան մակարդակը: Ընդարձակվեցին կոնյակի և դինու արդյունաբերական հին ձեռնարկությունները, իսկ այդեզործական մի քանի կենտրոններում կառուցվում են նոր գործարաններ:

1928 թվականին շահագործման հանձնվեց Երևանի ծխախոտի նոր գործարանը: Նույն տարում գործարանն արտադրեց 40,8 միլիոն դլանակ, որը 6 անգամ ավելի էր 1922 թ. արտադրանքից<sup>1</sup>: 1926 թ. շահագործման հանձնվեցին Երևանի և Հոկանմերկյանի բամբակազտիչ նոր գործարանները: 1926 թ. գործարկվեց նաև Երևանի Ջեթ-օձառ կոմբինատը:

Այդեզործության զարգացման հետևանքով զգալիորեն զարգանում էր նաև պահածոների արդյունաբերությունը: 1927 թ. ռեկոնստրուկցիայի ենթարկվեց Երևանի պահածոների գործարանը, որի շնորհիվ 1928 թ. նրա արտադրանքը կազմեց ավելի քան մեկ միլիոն պայմանական տոնուի զանազան տեսակի պահածոներ<sup>2</sup>:

1927—1928 թթ. սննդարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին մոտ 3,4 միլիոն ռուբլի<sup>3</sup>:

Էժան էլեկտրոէներգիայի բազայի վրա 1926—1928 թթ. նախնական քայլեր արվեցին ֆիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում:

1927 թ. շահագործման հանձնվեց Երևանի կարբիդի առաջին գործարանը:

Այսպիսով, 1925—1926 տնտեսական տարվա համեմատությամբ, 1926—1927 թթ. Սովետական Հայաստանի պետական արդյունաբերության աճը կազմեց 28,3 տոկոս<sup>4</sup>: Արդյունաբերության, առանձնապես խոշոր արդյունաբերության, արագ զարգացումը ՍՍՌՄ բոլոր ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում, արդյունք էր Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ազգային ճիշտ քաղաքականության հետևողական կենսադրժման:

Սոցիալիստական ինդուստրացիայի առաջին տարիների հաջողություններն ակներև դարձան ամբողջ ՍՍՌՄ-ում: 1927 թ. Սովե-

<sup>1</sup> «Կոբլերգային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 4:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս «Сопостроительствѣ АрмССР», стр. 20.

<sup>4</sup> «Աշխատանքը և արդյունաբերությունը Հայաստանում», էջ 221:

տական Միության խոշոր արդյունաբերության աճը 1926 թվականի համեմատութեամբ կազմեց 18 տոկոս, որպիսի աճ չէր տեսել կապիտալիստական ամենաառաջավոր երկրի խոշոր արդյունաբերությունն անգամ իր զարգացման ամենաբարձր վերելքի ժամանակաշրջանում:

Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարութիւնը երկրի հարյուր հազարավոր արհեստավորներին և գյուղական տնայնագործներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու նպատակով ձեռնամուխ եղաւ արհեստագործական կոոպերացիայի կազմակերպմանը:

1926 թվականի հոկտեմբերին, Սովետական Հայաստանում կազմակերպվեց ռեսպուբլիկական արհեստագործական կոոպերատիվ կենտրոն՝ «Հայաստանի Տնայնաարդյունաբերական և Արհեստագործական Կոոպերացիա» (Հայասարկոոպ):

1926 թվականի վերջերին ՍՍՌՄ Ժողովուրդների որոշմամբ «Հայաստանի Տնայնաարդյունաբերական, Արհեստագործական Կոոպերացիան» մտաւ Սովետական Միության Տնայնաարդյունաբերական կոոպերացիայի սիստեմի մեջ: Դրանով ավելի լայն հնարավորութիւններ ստեղծվեցին Հայաստանի արդյունաբերական կոոպերացիայի հետագա բուռն զարգացման համար: Մեծ չափով ընդարձակվեցին տնայնագործական արտելները: 1928 թվականին կոոպերատիվ արտելների թիվը հասաւ 70-ի, որոնք միավորել էին 1400 տնայնագործ արհեստավորներ: Երկու տարի անց՝ 1930 թ. 110 արտելներում ընդգրկված էին ավելի քան 3000 տնայնագործ արհեստավորներ: Արհեստագործական կոոպերացիայի արտադրանքի մեջ կարևոր տեղ էին գրաւում մետաղագործութիւնը, գորգագործութիւնը, ջուհակութիւնը, կոշկակարութիւնը և այլն: Արհեստագործական կոոպերացիան զգալի շաւիով բարձրացրեց արհեստավորների աշխատանքի արտադրողականութիւնը և նպաստեց սուտադրանքի որակի բարձրացմանը:

Աշխատավոր գյուղացիութեան և տնայնաարհեստավորների կոոպերացումը լուրջ նշանակութիւն ունեցաւ քաղաքի և գյուղի կապի ամրապնդման, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան դաշինքի զոգման համար, բազմապատկեց նրանց ուժերը՝ կուլակային-նեպոմանական տարրերի դեմ մղվող պայքարում:

Սոցիալիստական ինդուստրացման հաջողությունները մեծ դեր խաղացին մեր երկրի գյուղատնտեսության զարգացումը սոցիալիստական ուղիով առաջ մղելու գործում:

Մեր երկրի միլիոնավոր գյուղացիներ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան կենսագործելու լենինյան կոոպերատիվ պլանը: Գյուղի սոցիալիստական վերակառուցումը դարձավ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ուշադրության կենտրոնը:

Գյուղական խոշոր վարկեր, գյուղատնտեսական գործիքներ էին արվում աշխատավոր գյուղացիությանը՝ հողի աացիոնալ մշակման, հողագործության տեխնիկական մակարդակի և բերքատվության բարձրացման համար:

Գյուղատնտեսության զարգացումն արդյունաբերության զարգացմանը զուգակցելու գործում կարևոր դեր էր կատարում արդյունահանող և վաճառահանող կոոպերացիան:

Վ. Ի. Լենինը «կոոպերացիայի մասին» իր նշանավոր հոգևածում գրել է. «Հիրավի, պետության իշխանությունն արտագրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի ղաշինքը քաղամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիության նկատմամբ այդ պրոլետարիատի ղեկավարությանն ապահովումը և այլն, — մի՞թե՞ սա այն բոլորը չէ, ինչ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, ոքը առաջներում մենք բամահարում էինք սրբկա շարչիական, և որը որոշ անսակետից իրավունք ունենք բամահարելու այժմ՝ Նեպի օրով նույնպես, մի՞թե սա այն ամենը չէ, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիչ Լենինը այդ նույն աշխատության մեջ խիստ քննադատության էր ենթարկում և կշտամբում այն վատ ղեկավարներին, որոնք չէին հասկանում, կամ չէին բմբռնում կոոպերացիայի դերը ու նրա ռևոլյուցիոն նշանակությունը սոցիալիզմի կառուցման մեծ գործում: «Յվ ահա, ոչ բոլոր ընկերներն են իրենց հաշիվ տալիս, — նշում էր Վ. Ի. Լենինը, — թե այժմ ինչ հսկայական անընդգրկելի նշանակություն է ստանում մեզ համար Ռուսաստանի կոոպիացումը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ, 33, էջ 388:

<sup>2</sup> Նույն տեղում:

կոմունիստական պարտիան, հետևողականորեն կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները, ղգալի աշխատանք ծավալեց կոսպերացիայի բոլոր ձևերի, առանձնապես դյուղկոսպերացիայի զարգացման ուղղությամբ:

Սովետական Հայաստանում արտադրական և վաճառահանող կոսպերացիայի զարգացումը լայն ծավալ ստացավ 1926—1928 թթ.: 1926 թ. դյուղկոսպերացիայի մեջ էին ընդգրկված 30.566 դյուղական տնտեսություն, դյուղական վարկային ընկերությունների անդամ էին 18 հազ. դյուղացիական տնտեսություն: 1926 թվականի համեմատությամբ, 1928 թ. կրկնապատկվեց կոսպերացիայի անթարիված դյուղական տնտեսությունների թիվը<sup>1</sup>: Առանձին զավառներում կոսպերացիայի մեջ էին ընդգրկված տնտեսությունների ճշնշող մեծամասնությունը: 1928 թ. Մեղրիի շրջանում դյուղացիական տնտեսությունների 90% կոսպերատիվ ցանցի մեջ էր ընդգրկված, Երևանի զավառում՝ 52,7%, Դիլիջանի՝ 40%, Էջմիածնի՝ 51,7%, Լոռի Փամբակի՝ 40%<sup>2</sup>:

Գյուղատնտեսական կոսպերացիան մինչև 1927 թվականը ամբողջապես կենտրոնացված էր Հայդյուղկոսպի սխտեմում, սակայն նրա ցանցի ընդարձակման և ճյուղավորման պատճառով պահանջ առաջադրվեց կազմակերպել ըստ առանձին կոլտուրանների մասնապիտակյան կոսպերատիվ ընկերություններ: 1927 թվականի վերջերին կազմակերպվեցին բամբակագործական, դինեղործական (Հայգինկոսպի) շերամապահական, ծխախոտագործական, անասնապահական և այլ կոսպերատիվ կենտրոններ:

Ավելի արագ էր կատարվում Արարատյան գաշտավայրում տեխնիկական կոլտուրանների մշակութային զբաղվող դյուղական տնտեսությունների կոսպերացումը: Մինչև 1927 թվականի վերջերք բամբակագործական կոսպերացիայում ընդգրկված էր 6300 դյուղական տնտեսություն, 1924 թ. 934 տնտեսության դիմաց: Այդ նույն դյուղկոսպերացիայի բոլոր անդամները բամբակի ամբողջ արտադրային մասը վաճառում էին պետությանը:

Այգեղործության զարգացման խնդրում նշանակալից դեր էին խաղում դինեղործական կոսպերատիվ ընկերությունները, որոնց մեջ ընդգրկված էին այգեղործությամբ զբաղվող աշխատավորական

<sup>1</sup> «Հայդյուղկոսպի գործունեության հաշվետվությունը», Երևան, 1928, էջ 20:

<sup>2</sup> ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, դ. 5, թ. 95—100:

տնտեսությունների 65%: Կոոպերացիան սիստեմատիկ պայքար էր կազմակերպում բերքատվության բարձրացման համար: Խաղողի բերքատվությունը 1927 թ. 1924 թ. համեմատությամբ բարձրացավ երկու անգամ:

Գյուղկոոպերացիան նշանակալից օգնություն էր ցույց տալիս գյուղացիությանը՝ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ ձեռք բերելու գործում: 1927—1928 տնտեսական տարում Հայաստանի կոոպերատիվ ընկերությունների միջոցով գյուղ է ուղարկվել 4726 գութան, 181 խոտհունձ մեքենա, 48 շարքացան, 105 դիզ-զագ փոցխ, 100-ից ավելի սերմազտիչ մեքենա, 365 սերզառ և այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ: Հայաստանի դաշտերում այդ ժամանակ աշխատում էին 166 տրակտոր, 27 կալսիչ մեքենաներ<sup>1</sup>:

Այս թվերից արդեն երևում է, որ երկրի սոցիալիստական արդյունաբերությունն առաջին հաջող քայլերն էր անում, անսահման հեռանկարներ ստեղծում գյուղատնտեսության տեխնիկական վերազինման համար, նրա սոցիալիստական վերակառուցման համար:

Ռեսուրսը իրազուցում ընդարձակվում էր ագրոկայանների, խրճիթ-յաբորատորիաների, փորձակայանների, անասնաբուժարանների ցանցը: Գյուղատնտեսության մեջ աշխատում էին զգալի թվով գյուղատնտեսներ, սևեկիցիտներ, ագրոտեխնիկներ, դոտտեխնիկներ, անասնաբուժներ:

Միջակ, և հատկապես չքավոր, տնտեսություններին օգնելու գործում նշանակալից դեր էին խաղում գյուղավարկային ընկերությունները, փոխօգնության կոմիտեները և չքավորական խմբակները:

1928 թ. սկզբներին գյուղավարկային ընկերությունների անդամ էին 28.000 տնտեսություն: Վարկային ընկերությունների միջոցով 1926—1927 թթ. պետությունը բաց էր թողել ավելի քան 5 միլիոն ռուբլու վարկ<sup>2</sup>: Ստացված վարկերը գյուղական տնտեսություններում օգտագործվում էին գերազանցապես անասուններ և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար:

Պետական վարկի շնորհիվ զգալի չափով սպակասեց քառույտ անասուն չունեցող չքավոր գյուղատղիական տնտեսությունների թի-

<sup>1</sup> Տե՛ս «Союзстройтельство АрмССР», стр. 48.

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», № 52, 2 մարտի 1928:

Վրւ 1925 թ. քաշող անասուններ շունեին գյուղական տնտեսութիւնների մի զգալի մասը, իսկ 1928 թ. միայն՝ 25,5%։ 1925 թ. կթուանասուններ շունեին 35%-ը, 1928 թվականին՝ 15,2%-ը։ Այս թվերի համեմատութիւնից պարզ է, թե պետական վարկը ինչպիսի մեծ օգնութիւն էր աշխատավորական տնտեսութիւնների բարելավման գործում։

Մատակարարող և վաճառահանող կոոպերացիային զուգընթաց գյուղատնտեսութեան զարգացման գործում նշանակալից դեր էին կատարում նաև գյուղական փոխօգնութեան կոմիտեները։

Փոխօգնութեան կոմիտեները կոչված էին առաջին հերթին օգնութիւն, օժանդակութիւն կազմակերպելու չքավորական տնտեսութիւններին։ 1926—1927 թթ. ՓՕԿ-երը իրենց միջոցներով զգալի քանակութեամբ գյուղատնտեսական գործիքներ գնեցին ու բաժանեցին չքավոր տնտեսութիւններին։ Նրանք կարիքավորներին օգնում էին նաև կոոպերատիվ փայլավճարների մուծման գործում։

Մատակարարող և վաճառահանող կոոպերացիան և փոխօգնութեան կոմիտեներն իրենց տրամադրութեան տակ ունեին փոքրիկ արդյունարերական ձեռնարկութիւններ, մեքենաօգտագործման կայաններ, որոնք զգալի դեր կատարեցին ինչպես Սովետական Միութեան, նույնպես և Սովետական Հայաստանի գյուղատնտեսութեան զարգացման համար, օգնելով մանր փողիացած անհատական տնտեսութիւնները կոլեկտիվ տնտեսութիւնների մեջ միավորելու գործում։

Հայաստանում ցանրատարածութեան, առանձնապես տեխնիկական կուլտուրաների մշակութեան բնութարձակման ու բերքատուութեան բարձրացման համար լուրջ նշանակութիւն ունեւր ոռոգումը։

Անդրկովկասի և Հայաստանի պարտիական կազմակերպութիւնների ուշադրութեան կենտրոնումն էին Վ. Ի. Լենինի պատմական ցուցումները՝ ամեն կերպ ծավալելու ջրանցքաշինարարութիւնը Անդրկովկասի ռեսպուբլիկաներում։ Ոռոգման ցանցի ընդարձակման գործում նշանակալից աշխատանքներ կատարվեցին 1926—1929 թթ.։

1927 թ. շահագործման հանձնվեց Այդր լճի ջրհան կայանը, որն աշխատում է էլեկտրոէներգիայի օգնութեամբ։ Դա այն ժամանակ մեքենայացված ոռոգման առաջին փորձերից մեկն էր ՍՍՌՄ-ում։ Այդր լճի ջրհան կայանով սկսվեց ոռոգվել զգալի տարածութեան անջրդի հողեր։ 1928 թ. շահագործման հանձնվեց նաև Մարդարարագի (Հոկտեմբերյան) ջրանցքը։

1926—1927 թթ. շարունակվեցին Շիրակի ջրանցքի մայր առվի լայնացման և ցանցի ճյուղավորման աշխատանքները: 1929 թվականին Շիրակի ջրանցքը արդեն ոռոգում էր 10 հազար հեկտար տարածություն, 1925 թ. 5500 հեկտարի դիմաց: Նոր ջրանցքների կառուցման և հնրի ընդարձակման ու վերանորոգման շնորհիվ 1928 թ. ռեսպուբլիկայում ոռոգելի հողերի տարածությունը հասավ 110 հազար հեկտարի<sup>1</sup>:

1921—1928 թթ. ջրանցքների շինարարության և ճահիճների շորացման համար հատկացված կապիտալ ներդրումների գումարը կազմեց 8,5 միլիոն ռուբլի<sup>2</sup>: Այդ գումարից 5 միլիոն ռուբլին ներդրվել է 1926—1928 թթ.:

Հայաստանի սոսոցիալական կառուցման և էներգետիկ ռեսուրսների ուսումնասիրության ու օգտագործման գործում մեծ օգնություն էին ցույց տալիս Մոսկվայի և Լենինգրադի մելիորատիվ և էներգետիկ ինստիտուտները:

Ջրավոր և միջակ գյուղացիների անտեսությունը բորձրացնելու և նրանց հետադաշում կողկտիվ անտեսությունների մեջ միավորելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից կիրառվող հողաշինարարության և հարկային քաղաքականության ճիշտ կիրառումը:

Սովետական Միության կառավարության հատուկ սրժմամբ 1927 թ. սկսած հարկից ամբողջապես ազատվեցին շրավորական անտեսությունները և միջակ անտեսությունների մի զգալի մասը: Գյուղական հարկի ծանրությունն ընկավ կուլակային անտեսությունների վրա:

Կոմունիստական պարտիայի քաղաքականությունը գյուղում կիրառելիս խոշոր գեր էին խաղում նաև շրավորական խմբակները:

Ջրավոր գյուղացիությունը լուրջ հենարան էր հանդիսանում սյրուլետարիատի դիկտատուրայի ամբաղնդման խնդրում:

Հայաստանի պարտիական ու սովետական օրգանների գործնական միջոցառումների շնորհիվ զգալի հաջողություններ ձեռք բերվեցին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության էկոնոմիկայի բարձրացման ուղղությամբ: Սովետական Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը, 1913 թվականի 65,8 միլիոն ռուբլու դիմաց 1928 թ. կազմեց՝ 72,4 միլիոն ռուբլի: Նույն թվականն

<sup>1</sup> Տե՛ս «Сообщество АрмССР», стр. 62.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 47:

րի համեմատությունում անասնաբուծության արտադրանքը գերազանցից ավելի քան 10 տոկոսով<sup>1</sup>։

Բայց և այնպես անհրաժեշտ է նշել, որ ՍՍՄՄ-ում գյուղատնտեսության զարգացումը ղգալիորեն կա էր մնում արդյունաբերության զարգացումից։ Սովետական Միությունում հացահատիկային կուլտուրաների համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ հասել էր ընդամենը 91%, իսկ հացահատիկային արտադրանքի ասրանքային մասը կազմում էր նախապատերազմյան մակարդակի միայն 37%։

Սովետական Հայաստանում 1928 թվականին մշակելի հողերի տարածությունը դեռևս չէր հասել նախապատերազմյան շրջանի շափերին։ Խիստ կա էր մնում գյուղատնտեսության էկոնոմիկայի ասրանքային արտադրանքը։

Սովետական Միության դեպի սոցիալիզմ զարգացման առաջընթացի հիմնական նախադրյալներից մեկը, գյուղի սոցիալիստական արմատական վերակառուցումն էր, գյուղի արտադրական ուժերի բարձրացումը, գյուղացիական հոծ մասսաների նյութական բարեկեցության հարաճուն բարելավումը։ Անհնարին էր արագ տեմպերով առաջ մղել սոցիալիստական շինարարությունը մեր երկրում, այն պարիակելով միայն արդյունաբերությամբ։ Որպեսզի սոցիալիստական շինարարության առաջընթացը լիներ համընդհանուր, բազմակողմանի և ապահովեր սոցիալիզմի կառուցումը մեր երկրում, հարկավոր էր նրա մեջ ընդգրկել նաև գյուղատնտեսությունը։

Անհրաժեշտ էր ելք գտնել ստեղծված դրությունից դուրս գալու համար։ Կոլեկտիվացման ուղին գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու միակ ուղին էր։ Այդ ուղին հնարավորություն էր տալիս նաև ամենակարճ ժամկետում վերացնել գյուղատնտեսության հետամնացությունը և երկրում ստեղծել սոցիալիստական շինարարության միասնական Ֆուկատ։

Այսպիսով, Կոմունիստական պարտիան, բոլոր գծերով նախապատրաստում էր մեր երկրի գյուղատնտեսության սոցիալիստական արմատական վերակառուցումը՝ կոլեկտիվացման հիման վրա։

Ռեուլուցիոն այդ վիթխարի խնդրի կենսագործման համար պայքարի դուրս եկան նաև Սովետական Հայաստանի բանվոր դա-

<sup>1</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР», стр. 43.

սակարգը, աշխատավոր գյուղացիությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ:

\* \* \*

ՍՍՌՄ սոցիալիստական ինդուստրացիան և գյուղատնտեսութեան վերակառուցման գործում ձեռք բերված աննախընթաց հաջողութիւնները հանդիստ չէին տալիս մեր երկրի արտաքին ու ներքին թշնամիներին:

Արևմտա-կլրոպական ու ամերիկյան իմպերիալիստները դաժանորեն ճնշում էին գաղութների և կախյալ երկրների ռևոլյուցիոն և ազգային ազատագրական շարժումները: Կապիտալիստական երկրները «դուրս էին եկել» ճգնաժամից և թեակոխել երերուն կայունացման ուղին: Բայց և այնպես կապիտալիստական երկրներում արդեն սկսել էին երևան գալ նրանց ջլատող ու քայքայող անլուծելի հակասութիւնները:

Կապիտալիստական երկրների հակասութիւնների սրումը մի կողմից, սոցիալիստական շինարարութեան կառուցման հաջողութիւնները ՍՍՌՄ-ում մշուս կողմից, մոլեգին կատաղութիւն էին առաջ բերել կապիտալիստական լազերում: Ստեղծված դրութիւնից դուրս գալու միակ ելքը կապիտալիստները տեսնում էին նոր համաշխարհային պատերազմի, և ամենից առաջ ՍՍՌՄ դեմ ուղղված պատերազմի մեջ:

Միջազգային այսպիսի բարդ իրադրութեան մեջ պարտիան սկսեց իրագործել մեր երկրի սոցիալիստական ինդուստրացիան լենինյան ծրագիրը:

Հանրահայտ է, որ Սովիետական Միութիւնը դեռ իր դոյութեան առաջին իսկ տարիներից համառ պայքար էր մղում սպառազինութիւնների կրճատման, բնդհանուր վիճաթաթման համար: Սովետական կառավարութիւնն այդ հարցը առաջ էր քաշել 1922 թվականին՝ Զինուկայի կոնֆերանսում:

1927 թվականին ժնկում, գինաթաթման միջազգային կոնֆերանսում, սովետական դեկեգացիան նորից առաջարկեց կատարել բնդհանուր և լրիվ վիճաթաթում: Սակայն այդ առաջարկը Ազգերի Լիդիայի «գինաթաթման» հարցը նախապատրաստող հանձնաժողովը մերժեց: ՍՍՌՄ դեկեգացիան առաջարկեց կոնվենցիայի մի նոր նախագիծ, մասնակի գինաթաթման նախագիծ, որը կապիտալիստական պիտութիւնների կողմից նույնպես մերժվեց<sup>1</sup>:

<sup>1</sup> „История дипломатии“, т. III, 1945, стр. 356.

Անգլո-ամերիկյան պատերազմի հրձիգների ուղղակի ցուցումներով, 1927 թ. սկզբին, Պեկինի կառավարությունը բանդիտական հարձակում կատարեց սովետական ղեկավարության վրա: Նրանք ձեռքակալեցին ղեկավարության աշխատակիցներին, հափշտակեցին ղեկավարության ունեցվածքը: Նման հարձակումների ենթարկվեցին նաև Շանհայի և Տյանցզինի սովետական հյուպատոսությունները: Այդ հարձակումների նպատակն էր պատերազմ հրահրել սովետական Միության և Չինաստանի միջև:

Սովետական Միությունը շարունակելով լենինյան խաղաղասիրական քաղաքականությունը, քայլ առ քայլ մերկացնում էր պատերազմի հրձիգների դիվային պլանները:

1927 թ. մայիսին Լոնդոնում հարձակում կատարվեց «Անգլո-սովետական ակցիոններիկան ընկերության» (ԱՐԿՈՍ) վրա: Անտեսելով դիվանագիտական անձեռնմխելիությունը, ստիկանները ջարդեցին ընկերության սեփերը և հափշտակեցին Սովետական Առևտրական ընկերության փոստը:

1927 թ. մայիսի 27-ին անգլիական կառավարությունը խզեց դիվանագիտական և առևտրական հարաբերությունները ՍՍՄԿ-ի հետ: Սովետական կառավարությունը վճռական բողոք հայտնեց անգլիական կառավարությանը, որը ոչ մի օրինական հիմք չունի առանց նախօրոք զուլազանցելու, խախտելու 1921 թվականի սովետա-անգլիական առևտրական պայմանագիրը: «Ամբողջ աշխարհին քաջ հայտնի է, — ասված է Սովետական կառավարության 1927 թ. մայիսի 28-ին այդ առթիվ անգլիական կառավարությանն ուղղված նոտայում, — որ անգլո-սովետական դիվանագիտական կապերի խզման հիմնական պատճառը հանդիսանում է պահպանողականների քաղաքականության սխառությունը Չինաստանում և այդ ձախողումը նրանք փորձում են քողարկել Սովետական Միության կողմից կատարվող կարծեցյալ դիվերսիայով»<sup>1</sup>:

Անգլո-սովետական դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո ավելի ու ավելի էր սրվում նոս պատերազմի վտանգը: 1927 թ. հունիսին անգլիական և պանաեկան Լեհաստանի գործակալների կողմից Վարշավայում սպանվեց ՍՍՄԿ լիազոր ներկայացուցիչ Պ. Լ. Վոլկովը:

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները փորձեցին ճնշում գործադրել ֆրանսիական կառավարության վրա, որպեսզի նա ևս խզի

<sup>1</sup> „История дипломатии“, т. III, стр. 376.

գիվանագիտական հարաբերությունները ՍՍՌՄ հետ: Սակայն, նրանախան զգուշջ գիրք բռնեց և անզլո-ամերիկյան իմպերիալիստների փորձերը, նրան ներդրավել հակասովետական բլոկի մեջ, ձայնողվեցին:

Միջազգային այսպիսի լարված իրողություն պայմաններում հակասովետական պայքարն ուժեղացրին նաև մեր երկրից գուրսվոնդված կոնտրոլյուցիոն թափթիվուկները: Անդրկովկասից գուրսվտարված դաշնակները, մենշեիկները, մուսավաթականները եվրոսոլայում կազմակերպել էին այսպես կոչված «էմիգրանտական կառավարություններ» և «Կովկասյան փրկության կոմիտե», որոնք ծառայության մեջ էին գտնվում անզլո-ամերիկյան հետախուզություններում:

Հայ ժողովրդի ամենատիեսրիմ թշնամի դաշնակները շամենակախիվ կերպով աջակցում էին անզլո-ամերիկյան իմպերիալիստների հակասովետական քաղաքականությանը: Նրանք հենակես ստեղծելով Թավրիզում՝ աշնանդից լրտեսական կապ էին պահպանում Սովետական Միությունում թաքնված թշնամական տարրերի հետ: Նրանց նպատակն էր կատարել տևորիստական սկտեր, գիվերսիոն գործողություններ, իսկ վերջին հաշվով՝ դաշնակցական, գուզակ-նեկամանական և բոլոր հակասովետական ուժերի հավաքական դործակցության: Հիման վրա Սովետական Հայտատանում ապստամբություն կազմակերպել:

Դաշնակներն իրենց պատրաստակամությունն էին հայտնում անզլիական կառավարությանը՝ թնդանոթի միտ գարձնել օտար երկրներում ապրող հայ աշխատավորությանը: Նույն ժամանակաշրջանում իրենց հակասովետական գործունեությամբ դաշնակներից ետ շէին մնում վրաց մենշեիկները և մուսավաթականները:

Պեկինում մեր գեսպանության վրա կատարված բանդիտական հարձակումը, անզլո-սովետական գիվանագիտական հարաբերությունների խղումը, վարշավայում ՍՍՌՄ գեսպան Վոչկովի շարանենգ սպանությունը, այդ բոլորը դալիս էին տսելու այն մասին, որ անզլո-ամերիկյան իմպերիալիստները պատերազմ էին նյութում ՍՍՌՄ-ի դեմ: ՍՍՌՄ-ի աշխատավորները, ինչպես և աշխաթհի բոլոր ժողովորդները, իրենց դայբուլջին էին հայտնում Սովետական Միության դեմ պատրաստվող պատերազմի առթիվ:

Սամեսուրեք՝ քաղաքներում, արդյունաբերական ձևնարկություններում, գյուղերում բողոքի միտինգներ և ժողովներ էին տեղի ունենում:

Պատերազմի վտանգը կանխելու, պատերազմի հրձիգների պլանները մերկացնելու համար իր բողոքի ձայնը բարձրացրեց նաև Սովետական Հայաստանի աշխատավորութունը: Հայ ժողովուրդն իր վճռականութունն էր հայտնում պաշտպանելու խաղաղութունը, իսկ եթե իմպերիալիստական երկրները փորձեն հարձակվել մեր սոցիալիստական Հայրենիքի վրա, ապա ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ մեկտեղ կպաշտպանի իր սովետական սրբազան Հայրենիքը:

Երևանի երկաթուղային բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների 1927 թ. մայիսին գումարված ընդհանուր ժողովը Լոնգոնում ԱՐԿՈՍ-ի դեմ կատարված բանդիտական, պրովոկացիոն հարձակման առթիվ, բուն զայրույթ հայանեց ինչպես անգլիական պնդաճակատների, նույնպես և նրանց ձեռքին դործիք դարձած Անդրկովկասից դուրս շարտված կոնտրոկուցիոն թափափուկների դեմ:

Խաղաղութունը պաշտպանելու իր ձայնն է բարձրացնում Լենինականի և Ղարաբաղի (այժմ Կիրովական) ողջ աշխատավորութունը: 1927 թ. հունիսին հակապատերազմական մեծ ցույց է տեղի ունենում ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում:

Ամենուրեք Սովետական Հայաստանի բանվորները, դյուղացիները, ինտելիգենցիան անարդանրի սյունին էին դամում պատերազմի հրձիգներին:

Պատերազմ նախապատրաստողների ու հրահրողների քաղաքականութանը Սովետական կառավարութունը հակադրում է իր խաղաղասիրական քաղաքականութունը:

Սովետական դիվանագիտութունը քայլ առ քայլ մերկացնում էր պատերազմի հրձիգները, բոլոր մեքենայութունները:

Անգլո-ամերիկյան ազդեցության լուրջ վտանգը կանխելու և խաղաղութունը պաշտպանելու համար Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարութունը ավելի քան հոգ էին տանում մեր երկրի պաշտպանութունը ամրապնդելու ուղղութամբ:

Միջազգային այդ լարված իրադրության պայմաններում տրոցկիստա-դինովևական և բուխարինական կոնտրոկուցիոն թափափուկները քիչ դժվարութուններ չէին պատճառում աշխատավորներին երկրի ինդուստրացման, սոցիալիզմի կառուցման դործում:

Տրոցկիստները, բուխարինականները կատաղի պայքար էին մղում պարտիայի լենինյան գծի դեմ: Մեր պարտիայի և ժողովրդի անարդ թշնամիները ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում խորտա-

կելու բանվոր դասակարգի և դուրսացիության լենինյան դաշինքը, որն օրեցօր ամրապնդվում էր կոմունիստական սլարտիայի հետևողական ու ճիշտ քաղաքականության շնորհիվ, մինչդեռ օպոզիցիոն բլոկն իր առջև նստատակ էր դրել ձախողել սլարտիայի և կառավարության քաղաքականությունը: Նրանք վերջին հաշվով նստատակ էին դրել խարխուլի, քայքայել բանվոր դասակարգի դիկտատուրան, վիժեցնել սոցիալիզմի կառուցումը:

Տրոցկիստական օպոզիցիան իր շոշափուկները առաածել էր նաև Անդրկովկասում: Սովետական Հայաստանում նրանք միանալով թաքնված դաշնակ և մյուս բուրժուա-նացիոնալիստական տարրերի հետ լուրջ դիմադրություն էին ցույց տալիս հրկրի սոցիալիստական շինարարությանը:

Հայաստանում ըստ դրած տրոցկիստական թափփուկները երևանում, կենինականում և դավաճաներում սլարտիական կազմակերպություններում հանդես եկան տրոցկիստական-դինովևական բլոկի սլատֆորմով: Ինչպես Սովետական Միության, նույնպես և Հայաստանի բոլոր սլարտիական կազմակերպություններում օպոզիցիոն բլոկը մերկացվեց և զլխովին սլարտություն կրեց:

Մեր հրկրի սոցիալիստական շինարարության հետագա ծավալման համար անհրաժեշտ էր հաղթահարել ինչպես միջազգային՝ այնպես էլ ներքին ընույթի հսկայական դժվարություններ:

ՍՍՌՄ մոլի թշնամիները 1929 թ. կրկին փորձեցին սլավակացիոն միջոցներով սրել հարաբերությունները ՍՍՌՄ և Չինաստանի միջև:

Չինաստանի այն ժամանակվա միլիտարիստական կառավարությունը ճապոնիայի և մյուս իմպերիալիստական կառավարությունների աջակցությամբ 1929 թ. մայիսին հարձակվեց Խորբինում ՍՍՌՄ Հյուսիսայտոսարանի վրա: Դրան հաջորդեց սովետական քաղաքացիների բանաարկությունը Խորբինում, Մուկդենում և այլուր:

1929 թ. հուլիսին Մանչուրական բանակը փորձեց գրավել Սովետական Միությանը սատկանող Չին-Սրեկյան երկաթուղին (КВЖД-ն):

Չնայած պատերազմի հրձիղները սլավոկացիաներին, Սովետական կառավարությունը հավատարիմ մնալով իր խաղաղասիրական քաղաքականությանը, ամեն կերպ աշխատում էր կոնֆլիկտը վերացնել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունները միջոցով:

Մեր կառավարութեան գործադրած ջանքերն ասպարդշուն անցան: Սովետական կառավարութիւնը հարկադրված էր դիմելու վճռական միջոցներ: Պրովոկատորներին մեր երկրի սահմաններից դուրս վռնդելու և Մանչուրիայում սովետական քաղաքացիների կյանքն ասպահովելու համար Հեռավոր Արևելյան Բանակը հակահարձակման անցավ: Չինական միլիտարիստները ու Ճապոնական խմբերիալիստները մոտ ծառայութեան մեջ գանվող սպիտակ-վարդիական բանդաները գլխովին ջախջախվեցին: Չանկայշիի կառավարութիւնը խնդրեց դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Մեր զորամասերը Դալարի և Խալարի սահմաններից հեռ քաշվեցին: Բանտարկութիւնից ազատվեցին սովետական քաղաքացիները: Վերականգնվեց նաև Չին-Արևելյան երկաթուղու նախկին դրութիւնը:

\* \* \*

Սոցիալիզմի կառուցման մեծ հաջողութիւնները խորը բերկրանք էին նաաջ բերում արտասահմանյան բոլոր երկրների բանվորների ամենալայն շրջաններում: ՍՍՌՄ սոցիալիստական ինդուստրացիան հաջողութիւնները մոբիլիզացիայի էին ենթարկում կապիտալիստական երկրների աշխատավորների ռեուլցեցիոն-մարտական ուժերը իրենց երկրների շահագործողների դեմ:

Սոցիալիզմի կառուցման գործում մեր երկրի աշխատավորութեան ձեռք բերած հաջողութիւններին մոտիկից ծանոթանալու համար Սովետական Միութիւնն ալցի էին գալիս արտասահմանյան երկրների բանվորական բազմաթիւ խմբեր:

Օտարերկրյա մի շարք դելեգատներ այցելեցին ՍՍՌՄ ազգային ռեսպուբլիկաները: Նրանք մոտիկից դիտեցին ազգային ռեսպուբլիկաներում ձեռք բերված հսկայական հաջողութիւնները, ինչպևս արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան, նույնպևս և կուլտուրական շինարարութեան բնագումլառնեցում: 1927—1929 թթ. Գերմանիայից, Ֆրանսիայից բանվորական դելեգացիաներ եկան նաև Սովետական Հայաստան:

1927 թ. հոկտեմբերին Գերմանիայի աշխատավորութեան ներկայացուցիչները ալցեելեցին վերածնվող Հայաստանի քաղաքները և նորակառուցները: Նրանց վրա խոշոր տպավորութիւն գործեց ռեսպուբլիկայի սոցիալիստական շինարարութեան բուռն ծաւլալը:

Ֆրանսիայի բանվոր դասակարգի ներկայացուցիչները մեծ

հիացմունքով են նշել Թրիլիսիի, Բագվի և Երևանի աշխատավորության կուլտուրական կյանքը:

Անդրկովկասից մեկնելուց առաջ ֆրանսիական բանվորական ղեկեղացիայի Անդրկովկասի աշխատավորությանն ուղղված հայտարարության մեջ տրված է. «Ամեն տեղ կառուցվում և հիմնվում են գործարաններ... Ետ հեղափոխության այս մի քանի տարիները Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների երջանկության և ապագայի համար շատ ավելի բան են արել, քան ցարերի ու փաշաների ճնշման տակ եղած հարյուրավոր տարիները: Մենք վերագառնում ենք Ֆրանսիա... մեր երկերը վերագառնալուց հետո ասելու ենք ճշմարտությունը, առանց շահազանցացնելու, մանավանդ, որ նա առանց դրան էլ ինքնին շատ բավարար է»<sup>1</sup>:

Սովետական Միությունն եկած բազմաթիվ երկրների բանվորական ղեկեղացիաները իրենց երկրները վերագառնալով պատմում էին իսկական ճշմարտությունը Սովետական Միության աշխատավորների նվաճումների մասին:

Սովետական պետության արտաքին քաղաքականության սկզբունքը կնքում է երկու հակադիր սիստեմների՝ սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների համագործակցության լինելու տնտեսական ու կուլտուրական խաղաղ մրցակցության հնարավորություններից:

Սովետական պետության խաղաղասիրական, բոլոր երկրների հետ համագործակցելու արտաքին քաղաքականությունը հզոր պաշտպանություն էր գտել աշխարհի բոլոր ժողովուրդների կողմից:

Ինչպես արդեն ասված է, 1927 թ. անգլիական կառավարության կողմից ՍՍՌՄ հետ դիվանագիտական հարաբերությունների խզումը լուրջ հարված էր Անգլիայի տնտեսական շահերին: Չնայած դիվանագիտական հարաբերությունների խզմանը, 1929 թ. անգլիական կառավարությունը թույլ տվեց արդյունաբերողներին ասևտրական գործարքներ կատարել ՍՍՌՄ հետ:

Անգլիայի բանվոր դասակարգը, ժողովրդական ամենալայն մասսաները պահանջում էին անգլիական կառավարությունից անհատապես վերականգնել դիվանագիտական և տնտեսական նորմալ հարաբերությունները ՍՍՌՄ հետ:

1929 թ. Անգլիայում նորից կառավարության դուրս անցան լեյբորիստները: Լեյբորիստների պարտիան, ընտրությունների ժա-

<sup>1</sup> «Աշխատանք», № 14—15, 1927:

մանակ ձայների մեծամասնությունը շահեց այն բանի համար, որ անդլիտական ժողովրդին հավաստիացնում էր վերականգնել դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ: Սակայն նոր կառավարությունը զանազան պատրվակներով ամեն կերպ փորձում էր ձգձգել նորմալ հարաբերությունների վերականգնումը: Ժողովրդական ամենալայն մասսաների ճնշման շնորհիվ Մակդոնալդի կառավարությունը հարկադրվեց 1929 թ. հոկտեմբերին ստորագրել Սովետական Միության հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համաձայնագիրը: Անդլիտյի հետ դիվանագիտական և տնտեսական հարաբերությունների վերականգնումը զգալիորեն բարելավեց Սովետական Միության միջազգային դիրքերն Արևմուտքում:

Այսպիսով, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության վարած արտաքին ու ներքին ճիշտ քաղաքականության շնորհիվ խորտակվեցին իմպերիալիստական երկրների ոտնձգությունները, տապալվեցին միջազգային իմպերիալիզմի՝ ՍՍՌՄ դեմ միասնական ճակատ ստեղծելու բոլոր փորձերը:

\* \* \*

Կոմունիստական պարտիան մշտապես հոգ էր տանում Սովետական իշխանության, նրա ներքին օղակների է՛լ ավելի դեմոկրատացման ու ամրապնդման համար:

1926 թվականին, երբ ամբողջ ՍՍՌՄ-ում լայն ծավալ էր ստացել սոցիալիստական շինարարությունը, երկրում սկսվեց Սովետների վերընտրական կամպանիան: Այդ կամպանիան մ'ը ժողովրդի կյանքում խոշոր իրադարձություն էր: Սովետների վերընտրությունը մեծ չափով խթանեց եզերի աշխատավորության քաղաքական ակտիվության բարձրացմանը:

Սովետների ընտրությունը կազմակերպված ու բարձր ակտիվության պայմաններում անցկացնելու համար նախապատրաստական բայն աշխատանք էր կատարվում նաև Սովետական Հայաստանում:

1926 թ. մայիսին Երևանում գումարովեց Սովետական Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կրթիչը նստաշրջանը: Նստաշրջանում բազմաթիվ հարցերի քննարկման հետ միասին քննարկվեց նաև Սովետների վերընտրության հարցը: Նստաշրջանը

հաստատուեց ընտրութիւններու կանոնադրութիւնը և ընտրական կամպանիան ղեկավարող կենտրոնական հանձնաժողովի կազմը:

1926 թ. հունիսից սկսվեց գյուղական Սովետների ընտրութիւնները: Ընտրական և գելեդատական ժողովներն ամենուրեք անցնում էին ակտիվութեամբ, քննադատութեան ու փնթաքննադատութեան նշանարանի ներքո: Աշխատավորութեան ներկայացուցիչները գելեդատական ժողովներում բացահայտում էին սովետական օրգանների աշխատանքներում եղած թերութիւնները և կոնկրետ միջոցառումներ նշում՝ Սովետների ներքին օղակների աշխատանքը էլ աւելի բարելավելու համար, նակազ էին տալիս գելեդատներին Սովետների աշխատանքն ի սոլաս դնել սոցիալիստական ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրների կենսագործմանը:

Սովետների ընտրութիւններն ընթանում էր գասակարգային պայքարի սրված մթնոլորտում: Կուլակային տարրերն ամեն կերպ փորձում էին իրենց կողմը գրավել միջակ և չքավոր գյուղացիութեան հետամնաց տարրերին և այդ կերպ փորձում էին թուլացնել աշխատավոր մասսաների ակտիվութեանը գելի Սովետների ընտրութիւնները:

Թշնամական տարրերն ամեն կերպ փորձում էին սովետական օրգաններում խցկել կուլակային թափթիւղներին, կամ նրանց շահերի պաշտպանութեան արտահայտիչներին:

Դասակարգային թշնամու բոլոր մեքենայութեանները նրեան էին բերվում և մերկացվում: Պարտիական, արհմիութենական, կոմիսիտական կազմակերպութիւնների, գյուղական չքավորական խմբակների եռանդուն աշխատանքի շնորհիւ գասակարգային թըշնամին ջախջախիչ հակահարված է տտանում: Գյուղական ավանային Սովետների ընտրութիւններից հետո, 1926 թ. վերջերս, Կազողութեամբ ավարտվեցին նաև քաղաքային ու գավառային Սովետների ընտրութիւնները:

1927 թ. մարտին, Հայաստանի մայրաքաղաք Երևանում բացվեց Հայկական ՍՍՌ գելդողուն օրգանի՝ Սովետների հերթական V համագումարը: Համագումարի բացման առթիւ տեղի ունեցավ Երևանի աշխատավորութեան մեծ ցույց: Համագումարի բացումը նշանակալից իրադարձութեան էր բնաստրիկայի աշխատավորութեան քաղաքական կյանքում: Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիութեանը, աշխատավոր ինտելիգենցիան հանդես

էին դալիս ժողովներում և մամուլում, նորանոր խնդիրներ ու պահանջներ էին առաջադրում գերագույն օրդանի քննարկմանը:

Համագումարը լսեց Հայաստանի կառավարության հաշիվետուքը: Հաշիվետուքը տվեց Ս. Համբարձումյանը: Համագումարը քննարկեց նաև ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա զարգացման հիմնական խնդիրները:

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացումը ընթանում էր ինդուստրացման ճանապարհով: Հայաստանի աշխատավորությունը գոհունակությամբ ընդունեց այն փաստը, որ 1926 թ. արդյունաբերության մեջ ներդրված ամբողջ գումարի 90% հատկացված էր գունավոր մետաղների արդյունաբերության մերականգնմանը, նոր էլեկտրակայանների կառուցմանը և տեքստիլ արդյունաբերության ընդարձակմանը:

V համագումարը գոհունակությամբ նշեց ռեսպուբլիկայի գյուղատնտեսության ձևաք բերած դրալի աջողությունները:

Համագումարը նշեց Սովետական Հայաստանի կուլտուրայի, գիտության, արվեստի, աշխատավորության նյութական դրուսթյան բարելավման գործում ձեռք բերած զգալի հաջողությունները:

Հայաստանի Սովետների V համագումարը հաշիվ առնելով այն լուրջ տեղաշարժը, որ կատարվել էր IV—V համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, փոփոխության ենթարկեց Կոնստիտուցիայի մի քանի հոդվածներ: Այդ փոփոխությունների շնորհիվ էլ ավելի ընդարձակվեց Սովետների տեղական օրգանների իրավասութուններն ու ֆունկցիաները: Համագումարը պարզություն մտցրեց պետական ու տեղական բյուջեների կազմման ու նրա տնօրինության բոլոր հարցերում: Կոնստիտուցիոն այդ մասնակի փոփոխությունները նշանակալից քայլ էր սովետական դեմոկրատիայի ընդարձակման ու ամրապնդման գործում:

Հայաստանի Սովետների V համագումարը նշանակալից դեր խաղաց բանվորների և գյուղացիների դաշինքի ամրապնդման գործում, սպասհովեց բանվոր դասակարգի ղեկավար դերը այդ հզոր դաշինքում: Մեր երկրի բոլոր ժողովուրդները, ալդ թվում և հայ ժողովուրդը, հանձին Սովետների տեսնում են իրենց իսկական, հարազատ իշխանությունը, որն ուրիշ ոչ մի շահ չունի, բացի աշխատավորների շահերը ջերմորին պաշտպանելուց:

Հայաստանի Սովետների V համագումարը գեղեզատներ ընտրեց Անդրֆեդերացիայի Սովետների IV համագումարին մասնակցելու համար, որը տեղի ունեցավ 1927 թ ապրիլին Թիֆլիսում:

Համագումարի քննարկմանը դրվեց Անդրֆեդերացիայի կառավարության ղեկուցումը, խճուղային և տեղական նշանակություն ունեցող ճանապարհների կառուցման ընթացքը ԱՍՖՍՌ-ում, գյուղատնտեսության վարկային սիստեմը ԱՍՖՍՌ-ում, ԱՍՖՍՌ-ի 1926—1927 տնտեսական տարվա սկստական բյուջեյի հաստատումը և այլ հարցեր:

Անդրֆեդերացիայի կառավարության հաշվետվության մեջ բնորոշ փաստերով ցույց է տրված, որ Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծումը հնարավորություն ընձևեց Սովետական Վրաստանի, Սովետական Ադրբեջանի և Սովետական Հայաստանի տնտեսական կյանքի, կուլտուրայի, արվեստի, գիտության բոլոր բնագավառների արագ զարգացման համար:

Անդրժողովուսովետի հաշվետու ղեկուցման մեջ նշանակալից տեղ էր հատկացված Անդրկովկասի արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված խոշոր նվաճումներին:

Համագումարի ղեկնգատները գործարար միջնորդում մեծակտիվություն հանդես բերին Անդրկովկասի տնտեսական ու կուլտուրական շինարարության հարցերի քննարկմանը: Անդրկովկասի սոցիալիստական շինարարության բոլոր հարցերը, հատկապես սոցիալիստական ինդուստրացման բոլոր խնդիրները, լավագույն ձևով լուծելու համար համագումարը նոր միջոցառումներ նշեց, որոնք հանդիսացան Անդրֆեդերացիայի սովետական օրգանների աշխատանքի հետագա ծրագրերը:

Անդրֆեդերացիայի կառավարության հաշվետու ղեկուցման առթիվ համագումարում ընդունված բանաձևի մեջ ստված է «...համագումարն ամբողջովին հավանություն է տալիս հաշվետու շրջանում նրա վարած գործունեությանը և նրա արտաքին ու ներքին քաղաքականությունը համարում է ճիշտ: Համագումարն սուսնձին գոհունակությամբ արձանագրում է, որ Անդրկովկասյան կառավարության ջանքերով զգալի հաջողություններ են ձեռք բերված Անդրկովկասյան ֆեդերացիայի ամրացման ու Անդրկովկասի եղբայրակից ժողովուրդների ազգամիջյան խաղաղության ամրացման գործում, նաև ԱՍՖՍՀ ինդուստրացման հիման վրա սոցիալիստական տնտեսություն կառուցելու, բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի ամրացման և աշխատավոր մասսաների կուլտուրական-նյութական մակարդակի բարձրացման գործում»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», № 80, 9 ապրիլի 1927:

Անդրֆեդերացիայի Սովետների IV համագումարում նոր ուժով դրսևորվեց Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների սերն ու նվիրվածությունը դեպի Կոմունիստական պարտիան: ՍՍՌՄ, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդները, համախմբված ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի շուրջը, աշխատավոր ժողովրդի ընտրյալների ուղարկեցին ՍՍՌՄ գերագույն օրգանի՝ Սովետների Համամիութենական IV համագումար:

1927 թ. ապրիլին, ՍՍՌՄ մայրաքաղաք Մոսկվայում բացվեց Սովետների Համամիութենական IV համագումարը:

Համագումարի կենտրոնական հարցը, երկրի սոցիալիստական ինդուստրացման հարցն էր, կապած գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների հետ: Այդ կապակցությամբ համագումարը քննարկեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության Գերագույն խորհրդի նախագահ Վ. Ի. Կուլբիշևի զեկուցումը՝ ՍՍՌՄ արդյունաբերության վիճակի և նրա զարգացման հեռանկարների մասին:

Վ. Ի. Կուլբիշևը զեկուցման մեջ բնութագրեց ՍՍՌՄ արդյունաբերության բուռն զարգացումը, հատկապես ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանից հետո անցած երկու տարիներում: 1924—1925 տնտեսական տարվա համեմատությամբ, 1925—1926 տնտեսական տարում ՍՍՌՄ ամբողջ պետական արդյունաբերության աճը կազմեց 42 տոկոս, իսկ 1926—1927 տնտեսական տարում նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմեց 45 տոկոս:

ՍՍՌՄ-ում ծանր արդյունաբերության աճը ղգալիորեն գերազանցում էր երկրի արդյունաբերության մյուս ճյուղերի աճից: Վ. Ի. Կուլբիշևը համագումարին տված իր զեկուցման մեջ խնդրեց ալելացնել կապիտալ ներդրումները հատկապես ծանր արդյունաբերության հետագա զարգացման համար:

Համագումարը քննարկեց նաև ՍՍՌՄ գյուղատնտեսության խնդիրները և մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման հարցերը: Այդ առթիվ համագումարում զեկուցումով հանդես եկավ ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը:

Երկրի սոցիալիստական ինդուստրացումն անբաժանելիորեն կապված էր ՍՍՌՄ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրի հետ:

Մ. Ի. Կալինինը իր զեկուցման մեջ նշեց, որ Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը գյուղատնտեսության հարցը առաջին անգամն են դնում երկրի ժողովրդական տնտեսու-

Յյան հետ, որպես մի միասնական ամբողջություն կազմող հարց, միաժամանակ ընդգծելով, որ Սովետական կառավարությունը պետք է միջոցներ ընձևւի, որպեսզի պատմական կարճ ժամանակամիջոցում մեր ամբողջ էկոնոմիկան վերակառուցվի սոցիալիստական ձևով:

Սովետների IV համագումարը դիքեկտիվ տվեց առավել ուշադրություն դարձնել բերքատվության բարձրացման վրա: Դրան հասնելու համար անհրաժեշտ էր ուժեղացնել դյուրատնտեսության մեքենայացումը: Այդ խնդիրների անշեղ իրագործման համար համագումարը ամենից առաջ խնդիր դրեց մանր ցիր ու ցան գյուղական տնտեսություններից անցնել խոշոր կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանը:

Այնուհետև հաշվի առնելով միջազգային լարված դրությունը, հատկապես Սովետական Միությանը թշնամաբար տրամադրված իմպերիալիստների կողմից շարունակաբար նյութվող դավադրությունները և դինված պրովոկացիաները, Սովետների համագումարը քննարկեց նաև ՍՍՌՄ պաշտպանության խնդիրը:

Համագումարը սիրեկալիվ տվեց է՛լ ավելի հղորացնել մեր երկրի պաշտպանությունը: Դրա հաջող իրականացման երաշխիքը հանդիսանալու էր ՍՍՌՄ սոցիալիստական ինդուստրացման պլանի արագ կենսագործումը:

Կոմունիստական պարտիայի կատարած հսկայական աշխատանքի հետևանքով Սովետները, որպես պարտիայի հիմնական շարժիչ փոկերից մեկը, դարձան մասսաների դեմոկրատական, ամենահեղինակավոր կազմակերպությունները: Սովետներում միավորվեցին ժողովրդի միլիոնավոր ընտրյալներ, որոնք ընդգրկվելով զանազան հանձնաժողովներում, դարձան սովետական շինարարության ասպարեզում աշխատող ակտիվիստների հսկայական բանակ, որոնց գործունեությունն առաջին հերթին ուղղված էր կենսագործելու լենինյան պատգամները՝ պատմական ամենակարճ ժամանակաշրջանում մեր երկիրը դուրս բերել սոցիալիզմի կառուցման լայն ու լուսավոր ճանապարհ:

1927 թ. դեկտեմբերի 2-ին անդի ունեցավ ՀամԿ(ր) պարտիայի XV համագումարը: Կենտրոնական Կոմիտեն հանրագումարի բերեց մեր երկրում սոցիալիստական շինարարության ձևը բերած աննախընթաց նվաճումները պարտիայի XIV—XV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում:

Սոցիալիզմի երկրի հսկայական նվաճումները հանդիստ չէին առաջիս իմպերիալիստական տերություններին. նրանց հույսերը պրոլետարական պետության կործանման մասին հօգու ցնդեցին: ՍՍՌՄ-ը վարելով հետևողական խաղաղասիրական քաղաքականություն՝ չհարձակվելու և չեզոքության պայմանագիր կնքեց Թուրքիայի, Իրանի, Ավղանստանի հետ: Բարեկամվեցին դիվանագիտական ու առևտրական հարաբերությունները բալթիական երկրների, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ բուրժուական երկրների հետ: Ավելի ու ավելի էր բարձրանում սոցիալիզմ կառուցող երկրի հեղինակությունը ամբողջ աշխարհի հարստահարված ու ճնշված ժողովուրդների աչքում:

Չնայած միջազգային հարաբերությունների բարելավման խնդրում ՍՍՌՄ ձևք քերած վալի հաջողություններին, այնուամենայնիվ կապիտալիստական մի շարք երկրների ռեակցիոն կառավարությունները անդր-ամերիկյան իմպերիալիստների գլխավորությամբ շարունակում էին ազդեխիվ քաղաքականություն վարել, բլոկադայի ենթարկել Սովետական Միությունը: Հաշվի առնելով մեր երկրին սպառնացող արտաքին և ներքին վտանգը, պարտիայի XV համագումարը լուրջ խնդիր դրեց՝ է՛լ ավելի արագացնել ծանր արդյունաբերության զարգացման տեմպերը:

Համագումարում քննադրված հարցերի մեջ կենտրոնական հարցը՝ մեր երկրի գյուղատնտեսության վարգացման սոցիալիստական ուղու հարցն էր: Ակնբախ էր, որ սոցիալիստական ինդուստրիայի հետագա զարգացմանը արգելակում էր երկրի գյուղատնտեսության ծայրահեղ հետամնացությունը, նրա փոշիացած ցիրուցան փնակը:

Համ(ր) պարտիայի XV համագումարը, հենվելով Վ. Ի. Լենինի ցուցումների վրա, մշակեց ՍՍՌՄ գյուղատնտեսության կոլեկտիվացման մեծ խնդրի իրագործման միջոցառումների ծավալուն պլանը:

Համագումարի որոշումներում առանձնահատուկ տեղ էին գրավում պարտիայի և Սովետական կառավարության կոնկրետ միջոցառումները գյուղի տեխնիկական վերադինման և միլիոնավոր գյուղացիական տնտեսություններին սոցիալիստական խոշոր տնտեսությունների մեջ միավորելու վերաբերյալ:

XV համագումարը միաժամանակ ընդհանուր դիրեկտիվ տվեց է՛լ ավելի ուժեղացնելու հարձակումը գյուղի կապիտալիստական տարրերի դեմ:

Համագումարն իր աշխատանքներում շափաղանց մեծ տեղ հատկացրեց պլուզի սոցիալիստական վերակառուցման՝ կոլեկտիվացման հարցերին:

Համագումարը քննարկեց նաև տրոցկիստազինովևական բլոկի դեմ պարտիայի մղած պայքարի արդյունքները: Բացահայտվեց տրոցկիստազինովևական բլոկի ծաղման սոցիալական արմատները: Համագումարը նշեց, որ իդեալես չախշախված, կազմակերպորեն անանկացած օպոզիցիոն բլոկը, լենինյան գծի դեմ մղած պայքարում ժողովրդի մեջ շունենալով ոչ մի հենարան, դադարեց քաղաքական հոսանք լինելուց: Համագումարը միահամուռ կերպով հաստատեց տրոցկիստազինովևական պարագլուխներին ՀամԿ(բ) պարտիայի շարքերից դուրս վտարելու ԿՎՀ-ի որոշումը:

ՀամԿ(բ) պարտիայի XV համագումարը քննության առավ նաև մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման հարցը, կապված ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի մշակման խնդիրների հետ:

Մեր երկրի ժողովրդական տնտեսության պլանաշարի, պրոպոզիցիոնալ զարգացումը օրյեկտիվ տնտեսական օրենք է, որը հատուկ է միայն սոցիալիստական հասարակությանը: ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պլանաշարի զարգացման օրենքի տնտեսական հիմքն արտադրության միջոցների հասարակական սոցիալիստական սեփականությունն է հանդիսանում: Հենց այդ պատճառով էլ այն փոխարինել է մրցման և արտադրության անարխիայի օրենքին, որը հատուկ է կապիտալիստական հասարակարգին:

ՍՍՌՄ-ում որքան ամրապնդվում և ընդլայնվում էր արտադրության միջոցների հանրային սեփականությունը, այնքան էլ ընդլայնվում և կատարելագործվում էր նաև մեր պլանավորման սխեմները:

Հանրահայտ իրողությունն է, որ մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման շրջանի դեռ շուրջին երկու տարիներին որոշակիորեն դրսևորվեց արդյունաբերության և պուղատնտեսության անհամաչափ զարգացումը: Այդ ժամանակ մեր երկրի սոցիալիստական արդյունաբերությունը զարգանում էր ընդլայնված վերարտադրության հիման վրա, իսկ պուղատնտեսությունը, որը ներկայացնում էր մանրատված գյուղացիական տնտեսություններ, հազիվ էր իրականացնում հասարակ վերարտադրությունը: Այս հանգամանքը հաշվի առնելով պարտիայի XV համագումարը դիրեկտիվ տվեց, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը

մշակելիս ամենից առաջ հաշվի առնել մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման արագ վերելքը՝ կապված դյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրների հետ: Հենց դրա համար էլ սլլանային նախանշումներում ցույց էր տրված խոշոր կապիտալ ներդրումների անհրաժեշտությունը ծանր արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության մեջ նրանց արագ զարգացման համար:

Հնգամյա պլանի դիրեկտիվներում նշանակալից տեղ էր տրվում ՍՍՌՄ աշխատավորության նյութական բարեկեցության և կուլտուրական պայմանների բարելավմանը, քնակարանային շինարարության բնդարձակման հարցերին:

ՀամԿ(բ) պարտիայի XV համագումարի բոլոր ուրոշումները, ինչպես ՍՍՌՄ բոլոր ռեսպուբլիկաների, մարզերի ու երկրամասների, այնպես էլ Հայաստանի պարտիական ու սովետական օրգանների համար ուղենիշ հանդիսացան սոցիալիստական շինարարության բոլոր հարցերում, մասնավորապես գյուղի սոցիալիստական արմատական վերակառուցման խնդրում:

Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեցան ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի դիրեկտիվները՝ հրղաշինարարության, հողօգտագործման, կոլեկտիվ տնտեսություններին ամեն կերպ խրախուսելու, աջակցելու և մի շարք ալլ միջոցառումների մասին:

Ելնելով պարտիայի XV համագումարի ուրոշումներից, կառավարական հատուկ ուրոշմամբ սահմանվեցին սրտոնություններ կուլտնտեսություններում միավորվող գյուղական տնտեսությունների համար, ավելացվեց կուլտնտեսություններին տրվող վարկերի գումարը:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը լուրջ դժվարությունների էր հանդիպում:

Գյուղացիական միլիոնավոր տնտեսությունների անցումը սոցիալիզմի ուղու վրա շէր կարող չհանդիպել կապիտալիստական տարրերի և առաջին հերթին կուլակության դիմադրության: Այս անցումը գյուղում կատարվում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում:

Գյուղի կապիտալիստական մնացորդների պայքարն այդ շրջանում ուղղված էր մի կողմից՝ գյուղի սոցիալիստական հաստատման, մյուս կողմից՝ սեփականը կայուն դնելով հացի վաճառքի դեմ: Սովետական կառավարությունը ստիպված էր կուլակներից հացի ավելցուկը բռնագրավել: Միաժամանակ արտոնություններ տրվե-

ցին չբավորութանը—կուլակներից բռնագրաված հացի մի զգալի մասը հանձնվում էր չբավորներին:

Կուլակների դեմ վճռական պայքարի ելան չբավորները և միջակները: Չենարկված միջոցները ավելցին իրենց արդյունքները: Կուլակությունը մեկուսացվեց: Հաջողությամբ առաջ էր գնում կուտնտեսային շինարարությունը:

Պաշտպանելով կուլակության և քաղաքի կապիտալիստական տարրերի շահերը, պարտիայի լենինյան քաղաքականության դեմ դուրս եկավ բուխարինական-ռիկոլյան խումբը, որի ամբողջ «ծբազկիրը» հանդում էր այն բանին, որ երկիրը մղեին դեպի կապիտալիզմի ռեստավրացիայի ուղին:

Հայաստանում նույնպես դասակարգային թշնամին իր պայքարն ուղղել էր դեպի գյուղական Սովետների, նոր կազմակերպված կոլտնտեսությունների, գյուղկոոպերացիայի դեմ: Կուլակային տարրերին տեղ-տեղ հաջողվել էր խցկվել Սովետներում, վարկային ընկերություններում, հողաբաժանման կոմիտեներում: Այսպես, օրինակ՝ Լենինականի գավառի Թալինի գավառամասի վարկային ընկերության նախագահը վիժեցրել էր գավառամասի վարկային ընկերության գործունեությունը: Լոռի-Փամբակի գավառի Վարանցովկայի (այժմ Կալինին) գավառամասի վարկային ընկերության ղեկավարությունը փաստորեն անցել էր կուլակների ձեռքը: Մեղրու և Գիլիզանի գավառների մի շարք գյուղերում 1928 թ. հողաբաժանման ժամանակ նկատի չէին առնված չբավոր և միջակ գյուղացիության շահերը՝ բերրի հողերի մի զգալի մասը մնացել էր կուլակ տնտեսատերերի ձեռքը, իսկ չբավոր և միջակ տնտեսատերերին բաժին էր ընկել ոչ միայն խոպան ու անբերրի հողեր, այլև պետականորեն սահմանված շնչապատկան նորմայից էլ պակաս:

Գյուղի կապիտալիստական տարրերը ստեղծվեցամբ ու վրիժառուությամբ էին լցված գյուղի ակտիվիստների դեմ: Նրանք ամեն կերպ փորձում էին մասսաների աչքում վարկաբեկել պարտիական և սովետական օրդաններում աշխատողներին: Եթե այդ չէր հաջողվում, ապա նրանք դիմում էին ավելի նողկալի միջոցներին՝ ահաբեկման:

Հենվելով կոլտնտեսականների և գյուղի մյուս ակտիվիստների վրա, Հայաստանի պարտիական կազմակերպությունները, ջախջախելով կապիտալիստական տարրերի դիմադրությունը, առաջ էին մղում կոլտնտեսային շինարարությունը: Եթե մինչև 1928 թվականի փետրվարը ռեսպուբլիկայում կային 32 կոլտնտեսություն և 4 կո-

մունա<sup>1</sup>, ապա այդ նույն տարվա հոկտեմբերի 1-ին արգեն կազմակերպված էին 74 կոլտնտեսություն<sup>2</sup>: Կոլտնտեսությունների ամբաստանման և նրանց հետադարձ դարձացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նրանց սիստեմատիկ վարկավորումը պետության կողմից:

Կոլտնտեսությունների կազմակերպման ու նրանց օժանդակության գործում նշանակալի դեր էին կատարում նաև սովխոզները:

1928 թ. Հայաստանում կազմակերպված այգեգործական, բամբակագործական, դաշտավարական, անասնապահական և այլ սովխոզների թիվը հասնում էր 11-ի:

Դաշտավարական և բամբակագործական սովխոզներում հողամշակման դգալի մասը կատարվում էր տրակտորներով: Սովխոզների դերը և նշանակությունը կարևոր էք նաև այն տեսակետից, որ նրանք հանդիսանալով սոցիալիստական տիպի տնտեսություններ, նոր կազմակերպված կոլտնտեսությունների և գյուղացիների համար ունեին ցուցադրական նշանակություն:

Ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում, կոլտնտեսաչին շարժումը սկսեց ծավալվել 1929 թ. վերջերից: 1929 թվականը ինչպես սոցիալիստական ինդուստրացման, առավել ևս գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար հանդիսացավ մեծ բեկման տարի:

## 2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԸՆԻՌՆՈՒՄԸ

1929 թ. մայիսին կայացավ ՍՍՌՄ Սովետների V համագումարը, որը քննության առավ և վերջնականապես հաստատեց Սովետական Միության ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը: «Հնգամյա պլանը, — ասված է Համկ(բ)Պ տասնըվեցերորդ կոնֆերենցիայի կողմից մեջ, — դա կապիտալիստական տարրերին հաղթահարելու համար բանվոր դասակարգի պայքարի պլանն է, մասսաների սոցիալիստական վերադաստիարակության պլանը, սոցիալիստական հասարակարգի հիմքի ստեղծման պլանը: Հըն-

<sup>1</sup> «Հայաստանի ազգաբնակչությունը, տերիտորիան և արդյունաբերությունը», Երևան, 1928, էջ 338:

<sup>2</sup> «ՀՍՄԿ կառավարության հաշվետվության նյութեր», 1926—1927 և 1927—1928 թթ., Երևան, 1929, էջ 134:

դամյա սլանով ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ներդրումների գումարը 1928—1932 թթ. համար հաստատվեց 64,6 միլիարդ ռուբլի: Այդ գումարից արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի մեջ ներդրվեց 19,5 միլիարդ ռուբլի, տրանսպորտի մեջ՝ 10 միլիարդ ռուբլի, գյուղատնտեսության մեջ՝ 23,2 միլիարդ ռուբլի:

Այդ հանդիսացավ ՍՍՌՄ արդյունաբերությունը, առանձնապես ծանր արդյունաբերությունը, և գյուղատնտեսությունը ժամանակակից տեխնիկայով դինեկու վիժխարի սլան:

Սովետական Միության ողջ աշխատավորությունը պայքարի դուրս եկավ կենսագործելու. «ՍՍՌՄ սոցիալիստական ինդուստրացումով դեպի սոցիալիզմ», «Սովետական երկրի ինդուստրացումը սոցիալիզմի կառուցման հիմքն է», «Գյուղ, առաջ դեպի խոշոր կոլեկտիվ տնտեսությունները» սլարտիայի կողմից ասաջ քաշված պատմական լողունները:

Սովետական իշխանության օրդանների ամրապնդման համար վճռական նշանակություն ունեցավ 1928—1929 թթ. վերընտրական կամսյանիան:

Ինչպես պմբողջ ՍՍՌՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանի գյուղական, դավառային և քաղաքային Սովետների ընտրություններն անցան ավելի կազմակերպված ձևով և մասսաների էլ ավելի ակտիվության պայմաններում: Սովետների միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներդրավեցին աշխատավորական նորանոր խմբեր: Ավելի քան երբևէ ամրացավ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը:

1929 թ. ապրիլին գումարվեց Հայաստանի Սովետների VI համագումարը: Համագումարի կենտրոնական հարցն էր Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա սլանի հաստատումը: ՍՍՌՄ բոլոր ավգային ռեսպուբլիկաների, այդ թվում և Հայկական ՍՍՌ հնգամյա սլանը, Միտթենական հնգամյա սլանի անխղելի մասն էր կազմում և բխում էր ՀամԿ(Բ) սլարտիայի XV համագումարի դիրեկտիվներից:

ՍՍՌՄ առաջին հնգամյա սլանում իր լիակատար արտացուցումն էր գտել լենինյան ակգային քաղաքականությունը: Հնգամյա սլանով հաստատվել էին մեծ գումարների ներդրումներ ակգային ռեսպուբլիկաների արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրական շինարարության զարգացման համար:

ՀամԿ(Բ) սլարտիայի XV համագումարի որոշումներում ուղղակի ասված է. «Հնգամյա սլանը հատուկ ուշադրություն պետք է

դարձնի հետամնաց ազգային ծայրամասերի և ռայոնների էկոնոմիկայի և կուլտուրայի բարձրացման վրա... դրան համապատասխան նախատեսնի նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի բարձր անմպեր»<sup>1</sup>:

Սովետական Հայաստանի առաջին հնգամյա պլանում արոտացուցված էր ռեսպուբլիկայի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական շինարարության խնդիրները:

Հայաստանի Սովետների VI համագումարը միահամուռ կերպով ընդունեց և հաստատեց ռեսպուբլիկայի ժողովրդական անտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը:

Սովետական Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանում իր խորը արտացուցումն էր գտել արդյունաբերության մի շարք ճյուղերի, առանձնապես էներգետիկ և լեռնահանքային արդյունաբերության բուռն զարգացումը:

Հայտնի է, որ համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Հայաստանի արդյունաբերության մեջ վճռական դեր էր խաղում պղնձարդյունաբերությունը: Բավական է հիշատակել թեկուզ այն փաստը, որ Հայաստանի ամբողջ արդյունաբերության եկամտի 60 տոկոսը, մինչ պատերազմը, ստացվում էր Ալավերդու և Զանգեզուրի պղնձարդյունաբերությունից:

Սովետական Հայաստանի վերականգնման շրջանի վերջին տարիներին և սոցիալիստական ինդուստրացման շրջանի տարիներին՝ ճրկարանական հետախուզությունները ցույց էին տալիս, որ Ալավերդում և Զանգեզուրում մեծ հեռանկարներ կային պղնձարդյունաբերության լայն զարգացման համար:

Հայաստանի պղնձարդյունաբերության արագ զարգացումը խոշոր նշանակություն ուներ Սովետական Միության մեքենաշինական արդյունաբերության համար: Լեռնահանքային արդյունաբերության այդ ճյուղի ինտենսիվ զարգացումը խորը փոփոխություն էր մտցնելու ռեսպուբլիկայի տնտեսական կյանքում:

Պլանում մեծ տեղ էր հատկացված նաև էներգետիկ, շինանյութերի, տեքստիլ և սննդարդյունաբերության հետագա զարգացմանը: Ինչպես միութենական, այնպես էլ ռեսպուբլիկայի պլանավո-

<sup>1</sup> К. ПСС в резолюциях съездов, конференций и пленумов ЦК<sup>4</sup>, ч. II, 1954, стр. 363.

րող օրգանները արդյունաբերության այդ ճյուղերի դարգացման խընդիրը առաջ էին քաշում հետեյալ նկատառումներով:

Սեանսա լճի ջրի հարուստ պաշարները, շինարարական քարերի, կրի և պեմզայի հարուստ հանքավայրերը լայն հեռանկարներ էին բաց անում էներգետիկ և շինանյութերի արդյունաբերության զարգացման համար: Իսկ տեքստիլ և սննդարդյունաբերության զարգացման համար հումքի պլխավոր աղբյուր էին հանդիսանալու Արարատյան դաշտի բամբակի պլանտացիաները, այգեգործության, առանձնապես խաղողագործության, զարգացումը: Արդյունաբերության այդ ճյուղերի զարգացումը նաև լիակատար հնարավորություն էր ստեղծելու ռեսուրսիկայում վերացնելու գործազրկությունը:

Ինդուստրացման ժամանակաշրջանի տարիներին Երևանում, Լենինականում և մյուս քաղաքներում կային ոչ քիչ թվով բանվորական ձգատ ձեռքը: Հնդամյա պլանի վերջին տարում միայն արդյունաբերող բանվորների թիվը սովորական էր ավելի քան 9000 մարդով, իսկ շինարարության մեջ աշխատող բանվորների թիվը՝ մոտ 14.000 մարդով<sup>1</sup>: Այդպիսով ռեսուրսիկայում ոչ միայն իսպառ վերացվելու էր գործազրկությունը, այլև բուն թափով զարգացող արդյունաբերության և շինարարության համար պահանջվելու էր հազարավոր նոր բանվորական ձեռքեր:

Ըստ հաստատված հնգամյա պլանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվելու էր 277 միլիոն ռուբլի. միայն արդյունաբերության մեջ հնգամյա պլանով հաստատված կապիտալ ներդրումների գումարը կազմելու էր 109 միլիոն ռուբլի:

Պլանավորված արդյունաբերության յարադ վերականգնման ու հետագա զարգացման համար կապիտալ ներդրումները առաջին հնգամյա կում կազմելու էին 15 միլիոն ռուբլի:

Հնդամյա պլանով էլեկտրիֆիկացիայի զարգացման համար կապիտալ ներդրումները պետք է հասցվեին մոտ 36 միլիոն ռուբլու: Շահագործման էին հանձնվելու Զոբագէսի • հիդրոկայանը, Երևանի և Լենինականի հիդրոկայանների երկրորդ տուրբինները, պետք է հիմնադրվեի Քանաքեռգէսի հիդրոկայանը, նախատեսված էր կառուցել նաև տեղական նշանակություն ունեցող մի շարք էլեկտրակայաններ:

Էժան էներգետիկ բազայի ստեղծումը լայն հնարավորություն էր բնձնուելու հետագայում քիմիական արդյունաբերության զար-

<sup>1</sup> Տե՛ս „Социстическое АрмССР“, стр. 12.

դացման համար: Առաջին հնգամյակի ընթացքում քիմիական արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմելու էին 8 միլիոն ռուբլի<sup>1</sup>: Պլանով նախատեսված էր քիմիական արդյունաբերության գործարանների կառուցում Նրևանում, Կիրովականում և Ալավերդում:

Ինչպես արդեն ասված է, բամբակի կուլտուրայի բազայի վրա ընդարձակվելու էր տեքստիլ արդյունաբերությունը: Առաջին հնգամյակի վերջին տարում Լենինականի «Մայիսյան ապտամբուլայան» տեքստիլ կոմբինատի մանարան գործարանի իլիկների թիվը հասցրվելու էր 100 հազարի, գործվածքային մեքենաների թիվը՝ 2500-ի: Նրևանում հիմք էր դրվելու կարի երկրորդ գործարանի կառուցմանը: Տեքստիլ արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները հնգամյակում կազմեցին ավելի քան 10 միլիոն ռուբլի<sup>2</sup>: Իսկ հընգամյակի վերջին տարում՝ 1932 թվականին տեքստիլ արդյունաբերության արտադրանքը հասնելու էր 17,4 միլիոն ռուբլու:

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանում նշանակալից տեղ էր հատկացված մենդի արդյունաբերության ընդարձակմանը: Արդյունաբերության այս ճյուղում նախատեսվեց ավելի քան 13 միլիոն ռուբլու կապիտալ ներդրում<sup>3</sup>: Պետք է վերասարքավորվեր Նրևանի պահածոների գործարանը և նախապատրաստական աշխատանք կատարվեր պահածոների նոր գործարան կառուցելու Հոկտեմբերյանում, Մեղրիում: Նախատեսվեց դինու, կոնյակի և սպիրտի արդյունաբերության մի շարք նոր ձեռնարկությունների կառուցում և հնեղի ընդարձակում:

Ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը 1927—1928 թթ. 28,2 միլիոն ռուբլուց հնգամյակի վերջին տարում պետք է հասցվեր 110 միլիոն ռուբլու: Այդ գումարի երկու երրորդը ստացվելու էր խոշոր արդյունաբերությունից, իսկ մնացածը՝ մանր արդյունաբերությունից:

Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ հնգամյակի վերջին տարում՝ 1932 թ. հասնելու էր ավելի քան 58 տոկոսի: Ժողովրդական տնտեսության ներքին կառուցվածքի մեջ պլանով նախատեսված այդ փոփոխությունը ճանապարհ էր հարթում Հայաստանը ագրարային երկրից վերածելու ագրարային-ինդուստրիալ երկրի:

<sup>1</sup> Տե՛ս «Социальность» АрзССР, стр. 20.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանով նախատեսվեց դյուրապատնետության սոցիալիստական հատվածը (սովխոզներ, կոլեկտիվ տնտեսություններ, մեքենատրակտորային կայաններ, գյուղկոոպերացիայի պարզ ձևեր) զարգացնել մաքսիմալ չափով: Միաժամանակ պիտի հատուկ ուշադրություն դարձվեր տեխնիկական կուլտուրաների զարգացմանը, հացահատիկային կուլտուրաների մշակման-ընդարձակմանը, անասնապահության զարգացմանը:

Գյուղատնտեսության մեջ ներդրումների գումարը հնգամյակի ընթացքում կազմելու էր ավելի քան 90 միլիոն ռուբլի, որից սովխոզներին ցանցի ընդարձակման, շինարարության և գյուղատնտեսության մեխանիզացիայի վրա ծախսվելու էր մոտ 27 միլիոն ռուբլի: Հնգամյակի վերջին տարում՝ 1932 թ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության արտադրանքը 1927—1928 թթ. համեմատությամբ համարյա կրկնապատկվելու էր:

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանում նշանակալից տեղ էր հատկացված աշխատավորության սոցիալ-կուլտուրական դրության է՛լ ավելի բարելավմանը: Պլանով հաստատվեց աշխատավարձի բարձրացում, արդյունարևրական ապրանքների գների իջեցում, լայն սպառման ապրանքներ արտադրող արդյունաբերական ձեռնարկությունների ցանցի ընդարձակում:

Պլանով նախատեսվեց ընդհանուր տարրական կրթության կիրառում, միջին և բարձր մասնագիտական կադրերի պատրաստման համար տեխնիկումների և բարձրագույն հաստատությունների ցանցի ընդարձակում:

1932—1933 ուսումնական տարում մասսայական դպրոցներում սովորողների թիվը հասնելու էր 180 հազար մարդու: 1932 թ. հիվանդանոցային մահճակալների թիվը պետք է հասցվեր 1600-ի:

Սոցիալ՝ կուլտուրական միջոցառումների համար հնգամյակում նախատեսվեց մոտ 24 միլիոն ռուբլի:

Հնգամյա պլանով լայն ծավալ պետք է ստանար քաղաքային շինարարությունը: Առաջին հերթին շարունակվելու էր մայրաքաղաքի՝ Երևանի վերակառուցումը: Քաղաքների բարեկարգման, բնակարանային և կոմունալ շինարարության վրա հնգամյակում պետք է ծախսվեր երկու անգամ ավելի դրամական միջոցներ, քան առաջին հնգամյակին նախորդող ժամանակաշրջանում:

Սովետական Միության ողջ աշխատավորությունը, տոգորված ջերմ խանդավառությամբ, մեծ ոգևորվյալ էր ընդունեց սոաշին հնգամյա սլանը և ձևնամուխ եղավ նրա կենսադործմանը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի առաջին տարիներին Վ. Ի. Լենինը ընդհանրացնելով աշխատանքի նկատմամբ մեր երկրի աշխատավորության նոր կոմունիստական վերաբերմունքի գրեթե ուղիղ կոմունիստական շարաթորյալների ձևով, այդ մեծ նախաձեռնության մեջ բացահայտել էր կոմունիստական հասարակության ծիլերը, ցույց էր տվել, որ նախկին շահագործումից ազատ մարդկանց զիտակցական ստեղծագործության մեջ է սովետական հասարակարգի ուժի և անպարտելիության գլխավոր սղրչուրը: «Կոմունիստական շարաթորյալներն արտասովոր արժեքավոր են, — գրել է Վ. Ի. Լենինը, — որպես կոմունիզմի փաստական սկիզբ, իսկ դա հսկայական հաղվագյուտ բան է, որովհետև մենք դանվում ենք այնպիսի աստիճանի վրա, երբ արվում են լուր առաջին քայլերը դեպի անցում կապիտալիզմից կոմունիզմի»<sup>1</sup>:

Երկրի սոցիալիստական վերափոխման գործում ՍՍՌՄ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության վճռականությունը առանձին ուժով գրեթե լից սոցիալիստական մրցության ծավալման մեջ: Հնգամյակի հենց առաջին տարվանից սոցմրցումը վերածվեց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրական սլանները հաջողությամբ կատարելու համար աշխատավորների մասսայական շարժման: Սոցիալիստական մրցությունը դարձավ սոցիալիզմի կառուցման կարեորագույն մեթոդը:

1929 թ. սկզբներին Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանում կազմակերպվեց կոմերիտական առաջին հարվածային բրիգադը. այդ նախաձեռնությունը կարձ ժամանակում բուռն արձագանք դտավ Սովետական Միության բոլոր արդյունաբերական կենտրոններում: Կրասնի վիբորժեցիների օրինակով ամենուրեք կազմակերպվեցին հարվածային բրիգադներ:

Համ Կ(բ) Պարտիայի XVI կոնֆերենցիան, որը կայացավ 1929 թ. ապրիլին, հաստատեց առաջին հնգամյա սլանը և դիմեց բոլոր բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին՝ կոչ անելու նրանց ծավալել սոցիալիստական մրցությունը: «Սոցիալիստական մրցությունը ու հնգամյակը — անխղելիորեն կապված են միմյանց հետ» ասված էր կոնֆերենցիայի կոչի մեջ:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 524:

Պարտիայի կողք աշխատանքային մեծ խանդավառություն առաջ բերեց ՍՍՌՄ աշխատավորների ամենալայն շրջաններում:

Ծավալվող սոցիալիստական մրցությունն ամենուրեք ընդունվում էր որպես հնգամյա սլանը կատարելու և զերակատարելու ամենալավագույն պայմաններից մեկը:

Սոցիալիստական մրցության ծավալման գործում անդաճատելի գեր խաղաց Վ. Ի. Լենինի՝ 1918 թ. գրած «Լինչպես կազմակերպել մրցությունը» նշանավոր հոդվածը, որն առաջին անգամ հրատարակվեց 1929 թ.:

Պարտիական, սովետական կազմակերպությունները խիստ պատասխանատվության էին կանչում հիմնարկ-ձեռնարկների այն դեկավարներին, որոնք կամա թե ակամա արդելակում էին բանվորների ախտիվ ձեռնարկությունը սոցիալիստական մրցությունը ծավալելու գործում:

Կոմունիստական պարտիան սոցիալիստական մրցությունը բնորոշել է որպես սոցիալիզմի կառուցման կոմունիստական աշխատանքի մեթոդ, հիմնված աշխատավորական միլիոնավոր մասսաների առավելագույն ախտիվության վրա:

Մոսկվայի և Լենինգրադի բանվորները, որոնք սոցմրցման կազմակերպման գործում նախաձեռնողները հանդիսացան, հատուկ կոչով պիմեցին ՍՍՌՄ բոլոր բանվորներին: Նրանց կողք բուռն արձագանք գտավ ամբողջ երկրի միլիոնավոր աշխատավորների շրջանում:

ՀամկենՄ Կենտրոնական Կոմիտեն 1929 թ. նոյեմբերին կոչով պիմեց կոմերիտմիության բազմամիլիոն բանակին՝ պահանջելով սոցիալիստական մրցության մեջ լինել առաջավորների շարքերում: Սկսվեց բուռն շարժում՝ հնգամյա սլանը շորս տարում կատարելու նշանաբանով:

Աշխատանքային կոմունիստական մեթոդը՝ սոցիալիստական մրցությունը, լայնորեն տարածվում էր նաև Հայաստանի արդյունարերական ձեռնարկություններում, շինարարության և գյուղատնտեսության մեջ:

1929 թ. հունիսին եղբայրական Վրաստանի խոշոր կառուցումներից մեկի՝ Ռիոնգէսի շինարարության հարվածայինները հատուկ պատգամավորություն ուղարկեցին Հայաստան՝ Չորագէսի կառուցողների հետ սոցիալիստական մրցության պայմանագիր կնքելու համար: Չորագէսը կառուցող կոլեկտիվը ջերմորեն ընդունեց Ռիոնգէսիցիների սոցմրցման հրավերը և պարտավորություն վերցրեց կառուցել էժան, արագ և լավ:

Մրցության շնորհիվ 1929 թ. երկրորդ դեօրն Ձեռագետում շինարարության ինքնարժեքն իջեցվեց 10<sup>0</sup>/<sub>6</sub>-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 25<sup>0</sup>/<sub>0</sub>-ով<sup>1</sup>:

Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկվեցին Երևանի բամբակազտիչ գործարանի և Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի բանվորները: Տեքստիլ կոմբինատի մանվածքային գործարանում մրցության շնորհիվ արտադրողականությունը բարձրացավ 18<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Պլանով նախատեսվածից 25<sup>0</sup>/<sub>0</sub> ավելի էին տալիս նույն կոմբինատի գործվածքային գործարանի բանվորները<sup>2</sup>:

Սոցիալիստական աշխատանքի մեթոդը լայն կիրառում գտավ Երևանի կարբիդի գործարանում: Մրցության շնորհիվ արտադրանքը բարձրացավ 32,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ով, ինքնարժեքն իջեցվեց 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Խնայողաբար էր ծախսվում քարածուխը, կիրը, էլեկտրոէներգիան: Կարբիդագործները մրցում էին Լենինգրադի «Կարմիր ավտոգեն» գործարանի բանվորների հետ: Սոցիալիստական մրցությունը լայն կիրառում գտավ Հայաստանի լեռնահանքային, առանձնապես սղնձարդյունաբերության աշխատավորների մեջ: Ամենուրեք երևան էր գալիս բանվորների ստեղծագործական եռանդն ու նախաձեռնությունը: Ալավերդու սլարտիական կաղմակերպության ղեկավարության մեջ Շամլուղի հանքերում կաղմակերպվեցին 15 կոմերիտական և երիտասարդական հարվածային բրիգադներ, որոնք արտադրական նորմաները գերակատարում էին:

Սոցմրցումը ծավալվում էր նաև երկաթուղային տրանսպորտում: Անդրկովկասի երկաթուղային 4-րդ բաժանմունքի երկաթուղայինները, որոնք սպասարկում էին գերազանցապես Հայաստանի տերիտորիան, սոցիալիստական մրցության մեջ էին մտել Բաթումի երկաթուղայինների հետ: Հայաստանի 1600 երկաթուղային բանվորներ մրցության մեջ էին մտել միմյանց հետ և ունեին սոցիալիստական մրցության անհատական սլայմանագրեր:

Սոցիալիստական մրցությունն աստիճանաբար արմատավորվում էր նաև Հայաստանի սովխոզներում ու կոլտնտեսություններում:

Ահներև էին սոցիալիստական մրցության առաջին տարվա հաջողությունները: Ռեսպուբլիկայի արդյունաբերության մի շարք ճյուղերում (պղնձի, թեթև արդյունաբերության, շինանյութերի, շի-

<sup>1</sup> Տե՛ս «Սորհրդային Հայաստան», № 283, 12 դեկտեմբերի 1929:

<sup>2</sup> Տե՛ս «Բանվոր», 29 նոյեմբերի 1929:

նարարութեան և այլն) արտադրողականութիւնը ընդհանուր առմամբ բարձրացավ 33 տոկոսով:

Սոցիալիստական մրցութիւնը ցույց տվեց աշխատանքի և նրան նոր ձևով վերաբերուելու հիանալի օրինակներ: Բանվորներն ու կոլտնտեսականները շատ ձեռնարկութիւններում, կոլտնտեսութիւններում և սովխոզներում առաջադրեցին հանդիպական պլաններ: Նրանք ցույց տվեցին հերոսական աշխատանքի օրինակներ: Նրանք ոչ միայն կատարում, այլև գերակատարում էին սոցիալիստական շինարարութեան բնագավառում պարտիայի և կառավարութեան նշած պլանները: Փոխվում էր մարդկանց վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ: Սոցիալիստական մրցութեան շնորհիվ լայն ասպարեզ էր բացվում աշխատավորական մասսաների գիտելիքներն ու ունակութիւնները ի սպաս դնելու առաջին հընդամյա պլանը հաշողութեամբ կատարելու համար:

Ռեսպուբլիկայում սոցիալիստական մրցութեան ծավալման գործում ՀԿ(Բ)Պ Կենտկոմի ղեկավարութեամբ մեծ նախաձեռնութիւն հանդես բերեցին արհեստակցական միութիւնները և կոմբրիտական կազմակերպութիւնները:

Արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկութիւնների արտադրական խորհրդակցութիւններում, սոցիալիստական մրցութեան առաջավորների կոնֆերանսներում սիստեմատիկաբար քննարկվում էին արտադրութեան բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման հարցերը: Արտադրական խորհրդակցութիւններում և կոնֆերանսներում բանվորների նախաձեռնութեամբ ընդունվում էին հանդիպական պլաններ, որոնք հետագայում լուրջ խթան հանդիսացան «հնդամյակը չորս տարում կատարելու» համաժողովրդական լոզունգի կատարման խնդրում:

Սովետական Միութեան անծայրածիր արկածով մեկ կատարվում էր միլիոնների արդյունաբերական շինարարութիւն, որի նմանը մինչ այդ դեռ չէր տեսիլ մարդկութեան պատմութիւնը:

Դնեսպրի քարքարոտ սահանքները, որոնք պարբերից ի վեր արգելք էին հանդիսանում նաւերի նորմալ երթևեկութեան համար, ոչ միայն նաւարկելի դարձվեցին, այլև այդ նույն տեղում կառուցվեց Եվրոպայի ամենահզոր հիդրոէլեկտրակայանը՝ Դնեսպրոգէսը: Դոնբասում, Ստալինգրադում, Յարոսլավլում, Բերեզնիկովում, Ուրալում և այլ վայրերում վեր էին սլանում սոցիալիստական ինդուստրիայի՝ ծանր արդյունաբերութեան հոյակապ կառուցումները: Ստեղծվում էին մետալուրգիական կոմբինատներ, դոմենյան, մար-

տեղյան հնոցներ, ավտոմոբիլի և տրակտորի գործարաններ, քիմիական արդյունաբերության գիգանտներ:

Հնգամյակի առաջին երկու տարում ՍՍՌՄ-ում արդեն լուրջ նվաճումներ կային սոցիալիստական ինդուստրիայի, առանձնապես ծանր ինդուստրիայի բնագավառում:

Այդ նշանակում է, որ մեր տնտեսական անկախության հիմքը, մեր ծանր ինդուստրիան, — մենք արդեն բարձրացրել ենք և շարունակել ենք ծավալել» — նշեց պարտիայի XVI համագումարը:

Սոցիալիստական ինդուստրիան խոշոր քայլեր էր կատարում նաև Անդրկովկասում:

Սոցիալիստական ինդուստրիայի հոյակապ պլանի կատարման ու դերակատարման համար մղվող պայքարում Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների և կառավարական օրգանների առաջ նոր խնդիրներ էին ծառանում՝ յաշխատանքի ծանրության կենտրոնը դարձնել արդյունաբերության ու գյուղատնտեսության բարգացումը, զլխավորել Անդրկովկասի բազմահազար բանվորների ու գյուղացիների ստեսծաղործ յաշխատանքը:

Համկ(բ) Պ Աշխտրոնական Կոմիտեի 1929 թվականի նոյեմբերի գիրեկտիվից հետո ազգային ռեսպուբլիկաների սոցիալիստական շինարարության և գյուղատնտեսության ճյուղերի զարգացման մասին, Անդրկովկասի պարտիական և սովետական օրգանների աշխատանքում շրջադարձ կատարվեց: Գիրեկտիվում ասվում էր՝ «Անդրկովկասում Ֆեդերացիայի մարմինները, որոնք առաջին շրջանում ատավելապես քաղաքական դեր էին խաղում և ապահովել էին Անդրկովկասի աղյուսակի հանրապետությունների հաջող զարգացումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը և ազգամիջյան խաղաղության ամրապնդումը, ներկա շրջանում պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերն ազգային հանրապետությունների տնտեսական-սոցիալիստական շինարարության վրա, նրանց ինդուստրացման և գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալական վերափոխության վրա»<sup>1</sup>:

Կենտրոնական Կոմիտեն միաժամանակ խնդիր դրեց է՛լ ավելի ամրացնել Անդրֆեդերացիայի տնտեսական բազան: Այդ նպատակով լայնացվեցին ԱՍՖԻ ԺՏԳԽ-ի իրավունքները՝ նրան տրվեց վերահսկողության ֆունկցիա՝ արդյունաբերության կարևոր ճյուղերի և ռեսպուբլիկաների ԺՏԳԽ-ի ղեկավարման նկատմամբ: Գյու-

<sup>1</sup> «Տորհրդային Հայաստան», № 273, 1 դեկտեմբերի 1929:

դասնահասուցյան սոցիալիստական վերակառուցման հիմնական ձեռնարկումները ղեկավարելու համար 1929 թվականին կազմակերպվեց Անդրֆեդերացիայի հոլագործության ժողովրդական կոմիսարիատ:

Անդրկովկասում մեծ շափով ավելացավ կապիտալ ներդրումների գումարը հատկապես ծանր արդյունաբերության մեջ: 1926—1927 առտեսական տարում ինդուստրիալ արդյունաբերության մեջ հիմնական ներդրումները, նախորդ տարվա համեմատությամբ, եթե ՍՍՌՄ ավելացել էր 17 տոկոսով, ապա Անդրկովկասում՝ 47 տոկոսով:

1928 թվականին, Անդրկովկասում շահագործման հանձնվեցին 14 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, ավելի քան 39 միլիոն ռուբլու արժողությամբ: 1929 թվականին ևս շահագործման հանձնվեցին 17 արդյունաբերական մեծ ձեռնարկություններ՝ 46 միլիոն ռուբլու ընդհանուր արժողությամբ: Հնդամյակի առաջին տարում հիմնադրվեցին 24 նոր ֆարրիկա-գործարաններ 80 միլիոն ռուբլու արժողությամբ:

Այս մեծ գործում Անդրկովկասի ռեսպուբլիկաներին խոշոր օգնություն էին ցույց առելու Սովետական Միության ժողովուրդները, հատկապես ռուս մեծ ժողովուրդը: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ինդուստրիալ կառուցումների համար ՌՍՖՍՌ-ից ստացվում էին գործարանային ամբողջ սարքավորումներ, շինանյութեր: Լենինգրադի, Մոսկվայի, Կիևի և մյուս քաղաքների մեքենաշինական գործարաններից ստացվում էին հիդրոտուրբիններ, դեներատորներ, արանսֆորմատորներ, մանող և գործող հաստոցներ և այլ մեքենայական սարքավորումներ:

Անդրկովկասում սոցիալիստական արդյունաբերությունը 1925 թվականից մինչև 1929 թվականը աճեց չորս անգամ: Այդ փաստն ինքնին վկայում է, որ Անդրֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաներն աչազորեն վերացնում էին տնտեսական, կուլտուրական հետամնացությունը: Դա Կոմունիստական պարտիայի լենինյան ադապտիվ քաղաքականության ամենավառ վկայությունն էր:

Արմատական շրջադարձ էր կատարվում նաև Անդրկովկասի գյուղատնտեսության բնագավառում: Լայն ծախվել էր ստանում գյուղատնտեսության կոոպերացումը: Անդրֆեդերացիայի պարտիական ու սովետական օրգանները ղեկավարվելով Լենինի ցուցումներով, առաջին հերթին ուշադրություն դարձրին մերձ-արևադարձա-

լին և մյուս տեխնիկական կուլտուրաների մշակութայամբ զբաղվող կոոպերատիվ արտեղների ամրապնդման և ընդարձակման վրա:

1929 թվականին, 1925 թ. համեմատությամբ, համարյա կրկնապատկվեցին բամբակի, թեյի, ցիտրուսային բույսերի սլանտուցիաները Անդրկովկասում:

Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների ստեղծագործական աշխատանքի և Ֆեդերացիայի մեջ մտնող ազգային ռեսպուբլիկաների պարտիական և սովետական ապարատի էլավելիլայն ինքնագործունեության ու նախաձեռնության շնորհիվ լուրջ պայքար ծավալվեց հնգամյա պլանը ժամանակից շուտ կատարելու համար:

Մեր երկրի սոցիալիստական արդյունաբերության զարգացման գործում կենսական նշանակություն ունեւր նավթարդյունաբերությունը:

Նավթարդյունաբերության ընդարձակման և նրա սլանի դերակատարման համար մղվող պայքարը պսակվեց աննախընթաց հաջողությամբ: Հնգամյակի երկրորդ տարում՝ նավթարդյունաբերությունը տվեց 809 միլիոն ռուբլու արտադրանք, այսինքն հնգամյա սլանուով ծրագրված արտադրանքի 83%:

Մեծ էին հաջողությունները ոչ միայն նավթարդյունաբերության, այլև Անդրֆեդերացիայի ժողովրդական տնտեսության սկուլտուրայի բոլոր ճյուղերում:

Ինչպես առաջին հնգամյակին նախորդող տարիներին, նույնպես և հնգամյակի ընթացքում Անդրկովկասում սոցիալիստական ինդուստրիայի զարգացման տեմպը բարձր էր միութենական արդյունաբերության զարգացման ընդհանուր տեմպից: Այդ փաստն ինքնին վկայում էր, որ նախկին հետամնաց ազգային ռեսպուբլիկաները, այդ թվում Անդրֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաներն, արագորեն վերացնում էին իրենց տնտեսական դարավոր հետամնացությունը:

Առաջին հնգամյա սլանը մեծ հաջողությամբ էր իրագործվում Սովետական Հայաստանում: Խոշոր ներդրումներ էին կատարվում ինդուստրիալ արդյունաբերության մեջ:

Առաջին հնգամյակի նախընթաց ութ տարվա (1921—1928) համեմատությամբ ռեսպուբլիկայի արդյունաբերության հիմնական ճյուղերում ներդրումների գումարը հնգամյակի առաջին

երկու տարում՝ 1928—1929 և 1929—1930 թթ. համարյա կրկնապատկվեց<sup>1</sup>։

Իարձք տեմպերով էր առաջ դնում Հայաստանի էներգետիկ և պղնձարդյունաբերության զարգացումը։ Այդ երևում է կապիտալ ներդրումների աճից։ Առաջին հնդամյակի նախընթաց 8 տարում արդյունաբերության այդ ճյուղերում կապիտալ ներդրումների գումարը կազմում էր միայն 8,5 միլիոն ուսւրլի։ Հնդամյակի առաջին երկու տարում 1928—1929 և 1929—1930 թթ. փաստական ներդրումների գումարը աճեց մոտ երկու և կես անգամ, իսկ միայն պղնձարդյունաբերության մեջ՝ երեք և կես անգամ<sup>2</sup>։

1929 թ. վերջերին հիմք դրվեց այն ժամանակվա ամենախոշոր կառուցումներից մեկի՝ Քանաքեռոգէսի հիդրոէլեկտրակայանի շինարարությանը։ Այդ ժամանակ շահագործման հանձնվեցին Լենինականի և Երևանի առաջին հիդրոէկտրակայանների երկրորդ հերթերը։

էներգետիկայի բուն զարգացումը Սովետական Հայաստանում մեծ հեռանկարներ բաց արեց սոցիալիստական արդյունաբերության հետագա խոշոր վերելքի համար։ Լուրջ նվաճումներ ձևեր բերվեցին պղնձարդյունաբերության զարգացման ուղղությամբ։ Արագ կերպով ոչ միայն վերականգնվում, այլև վերափոխման էին ենթարկվում Ալավերդու, Ղափանի պղնձահանքերը և ձուլման գործարանը։ Հետախուզական աշխատանքներ էին կատարվում նոր հանքավայրեր հայտնաբերելու ուղղությամբ։ Առաջին հնդամյակի առաջին տարվա (1928—1929) պղնձահանքի արդյունահանման աճը նախորդ՝ 1927—1928 թթ. համեմատությամբ վերակատարվեց ավելի քան 28%-ով, իսկ պղնձի ձուլման պլանը նույն տարիների համեմատությամբ գերակատարվեց մոտ 21%-ով։

Պետական խոշոր արդյունաբերության ճյուղերի մեջ ամենից արագ զարգանում էր քիմիական արդյունաբերությունը։ 1928—1929 թթ., 1927—1928 թթ. համեմատությամբ կարբիդի արտադրանքը բարձրացավ ավելի քան 46%-ով։

Հնդամյակի առաջին տարիներին ընդարձակվեցին Երևանի, Ալավերդու և Ղարաքիլիսայի (Կիրովական) քիմիական գործարանները։ Արդյունաբերական շինարարությունը լայն ծավալ ստացավ նաև Լենինականում ու Ղափանում։

Հնդամյակի առաջին տարում ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքը կազմեց մոտ 36 միլիոն ուսւրլի՝ 1927—1928

<sup>1</sup> Տե՛ս «Состроительство АрмССР», стр. 20.

<sup>2</sup> Նույն տեղում։

թվականի 28 միլիոն ռուբլու դիմաց: Սոցիալիստական արդյունա-  
բերության զարգացման աճը Հայաստանում ղերագանցում էր երկրի  
արդյունաբերության աճի միջին մակարդակը:

Սոցիալիստական հզոր խնդուատրիայի արագ զարգացումը ան-  
ուսհման հնարավորություններ էր ստեղծում արագ թափուլ առաջ  
մղելու գյուղի արմատական վերակառուցումը կոլտնտեսային ճա-  
նասպարհով:

1928—1929 թթ. գյուղատնտեսական մեքենաների, առանձնա-  
պես տրակտորների, մասսայական առաքումը կոլտնտեսուկթյուննե-  
րին, հետադայում ՄՏԿ-ների կազմակերպումը, սովխոզների և  
կոլտնտեսուկթյունների օրինակելի աշխատանքը, սկսուկթյան հատ-  
կացրած խոշոր վարկերը, որոշ դեր կատարեցին կոլեկտիվ տըն-  
տեսուկթյունների կազմակերպման գործում, որն սկիզբ էր առել  
1927 թ. և ավելի լայն ծավալ ստացավ 1929 թ. երկրորդ կեսին:

1928 թ. սկզբներին կազմակերպվեց կոլտնտեսուկթյունների  
ռեսպուբլիկական կենտրոն, որն ապահովեց նրանց կազմակերպա-  
կան ղեկավարությունը:

Կոլտնտեսուկթյունների նյութական բազան ամրացնելու համար  
Հայկական ՍՍՌ Ժողկոմխոթհի որոշմամբ, առանց հատուցման, կոլ-  
տնտեսուկթյուններին հանձնվեցին նրանց տերիտորիայում գտնը-  
վող արդյունաբերական մանր ձեռնարկուկթյունները: Ավելաց-  
վեցին կոլտնտեսուկթյուններին տրվող վարկերը: ՀԿ(բ)Պ Կենտրո-  
նական Կոմիտեի և Հայկական ՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կո-  
միտեի ցուցումներով ռեսպուբլիկայի Հողժողկոմատը և Հայգյուղ-  
կոտպը գյուղատնտեսական մեքենաներով և գործիքներով ապահո-  
վեցին կոլտնտեսուկթյուններին և գյուղկոտպ ընկերուկթյուններին:

Մինչև 1929 թ. ապրիլ ամիսը ավարտվեցին կոլտնտեսուկթյուն-  
ների միջգյուղյան հողաբաժանման աշխատանքները: Կոլտնտեսու-  
կթյունների աշխատանքները բարելավելու, ազրոկանոնները կիրա-  
ռելու, բերքատուկթյունը բարձրացնելու և արտագրուկթյունը սլա-  
նավորելու համար, կոլտնտեսուկթյուններին ամրացվեցին գյուղա-  
տնտեսական մասնագետներ:

Կոլտնտեսուկթյունների կազմակերպման ու ամրացման գործում  
նշանակալից աշխատանք էին կատարում բանվորական կոլեկտիվ-  
ները:

Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և Սովետական Միուկթյան այլ  
արդյունաբերական քաղաքների բանվորների օրինակով Հայաստա-  
նի արդյունաբերական համարյա բոլոր ձեռնարկուկթյունների բան-

վորներից կազմված բրիգադները գյուղ մեկնելով գլխավորում էին աշխատավոր գյուղացիութեան մեծ շրջադարձը դեպի կոլտնտեսութունները: Այսպես, օրինակ՝ Լենինականի երկաթգծի դեպոյի քանվորներից կազմված բրիգադները քաղաքական-մասսայական սիստեմատիկ աշխատանք էին տանում Դուզքենդի (Ախուրյան) Համամլուի (Սպիտակ) շրջանների գյուղերում: Բանվոր ազիտատորները գյուղացիներին բացատրում էին սլարտիայի քաղաքականութունը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեղում, սովխոզների և կոլտնտեսութունների աշխատանքի օրինակով գյուղացիներին ցույց էին տալիս կոլտնտեսութունների առավելութունները անհատական տնտեսութունների նկատմամբ: Բանվորական թրիգադները կոլտնտեսութուններին օգնում էին գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վերանորոգման աշխատանքներում, վերանորոգման սեփական սրհեստանոցներ կազմակերպելու գործում և այլն:

Սրեանի արդյունաբերական ձեռնարկութունների բանվորներից կազմված տանյակ բրիգադներ սիստեմատիկ աշխատանք էին կատարում Արարատյան դաշտի գյուղերում: Ալավերդու և Ղափանի հանքագործներից սուսանձնացված բանվոր ազիտատորները քաղաքական-մասսայական աշխատանք էին կատարում:

Հայաստանում մասսայականորեն կոլտնտեսութուններն էին մտնում միջակ տնտեսատերերը: Նրանք կոլտնտեսութուն մտնելով ընդմիջտ ազատվում էին կուլակների շահագործումից, համոզվելով, որ կոլտնտեսային ուղին հանդիսանում է ունևոր, կուլտուրական ու հրջանիկ կյանքի միակ ուղին:

Սակայն, գյուղի սոցիալիստական վերակառուցումը չէր ընթանում հարթ ու խաղաղ ճանապարհով: Կոլտնտեսային շինարարութեան հաջողութուններին զուգընթաց ավելի էր սրվում դասակարգային պայքարը:

Հայտնի է, որ 1927—1928 թվականներին, գյուղում կոլեկտիվ տնտեսութունները նոր էին սկսել կազմակերպչորեն ձևավորվել և գյուղի տնտեսական կյանքում դեռ էական նշանակութուն չունեին: Այդ ժամանակ դասակարգային թշնամին սահմանափակվում էր սլայքարի «խաղաղ» միջոցներով: Թշնամական տարրերն աշխատում էին գյուղացիութեան աչքում վարկաբեկել կոլեկտիվ տնտեսութունների դադափարը, սլրովակացիոն չուրեր տարածել կոլտնտեսութունների և ակտիվ կոլտնտեսականների ու պարտիական, սովետական աշխատողների հասցեին:

Դասակարգային թշնամին ուժեղացնելով իր պայքարը, բոլոր միջոցներով փորձում էր սևալ խրել բանվոր դասակարգի և գյուղացիության լենինյան դաշինքի մեջ, ձախողել միջակ և չքավոր գյուղացիության միասնական պայքարը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

Կոմունիստական պարտիան, Վ. Ի. Լենինը, սովորեցնում էին, որ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար ժողովող պայքարում, մենք կհաղթենք այն ժամանակ, երբ մեզ կհաջողվի գյուղի մեծամասնությունը՝ միջակին (ընդգծումը մերն է — Վ. Մ.) մեր կուլմը գրավել:

Միջակ գյուղացիությանը չքավորի կողմը գրավելը և գյուղացիության դաշինքը բանվոր դասակարգի հետ է՛լ ավելի ամրակուռ դարձնելը, ինչպես և մասնավոր տնտեսությունների կոլեկտիվացումը, տեղի էին ունենում դասակարգային համառ պայքարի հիման վրա:

Ինչպես մատնանշեցինք վերևում, 1929 թվականի վերջերից, ամբողջ Սովետական Միության ռեսպուբլիկաներում, որոնց թվում և Հայաստանում, սկսվել էր մասսայական կոլեկտիվ շարժումը: Այդ ժամանակ կոլեկտիվ շարժման բնորոշ գիծն այն էր, որ մեծ հոսանքով կոլտնտեսություններն էին մտնում միջակ տնտեսատերերը: Կոլտնտեսություններում հողը սկսում էին մշակել մեքենաներով, գյուղատնտեսական նոր ձևի գործիքներով:

Մի շարք կոլտնտեսություններ ոչ միայն ամրացել էին, այլ նաևնցից մի քանիսը ցուցադրական դեր էին կատարում:

1929 թվականի վերջերին Վերին Նաթոնարիսի (Էջմիածնի շրջան) կոլտնտեսությունն արդեն բնդդրիկ էր գյուղական տնտեսությունների մոտ կեսը և գյուղում դարձել էր տնտեսական-քաղաքական որոշակի ուժ: Գյուղի էկոնոմիկայի մեջ վճռական դերը կատարում էր կոլտնտեսությունը: Կոլտնտեսության անդամ էին դարձել միջակ և չքավոր գյուղացիներն մի ղղալի մասը: Կոլտնտեսությանն էին հանձնել գյուղի լավագույն վարելահողերը:

Արարատյան դաշտավայրի օրինակելի կոլտնտեսություններից էին Ղուրղուղուլիի (Արմավիր), Դավալուի, Նորագավթի, Փարպաբաբի և տասնյակ այլ կոլտնտեսություններ:

Կոլտնտեսային շարժումը ղղալի ծավալ էր ստացել նաև ռեսպուբլիկայի նախալենինային և լենինային շրջաններում:

Մասսայական կոլեկտիվ շարժումը Հայաստանում, իրարանցում էր առաջ բերել դաշնակների, կուլակների և տրոցկիստական

Թափթիուկները շարքերում: Այրվում էր դասակարգային թշնամուտքի տակի հողը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը մահացու հարված էր մեր երկրի ներսում դուռնա շունչացված վերջին շահագործող դասակարգին՝ կուլակությանը:

Դասակարգային թշնամիները կուլտնտեսությունների դեմ ուղղված պայքարում պործի դրեցին տեղորի, վնասարարության, ահարեկման, պրոլոկաշիայի և շանտաժի մեթոդները:

Ճաթղուանում (Կոտայքի շրջան) տրոցկիստները միացած կուլակներին հետ, ամեն կերպ փորձում էին ցրել կուլտնտեսությունը: Ինչտ է, այդ քանը նրանց չհաջողվեց, բայց և այնպես թշնամուտքը դավերի հետևանքով զգալիորեն տուժեցին կուլտնտեսություն աշխատանքները:

Կուլակները կատաղի պայքար էին կազմակերպում նաև այն կուլտնտեսությունների դեմ, որտեղ մեծ էր կուլտնտեսության ազդեցությունը ոչ միայն սովյալ գյուղի, այլև շրջանի մնացած գյուղերի վրա: Ինչպես վերևում մատնանշել ենք, էջմիածնի շրջանի առաջավոր կուլտնտեսություններից մեկն էր Վերին Խաթունարխի կուլտնտեսությունը: Տեղի կուլակները փորձում էին քայքայել կուլտնտեսությունը, ձախողել 1929 թ. դարնանացանի նախապատրաստման աշխատանքները՝ նրանք հրկիզեցին կուլտնտեսության հանրային անասնակերը: Սակայն Վ. Խաթունարխի կոմբիջը և կուլտնտեսության վարչությունը վճռական պայքար կազմակերպեցին թշնամական տարրերի դեմ: Կուլակները տեղոր կազմակերպեցին կուլտնտեսության վարչության նախագահի դեմ:

Սարգարաբաբաի (Հոկտեմբերյանի) կուլտնտեսությունն էին խցկվել դաշնակ-կուլակային Թափթիուկները, որոնք քայքայիչ աշխատանք էին կատարում կուլտնտեսության ներսում, ոչնչացնում էին անասունների մի զգալի մասը, հրկիզում և թալանի տալիս կուլտնտեսության անասնակերը: Թշնամիները բռնվեցին հանցանքի մեջ և ստացան իրենց արժանի պատիժը: Սակայն պայքարը չէր դադարում: Այս անգամ դաշնակ բանդիտները դարան մտած մահափորձ կատարեցին կուլտնտեսության վարչության նախագահի դեմ:

Դասակարգային թշնամիները քիչ վնաս չպատճառեցին նաև Ղուղիգիդանի (Հոկտեմբերյանի շրջան), Փոքր-Մալրայի (Բասարդեշարի շրջան), Ղուղաթի (Արթիկի շրջան) և մի շարք այլ կուլտնտեսություններին:

1929 թվականին Հայաստանում կուլեկտիվ շարժումն այնուպես

մենայնիվ այն բուն թափն ու ժալալը շտացավ, ինչպես Սովետական Միության կենտրոնական մարզերում:

Այդ ամենից առաջ պետք է բացատրել այն բանով, որ Հայաստանում դյուղատնտեսությունը դեռ ետ էր մնում, դասակարգային թշնամին լուրջ խոչընդոտ էր հանդիսանում ռեսպուբլիկայի դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհին:

Դասակարգային պայքարը սուր կերպարանք էր ստանում նաև բազալի սոցիալիստական հատվածի և կապիտալիստական տարրերի միջև: Աջ օպորտունիստները պահանջում էին կապիտալիստական տարրերի և սոցիալիստական հատվածի հավասար իրավունքներ առևտրի ասպարեզում:

Հայաստանի պարտիական և սովետական օրգանները դեկավարվելով ՀամԿ(բ)Պ XVI կոնֆերենցիայի որոշումներով է՛լ ավելի ուժեղացրին պայքարը դասակարգային թշնամու դեմ:

Կոմունիստական պարտիան իր շարքերից վտարեց տրոյկիստա-զինովևական դավաճաններին ու նրանց հետևողներին:

Այդ շրջանում կարևոր նշանակություն ունեցավ Կոմունիստական պարտիայի շարքերի զտումը, որը սկսվեց 1929 թ., ՀամԿ(բ) պարտիայի XVI կոնֆերենցիայի որոշմամբ:

Հայաստանի կոմպարտիան, մաքրելով իր շարքերը, խորթ, թլշնամակ տարրերից, է՛լ ավելի սերտորեն համախմբվեց ՀամԿ(բ) պարտիայի Կենտրոնական Կոմիտեի շուրջը, որի ղեկավարությունամբ Հայաստանի աշխատավորությունը զգալի նվաճումներ ձեռք բերեց սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում:

Կարևոր նշանակություն ունեցավ այդ ժամանակ (1929 թ.) նաև պետական ապարատի զտումը: Պետական ապարատի որոշ խճողվածությունը պրոլետարիատին խորթ տարրերով, պարտիային հարկադրեց ձեռնարկել պետապարատի հատուկ զտումը:

Ռեսպուբլիկայի պետական ապարատի զտման շնորհիվ շինովնիկ-բյուրոկրատ տարրերը և կարյերիստները զրկվեցին պետական ապարատում աշխատելու իրավունքից: Պետական ապարատն ավելի ճկուն դարձավ, իսկ նրա ներքին օղակները մասսաներին ավելի մոտ դարձնելու համար կատարվեց վարչական նոր լաժանում:

1929 թ. հուլիսից Հայաստանում վերացվեցին մինչև այդ գոյություն ունեցող վարչական բաժանումները: Հայաստանում նախկին ինը դավառների փոխարեն կազմակերպվեց հինգ օկրուգ: Ծրեանի օկրուգի մեջ մտնում էր 10 շրջան, Լենինականի օկրուգի

մեջ՝ 7, Լոռու օկրուգի մեջ՝ 5, Սևանի, օկրուգի մեջ՝ 6 և Զանգեզուրի օկրուգի մեջ՝ 3:

Կոմունիստական պարտիան ամփոփելով 1929 թ. Սովետական Միության ձեռք բերած հսկայական հաջողությունները սոցիալիստական ինդուստրացման և կոլտնտեսային շինարարության բնագավառում, 1929 թ. անվանեց մեծ բեկման տարի:

Բեկումն ակներև դարձավ աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման բնագավառում:

Սոցիալիստական մրցությունը, որը ծավալվել էր 1929 թ. սկզբից, դարձավ սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդը:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը լիովին համոզված էին, որ սովետական ժողովուրդը իր ուժերով, իր ներքին միջոցներով, առանց արտաքին օգնության, նյութական միջոցներ կգանի սոցիալիստական ծանր ինդուստրիայի արագ զարգացման համար: Այդպես էլ եղավ: Եթե 1928 թ. խոշոր արդյունաբերության մեջ ներդրումները կազմում էին 1.600 միլիոն ռուբլի, որից 1.300 միլիոն ռուբլի ներ էր դրվել միայն ծանր արդյունաբերության մեջ, ապա 1929 թ. կազմեց 3.400 միլիոն ռուբլի, որից ծանր արդյունաբերության մեջ՝ 2.500 միլիոն ռուբլի:

1929 թվականը ինչպես ՍՍՌՄ-ի բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդի պատմության մեջ բնորոշվում է որպես սոցիալիզմի կառուցման մեծ հաղթանակի տարի:

### 3. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՆԱՎՈՒՄԸ ԵՎ ԿՈՒՆՏՐՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական ինդուստրացման և կոլտնտեսային շինարարության ծրագրի կենսագործումը լիակատար պայմաններ էին ստեղծում մեր երկրի աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման համար:

Սովետական Հայաստանում 1929 թ. քաղաքներում բնակվում էր 200.000 մարդ, կամ ամբողջ բնակչության 20,6 տոկոսը<sup>1</sup>:

Քաղաքային բնակչության այդպիսի բուռն աճը ամենից առաջ բացատրվում է սոցիալիստական ինդուստրիայի աննախընթաց վերելքով:

<sup>1</sup> „Солестронительство АрмССР“, стр. 9, «Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում», Երևան, 1930, էջ 19:

Սովետական Հայաստանում բանվոր-ծառայողների թիվը 1926 թ. 23.828 մարդուց 1928 թ. բարձրացավ ավելի քան 42 հազար մարդու, աշխատավարձի ֆոնդը նույն տարիների համեմատության մը կրկնապատկվեց: Պետական սոցիալական ապահովագրության ֆոնդը նույն տարիների համեմատության մը նույնպես կրկնապատկվեց:

1926—1929 թթ. մեծ չափով աճեց ապրանքաշրջանառությունը: Պետական և կոոպերատիվ առևտրի ընդարձակման շնորհիվ մասնավորը դուրս էր մղվում առևտրի ասպարեզից: 1925—1926 տրեստեսական տարում մեծածախս և մանրածախս ապրանքաշրջանառությանը ղեկավարելիպատկում կազմում էր 66 միլիոն ռուբլի, իսկ 1928—1929 անտեսական տարում այն հասավ 108,4 միլիոն ռուբլու: Այդ թվերից պարզ ու սրտշակի երևում է, որ Սովետական Հայաստանի աշխատավորության գնողունակության բարձրացման հետևանքով շարունակ ընդարձակվում էր սովետական առևտուրը: Առևտրի ասպարեզում Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության վարած քաղաքականության շնորհիվ Սովետական Հայաստանում մասնավոր սեկտորը մեծածախս առևտրի ասպարեզից արդեն չբացել էր, իսկ մանրածախս առևտրի ասպարեզից նա օրըստօրե դուրս էր մղվում, իր տեղը զիջելով պետական և կոոպերատիվ առևտրական կազմակերպություններին:

Ինչպես Սովետական Միության մյուս ղեկավարողներում, այնպես էլ Սովետական Հայաստանում արդյունաբերական շինարարությանը ղուղղընթաց մեծ ծավալ ստացավ քաղաքային շինարարությունը: Բնակարանային և կոմունալ շինարարությունն առաջին հերթին ծավալվեց մաշրաքաղաքում՝ Նրևանում և արդյունաբերական կենտրոններ՝ Լենինականում, Ալավերդում, Ղափանում, Կիրովականում և այլ վայրերում:

Նրևանում կառուցվեցին բազմաթիվ բնակելի շենքեր, բացվեցին նոր փողոցներ, ղրոստայգիներ ու պուրակներ, սալահատակվեցին ու մաշթվեցին հին և նորակառույց փողոցները:

1927—1928 թթ. Նրևանում սկսվեց ակադեմիկոս Թամանյանի նախագծով երկու խոշոր նորակառույցների՝ Կառավարական տան և Ժողովրդական տան — (օպերայի բալետի թատրոն) կառուցումը:

Քացի պետական միջոցներով կառուցվող բազմաթիվ բնակելի տներից, պետությունը հսկայական միջոցներ տրամադրեց բնակչին կոոպ ընկերություններին, բանվորներին ու ծառայողներին՝ բնակարանային շինարարության համար: Նրևանի Քաղաքային Սո-

վետը հողամասեր հատկացրեց, երկարատև վարկ, շինանյութեր բաց թողեց անհատական բնակարաններ կառուցելու համար:

Լենինականը դավառական հետամնաց քաղաքից դարձաւ՝ ռեսպուբլիկայի արդյունաբերական և կուլտուրական կենտրոններից մեկը: Լենինականի բուն դարգացմանը մեծապես նպաստեցին տեքստիլ, երկաթուղու շտեպարշապին արհեստանոցների և այլ արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը: 1926 թ. մշակվեց քաղաքի վերակառուցման, վերաշինման ու ընդարձակման նախագիծը:

1926 թ. հոկտեմբերի 22-ին Շիրակի դաշտավայրում տեղի ունեցած երկրաշարժից խիստ տուժեցին Լենինական քաղաքը և շրջակա գյուղերը: Սովետական Միության ռեսպուբլիկաների բոլոր եղբայրական ժողովուրդները կազմակերպեցին նյութական և բարոյական լայն օգնություն: ՍՍՌՄ բոլոր ծայրերից դրամական օգնություն, հարյուրավոր վագոններով շինանյութ, պարեն ստացվեց երկրաշարժից տուժած բնակչության համար:

Լենինականի և նրա դավառի բնակչությանը երկրաշարժի օրերին մեծ օգնություն և օժանդակություն ցույց տվեցին տեղի վինավորական կայազորի մարտիկները և եղբայրական Վրաստանից օգնության եկած բժշկական խմբերն ու հրեջշները: Նրանք հաճախ վտանգի ենթարկելով իրենց կյանքը, փրատակների տակից դուրս էին բերում վիրավորներին և ցույց տալիս բժշկական օգնություն: Եղբայրական ժողովուրդների այդ անհիմ վավակների անձնուրաց վերաբերմունքը երախտագիտության ջերմ ղգացմունքով լցրեց հայ աշխատավորների սրտերը:

ՍՍՌՄ Զինվորական և Ծովային ժողովրդական Կոմիսար ընկեր Կ. Ն. Վորոշիլովը, 1926 թ. նոյեմբերի 7-ին, հատուկ հրամանով շնորհակալություն հայտնեց Լենինականի կայազորի անձնակազմին աղետի ենթարկված բնակչությանը բժշկական և այլ օգնություն ցույց տալու համար:

Միութենական կառավարության, եղբայրական ռեսպուբլիկաների և մեր երկրի աշխատավորության նյութական լայն օգնության շնորհիվ կարճ ժամանակում վերացվեցին աղետի հետևանքները:

Հայաստանի աշխատավորության վրա մեծ տպավորություն գործեց ՍՍՌՄ Կենտրոնականի նախագահ Մ. Ի. Կալինինի այցը Լենինական, 1927 թ. մայիսին: Մ. Ի. Կալինինը Շիրակի աշխատավորությանը կոչ արեց ուժեղացնել քաղաքի և դավառի շինարարական աշխատանքները, անհատապես վերացնել աղետի հետևանքները:

1927—1929 թթ. ոչ միայն լիկվիդացվեցին Երկրաշարժի հետեւիւնքները, այլև ծավալվեց մեծ շինարարութիւնը: Կառուցվեցին մի քանի տասնյակ բազմահարկ շէնքեր, բացվեցին նոր պողոտաներ, փողոցներ, կառուցվեցին նոր հյուրանոցի գեղեցիկ շէնքը, քաղաքային թատրոնը, Երկաթուղու հիվանդանոցի նոր կորպուսները, քաղաքի հարավ արևմտյան մասում ընկած բլուրը վերածվեց կուտուրայի և հանգստի պարկի:

Բնակարաններից զրկված քաղաքացիները պետութիւնից դրամական մեծ օժանդակութիւն ստացան և նրանց հնարավորութիւն արվեց կառուցելու ավելի լավ ու գեղեցիկ բնակարաններ:

Քաղաքային, կոմունալ ու բնակարանային շինարարութիւնը զգալի ծավալ ստացավ նաև ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում, դավառային կենտրոններում և գյուղերում:

Կիրովականը փոքրիկ ամառանոցային ավանից դարձավ արագ աճող արդյունաբերական կենտրոն: Ղափանում, Ալավերդում կառուցվեցին լուսավոր ու գեղեցիկ տասնյակ բազմահարկ բնակելի շէնքեր՝ նախկին փայտյա խրճիթների փոխարեն:

1926—1929 թթ. ռեսպուբլիկայում բնակարանային շինողն ավելացավ ավելի քան 100 հազար քառ. մետր տարածութիւնով:

1926—1929 թթ. ավելի մեծ հնարավորութիւններ ստեղծվեցին ուժեղացնելու խճուղիների և ճանապարհների կառուցողական աշխատանքները: Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ռեսպուբլիկական և տեղական նշանակութիւն ունեցող մի շարք խրճուղիներ: Հատուկ ուշադրութիւն դարձվեց միութենական նշանակութիւն ունեցող խճուղիների բարեկարգման վրա: Առանձին ուղեմասերում լայնացվեցին ճանապարհները և կամուրջները: 1926—1928 թթ. խճուղիների կառուցման վրա ծախսվեց ավելի քան մեկ միլիոն ռուբլի:

Հատուկ ուշադրութիւն դարձվեց աշխատավորութեան ստորջապահութեան վրա: Կորջ աշխատանք կատարվեց մալարիայի դեմ պայքարելու ուղղութիւնով: Այդ տեսակետից խոշոր նշանակութիւն ունեցավ ճահիճների շորացման աշխատանքների ձեռնարկումը:

1926—1929 թթ. կառուցվեցին նոր հիվանդանոցներ, ծննդատներ, բուժարաններ, ստացիոնար բուժումների մասնագիտական ինստիտուտներ և այլն: Գիտահետազոտական դպրոց աշխատանք կատարվեց Հայաստանի հանքային ջրերի բուժիչ հատկութիւնները որոշելու և այն աշխատավորութեանը ի սպաս դնելու ուղղութեամբ: 1927—1928 թթ. Դիլիջանում և Արզնիում կառուցվեցին սանատո-

բիսաների տուաչին մեծ կորույտաները: Այդ նույն տարում Արզնի սանատորիայում կառուցվեց հանքային ջրի գործարանը: 1928 թ. ընդարձակվեց Դիլիջանի կուրորտը, կառուցվեց երկրորդ կորպուսը. հանդստի և բուժման հիանալի վայրեր գարձան Կիրովականը, Ծաղկածորը, Ախթալան:

Նոր ծավալ ստացավ Սփյուռքի հայ աշխատավորության շարժումը՝ վերադառնալ Սովետական Հայաստան, մասնակից դառնալ մեր երկրի սոցիալիստական շինարարությանը:

Այդ տարիներին Հունաստանից, Ռուբրիայից, Եգիպտոսից և այլ երկրներից Հայաստան վերադարձան ավելի քան 7500 տարազիր հայ աշխատավորներ: Ներգաղթի կազմակերպմանը խոշոր օգնություն ցույց տվեց ՍՍՌՄ կառավարությունը, որը նշուխական խոշոր միջոցներ տրամադրեց ներգաղթողներին: Սովետական Հայաստանի նոր քաղաքացիներին արվեց դրամական օժանդակություն՝ վարկ: Նրանք հնարավորություն ստացան կառուցելու բնակելի տներ, ձեռք բերեցին գյուղատնտեսական գործիքներ, անասուններ և այլն: Բացի այդ, կառավարությունը դրամական մեծ գումարներ հատկացրեց ներգաղթածների համար նոր ավաններ ու գյուղեր կառուցելու նպատակով: 1927 թ. հիմնադրվեցին Արաբկիր և Նոր Սերաստիա ավանները, իսկ Արազդայանի գաշտավայրում հիմք դրվեցին մի քանի նոր գյուղերի: ՍՍՌՄ Աշխատանքի և Պաշտպանության Նորհրդի որոշմամբ Հայաստանի կառավարությանը խոշոր դրամական միջոցներ տրամադրվեց հետագա տարիներին շարունակելու արտասահմանում ապրող հայ աշխատավորության վերադարձը Սովետական Հայրենիք:



Մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման հետագա հզոր վերելքը, ինչպես և գյուղի սոցիալիստական վերակառուցումը, չէին կարող տեղի ունենալ առանց կուլտուրական ուսուցիչային: Կուլտուրական ուսուցիչային՝ սոցիալիզմի կառուցման անբաժանելի մասն է կազմում:

Ժամանակակից տեխնիկան արդյունաբերության ու հողագործության մեջ արմատավորելու համար պետք էր բարձրացնել մեր երկրի աշխատավորության, ողջ բնակչության կուլտուրական մա-

կարգակը, ամենից առաջ նրա ընդհանուր դրագիտությունը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և կուլտուրայի բոլոր բնագավառների համար պատրաստել մասնագետ կազմեր:

ՍՍՌՄ-ը ցարական Ռուսաստանից ժառանգել էր նրա ամենամամթալի մնացուկներից մեկը՝ բնակչության մի հակայական մասի անդրագիտությունը:

Վերականգնման շրջանի տարիներին որոշ աշխատանք կատարվել էր նաև կուլտուրական շինարարության ասպարեզում, բայց այդ միայն մեծ գործի սկիզբն էր:

1926—1929 թթ. մեծ պայքար ծավալվեց մեծահասակ քաղաքացիների անդրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Ռեսպուբլիկացում այդ տարիներին մեծ շտաբով ընդարձակվեցին լիկեյանների և կիսագրագետների համար դպրոցների ցանցը: Ավելի քան 3000 կոմերիտականներ, պրոֆակտիվիստներ, լուսավորության ֆրոնտի աշխատողներ անհատական կարգով տներում պարապմունքներ էին անցկացնում անդրագետների հետ:

1929 թ. մայիսին ՀամԿ(բ)Պ ԿԿ հատուկ որոշում ընդունեց՝ էլ ավելի ուժեղացնել մեծահասակ բնակչության անդրագիտության վերացման գործը:

ՍՍՌՄ կառավարությունը լրացուցիչ հատկացումներ կատարեց անդրագիտության վերացման ձեռնարկումների համար:

Հայաստանի ժողովոմսովետին կից կազմակերպվեց անդրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով, իսկ սլրակտիկ աշխատանքները գլխավորելու համար ռեսպուբլիկայի Լուսավորության ժողովոմստում կազմակերպվեց անդրագիտության վերացման վարչություն: Ինչպես ՍՍՌՄ բոլոր ռեսպուբլիկաներում, նույնպես և Հայաստանում անդրագիտության վերացման համար մղվող պայքարը դարձավ համաժողովրդական մեծ գործ: Ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներում, գյուղերում, բանվորական տվաններում աշխատանքն ավարտելուց հետո երեկոները լիկեյաններ էին հաճախում, կամ տներում էին պարապում հազարավոր մեծահասակ քաղաքացիներ: Հայաստանում 1921—1930 թթ. դրագետ դարձան ավելի քան 200 հազար աշխատավորներ և մեծահասակ բնակիչներ:

Հայն աշխատանք ծավալվեց մասսայական դպրոցների ցանցի ընդարձակման ուղղությամբ: Նախատեսվեց ամենակարճ ժամանակում անցկացնել ընդհանուր տարրական կրթություն:

ՀամԿ(բ) պարտիայի XV համագումարը առաջարկեց պարտիական և սովետական օրգաններին՝ ամեն կերպ օգնություն և

օժանդակությունը ցույց տալ ժողովրդական կրթության և կուլտուր-լուսավորական օրդաններին: Համագումարի դիրեկտիվներում առանձնապես նշված է՝ առավել ուշադրություն դարձնել նախկինում հետամնաց ազգային ուսուցիչականներում կուլտուր-լուսավորական աշխատանքների, հատկապես մասսայական դպրոցների ցրտնցի ընդարձակման և ուսուցման աշխատանքները քարելավելու հարցերի վրա<sup>1</sup>:

Համագումարի դիրեկտիվները կարևոր նշանակություն ունեցան ինչպես ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի կուլտուրական շինարարության աննախընթաց վերելքի համար:

Եթի 1924—1925 ուսումնական տարում Սովետական Հայաստանի տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում էին 76.989 աշակերտ, ապա 1928—29 ուս. տարում՝ սովորողների թիվը հասավ 86.225 աշակերտի<sup>2</sup>:

Սովետական Հայաստանի սյարտիական և սովետական օրգանները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև ազգային փոքրամասնությունների ուսումնակրթական և նրանց ընդհանուր կուլտուրայի բարձրացման վրա:

1926—1927 ուսումնական տարում Հայաստանում կար ավելի քան 93 ազգրեջանական առաջին աստիճանի և 3 յոթնամյա դպրոց: Այդ նույն ուսումնական տարում Երևանի բանֆակին կից բացվեց ազգրեջանական բաժին: Ռուսական առաջին աստիճանի դպրոցների թիվը հասավ 2-ի, յոթնամյաինը՝ 3-ի:

Առանձնակի ուշադրություն էր դարձվում քուրդ ժողովրդի կրթ-թա-լուսավորական գործի վրա: ՍՍՌՄ-ում ապրող քուրդ ժողովուրդը լիակատար հնարավորություն ստացավ նախկինում ճնշված ու հարստահարված վիճակից վեր բարձրանալու: 1929 թվականին ստեղծվեց քրդական նոր այբուբեն, որով ավելի քան բարենայաստ պայմաններ ստեղծվեց արագ կերպով վերացնելու քուրդ բնակչության անգրագիտությունը: Հետագա տարիներին է՛լ ավելի մեծ բարեփոխություններ մտցվեց քրդական այբուբենի մեջ: Նրա հիմքը դարձավ ռուս մեծ ժողովրդի հարուստ լեզվի այբուբենը. այն հարմարեցված էր քրդական լեզվի հնչյունականությանը: Թալինի և

<sup>1</sup> Տե՛ս «КПСС в резолюциях...», ч. II, стр. 467.

<sup>2</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР», стр. 108.

Ալազյազի շրջանների քրդական պյուղերի մեծ մասում բացվեցին բրդական դպրոցներ: Բացվեցին նաև հունական ու ասորական մի քանի դպրոցներ, որտեղ հույն և ասորի երեխաները կրթություն էին ստանում իրենց մայրենի լեզվով:

Եթե վերականգնման շրջանի տարիները հանդիսացան Հայաստանի դպրոցների կազմակերպման շրջան, ապա ինդուստրացման շրջանի տարիներին նոր շունչ մտավ ուսման, կրթության ու մատաղ սերնդի դաստիարակության գործում: Այդ առթիվ 1926 թ. մայիսին Հայկական ՍՍՌ Կենտրոնի կողմից կազմակերպված զեկուցման մեջ Լուսավորության ժողկոմ Ասքանազ Մուսայանը ասել է. «Լուսժողկոմատի մինչև այժմ կատարած աշխատանքների պատկերը բնութագրելով, իրրև անհրաժեշտ կազմակերպական աշխատանքների մի շրջան, այժմ մենք հնարավորություն ենք ստացել դադարաբաժնի բուժանդակությամբ, որակի, մտքով ավելի խոր աշխատանքներ ծավալելու արդեն գոյություն ունեցող լուսավորության ցանցում: Այդ աշխատանքներն արդեն սկսված են»<sup>1</sup>:

Մեր երկրի ողջ աշխատավորության հետ միասին սովետական ուսուցիչների մեծ բանակը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հերոսական աշխատանք էր կատարում մինչև վերջը հասցնելու կուլտուրական ռեվոլյուցիան:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրները հաջողությամբ կատարելու համար Հայաստանում նույնպես դաստիարակական շրջաններում մեթոդական աշխատանքի ձևերը: 1928 թ. Հայաստանի բոլոր գավառամասերի կենտրոններում բացվեցին մեթոդական կարիներտներ, իսկ գավառային լուսարժիներին կից ստեղծվեցին մեթոդ բյուրոներ, հնրաշրջաններում մանկավարժական խորհուրդներ: Ուսումնա-մեթոդական այդ հաստատությունների շուրջն էին համախմբվել Հայաստանի լավագույն մանկավարժները և իրենց աշխատանքում կուսակաժ փորձը հաղորդում էին երիտասարդ ուսուցչությանը:

Մեր ուսուցչության պղպի մասը տիրապետելով մարքս-լենինյան ուսմունքին, աճող սերնդին դաստիարակում էր սովետական վառ հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար անհրաժեշտ էին հազարավոր ու հարյուր հազարավոր նոր կադրեր:

<sup>1</sup> Տե՛ս «Նորհրդային Հայաստան», № 120, 23 մայիսի 1926:

Այդ ժամանակ մեր երկրի ինժեներա-տեխնիկական անձնու-կազմի մի ղզալի մասը շուներ բարձրագույն կրթություն՝ նրանց մի մասը պրակտիկներ էին:

1927 թ. Դոնրասի շախտի վնասարարների գործի դատավարու-թյունից հայանի դարձավ, որ նախկին մասնագետների մի որոշ մասը թշնամարար էր արամադրված Սովետական պետութայնը: Միջին և բարձրագույն կրթություն ունեցող կադրերի սուր պակասը շախտանց լուրջ վտանգի տակ էր դնում սոցիալիստական շինարարութայն բուռն ծավալումը: Առանց կադրերի պրոբլեմի լուծման հնարավոր չէր մեծ ծավալով առաջ մղել մեր երկրի ժողովրդական տնտեսութայնը:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարութայնը ամբողջ եռանդով ու գործարարութայնամբ ձևոնամուկա եղավ այդ կարևորագույն պրոբլեմի լուծմանը:

Սովետական Հայաստանում 1926—1929 թթ. ղզալի շախտվ ընդարձակվեցին միջին և բարձր որակի կադրեր պատրաստող ուսումնական հաստատութայններին՝ ցանցը:

Բարձրագույն պարոցներին որակյալ համալրում տալու նպատակով երկրորդ աստիճանի դպրոցները վերածվեցին 10-ամյա դպրոցներ, իսկ գյուղական յոթնամյա դպրոցները՝ գյուղերի դպրոցների: Այդ տարիներին բացվեցին քառամյա տեխնիկումներ՝ Երևանում, Լինինականում, Կիրովականում (ինդուստրիալ-շինարարական, գյուղատնտեսական, մանկավարժական, գեղարվեստի և այլն):

Որակյալ բանվորական ուժի պակասը լրացնելու համար ղզալիորեն ընդարձակվեց ֆարրիկա-գործարանային պարոցների ցանցը:

Վերականգնման շրջանի տարիների փորձը ցույց էր ավել, որ բանֆակները ղզալի դեր էին խաղում բանվոր երիտասարդութայնը, առաջ արտապրութայնից կտրվելու, միջնակարգ կրթություն տալու գործում: Բանֆակներն ավարտած ուսանողութայն ճնշող մեծամասնութայնը մտնում էր բարձրագույն դպրոց, ավելացնելով ուսանողութայն բանվորական կորիզը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, Հայաստանի էռաժողկոմատը ընդարձակեց բանֆակների ցանցը և հաստուկ ուշադրութայն դարձրեց նրանց ուսման գործի էլ ավելի բարելավման վրա:

Մինչև 1926 թ. Հայաստանում կար միայն երկու բարձրագույն ուսումնական հաստատութայն՝ Պետական համալսարանը, որը բացվել էր 1921 թ., և Պետական կոնսերվատորիան, որը հիմնադրե-

«Լեւ է 1923 թ.։ Համալսարանը դարձել էր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսութեան գրեթէ բոլոր ճյուղերի և կուլտուրական շինարարութեան ֆրոնտի համար կադրերի պատրաստման կարևոր օջախը։ Եթէ 1924—1925 ուսումնական տարում Պետական համալսարանում սովորում էին 895 մարդ, 1929—1930 ուսումնական տարում սովորողների թիվը հասաւ 1300 մարդու Այդ նույն ուսումնական տարւանից համալսարանն ունի 5 ֆակուլտետ՝ տեխնիկական դյուլատնտեսական, բժշկական, իրավաբանական և մանկավարժական. վերջին ֆակուլտետն ունի երեք բաժին՝ պատմագրական, ֆիզիկոմաթեմատիկական և բիոլոգիական։ 1925—1926 ուսումնական տարում համալսարանը տվեց իր անդրանիկ շրջանավարտները։

Համալսարանի շուրջն էին համախմբված ռեսպուբլիկայի գիտա-մանկավարժական ամենաաչքի ընկնող մասնագետները։ Այդ տարիներին պրոֆեսորի կոչումներ շնորհվեց գիտա-մանկավարժական աշխատանքի վաստակ ունեցող մի խումբ գասսիստներին, որոնց թվում ակնաւոր հայագետ-պատմաբան, համալսարանի առաջին ակտոր Հակոբ Մանանդյանին, ակնավոր գրականագետներ և լեզվաբաններ Մանուկ Արեղյանին, Հրաչյա Աճառյանին, Գրիգոր Ղափանցյանին, ֆիզիկայի և տերմոդինամիկայի նշանավոր մատնագետ Ալեքսանդր Հակոբյանին, ակնավոր բժիշկ-մանկավարժներ Լեոն Հովհաննիսյանին, Վահան Արծրունուն, Արտաշես Մելիք-Աղամյանին, Համբարձում Քեչեկին և ուրիշներին։

Հայաստանի պարտիական և սովետական օրգանները առանձնահատուկ ուշադրութուն են դարձնում նաև համալսարանի գասսիստական կազմը համալրելու նոր երիտասարդ շնորհալի գիտամանկավարժական կադրերով։ Համալսարանը գերազանց առաջադիմութեամբ ավարտած և գիտամանկավարժական աշխատանքի համար խոստումնալից մարդկանց գործուղելով Լին Մոսկովայի և Լենինգրադի համապատասխան գիտական հաստատութիւններ. լրացնելու իրենց գիտելիքները։

Բացի այդ, 1927—1928 ուսումնական տարւանից բացվեց Պետական համալսարանի ասպիրանտուրան։

ՍՍՌՄ ժողկոմսովետի որոշմամբ 1928 թ. Երևանում բացվեց Համամիութենական անասնաբուժական ինստիտուտը հայկական և ռուսական բաժիններով։ Ինստիտուտում առաջին տարւանից հիմնադրվեցին կենդանաբանութեան, անատոմիայի, հյուսվածազննու-

Յլան, սաղմնարանության, ընդհանուր զոտեխնիկայի, երկրագործության հիմունքների և այլ ամբիոններ:

Ուսման առաջին տարում Անասնաբուժական ինստիտուտ ընդունվեցին 120 ուսանող, որոնց զգալի մասը գործուղված էին եզրայրական ռեսպուբլիկաներից՝ Ռուսաստանից, Վրաստանից, Աղբյուրեջանից և Միջին-Ասիական ռեսպուբլիկաներից:

Միժամանակ ՍՍՌՄ՝ կառավարությունը մեծ զոհարներ տրամադրեց ինստիտուտի ուսումնական նոր կորպուսի, անատոմիկումի, լաբորատորիաների և հանրակացարանների կառուցման համար:

Երևանում բացված Անասնաբուժական ինստիտուտը դարձավ գյուղատնտեսական կադրերի պատրաստման կարևոր հաստատություններից մեկը: Երա նշանակությունն ավելի մեծ էր, քանի որ բարձրագույն կրթության մասնագետներ էր պատրաստում ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև եղբայրական ռեսպուբլիկաների համար:

Բարձրագույն կրթությանը երաժշտագետներ և որակյալ երաժիշտներ պատրաստելու գործում մեծ է Երևանի Պետական կոնսերվատորիայի դերը:

Ազգային ռեսպուբլիկաների համար որակյալ կադրեր էին պատրաստվում նաև Սովետական Միության կենտրոնական քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական հիմնարկներում, որտեղ սովորում էին նաև Սովետական Հայաստանից զնացած մեծ թվով երիտասարդներ: Սովետական Հայաստանի ինտելիգենցիայի մի զգալի մասն իր ուսումն ստացել է Մոսկվայի և Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հայաստանի տնտեսական կյանքի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի զարգացմանը զուգահեռ սկսեց զարգանալ նաև գիտությունը:

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների համար շատ կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գիտական արշավախմբերի կատարած գիտահետազոտական ուսումնասիրությունները Սևանի ավազանում, Արագածում և Արարատյան դաշտավայրում:

1927 թվականից ակադեմիկոս Լևինսոն Լևինգի ղլիսավորած արշավախումբը գիտական լուրջ աշխատանք կատարեց Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմի ուսումնասիրության գործում: Սևանում

տառաչին անգամ կազմակերպվեցին հիդրո-օդերևութաբանական և հիդրո-մետերոլոգիական կայաններ: Գիտական արշավախմբերի կատարած շահումների և ուսումնասիրությունների հիման վրա կազմվեցին Սեանա լճի բարեխառնության ուսումնասիրության խորության քարտեզները և այլն: Այդ ուսումնասիրությունների ղեկավար նպատակն էր առաջ քաշել և պրակտիկ լուծում տալ Սեանա լճի ջրի օգտագործմանը՝ էլեկտրիֆիկացիայի և ոռոգման համար, որը հետագայում վիթխարի նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի սոցիալիստական հզոր ինդուստրիայի և դյուղատնտեսության զարգացման համար:

Հայկական ՍՍՌ Ժողովուրդների օրոշմամբ 1925 թ. հունվարին կազմակերպվեց Հայաստանի Գիտության և Արվեստի ինստիտուտը, որը ՍՍՌԳ Գիտությունների ակադեմիայի և Գ.Ս. Անդրեևիչի անվան ֆիզիկալի ամենաեռանդուն օգնությանը ու աջակցությանը զբաղվելու էր ռեսպուբլիկայի սոցիալիստական շինարարության, հայագիտության, արվեստի ու դրականության հետ կապված պրոբլեմների ուսումնասիրությամբ:

Գիտության և արվեստի ինստիտուտը ուներ երեք բաժին՝ բնագիտական-մաթեմատիկական, պատմա-հասարակական և գեղարվեստի:

Գիտության և Արվեստի ինստիտուտի բնագիտական բաժինը 1926 թվականից հետազոտության է ենթարկել Հայաստանի հողերը, Սեանա լճի զաղտնի ջրամուկյուն արժեքը և Սեանա լճում սիզա ձկան ընտելացման ու բազմացման խնդիրները:

Ինստիտուտի այդ նույն բաժինը սխտեմատիկաբար կատարում էր Սեանա լճի զանազան կետերում ջրի տարրեր խորություններում պարունակող բակտերիաների ուսումնասիրություն: Այս պիտահետազոտական աշխատանքներն ունեցան տնտեսական գործնական բնույթ:

Գիտության և Արվեստի ինստիտուտի պատմա-հնագիտական բաժինը, Պետական Մատենադարանի, Պատմական հուշարձանների կոմիտեի, Պետական պատմական թանգարանի ունեցած հարուստ նյութերի հիման վրա զբաղվում էր հայագիտական հարցերով:

Ականավոր պատմաբան պրոֆ. Հովսեփի Օրբելու գլխավորած հնագիտական էքսպեդիցիան այդ տարիներին նախնական պեղումներ կատարեց Ամրերգում և Գառնիում: Ականավոր ճարտարապետ

Թորոս Թորոսյանը շարունակում էր զբաղվել հայ հին և միջնադարյան ճարտարապետության դիտական հարցերով:

Թ. Թորոսյանը 1928 թ. հրատարակեց «Շինանյութերը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում» կարևոր աշխատությունը, որը նաև կիրառական նշանակություն ունեցավ:

Գիտահետազոտական լուրջ աշխատանք էր կատարում նաև Պետական համալսարանը:

1925 թվականից սկսած պարբերաբար հրատարակվել է «Գիտության և Արվեստի ինստիտուտի տեղեկագիրը», մինչև այսօր էլ հրատարակվում է Պետական համալսարանի «Տեղեկագիրը»: Գիտական հանդեսներում և առանձին գրքերով 1926—1928 թթ. լույս տեսան հայադեռ պրոֆ. Հակոբ Մանանդյանի «Գիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպանության շրջանում», «Հայաստանի պատմությունը Յուրբ-Յաթարական արշավանքների շրջանում», «Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում» և այլ աշխատություններ:

Գիտական խոշոր արժեք են ներկայացնում նաև պրոֆ. Մանուկ Աբեղյանի կազմած հայ հին դրականության և գրաբարի քերականության դասագրքերը: Մեկը մյուսի ետևից հրատարակվում են նրա «Գուսանական ժողովրդական երգերը» «Հայկական հին էպոսը» և այլ աշխատություններ:

Ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը տարագրությունից նոր էր վերադարձել Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Ինչպես մյուս գիտնականների, նույնպես և Հ. Աճառյանի համար լիակատար պայմաններ ստեղծվեցին զբաղվելու մանկավարժական ու գիտական բեղմնավոր աշխատանքով:

Պրոֆ. Հ. Աճառյանը 1926 թ. սկսեց հրատարակել գիտական խոշոր արժեք ներկայացնող «Հայերենի արմատական բառարանը» վեց մեծածավալ հատորներով: Վաստակավոր գիտնականի այդ աշխատությունն ամենայն իրավամբ իր տեսակի մեջ համարվում էր միակը, որի նմանը չէր եղել ոչ միայն հայկական, այլև համաշխարհային լեզվագիտական դրականության մեջ:

Այդ տարիներին լեզվագիտությանը ու ուրարտագիտությանը էր շարունակում զբաղվել պրոֆ. Գրիգոր Ղափանցյանը: Նա 1928 թ. ուսումնասիրեց Նոր Բայազետում գտնված ուրարտական թագավոր Ռուսա առաջինի թողած արձանագրությունը: Այդ ուսումնասիրությանը Գ. Ղափանցյանը բացահայտեց արձանագրության վերաբերյալ նախկիններում մեկնաբանված լուրջ

ազգավաղումները և նշեց վերջինիս կարևոր նշանակությունը՝ լեզվաբանական լեքսիկական արժեքը ուրարտագիտության համար:

Գիտական լուրջ ուսումնասիրություններ էին կատարվում տեխնիկական գիտությունների բնագավառում:

Համալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Հակոբյանը ուսումնասիրում էր «Կլասիկ թերմոդինամիկայի» հարցերը, կապված քիմիական կոնստանտի հետ: Նշանավոր քիմիկոս Ս. Ղամբարյանը իր աշակերտների հետ ուսումնասիրում էր «Օ-բինդուլիզ և ՕՕ-դիբինդիլ հիդրօկիսամինի քայքայումը», «Բինդուլ պիրօքսիդ և սիկանդիր ամինները»: Այս ուսումնասիրությունները կիրառական սրտալի նշանակություն ունեցան քիմիական արդյունաբերության զարգացման համար:

Գիտահետազոտական լուրջ աշխատանքներ էին կատարվում նաև դյուլատնասիության և լուծիկական դիտությունների ստապարեղում:

Երկրի առաջընթացից և տ շմնացին սովետահայ գրողները: Գրական կյանքը նոր էստապ թևակոխեց:

Երկրում տիրող իրադրություններն իրենց դրոշմն էին դրել և գրականության վրա:

Բուրժուական տարրերն ամեն կերպ փորձում էին խանգարել սովետական գրականության առաջընթացը: Պարտիան և Սովետական կառավարությունը օգնում, օժանդակում էին պրոլետգրողներին, պայքարելով հնից ժառանգություն մնացած կուլտուրայի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի դեմ:

Մեր երկրի սոցիալիստական շինարարության բուռն ծավալն ու աննախընթաց վերելքը Սովետական Միության գրողների, այդ թվում և սովետահայ գրողների շրջանում արմատական բեկում առաջացրեց:

Բացի պրոլետգրողների կազմակերպությունից, Հայաստանում 1927 թվականին կազմակերպվեց նաև «Հայաստանի աշխատավորական գրողների միությունը»: Այդ նույն թվականին կազմակերպվեց նաև գրողների Անդրկովկասյան ասոցիացիան, որն զգալի դեր խաղաց Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների գրողների, գրականագետների ու արվեստի բոլոր ճյուղերի աշխատողների մեթոդական գործում:

1927 թ. դեկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի պրոլետգրողների միության երկրորդ համագումարը: Համագումար-

րի որոշմամբ ստեղծվեց «Սովետական Հայաստանի գրողների ֆեդերացիա»։ Գրողների ֆեդերացիայի կազմակերպումը հանդիսացավ Հայաստանի պրոլետարական և աշխատավորական գրողների նամագործակցության ամենալավագույն միջոցը։

Սովետական իշխանության առաջին տարիներին, ինչպես ՍՍՌԿ-ում, այնպես էլ Հայաստանում, գրականության մեջ առաջնակարգ տեղ էր գրավում քաղաքացիական կռիվների թեման։ Երբ մեջ նրկիրը թևակոխեց սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանը, սովետական գրողները սկսեցին ճանաչել նորը, աստիճանաբար մտանցան նոր հորդացող կյանքին։ Ժամանակակից մյուս թեման սովետական գյուղն էր, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման թեման։

Նշելով 1920-ական թվականների վերջերից սկսած հայ գրականության առաջընթացը, ամենից առաջ արժանի է հիշատակել այդ գրականության մեջ սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր Հակոբ Լալորյանի ստեղծագործությունը։ Ինդուստրացման սկզբի տարիներին անվանի բանաստեղծն իր նոր ստեղծագործությունների մեջ վեր է հանել սոցիալիզմ կառուցող աշխատավորների բուռն եռանդը, նրանց նոր ձգտումներն ու խոհերը։ Այդ տարիներին է նա գրել «Բուշեհի է Շիրկանալը» և «Վոլտովարոյ» պոեմները։

Սովետական օկուլուցիոն պոեզիայի ամենատանջավոր ներկայացուցիչներից մեկն էր Նզիշև Չարենցը։

Հայ գրողներից Չարենցը առաջինն էր, որ դիպուկ կերպով և սեղարվեստական մեծ ուժով մերկացրեց դաշնակիների ավանսյուրիզմը, ազդային շփոխիզմը, նրանց ամենազազրելի դերը հայ ժողովրդին բազում արհավիրքներ հասցնելու գործում։ «Խմբապետ Մավարը», «Երկիր նաիրի», «Կապկազ» և այլ պոեմներում ու մի շարք բանաստեղծություններում ականավոր գրողը սպանիչ սարկազմով դիմակաղերծ է արել դաշնակիներին։

Ե. Չարենցի 1926—1929 թթ. ստեղծագործությունների մեջ ահնառու տեղ է գրավում Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի վառ կերպարը։ Լենինին նվիրված բանաստեղծությունների մեջ Չարենցը մեծ Լենինին պատկերել է որպես աշխարհի բոլոր ճնշված դասակարգերի մեծ առաջնորդ։ Սովետական գրականության ոսկյա ֆոնդի մեջ է մտել Ե. Չարենցի «Լենինն ու Ալին», «Լենին քեռին», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մաժիկի և մի գույգ կոշիկի մասին» և Լենինին նվիրված մի շարք այլ բանաստեղծություններ։

Զարեհի ստեղծագործությունների ամենակարևոր մտախնայ-  
քից մեկն էլ նրա սովետական ամենաչելք հայրենասիրությունն է:

Այդ տարիներին արտասահմանից Հայրենիք վերադարձան հայ  
ականավոր գրողներ Ալ. Շիրվանզադեն և Ավ. Իսահակյանը: Նրանց  
չափազանց հուզում է այն մեծ աշխատանքը, որ կատարում էր հայ  
ժողովուրդը: Ահա թե ինչպես է բնութագրել մեր ժողովրդի խաղաղ  
ստեղծագործական աշխատանքը Ավ. Իսահակյանը: 1926 թ. նա  
գրել է. «Տեսնում եմ ավերի ու մոխիրների միջից, խաղաղությունը  
զրահավորված, կանգնում է աշխատավորական կորհրդային Հա-  
յաստանը համամարդկային գաղափարներով, համաշխարհային  
բովանդակությամբ և ազգային սնով-դեմքով»:

Ավ. Իսահակյանը 1927 թ. ավարտելով «Լիլիթ» ումանտիկ վի-  
ուպերը, շարունակում էր աշխատել «Սասմա Մհեր» վիպերգի վրա:  
Ալ. Շիրվանզադեն գրեց իր հայտնի կատակերգությունը՝ «Մորզանի  
խնամին», ուր վարպետորեն մերկացրել է հայ բուրժուական էմի-  
գրանտների սնանկությունը արտասահմանում, նրանց այլասեռում  
ու կործանումը: Բացի այդ, անվանի վիպասանը աշխատում էր  
«Կյանքի բովից» ինքնակենսագրական վեպի վրա:

Դ. Դեմիրճյանի գրած պատմվածքների հերոսները դարձան սո-  
ցիալիստական աշխատանքը կերտող նոր մարդիկ, նրա այդ շքու-  
ջանի գործերից են՝ «Մեքենան», «Հանգստի տունը», «Աբդուլը» և  
այլ պատմվածքներ: Դ. Դեմիրճյանը միաժամանակ սովել է ազա-  
տագրված կնոջ («Սաթո», «Նարդի») իղձերն ու խոհերը: 1927 թվա-  
կանին նա գրեց «Քոչ Նազար» հայասնի կատակերգությունը:

Մ. Արաղին իր «Կարմիր հարանացու», «Կոմերիտոհին», «Հան-  
դիսում» պատմվածքների մեջ արտացոլել է սովետական նոր հա-  
սարակարգի մի շարք երևույթներ:

Ստ. Գուրյանը գրեց մի արժեքավոր վիպակ՝ «Գրագարանի  
աղջիկը», որի թեման ուղղյուցիոն պատմական անցյալի մի պատ-  
կեր է:

Նշանավոր սլոնա Ս. Զարյանը 1920-ական թվականներին  
ձևավորվեց իրրև բանաստեղծ: Նա այդ տարիներին գրել է «Ջրանց-  
քի կապույտ երկրում», բանաստեղծությունների շարքը: Դրանից հե-  
տո գրած «Նոյեմբերյան օրերին» պոեմը ուշադրավ է իր սյուժետա-  
յին կառուցվածքով: Ն. Զարյանի այդ շրջանի ամենսուշադրավ  
երկն է «Ռուշանի քարափը» և պոպեան, որը գրել է 1929 թվականին:  
(լույս է տեսել 1930 թ.): Այս պոեմը գրված է հայրենասիրական

զերմ ոգով, գեղարվեստորեն պատկերված է սոցիալիստական փակաբառուցման առաջին քայլերը հայ գյուղում:

Պոեմում վարպետորեն տրված է դասակարգային սուր սպառնալից գյուղի կուլիտիվացման ժամանակ:

Այդ շրջանում իր լիրիկական բանաստեղծություններով աչքի էր ընկնում Գ. Սարգսնը: Նա կարողացավ քնարերգությունը միահյուսել սոցիալիստական իրականությանը և գեղարվեստական վառ պատկերներով տվեց նոր, աճող ու զարգացող կյանքի ռեալ պատկերը:

Գ. Սարգսնը իր «Հարվածաշիններին», «Երկաթալարի երգը», «Աճում», «Նորհրդային Հայաստան» բանաստեղծություններում պատկերում է սոցիալիզմի կառուցման հաղթարշավի ճանապարհով ընթացող մեր երկրի հերոսիկան, սոցիալիստական հասարակարգ կառուցող մարդկանց վերափոխումը՝ երկրի վերափոխման հետ միասին:

Գ. Սարգսնը գրել է նաև արևելյան պոեմներ «Գյուլնարա», «Կըզ-Կալանջ» և այլն: Այս պոեմներում բանաստեղծը տվել է հարստահարված, սարկուսթյան վիճակի հասած Իրանի աշխատավորության բուռն բողոքը բռնակալների դեմ: «Գյուլնարա» պոեմը շափաղանց հուզական է, լիրիկական պատկերավոր նկարագրություններով:

Բանաստեղծ Ա. Վշտունին գեռես ունյուցիայի առաջին օրերից շրջադարձ էր կատարել գեալի պրոլետարական գրականությունը: Այդ շրջադարձին մեծապես նպաստել էր նրա կապերը Անդրկովկասի Եանվորական շրջանների հետ:

Ինդուստրացման շրջանի տարիներին նա հայտնի էր իբրև ուսուցչուհի-ուսանողի գրող: Նույն տարիներին գրված լավագույն բանաստեղծությունների թվին են պատկանում նրա «Էննին» ոտանաչորը: Ազատ Վշտունին գրել է Արևելքին նվիրված բանաստեղծություններ՝ «Ստամբուլ» (1926 թ.), «Կալկաթա» (1928 թ.) և այլն:

Սովետական Հայաստանի գրական կուլտուրական կյանքի նշանակալի իրադարձություններից մեկն էր Ֆրանսիական կոմպարտիայի անդամ, ախանավոր գրող Հանրի Բարբյուսի այցը Սովետական Հայաստան 1928 թվականին, որտեղ գրական-հասարակական լայն շրջանների հետ բարեկամական սերտ կապեր ստեղծեց: Հ. Բարբյուսի վրա խոշոր տպավորություն էր թողել վերաշինվող Սովետական Հայաստանի ձևեր բերած հաջողությունները, ինչպես

արդյունաբերության, նույնպես և գրականության, կուլտուրայի և արվեստի բոլոր բնագավառներում:

Հայաստանից վերադառնալուց մի քանի ամիս հետո «Հայաստանի բարեկամներին» նամակում Բարբյուռը գրել է. «Ես ուրախ եմ, որ պատեհություն է ներկայանում ինձ իմ խոսքն ուղղել Հայաստանի աշխատավորությանը. այս առթիվ վերականգնում եմ հիշողությունն այն օրերի, որ անցյալ տարվա վերջերին ապրեցի այն գեղեցիկ երկրում, որ Հայաստանն է, և որն իր նկարագրեղ ու խոր կյանքով վերարտադրելու եմ մի աշխատության մեջ, որը պատրաստում եմ: Ես այնքան հաճախ և այնքան լիակատար համակրանքով հազորդակից եմ եղել հայերի հետ, որ ինձ թվում է, թե միշտ բարեկամներին հետ եմ...»<sup>1</sup>:

Ինչպես միշտ, այնպես էլ 1920-ական թվականներին մեծ էր ուսսական գրականության բարերար ազդեցությունը սովետահայ գրականության վրա: Հատկապես շատ մեծ էր պրոլետարական գրականության հիմնադիր, հանճարեղ գրող Մաքսիմ Գորկու գերն ու ազդեցությունը, ոչ միայն հայ գրականության, այլև Սովետական Միության մյուս ժողովուրդների գրականության վրա:

Մ. Գորկին իր քաղմաթիվ հրապարակախոսական հոդվածներում ու կուլյթներում առաջ էր քաշում սոցիալիստական ռեալիզմի հարցը, մատնանշում էր սովետական գրողների անելիքները, նրանց առջև ծառայած ամենահրատապ խնդիրները:

1928 թ. հուլիսին Մ. Գորկին այցելեց Հայաստան: Հռչակավոր գրողին, սովետական մեծ քաղաքացուն անչափ հրճվանք պատճառեց մոխիրների ու ավերակների միջից վեր սլացող գործարանները, էլեկտրակայանները, դպրոցները, բնակելի շենքերը: Նրա վրա խոշոր տպավորություն էր թողել նոր շահագործման հանձնված նրևանի առաջին հիդրոէլեկտրակայանը:

Մ. Գորկու գալու առթիվ նրևանում գումարվեց քաղմամարդ միտինգ, հայ ժողովրդի անունից մեծ գրողին ողջունեց Հայկակյն ՍՍՄ Ժողկոմսովետի նախագահի տեղակալ, Լուսավորության Ժողկոմ Ա. Մռավյանը: Միտինգում պատասխան ճառով հանդես եկավ Մ. Գորկին: Նա նշեց, որ անցած պատմական կարճ ժամանակում Սովետական Միության բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, մեծ աշխատանք է կատարել ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բնագավառում, «Այն, ինչ որ ես այստեղ

<sup>1</sup> «Երրհրդային Հայաստան», № 82, 8 ապրիլի 1928:

տեսնում եմ, — ասել է Մ. Գորկին, — դա սկիզբն է վեհ աշխատանքի, իսկական նոր կյանքի, նոր կուլտուրայի»:

Հայաստանի աշխատավորութունը, ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին, 1928 թ. տոնեց ռուս մեծ ժողովրդի արժանավոր զավակ, հռչակավոր զրոյ Մ. Գորկու ծննդյան 60-ամյա և դրական-հասարակական ու քաղաքական գործունեության 35-ամյա հոբելյանը:

Ինչպես ողջ սովետական, այնպես էլ սովետահայ պրականութունն ապրում էր իր վերելքի շրջանը, որի հետագա զարգացմանը խթանեց Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1932 թ. ապրիլի 23-ի «Գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» պատմական որոշումը:

Ինդուստրացիան շրջանի տարիներին լայն հնարավորություններ ստեղծվեցին երաժշտական, թատերական, նկարչական, քանդակագործական և ճարտարապետական արվեստի զարգացման համար:

Կարճ ժամանակում Հայաստանի պետական երաժշտական ստուդիան ուսման սրահով և սովորողների թվով այնքան էր առաջադիմել, որ արդեն 1923 թ. կառավարական հատուկ որոշմամբ այն վերածվեց կոնսերվատորիայի: Երաժշտական կուլտուրան առաջ մղելու գործում խոշոր դեր կատարեց ականավոր կոմպոզիտոր Մլեքսյանդր Սպենդիարյանը, որը 1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով եկավ Հայաստան:

Մեծատաղանդ կոմպոզիտորը ռեսպուբլիկայի կոնսերվատորիայում կատարում էր մանկավարժական ընդմնավոր աշխատանք: Այստեղ նա ավարտեց իր ստեղծագործությունների դուլսի գործոցը՝ «Ալմատս» օպերան, չալս գրեց «Երևանյան էտյուդներ» սքանչելի սիմֆոնիան: Այս նոր ստեղծագործություններով Սպենդիարյանն իր ճերմ վերարեմոնտը գրեթե զեպի մեր նոր կյանքը:

1926 թ. նվազեց ականավոր կոմպոզիտորի երաժշտական գործունեության 25-ամյա հոբելյանը: Նրան շնորհվեց ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստի քարձր կոչում: Ա. Սպենդիարյանն ապրում էր ստեղծագործական աշխատանքի ամենաածաղկուն շրջանը, երբ 1928 թ. մայիսի 7-ին նա վախճանվեց: Նրա մահը խոշոր կորուստ էր ոչ միայն հայկական, այլև Սովետական Միության կրթության արվեստի կուլտուրայի համար:

Ալ. Սպենդիարյանի մահվան առթիվ Եվգ. Բրաուդնինը «Պրավդայում» տպագրված «Խոշոր կորուստ» վերնագրով հոդվածում գրել է. «...իր երաժշտական կրթությամբ հարելով հզոր խթմ-

բակին», Սպենդիարյանն անցել է երաժշտական վարպետութեան մեծ ու բազմակողմանի մի դպրոց: Նա օրկեստրի ղարմանալի վարպետներից է: Դրա հետ միաժամանակ օժտված էր կոմպոզիտորական մեծ տեմպերամենսով»<sup>1</sup>:

Մեծ կոմպոզիտորի անժամանակ մահը խոր վիշտ պատճառեց նրա բարեկամին, մտերիմ ընկերոջը՝ Ալ. Շիրվանդագեին: «Խորապես վշտացած եմ իմ մտերիմ ընկեր Սպենդիարյանի մահով,— գրել է Ալ. Սպենդիարյանի մահվան առթիվ Ալ. Շիրվանդագեն,— խոնարհվում եմ հրաշալի հնչյունների, մեծատաղանդ ստեղծագործողի աճյունի առջև...»<sup>2</sup>:

Սոցիալիստական շինարարութեան այդ մեծ վերելքի տարիներին իրենց երաժշտական տաղանդը դրսևորեցին կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Արմեն Տիգրանյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը և մի շարք շնորհալի երիտասարդ երաժշտագետներ:

Սովետական Հայաստանում երաժշտական կուլտուրայի աննախընթաց զարգացմանը խոշոր շափով նպաստում էր Սովետական Միության կենտրոնական քաղաքների երաժշտական բարձրագույն հաստատությունների օդնությունն ու օժանդակությունը: Երաժշտական արվեստի մեջ ավելի խորանալու և իրենց վարպետությունը կատարելագործելու համար շնորհալի շատ երիտասարդներ գործուղվում էին Մոսկվա և Լենինգրադ, իսկ Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆ. Ս. Կուշնարյանի գլխավորած դիտական էքսպեդիցիան սիստեմատիկաբար դրի էր առնում Արարատյան դաշտի, Շիրակի, Նոր Բայազետի ժողովրդական երգերը երաժշտական մշակման համար:

Պատմական որոշ ուղի էր անցել նաև սովետահայ թատրոնը: Թատերական արվեստը հանդիսացավ սոցիալիստական շինարարության համար պայքարի ու հաղթանակի պրոպագանդայի և աշխատավորության էսթետիկական դաստիարակության ամենակարևոր օջախներից մեկը:

Սովետահայ թատրոնն ինդուստրացման ժամանակաշրջանի տարիներին կլասիկ դրամատիկական երկերին զուգահեռ բնագրեր է ժամանակակից, մեր երկրի հերոիկական պատկերող պիեսներ, ինչպես, օրինակ, Շչեգուլովի «Բուբրը», «Տրանսատլանտիկ», Կիրշո-

<sup>1</sup> „Правда“, № 107, 8 мая 1928.

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», № 109, մայիսի 11, 1928:

նի «Մեկյսերը զրնդում են», «Հողմերի քաղաքը», Յանովսկու «Ցա-  
սում», Լավրենտևի՝ «Բեկում», Ֆուրմանովի «Խոտվուխյուն» և այլն:  
Մեծ հաջողությամբ բեմադրվում էին նաև հայկական, ռուսական ու  
ևլրոպական կլասիկների պիեսները՝ Սոճնդուկյանի «Պեպոն»,  
«Խաթարալան», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացիանները»,  
Շիրվանզադեի «Մորզանի խնամին», Օստրովսկու «Եկամտավոր  
պաշտոնը», Շեքսպիրի «Օթելլոն» և այլն:

Սովետահայ թատրոնի ռեպերտուարը հարստանում էր ոչ  
միայն սովետական ու ինքնուրույն գործերով, այլև բարձր էր նրա  
բեմադրությունների գեղարվեստական որակը: Հնարավոր դարձավ  
շատ կորձ ժամանակում ունենալ դերասանների, ռեժիսորների,  
նկարիչների ամբողջ խմբեր: Նրանց մի զգալի մասը թատերական  
կրթություն էին ստացել, մոտիկից շփվել և վարպետացել էին երկ-  
րի թատերական կուլտուրայի կենտրոններում՝ Մոսկվայում, Կե-  
նինգրադում, Կիևում:

Սովետահայ թատրոնի ռեժիսորական կուլտուրայի կատարե-  
լագործման ու բարձրացման խնդրում նշանակալից երևույթ հան-  
դիսացավ Մոսկվայի Վախտանգովի անվան թատրոնի ականավոր  
դերասան-ռեժիսոր Ռուբեն Սիմոնյանի (Սիմյոնով) հրավիրումը  
Նրևան, որը 1929—1930 թթ. մեծ վարպետությամբ բեմադրեց  
Օստրովսկու՝ «Եկամտավոր պաշտոն» և Կիրշոնի՝ «Հողմերի քա-  
ղաք» պիեսները, որը մեծ միորձ հանդիսացավ սովետահայ թատրո-  
նի երիտասարդ ռեժիսորների համար:

Որպես նկարիչ-ձևավորողներ թատրոնի հետ սերտ կերպով  
կապված էին ճարտարապետ-նկարիչներ՝ Կարո Հալաբյանը, Մի-  
քայել Մաղմանյանը, քանդակագործ Արա Սարգսյանը:

1926—1927 թթ. թատերաշրջանում Մոսկվայից հրավիրվեց  
տաղանդավոր նկարիչ Գևորգ Յակուլյանը (Շակալով): Նա հրաշա-  
լիորեն ձևավորեց Շեքսպիրի՝ «Վենետիկի վաճառականը» և Շիր-  
վանզադեի՝ «Մորզանի խնամին» պիեսների բեմադրությունը:

Տաղանդավոր արտիստներ Հ. Արելյանը, Վ. Փափաղյանը,  
Համիկը, Ար. Ոսկանյանը, Օլ. Գուլպյանը, Մ. Մանվելյանը, Գ.  
Ավետյանը, Ց. Ամերիկյանը, Հ. Խարաղյանը լիակատար հնարա-  
վորություն ստացան դրսևորելու իրենց տաղանդը:

Անվանի դերասան-գերասանուհիների կողքին հանդես եկան  
շնորհալի ու տաղանդավոր երիտասարդ դերասանների մի ամբողջ  
խումբ: Հայաստանի թատերասեր հասարակության ուշադրությունն  
էին գրավում Հ. Ներսիսյանը, Վ. Վաղարշյանը, Ավ. Ավետիսյանը,

Դ. Մալյանը, Բ. Գաբրիելյանը, Ռ. Վարդանյանը, Վ. Վարդանյանը, Գ. Զանիրեկյանը, Ար. Ասրյանը, Ար. Հարությունյանը, Տ. Շամիրխանյանը, Վ. Աճեմյանը և շատ ուրիշներ: Նրանք իրենց հիանալի, նրբին ու գեղեցիկ խաղով վայելում էին Հայաստանի աշխատավորության ջերմ համակրանքը:

Թե անցած տաս տարվա ընթացքում (1921—1930) ինչպիսի բարձրության էր հասել Սովետական Հայաստանում թատերական կուլտուրան՝ դրա ամենալավ վկայությունն է 1930 թվականին Մոսկվայում կայացած ՍՍՌՄ ժողովուրդների արվեստի համամիութենական տասնօրյա օլիմպիադային մասնակցած Երևանի առաջին պետական դրամատիկ թատրոնին՝ օլիմպիադայի կազմկոմիտեի կողմից արված գնահատականը: Այդ գնահատականում ասված է. «Հայաստանի պետական թատրոնը... ցույց է տալիս կուլտուրայի վերասանական կուլտուրայի բարձր մակարդակ, թատերական արտահայտչական միջոցների ազատ տիրապետում, խաղի հստակ նկար և շարժման ուժով, ժեստի զուտ ուժ և խոսքի կուլտուրայի բարձր զարգացում... Հայաստանի պետական թատրոնն ունի բոլոր տվյալները դրավելու խորհրդային առաջավոր թատրոնների շարքի ակներև տեղերից մեկը»<sup>1</sup>:

Արվեստի մյուս ճյուղերի մեջ նշանակալից տեղ էր վրավում և կինոն: Հայաստանի կինոստուդիան ինդուստրացման տարիներին տվեց սոցիալական բովանդակությամբ հագեցված մի քանի գեղարվեստական նկարներ՝ «Նամուս», «Զար ոգի», «Զարե», «Շոր և Շորշոր» և այլ նկարներ, որոնք հասարակության կողմից լավ ընդունելություն գտան:

1926 թ. կազմակերպվեց «Սովետական Հայաստանի ուսուցչություն նկարիչների ասոցիացիայի հայկական ֆիլիալը», որն իր շուրջն էր համախմբել ռեսպուբլիկայի նկարիչներին:

Սովետահայ նկարիչներն ու քանդակագործները խանդավառվելով մեր երկրի սոցիալիստական շինարարության հզոր վերելքով, իրենց նոր ստեղծագործությունների մեջ պատկերում էին սոցիալիզմ կառուցող մարդկանց հերոսիկան:

Անվանի նկարիչ Մարտիրոս Սարյանը մեծ վարպետությամբ պատկերել է Ալավերդու լեռնահանքային արդյունաբերությունից մի տեսարան՝ «Հողային աշխատանքը» կոմպոզիցիոն նկարը: 1927 թ. Տրետյակովյան գալերեան, ռուս և Սովետական Միության

<sup>1</sup> Ս. Մ Լ Ի ք ս և թ յ ա ն, Երևանի Պետական թատրոնը, էջ 65:

բոլոր ժողովուրդների թագն ու պսակը կազմող այդ դանձերի թանգարանը, Մ. Մարյանի ստեղծագործություններին հատկացրել էր առանձին տեղ, որտեղ ցուցադրված էր նրա լավագույն գործերից 13 գեղանկար: Նրա այդ շրջանի բազմաթիվ ստեղծագործությունները Հայաստանի Պետական թանգարանի (այժմ Պետական պատկերասրահ), լավագույն դարդն է հանդիսանում: Սովետական Հայաստանի կառավարությունը քարձր գնահատելով Մ. Մարյանի մատուցած ծառայությունները նկարչության ասպարեզում 1927 թ. ժողովրդական նկարիչի պատվավոր կոչում շնորհեց նրան:

Նշանավոր պորտրետիստ Աղաջանյանը մեծ վարպետությամբ կերտել է սովետական մարդկանց դիմանկարները: 1927—1929 թվականների նրա ստեղծագործությունների մեջ տիպական են «Բանվոր», «Կարմիր Բանակային», «Կոմբերիտուհի», «Հոկտեմբերիկները» քարձրարվեստ ստեղծագործությունները:

Այդ շրջանում Թ. Գյուրջյանն իր ստեղծագործությունների հիմնական թեմատիկան դարձրեց երկրի ինդուստրիալ կառուցումները: 1929 թ. նա եղել է Չորագէսի շինարարությունում, Շիրկանալում և լայն կտավի վրա վերարտադրել է կառուցման տեսարանների միամրոզ սերիա:

Տաղանդավոր նկարիչ Հ. Կոչոյանի անվան հետ է կապված սովետահայ դրաֆիկայի պատմությունը: Հեռանալով ոճաբանությունից, նա բնությունն արտահայտել է յուզանկարչական ճիշտ ըմբռնումով: Կոչոյանը միաժամանակ իր արվեստը զուգակցում է աշխատանքային առօրյային, կենցաղային, իրական կյանքին:

1928 թ. արտասահմանից հայրենիք՝ Սովետական Հայաստան էր վերադարձել խոշոր նկարիչ Փ. Թերլեմեզյանը: Նա բուռն խանդավառությամբ լծվեց վերածնված հայ ժողովրդի նոր կյանքին: Նրա նկարչական ժանրն էր ինդուստրիալ պեյզաժը: Հայտնի են նկարիչի «Ղափան», «Պղնձածուլական գործարան», «Ալավերդի», «Չորագէսի ժայռերը» կտավները: Նա իրավամբ համարվում է կոմպոզիցիոն կտավի մեծ վարպետ:

Այդ տարիներից սկսում է աճել երիտասարդ նկարիչների նոր սերունդը: Իրենց շնորհքով ու քարձր ընդունակություններով աչքի էին ընկնում երիտասարդ նկարիչներ Մ. Աբեղյանը, Ար. Ղարիբջանը, Ա. Զիլինգարյանը, Յ. Աղիլյանը և ուրիշները:

Նկարչական արվեստին զուգահեռ ծաղկում է նաև քանդակագործական արվեստը: Քանդակագործներ Ս. Ստեփանյանը և Տարազորսը սկանավոր ճարտարապետ Ալեքսանդր Բամանյանի ղե-

կաՎարությամբ քանդակեցին կառավարական տան ֆասադի դեկորատիվ բարելեֆները, որոնք իրենց ոճալորությամբ ու բնույիզմով դեկորատիվ քանդակագործութեան մեջ ուրույն տեղ են զբաղում:

Քանդակագործական արվեստի մեջ, մեր ուսումնասիրութեան ժամանակաշրջանում, իրեն զգացնել է տվել սխեմատիզմն ու կոնքրետրոկտիվիզմը: Այդ երևան է եկել քանդակագործ Արա Սարգսյանի՝ «Էնինականի Մայրսյան ասլետամբուլեան հերոսները» հուշարձանը կերտելիս: Սխեմատիզմն ու կոնքրետրոկտիվիզմը ամենայն իրավամբ խիստ կերպով դատապարտվեց, որպէս կեղծ արվեստ:

Սովետահայ քանդակագործները արմատական շրջադարձ կատարեցին դեպի սովետական քանդակագործական ոեալիզմը: Շնորհալի քանդակագործ Ար. Սարգսյանը վարպետութեամբ քանդակել է ակաճավոր ռեալիզիոներ և պետական գործիչ Ալեքսանդր Մլաքանիկյանի կիսանդրին, իսկ 1927 թվականին՝ մեծ ռեալիզիոներ, Վ. Ի. Լենինի աշակերտ ու զինակից Սուրեն Սպանդարյանի կիսանդրին: Այդ տարիներին սովետահայ քանդակագործների մեջ իր ուրույն յճով աչքի էր ընկնում քանդակագործուհի Այծեմիկ Ուրարտուն, որը քանդակել է մի քանի կոմպոզիցիոն բարելեֆներ: Երիտասարդ քանդակագործ Ս. Թարչանը այդ տարիներին հաջողութեամբ քանդակել է «Զուլոդ բանվորը», «Լոռեցի պարտիզանը»: Սովետահայ քանդակագործութեան զարգացման վրա մեծ ազդեցութեուն է ունեցել ակաճավոր քանդակագործ Մերկուրովը:

Արագորեն ծավալվող արդշունարերական և քաղաքային շինարարութեունը երկրի ճարտարապետների առաջ լաց էր անում ստեղծագործական ամենալայն հնարավորութեուններ:

Սովետական Հայաստանի ճարտարապետական արվեստի դարգացման գործում խոշոր դեր էր կատարում ակաճավոր ճարտարապետ Ալ. Թամանյանը: Ճարտարապետական արվեստի բարձր կուլտուրայով և մեծ վարպետութեամբ Ալ. Թամանյանը նախագծել է Երևան քաղաքի զխաւոր հատակագիծը: Խնդուստրացման շրջանի տարիների գրեթե բոլոր մոնումենտալ կառուցումները կատարվել են Ալ. Թամանյանի նախագծերով: Թամանյանն ամենայն իրավամբ համարվում է սոցիալիստական ոեալիզմի հիմնադիրներից մեկը սովետական ճարտարապետութեան մեջ: Եւ իր ստեղծագործութեուններում կարողացել է վեր հանել արվեստի ժողովրդական սկզբունքները՝ սոցիալիստական բովանդակութեամբ:

Հանդիսանալով ուսուսական և հայկական կլասիկ ճարտարապետութեան դպրոցի ներկայացուցիչներէից մեկը, Ալ. Թամանյանը դարձաւ սովետահայ ճարտարապետութեան հիմնադիրը և բազմաթիւ երիտասարդ ճարտարապետների ուսուցիչը:

Ինչպես ամբողջ ՍՍՌՄ-ում, նույնպես և Սովետական Հայաստանում, բուն թափով աճում էր դրքային ֆոնդը: 1926—1929 թթ. լույս է տեսել մոտ 1400 անուն գիրք, ավելի քան 4 միլիոն տիրաժով<sup>1</sup>: Այդ տարիներին լայն տարածում էր ստանում նաև պարբերական մամուլը: 1929 թ. տպագիր թերթերի թիւը հասնում էր 10-ի, որից 4-ը կենտրոնական և քաղաքային: Սովետահայ պարբերական մամուլը լինինի ստեղծած «Պրավդայի» օրինակով հայ աշխատավորութեան գիտակցութեան մեջ անդուլ կերպով արմատացնում էր սոցիալիզմի վեհ գործին ծառայելու, Կոմունիստական պարտիայի ու Սովետական Հայրենիքի նկատմամբ մինչև վերջ նվիրվածութունն ցուցաբերելու, ինտերնացիոնալիզմի ոգուն հավատարիմ լինելու բարձր ու վսեմ դադարաբանները: Սովետահայ մամուլը իր էջերում լայնորեն ծափալում էր սկզբունքային քննադատութունը, միաժամանակ անողոք պայքար էր տանում տրոցկիստա-բուխարինական և բոլոր տեսակի թշնամիների դեմ:

Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին մեծ շափով ընդարձակվեց կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը: Բացվեցին հարյուրավոր բանվորական ակումբներ, կարմիր անկյուններ, դուղական խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ, թանգարաններ: Կուլտուրայի և լուսավորական հաստատութունները դարձան աշխատավորական ամենալայն մասսաների կրթա-լուսավորական կարևոր օջախները:

\* \* \*

Այսպիսով, մեր երկրում սոցիալիստական շինարարութեան ծավալման շնորհիվ, ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները սովետական ժողովրդի, այդ թիւում և հայ ժողովրդի, նյութական ու կուլտուրայի բուն դարգացման համար:

Մեր երկրի, երբեմնի հետամնաց ու ճնշված ազգերի ու ժողովուրդների, սոցիալիստական կուլտուրայի վարդացման գործում,

<sup>1</sup> Թվերը վերցված են Հայկական ՍՍՌ Գրքի պալատի 1913—1938 թթ. հաշվետուութունից:

քացաւիկ դեր է կատարել աշխարհի ամենաառաջավոր ուսական մեծ կուլտուրան: «Ռուսական հզոր կուլտուրան և դիտութիւնը, — դրել է «Պրավդան», — միշտ էլ հսկայական ազդեցութիւն են գործել Սովետական Միութեան եղբայրական ընտանիքի մեջ մտնող մյուս ժողովուրդների զարգացման վրա»<sup>1</sup>:

Հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ, ուս ժողովրդի օգնութեամբ փշրեց ազգային ճնշման շրջ-թաները: Ինչպես Սովետական Միութիւնում ապրող շատ ժողովուրդներ, այդ թիւում և հայ ժողովուրդը վերածնվեց և դարձավ սոցիալիստական ազգ:

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ բուրժուական ազգերի բախտը սերտորեն կապված է կապիտալիզմի բախտի հետ, որ կապիտալիզմի կործանումով, նրա հետ միասին պատմական արեւա-լից վերացվում են նաև բուրժուական ազգերը: Սովետական երկրի զարգացման ընթացքը ամբողջապես հաստատեց մարքս-լենինյան այդ գրույթը, բուրժուական ազգերի, այդ թիւում նաև բուրժուական հայ ազգի բախտի, նրանց պատմական անցյալի բնույթի մասին:

Սոցիալիստական հայ ազգի ծաղումը և զարգացումը սերտորեն շաղկապված է պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, սոցիալիզմի հաղթարշավի ծավալման հետ, հաղթանակներ, որոնք ձեռք բերվեցին Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ՝ նրա լենինյան ազգային քաղաքականութեան հետևողական կենսագործման շնորհիւ:

Խոսելով սոցիալիստական ազգերի մասին, 1929 թ. Ի. Վ. Ստալինը գրել է. «Այդ նոր ազգերը ծագեցին և զարգացան հին, բուրժուական ազգերի բազայի վրա կապիտալիզմի լիկվիդացիայի հետևանքով, նրանց սոցիալիզմի ոգով արմատապես վերափոխելու միջոցով: Ոչ ոք չի կարող ժխտել, որ Սովետական Միութեան այժմյան սոցիալիստական ազգերը — ռուսական, ուկրաինական, բելո-ռուսական, թաթարական, բաշկիրական, ուզբեկական, ղազախական, ադրբեջանական, վրացական, հայկական և մյուս ազգերը — արմատապես տարբերվում են հին Ռուսաստանի համապատասխան հին, բուրժուական ազգերից ինչպես իրենց դասակարգային կազմով և հոգեւոր կերպարանքով, այնպես էլ իրենց սոցիալ-քաղաքական շահերով ու ձգտումներով»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Պրավդա», № 314, 1943:

<sup>2</sup> Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 386:

Հին, բուրժուական հայ ազգի ղեկավար ուժը հանդիսացել են բուրժուազիան և նրա նացիոնալիստական պարտիաները, որոնք նրան հրահրել են հարևան մյուս ազգութունների դեմ, ազգերի միջև սերմանել են թշնամանք և ատելութուն: Նոր սոցիալիստական հայ ազգի ղեկավարող և ամրակցող ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը և նրա ավանգարդը՝ Կոմունիստական պարտիան: Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հիմքում ընկած է ազգերի և ժողովուրդների սուզերեն իրավահավասարությունը, նրանց սոցալության և եղբայրական անխախտ դաշինքի, փոխադարձ վստահության և համագործակցության պրոլետարական իդեոլոգիան, ինտերնացիոնալիզի իդիոլոգիան՝ ուղղված բուրժուական նացիոնալիզմի և առախղմի դեմ:

Սոցիալիստական հայ ազգի ծագման և զարգացման գործում վճռական դեր է խաղացել ուսումնական ժողովրդի մշտական և անշահախրնդիր եղբայրական օգնությունը:

Սոցիալիստական շինարարության բուն վերելքի հետագա տարիները միաժամանակ հանդիսացան սոցիալիստական հայ սոցիալի, նրա ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական կուլտուրայի զարգացման տարիներ:

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեր երկրի բոլոր ժողովուրդները սոցիալիզմի կառուցման ճանապարհին հաղթահարեցին մեծ դժվարություններ: ՍՍՌՄ բոլոր ռեսպուբլիկաներում, մարզերում ու օկրուգներում խոշոր ծավալ ստացավ սոցիալիստական ինդուստրացումը և ծանր արդյունաբերության հիմքը դրվեց:

Մեր երկրի աշխատավորությունը ձեռնամուխ եղավ իրականացնելու ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնդամյա պլանը: Ամբողջ երկրով մեկ ծնունդ էր առել սոցիալիստական մրցությունը, որը դարձավ սոցիալիստական աշխատանքի հիմնական մեթոդը:

Սոցիալիստական ինդուստրացման այս էտապը նշանավորվեց 1929 թվականի աննախընթաց վերելքի տարով, որն արտահայտվեց ոչ միայն արդյունաբերության, այլև գերազանցապես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում:

Մեր երկիրը 1930 թ. թևակոխեց սոցիալիզմի կառուցման ու հաղթանակի մի նոր բարձր էտապ՝ սոցիալիստական ռեկոնստրուկցիայի և գյուղատնտեսության համատարած կոլտնտեսային շինարարության ժամանակաշրջանը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏՍՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱ-  
ՑՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ  
(1930—1935)

1. ՊԱՅԷԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ  
ՀԱՄԱՐ

ՍՍՌՄ տնտեսական շինարարությունյան ընթացքի մեջ 1929 թվա-  
կանին առաջացած բեկումը հետագա տարիներին ավելի է խորա-  
նում, ընդունելով նոր թափ ու ծավալ: Սոցիալիստական շինարարու-  
թյան ընթացքը 1930—1935 թթ. ժամանակաշրջանում նշանավոր-  
վում է երկրի ինդուստրացման արագ առաջընթացով, գյուղատնտե-  
սությունյան սոցիալիստական վերափոխման աննախընթաց հաղթա-  
նակով, աշխատավորների նյութական ու կենցաղային պայման-  
ների էլ ավելի բարելավումով և կոլտուրական շինարարության  
բուռն վերելքով:

Այդ ժամանակաշրջանում արմատապես փոխակերպվում է Սո-  
վետական Միության դեմքը: Հետամնաց ագրարային երկրից նա  
դառնում է ինդուստրիալ՝ մետաղագործության, մեքենաշինության,  
էլեկտրիֆիկացիայի և քիմիայի արտադրության երկիր: Մանրատ-  
ված և հետամնաց գյուղատնտեսության երկրից նա դառնում է  
առաջավոր տեխնիկայով զինված, խոշոր կոլեկտիվ գյուղատնտե-  
սության երկիր: Մեծ էին ՍՍՌՄ աշխատավորների նվաճումները  
նաև կոլտուրական շինարարության ասպարեզում: Կոլտու-  
րական ուղղուցիայի կենսագործումը մեծ հաջողությամբ առաջ էր  
ընթանում: Սովետական Միությունը սկսում էր դառնալ առաջավոր  
կոլտուրայի, գիտության ու արվեստի երկիր, ծածկվելով բազ-  
մազգ ժողովուրդների մայրենի լեզուներով գործող բազմատիպի  
դպրոցների լայն ցանցով:

Նրկրի արդյունաբերութեան, առևտրի, դյուղատնտեսութեան քննադատականերից հիմնականում վերացվում են կապիտալիստական տարրերը, էկոնոմիկայի մեջ անբաժանելիորեն տիրապետող է դառնում սոցիալիստական տնտեսութեան կացութեան:

Սովետական Միութեան ներքին կյանքում տեղի ունեցող այդ փոփոխութեանները, որոնք համաշխարհային պատմական նշանակութեան ունեցող տեղաշարժեր էին, վճռական դեր կատարեցին մեր երկիրը տեխնիկա-տնտեսական հետամնացութեանից դուրս բերելու գործում: Այդ փոփոխութեանները լայն տեխնիկական և նյութական ստանդարտներ ստեղծեցին ամբողջ ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումն ավարտելու, սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեր երկրում ապահովելու համար:

Խաղաղ սոցիալիստական շինարարութեանը ՍՍՌՄ-ում տեղի էր ունենում միջազգային լարված իրադրութեան ստանդարտներում: Նիկիտա խրուշչևի ղեկավարութեան համար այդ ժամանակաշրջանը հանդիսանում էր ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցման և սոցիալիզմի ծավալուն շինարարութեան շրջան, կապիտալիստական երկրների համար այն հանդիսանում էր տնտեսական անկման շրջան:

Կապիտալիստական որոշ երկրներում 1929 թվականին բռնկած տնտեսական ճգնաժամը, որը տեղի էր ունենում կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի ստանդարտներում, ծավալվելով փոխվում է համաշխարհային ճգնաժամի, որը առավել մեծ ուժով ընդգրկում է կապիտալիզմի գլխավոր երկիրը՝ ԱՄՆ-ը:

Նրկու սիստեմների ընդհանուր դրութեանը համեմատելու համար հարկ ենք համարում դիմել արդյունաբերութեան արտադրանքի չափը բնորոշող որոշ տվյալներին: Այսպէս, ՍՍՌՄ արդյունաբերութեան արտադրանքի ծավալը 1933 թվականին գերազանցու է 1929 թվականի մակարդակը ավելի քան երկու անգամ, իսկ 1934 թվականին այն արդեն կազմում է 239 տոկոս, այսպէս ԱՄՆ-ի արդյունաբերութեան ծավալը 1933 թ. վերջերին իջնում է 1929 թ. մակարդակի 64,9 տոկոսին, Անգլիայի արդյունաբերութեանը՝ 86,1 տոկոսին, Գերմանիայի արդյունաբերութեանը՝ 66,8 տոկոսին և Ֆրանսիայի արդյունաբերութեանը՝ 57,4 տոկոսին: Կապիտալիստական երկրների արդյունաբերութեան անկումը և Սովետական Միութեան արդյունաբերութեան արագ վերելքը հաստատում էին տնտեսութեան սոցիալիստական սիստեմի առավելութեանը կապիտալիստա-

կլանի հանդեպ, ասում էին այն մասին, որ Սովետական Միությունը միակ երկիրն էր, սր վերժ էր տնտեսական ճգնաժամներից:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ավելի է խորացնում և սրում իմպերիալիստական սիստեմի հակասությունները, որի հետևանքով աճում է իմպերիալիստական նոր պատերազմի վտանգը, սկսվում է աշխարհի վերաբաժանման համար նոր, ամենակատաղի սլաշքարի ժամանակաշրջանը:

Ճգնաժամի հետևանքով ավելի է ուժեղանում կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի և աշխատավորական լայն մասսաների շահագործումը: Հսկայական չափերի էր հասնում գործադրկուլթյունը քաղաքում և քայքայումը դյուղում: Ավելի է վատթարանում աշխատավորական մասսաների նյութական դրությունը:

Իմպերիալիստական հակասությունների սրման հետ մեկտեղ սրվում են հակասությունները ՍՍՌՄ-ի և շրջապատող կապիտալիստական աշխարհի միջև: Սովետական երկրի հաջողությունները բուրժուազիային հանդատություն չէին տալիս:

Մեր երկրի սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված նվաճումները ավելի են բարձրացնում և ամրապնդում Սովետական Միության միջազգային հեղինակությունը: ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի կատարման առաջին իսկ արդյունքները խորտակում են իմպերիալիստների ու նրանց «սոցիալիստ» սպասարկուների բոլոր գուշակությունները հնդամյա պլանի անխրադործելիության, Սովետական երկրի բուրժուական վերասերման անխուսափելիության մասին:

Միջազգային բուրժուազիան ձգտում էր թուլացնել կապիտալիստական սիստեմի ներքին հակասությունները, մեղմել բուրժուական երկրների միջև տեղի ունեցող պայքարը և կապիտալիզմը դուրս բերել ճգնաժամից Սովետական Միության հաշվին: Այդ իսկ նպատակով 1929 թ. աշնանից սկսած բուրժուական երկրների կառավարող շրջանները ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների ղլխավորությամբ ու աջակցությամբ ակտիվորեն սկսում են մեր Հայրենիքի դեմ նոր ինտերվենցիա նախապատրաստել:

Սովետական Միության դեմ նոր ինտերվենցիա կազմակերպելու համար ագրեսորները ձգտում էին նախ և առաջ նախապատրաստել և կազմակերպել հասարակական կարծիք ընդդեմ Սովետական Միության: Այդ նպատակով բուրժուական մամուլը կատաղի հակասովետական պրոպագանդա էր ծավալել: Հակասովետական կամ-

սլանիայի իսկական նպատակը քողարկելու, ճգնաժամի սլատճատներից աշխատավոր մասսաների ուշադրությունը շեղելու և բուրժուազիայի դեմ բանվոր դասակարգի սպառաքը թուլացնելու նպատակով, իմպերիալիստական պեռուժյունների կառավարող շրջանները հնարում են, այսպես կոչված, «սովետական դեմպլինդի» վերսիան: Ագրեսորները դիմում են ստի և ստոր միջոցների, որպեսզի տնտեսական բլոկադայի ենթարկեն Սովետական Միությունը, արգելակեն սովետական արտաքին առևտուրը, ներկայացնելով այն որպես տնտեսական ճգնաժամի խորացման պատճառ:

Իրականում Սովետական Միության արտահանումը 1930 թ. կազմում էր ամբողջ համաշխարհային էքսպորտի միայն 1,9 տոկոսը, իսկ մի շարք երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին առևտրի բալանսում այն կես տոկոսից չէր անցնում: Հետևաբար «սովետական դեմպլինդի» մասին հնարած առասպելով ագրեսորները փորձում էին արտասահմանի աշխատավորական մասսաների առաջ արդարացնել Սովետական Միության արտաքին առևտրի դեմ ուղղված իրենց քաղաքականությունը:

Սովետական Միությունը տնտեսական բլոկադայի ենթարկելու փորձերից բացի, իմպերիալիստները իրենց գործակալներին միջոցով լրանսություն, դիվերսիա և քայքայիչ աշխատանք էին կատարում մեր երկրում՝ նրա հղորությունը թուլացնելու և սոցիալիստական շինարարության առաջընթացը արգելակելու նպատակով:

Երկրի ներսում հակապարտիական հուանքները՝ տրոցիկստները, աջ օպորտունիստները, բուրժուական հացիոնալիստները վնասարարություն էին կազմակերպում ժողովրդական տնտեսության մեջ, թշնամություն էին սերմանում սովետական ժողովուրդների միջև, բանվորների և գյուղացիների միջև, որպեսզի ինտերվենցիայի դեպքում նախապատրաստեն ՍՍՌՄ սլարությունը:

Բուրժուական երկրների ագրեսիվ շրջանների սանձարձակ, հակասովետական կամպանիան ավելի է ակտիվացնում մեր երկրից բանվորների ու գյուղացիների կողմից վռնդված սլիտակ-էմիգրանտական տարրերին, դրանց թվում և հայ ժողովրդի թշնամիներին, հայ բուրժուազիայի ու օտարերկրյա իմպերիալիստների գործակալ զաշնակներին: Գաղանային ատելություններ լցված Սովետական իշխանություն ու աշխատավորների հանդեպ, նրանք երազում էին խլել հայ ժողովրդի նվաճած ազատությունը, վերստին վերականգնել Հայաստանում անցյալի սարսափելի մղձավանջը, ստրկական վի-

ճակը, հայ բուրժուազիայի ու դադութարարների արգահատելի ծանր լուծը: Նրանք գործուն մասնակցություն էին ցուցաբերում սովետական սահմաններին կից վայրերում կազմակերպվող պրովոկացիաներին, որպեսզի միջադեպեր հրահրեն, լարված դրություն ստեղծեն և այն առիթ ծառայեցնեն իմպերիալիստների վիսված միջամտության համար:

Հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, իմպերիալիստներին և նրանց գործակալներին պատասխանում է աշխատանքային շտեմված խանդավառությունով: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, նա պաշարում է ամբողջակալու երկրի հզորությունը, կատարում ու գերակատարում է ժողովրդական տնտեսության զարգացման պլանը, ցուցաբերում է աննախընթաց նախաձեռնություն և սխրագործություն տնտեսական շինարարության բոլոր բնագավառներում:

Կապիտալիստական երկրների ազդեցիվ շրջաններին ու նրանց բոլոր տեսակի գործակալներին չի հաջողվում իրագործել 1929—1930 թթ. Սովետական Միության դեմ նախապատրաստվող ինտերվենցիան: Չնայած դրան, այնուամենայնիվ նրանք շեն հրաժարվում Սովետական Միության հաշվին ճգնաժամից դուրս գալու իրենց քաղաքականությունից:

Գնալով պատերազմի վտանգը ավելի է ուժեղանում: 1931—1933 թթ. սկսած պատերազմի անմիջական սպառնալիք են ստեղծում ճապոնական միլիտարիստները Հեռավոր Արևելքում, իսկ դեմոկրատական ֆաշիստները՝ Եվրոպայում: Առաջանում է պատերազմի երկու օջախ:

ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների քաղաքականությունը ավելի էր թեւավորում ազդեցություններին: ԱՄՆ-ի մոնոպոլիստների փոխառություններով արագորին դարձանում էր դերմանական ռազմական ինդուստրիան: Այդ երկրների կառավարությունների ջանքերով 1933 թվականին Հռոմում՝ Մնգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև ստորագրվում է համաձայնություն և համագործակցության, աչսույես կոչված, «չորսի պակտը», որը ավելի էր սանձաղեղծում գերմանա-իտալական ազդեցություններին: Նրանք ձգտում էին ֆաշիստական Գերմանիայի ազդեցության ուղղել դեպի Արևելք՝ ընդդեմ Սովետական Միության:

Չնայած Սովետական Միության դեմ ազդեցությունների կողմից հրահրվող և կազմակերպվող պրովոկացիաներին, Սովետական կառավարությունը, միշտ մնալով հավատարիմ իր լինիչյան խաղա-

ղասիրական քաղաքականութեան սկզբունքներին, անզաղրում պայքարում էր ժողովուրդների միջև կայուն խաղաղություն հաստատելու համար, հետևողականորեն մերկացնում էր ագրեսորների պլանները և ագրեսիան հովանավորողների քաղաքականութիւնը:

Մինչդեռ Սովետական կառավարութիւնը առաջարկում էր միավորել խաղաղությամբ շահագրգռված երկրներին իրականացնել ընդհանուր վիճաբանում, հաստատել ժողովուրդների միջև փոխադարձ համագործակցութիւն և սանձահարել ագրեսորներին, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները վարում էին հակառակ քաղաքականութիւն: Նրանք չէին բնդունում կոլեկտիվ անվտանգութիւն սահելու մասին Սովետական կառավարութեան առաջարկները, ջլատում էին խաղաղութեան համար պայքարող ուժերի միավորման դործը և ճանապարհ էին հարթում ֆաշիստական ագրեսորների պլանները իրականացնելու համար:

Ելնելով տարրեր քաղաքական սխտեմների խաղաղ գոյակցութեան հնարավորութեանից, Սովետական կառավարութիւնը պայքարում էր բոլոր երկրների հետ հաստատել դործարար փոխհարաբերութիւններ: Սովետական Միութիւնն այն միակ երկիրն էր, որը Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ, միջազգային դժվարին ու բարդ իրադրութեան պայմաններում, անշեղորեն ղլխավորում և ոգեշնչում էր խաղաղութեան համար մղվող պայքարը, իրականացնում փոխադարձ համագործակցութեան քաղաքականութիւն:

Չնայած բուրժուական երկրների ագրեսիվ շրջանների կողմից կաղմակերպվող գավերին ու սյրոշոկացիաներին, Սովետական Միութեան միջազգային հեղինակութիւնը գնալով բարձրանում էր: Բուրժուական շատ երկրներ մեկը մյուսի ետեից սկսում էին բարեկամել իրենց հարաբերութիւնները ՍՍՌՄ հետ: ԱՄՆ-ի կառավարութիւնը, որը մինչ այդ չէր ճանաչել Սովետական իշխանութեանը, ստիպված եղավ 1934 թվականին ճանաչել և դիվանագիտական հարաբերութիւններ հաստատել նրա հետ: Նույն թվականին Ազգերի լիգայի անգամ 39 երկրների ներկայացուցիչներ դիմեցին Սովետական Միութեան կառավարութեանը՝ հրովիրելով նրան լիգայի կաղմի մեջ: Նույն տարվա սեպտեմբերի 18-ին ՍՍՌՄ մտալ Ազգերի լիգայի կաղմի մեջ: Չնայած Սովետական պետութիւնը Ազգերի լիգայից մեծ սպասելիքներ չուներ, ստիպյն նա օգտագործում էր իր ներկայութիւնը նրա կաղմում և շարունակում պայքարել խաղաղութեան համար:

Սովետական Միության հեղինակության բարձրացումը մի կողմից, տնտեսական ճգնաժամի հետևանքով եվրոպայում ստեղծված լարված քաղաքական իրադրությունը, առանձին երկրների սովերենությունն ու տերիտորիալ ամբողջականությունը սպառնացող վտանգի ուժեղացումը մյուս կողմից, հարկադրում էին մի շարք երկրներին դործարար տնտեսական և դիվանագիտական կապեր հաստատելու Սովետական Միության հետ: Դրանով էր հենց բացատրվում այն հանգամանքը, որ 1930—1934 թթ. և հետագայում, մի շարք պետությունների ու ՍՍՌՄ միջև հաստատվում են նորմալ հարաբերություններ, կնքվում են շահարձակիչիլու և ագրեսիան որոշող պատկեր, առևտրական պայմանագրեր: Այս բոլորը հաստատում էին Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության արտաքին քաղաքականության հսկայական հաջողությունների մասին:

Այսպիսով, Սովետական Միությունը 1930—1935 թթ., ինչպես և հետագայում, անշեղորեն կանգնած էր խաղաղության գործի պաշտպանության իր դիրքերում և պայքարում էր պատերազմի սպառնալիքների դեմ, ընդառաջելով բոլոր այն երկրներին, որոնք այսպես թե այնպես խաղաղության պահպանման կողմն էին:

Խաղաղության համար մղվող իր պայքարում Սովետական Միությունը հենվում էր ինչպես մեր սոցիալիստական Հայրենիքի աճող տնտեսական ու քաղաքական հզորության, սովետական ժողովրդի ավելի ու ավելի ամրապնդվող բարոյաքաղաքական միասնության, այնպես էլ խաղաղությունը պահպանելու համար պայքարող բոլոր երկրների միլիոնավոր մասսաների աջակցության վրա: Իսկ այդ բոլորը խարսխվում էր մեր երկրի ներքին կյանքում տեղի ունեցած վճռական տեղաշարժերի, էկոնոմիկայի մեջ տնտեսության սոցիալիստական ձևերի բուռն զարգացման ու նրա վերջնական հաղթանակի բազայի վրա:

Միջազգային այդպիսի իրադրության պայմաններում Հայկական ՄՍՌ աշխատավորները, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին պայքարում էին սոցիալիստական խաղաղ շինարարության հետագա զարգացման՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի անշեղ վերելքի համար:

Ահենք է, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը չէին կարող անտարբերությունով անցնել իմպերիալիստների կողմից մեր Սովետական Հայրենիքի դեմ ուղղված ագրեսիվ քաղաքականության փաստերի կող-

քով: մատի, աշալուրջ հետեում էին կապիտալիստական երկրներում տեղի ունեցող դեպքերին, անդադրում ամրապնդում էին երկրի սոցիալականությունը, բարձրացնում նրա հզորությունը:



Սովետական Միության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, ինչպես նշվեց նախորդ գլխում, 1929 թ. վերջին ամիսներից արմատական բեկում սկսվեց՝ սովետական գյուղը թևակոխեց խոշոր սոցիալիստական հողագործության սանդժման շրջանը, որը տեղի էր ունենում արագ տեմպով զարգացող ծանր ինդուստրիայի բազայի վրա:

Խոշոր սոցիալիստական հողագործության կազմակերպման շրջանից չբավար գյուղացիների ետևից դեպի կոլեկտիվ տնտեսություն շրջադարձ կատարեց նաև միջակ գյուղացին: Կոլտնտեսային շարժումը Սովետական Միության մի շարք մարզերում, առաջին հերթին հացահատիկային գլխավոր շրջաններում, տանալով մասսայական բնույթ փոխվեց համատարած կոլեկտիվացման: Գյուղացիները կոլեկտիվ տնտեսության մեջ էին մտնում ոչ թե առանձին խմբերով, ինչպես այդ տեղի էր ունենում մինչև այդ, այլ ամբողջ գյուղերով ու շրջաններով: Սկսվեց մեծ լենինի կանխատեսումների իրականացումն այն մասին, որ կգա մի շրջան, երբ աշխատավոր գյուղացիությունը կհամոզվի սոցիալիզմի առավելությունների մեջ և ինքնակամ մասսայաբար կշարժվի դեպի սոցիալիզմ:

Դեռևս Կոմունիստական պարտիայի XI համագումարում, Ռ.Յ(բ)Պ Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Վ. Ի. Լենինը նշել էր, որ անհրաժեշտ է «Զուգվել գյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ, և սկսել առաջ շարժվել անշափ, անսահման կերպով ավելի դանդաղ, քան մենք երգելում էինք, բայց դրա փոխարեն այնպես, որ իսկապես ամբողջ մասսան մեզ հետ միասին առաջ շարժվի: Այդ դեպքում ժամանակին տեղի կունենա նաև այդ շարժման այնպիսի արագացում, որի մասին մենք այժմ երազել անգամ չենք կարող»<sup>1</sup>:

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ շահագործողների տիրապետությունը տապալելուց և քաղաքական իշխանությունը

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 318:

պրոչեստարիատի կողմից նվաճելուց հետո, սոցիալիստական բևեռացիայի ամենագծվարին խնդիրը մնում է սոցիալիզմի կառուցման մեջ մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունները ընդգրկման խնդիրը: Սովետների Համառուսական VI արտակարգ Համագումարում արտասանած իր ճառում Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ երբ Պետրոգրադի պրոչեստարիատը և կայսզարի զինվորները իշխանությունը իրենց ձեռքն էին վերցնում, նրանք պարզ պիտակցում էին, որ գյուղի սոցիալիստական շինարարության գործում կհանդիպեն խոշոր դժվարությունների, որ այստեղ պետք է առաջ դնալ ավելի աստիճանաբար, որ գյուղում «Վեկրեաների, օրենքների միջոցով հողի հանրային մշակում մտցնելու փորձը մեծագույն անհեթեթություն կլինի», որ ոչ մի դեպքում չպետք է առաջ վազել մասսաների զարգացումից, անհրաժեշտ է «սպասել մինչև որ այդ մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից կծնի առաջընթաց շարժում»<sup>1</sup>:

Այդ առաջընթաց շարժումը, որ աստիճանաբար պետք է հանդես գար «մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից» կարող էր տեղի ունենալ նյութական և տեխնիկա-տնտեսական անհրաժեշտ նախադրյալների բազայի վրա: Հետևողականորեն կենսագործելով Լենինյան նախագծումները՝ մանր ասլրանքային հողագործության սոցիալիստական վերափոխումը նախապատրաստելու մասին, Կոմունիստական պարտիան, Սովետական պետությունը և բանվոր դասակարգը բազմաթիվ դժվարությունների հալթահարման պայմաններում կատարեցին վիթխարի և համառ աշխատանք: Երկրի ինդուստրացման հաջող իրականացումը, աշխատավոր գյուղացիներին պետության կողմից ցույց արվող ֆինանսական, նյութական և կազմակերպական սիստեմատիկ ու լայն աջակցությունը, գյուղում պետության վարած հարկային և վարկային բազաբանությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության զաշինքի ամրապնդումը, գյուղատնտեսական կոոպերացիայի արմատավորումը, պարտիայի ծավալած քաղաքական-մասնայական աշխատանքը և այլն, այդ բոլորը միասին վերցրած կարևորագույն դեր կատարեցին գյուղում մասսայական շարժում առաջացնելու, մանր անհատական տնտեսությունից հանրային, սոցիալիստական տնտեսաձևին անցնելու գործում:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 164—165:

Գյուղատնտեսության մեջ իշխող մասնավոր սեփականատիրական արտադրությանը սպառնալուրված արտադրական հարաբերությունները և գյուղի հետամնացությունը ոչ միայն արդելակում էին գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը, այլև կասեցնում էին ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի արագ առաջընթացը:

Վ. Ի. Լենինը սովորեցրել է, որ անհրաժեշտ է գիտությունն ու տեխնիկան ի սպաս դնել, որպեսզի մեր երկրի էկոնոմիկայի ամենից հետամնաց բնագավառը՝ «գյուղատնտեսական արտադրությունը դնենք նոր բեկերի վրա, որպեսզի կարելի լինի նրան վերափոխել ու անդիտակցարար, հնորյա ձևով տարվող հողագործության դրազմունքը դարձնել մի այնպիսի դրազմունք, որը հիմնված է գիտության վրա և տեխնիկայի նվաճումների վրա»<sup>1</sup>:

Չէր կարելի երկար ժամանակ սոցիալիստական շինարարությունը խարսխել սոցիալիստական առաջավոր արդյունաբերության և մանր ավրանբային, մասնավոր սեփականատիրական գյուղացիական հետամնաց տնտեսությունների վրա: Անհրաժեշտ էր վերացնել ժողովրդական տնտեսության այդ երկու բնագավառների միջև գոյություն ունեցող հիշյալ արմատական տարբերությունը, գյուղատնտեսությունը մոտեցնել սոցիալիստական ինդուստրիային ինչպես իր բնույթով, այնպես էլ իր զարգացման տեմպերով:

Առաջին հնգամյակի սկզբներից գյուղում սկսվում է սոցիալիզմի կառուցման նոր պատմական էտապ, Սովետական Միությունը թևակոխում է «Գյուղի ծավալուն սոցիալիստական վերակառուցման և խոշոր սոցիալիստական հողագործության ստեղծման շրջանը»<sup>2</sup>, նրա զարգացման տեմպերի այնպիսի վիթխարի արագացման շրջան, որը կանխատեսում էր Վ. Ի. Լենինը:

Գյուղում սկսված արտադրական շրջադարձը տեղի էր ունենում վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ, որին Երբեքից աջակցում էին գյուղացիության հիմնական մասսաները: Գյուղատնտեսության մեջ կոտարվող այդ պատմական արտադրական հեղաշրջումը, որը մասսայական բնույթ է ստանում 1929 թվականի վերջերից, իրականացվում էր սլանաչափորեն: Այն մշակված էր

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 440:

<sup>2</sup> «ՄԿԳ-ն համադումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի սլանումների բանաձևերում ու որոշումներում», Ս մաս, էջ 813:

Կոմունիստական պարտիայի կողմից և բխում էր սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքից, որը պահանջում էր գյուղի արտադրական հարաբերությունները աստիճանաբար համապատասխանեցնել նրա արտադրողական ուժերին:

Համատարած կոլեկտիվացումը կարող էր իրականացվել կուլակոլթյունը, որպես դասակարգ, լիկվիդացնելու հիման վրա: Մինչև գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը կուլակոլթյան նկատմամբ կիրառվող Սովետական պետության և Կոմունիստական պարտիայի սահմանափակման ու արտամղման քաղաքականությունը կասեցնում էր կուլակոլթյան զարգացումը, իսկ նրա առանձին խմբեր սահմանափակումներին չդիմանալով քայքայվում և դուրս էին մղվում: Սակայն այդ դեռևս չէր նշանակում կուլակոլթյան, որպես դասակարգի, լիկվիդացում, քանի որ արտադրության միջոցներից՝ հողից նա չէր զրկվում: Հետևաբար կուլակոլթյան որպես դասակարգի լիկվիդացումը սերտորեն կապվում էր գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման կենսագործման հետ:

ՍՍՌՄ այն մարդերում ու շրջաններում, որտեղ կոլեկտիվացումը համատարած ընդլթ էր ստանում կուլակային տնտեսություններից խլվում էր հողը և արտադրության միջոցները: Դրա հետ միասին համատարած կոլեկտիվացման շրջաններից կուլակոլթյանը արտաքսելու պահանջ էր դրվում: Նկատի ունենալով կոլտնտեսային շարժման ծավալումը և միջակ գյուղացու մասսայական շրջադարձը դեպի կոլեկտիվ տնտեսությունը, ընդառաջելով աշխատավորների պահանջներին, ՍՍՌՄ Կենտգործկոմը և ժողկոմսովետը 1930 թվականի փետրվարի 1-ին հատուկ որոշում են ընդունում, որը օրինականացնում է գյուղի շահագործողների ապակուլակացումը համատարած կոլեկտիվացման շրջաններում: Այդ որոշումով վերացվում էին հողի վարձակալման, բանվորական ուժի վարձման ու օգտագործման օրենքները: Համատարած կոլեկտիվացման շրջաններում իշխանության տեղական մարմիններին իրավունք էր վերապահվում բռնադատելու կուլակների արտադրական միջոցները և նրանց արտաքսելու համատարած կոլեկտիվացման շրջաններից: Այդ որոշման հիման վրա կուլակոլթյունը էքսպրոպրացիայի էր ենթարկվում այնպես, ինչպես կապիտալիստները 1918 թ., միայն այն տարբերությամբ, որ կապիտալիստական արտադրական միջոցները այն ժամանակ դրվում էին Սովետական պետության տրամադրության տակ՝ պետականացվում էին, իսկ կուլակներից բռնագրավ-

ված արտադրութեան միջոցները դառնում էին կոլտնտեսութեան սեփականութիւնը, մտցվում էին կոլտնտեսութեան անբաժանելի ֆոնդի մեջ, որպէս փայտավճար կոլտնտեսութիւն մտնող չքավորների և բարակների համար:

1930 թ. հունվարի 5-ին ՀամԿ(բ)Պ Կենտկոմը ընդունեց «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարութեանը պետութեան կողմից օգնութիւն ցույց տալու միջոցառումների մասին» որոշում, որի խոշորագույն նշանակութիւնը կայացաւ նրանում, որ նա ամբաստնեց պարտիայի և կառավարութեան նոր քաղաքականութիւնը գլուղում, քաղաքականութիւն, որն ուղղված էր ասպնոստութեան կարճ ժամանակամիջոցում կոլտնտեսային կարգերի հաղթանակը գլուղում և կուլակին լիկվիդացնելու որպէս դասակարգ: Որոշման մեջ Կենտկոմը նշեց, որ վերջին ամիսների ընթացքում կոլտնտեսային շարժման սլաններով ուրվագծված բոլոր տեմպերն արդեն գերազանցված են, որ կոլտնտեսային շարժումը ընդգրկում է ոչ միայն անհատական տնտեսութիւնների առանձին խմբեր, այլև ամբողջ ռայոններ ու դավառներ:

Հաշվի առնելով տարբեր մարզերի, շրջանների, ռեսպուբլիկաների, տարբեր մակարդակի նախապատրաստված լինելը համատարած կոլեկտիվացման համար, ՀամԿ(բ)Պ Կենտկոմը որոշեց կոլեկտիվացման տեմպի տեսակետից ՍՍՌՄ բաժանել 3 հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ մտնող շրջաններում և մարզերում Կենտկոմը հնարավոր էր համարում կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1930 թ. դարնանը: Երկրորդ խմբին դասվող վայրերում նախատեսվում էր կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1932 թ. դարնանը: Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանը, մի շարք այլ ռեսպուբլիկաների ու մարզերի հետ միասին դասվեցին երրորդ խմբին, որտեղ կոլեկտիվացումը հիմնականում պետք է ավարտվեր 1933 թվականին, այսինքն առաջին հնգամյակի վերջին:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը հունվարի 5-ի որոշումով տեղական պարտիական կազմակերպութիւններին և սովետական օրգաններին նախազգուշացնում էր, որ կոլեկտիվացման գործում պետք է անշեղորեն ղեկավարվել կամավորութեան լենինյան սկզբունքով. մանր գլուղացիական արտադրողներին խոշոր, կոլեկտիվ տնտեսութեաների մեջ միավորելիս առաջ չպետք է վաղել, այն վերևից չպետք է դեկրետավորել:



Ինչպես մատնանշվեց նախորդ գլխում, 1929 թ. երկրորդ կեսերին կոլտնտեսային շարժման քնադավառում Հայաստանում ևս բնկում սկսվեց, որը սակայն ավելի մեծ ծավալ ստացավ նույն տարվա վերջերից: Ինչպես Սովետական Միության մյուս ուսուցիչական երում, այնպես էլ Հայաստանում այդ բեկումը նշանավորվեց միջակ գյուղացու շրջադարձով՝ դարդացման հին, կապիտալիստական ուղուց դեպի զարգացման նոր, սոցիալիստական ուղին:

1929 թ. վերջերին կոլտնտեսությունների թիվը ուսուցիչականում հասնում էր 275-ի, որոնք ընդգրկում էին մի քանի հազար տրնտեսություններ: Դրան համապատասխան աճել էր նաև նրանց ցանքատարածությունը: 1930 թ. սկզբներին կոլեկտիվ շարժումը սկսեց խորանալ և աննախընթաց ծավալ ընդունել:

Ղեկավարվելով ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներով, Հայաստանի Կոմպարտիան զգալի աշխատանք էր կատարում կոլտնտեսային շարժման մեջ իրենց՝ գյուղի աշխատավոր մասսաների իսկ նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը զարգացնելու հետ միասին՝ ասպահովել պարտիայի և բանվոր դասակարգի ղեկավարությունն ու օգնությունը կոլտնտեսային շինարարության գործում: Մեծ ծավալ են ստանում շեֆական աշխատանքները: Կոլտնտեսային շարժման զարգացման գործին աջակցություն էին ցույց տալիս բանվորական բրիգադները, որոնք պարտիական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների կողմից շարունակվում էին գյուղ ուղարկվել: Երևանի, Լենինականի, Ալավերդու արդյունաբերական ձեռնարկությունների կողմից բազմաթիվ բրիգադներ էին առանձնացվում և գործուղվում շրջանները կոլտնտեսությունների գյուղատնտեսական ինվենտարը վերանորոգելու, կոլտնտեսային շարժմանը աջակցելու նպատակով: Ալավերդու հանքագործներից կազմակերպվում է տարբեր մասնապիտություն մոտ 40 բանվորական բրիգադներ, որոնք ընդգրկում էին 235 բանվոր և որոնք 1930 թվականի սկզբներից մեծ գործ էին կատարում շրջանի գյուղերում:

Ռեսուրսիկայի քաղաքներից կոլտնտեսություններում 2—3 ամիս ժամանակով աշխատելու համար գյուղ են մեկնում զգալի թվով առաջավոր բանվորներ ու հաշվային աշխատողներ, իսկ ավելի երկարատև ժամանակով՝ 1—2 տարի տևողությամբ 50-ի շարքում բանվորներ:

Բացի ռեսպուբլիկայի արդյունաբերական ձևնարկութուններին գործուղված բանվորական բրիգադներից, Հայաստանի կոլտնտեսութուններին ներառյալ օգնության են գալիս նաև Սովետական Ազգրբեշտանի և Սովետական Վրաստանի բանվորները, որոնք նկատելի աշխատանք են կատարում ռեսպուբլիկայի կոլտնտեսութունների ամրացման և կոլտնտեսային շարժման նոր վերելք կազմակերպելու ուղղությամբ: Այսպես, Բաքվի պրոլետարիատը Հայաստան է ուղարկում 120 ասաջավոր բանվորներ, որոնցից 20-ը պարտավորութուն են ստանձնում աշխատելու կոլտնտեսութուններում հրկաբասաև ժամկետով: Բաքվի պրոլետարիատի ներկայացուցիչներից կազմակերպվում են 9—10 բրիգադներ, որոնք մեկնում են Վեդու, Հրազդանի, Նոր Բայազետի, Աշտարակի, Էջմիածնի, Մեղրու, Կոտայքի, Դաբալայգազի (այժմ Միկոյանի և Աղիզբեկովի) և մյուս շրջանների կոլտնտեսութուններին օգնելու համար:

Բացի այդ, 25 հազարականների հաշվին, կոլտնտեսութուններում ղեկավար աշխատանքի են զնում ռեսպուբլիկայի առաջավոր բանվորներից ավելի քան 30 մարդ, որոնցից շատերը աչքի ընկան իրենց բարեխիղճ և լավ աշխատանքով: Որպես օրինակ հարկ է հիշել Նրեանի արհեստադպրոցական դպրոցի ղլխավոր վարպետ, 25 հազարական խառատ Սերգեյ Վարդանյանին (վարպետ Սերգո), որը հրկար ժամանակ աշխատում էր Աշտարակի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության վարչության նախագահի պաշտոնում: Կարճ ժամանակամիջոցում վարպետ Սերգոն իրեն դրսևորում է որպես կոլտնտեսային արտադրության լավագույն ղեկավարի: Յուցարերելով կազմակերպական անհրաժեշտ ընդունակութուններ, նա կարողանում է համախմբել կոլտնտեսային ակտիվին, գյուղի պարտիական կազմակերպության հետ միասին մորիլիզացնել առաջավոր կոլտնտեսականների աշխատանքային խանդավառությունը, ճիշտ դասավորել աշխատող ձևերը արտադրության մեջ, խելացիորեն ղեկավարել արտադրությունը: Այդ բոլորի շնորհիվ ամրապնդվում է կոլտնտեսությունը: Ս. Վարդանյանը վայելում էր կոլտնտեսային մասնանների աջակցությունը և հարգանքը:

Իրենց բեղմնավոր աշխատանքով աչքի են ընկնում նաև Ջևթօճառ գործարանից կամունիստ բանվոր Խաչիկ Պարոնյանը, որն աշխատում էր որպես Բյուրականի կոլտնտեսության նախագահ և շատ ուրիշները:

Մասնաշախկան կոլտնտեսային շարժման սկզբից մի շարք շորջաններում՝ հատկապես Աբարատյան դաշտավայրի շատ գյուղերի

աշխատավորներ բռնել էին համատարած կոլեկտիվացման ուղին: Այդ վայրերում մինչև հունվարի կեսերը կոլեկտիվացումը տեղի էր ունենում կամավորության սկզբունքների հիման վրա: Ղուրղուղուլու (Հոկտեմբերյանի) շրջանում մինչև հունվարի 30-ը աշխատավոր գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին մտել էին կոլեկտիվ տնտեսությունների մեջ և պատրաստվում էին առաջին պարնանացանը հաջողությամբ անցկացնելու համար: 1930 թ. հունվարի սկզբներին Սարղարաբաղում (այժմ Հոկտեմբեր) գոյություն ունեցող տրասկտորային կալոնայի բազայի վրա կազմակերպվեց ռեսպուբլիկայում առաջին մեքենատրակտորային կայանը, որի առկայությունը մեծ խթան էր հանդիսափում ռայոնի աշխատավորությանը մասսայաբար կոլտնտեսային շարժման մեջ ընդգրկելու և կոլտնտեսությունները ամրապնդելու գործում: Սարղարաբաղի ՄՏԿ-ի աշխատանքի դրսևական փորձը կարևոր նշանակություն ուներ նաև ամբողջ ռեսպուբլիկայի կոլտնտեսային շարժման համար:

1929 թ. վերջերից կոլեկտիվ շարժումը մասսայական բնույթ էր ստացել նաև Ղամաբլուի (Արտաշատի) շրջանում:

Կոլեկտիվ շարժումը նորմալ էր զարգանում նաև մի քանի այլ շրջաններում: Սակայն հիմնականում տարրեր շրջաններում այն ընթանում էր տարրեր մակարդակի վրա, և դա շատ բնական էր, քանի որ ռեսպուբլիկայի լեռնային և նախալեռնային մի շարք շրջաններ գեոես նախապատրաստված չէին համատարած կոլեկտիվացման համար:

Սակայն կոլեկտիվ շարժման ծավալման գործում ձեռք բերված խոշոր հաջողությունների հետ միասին, ինչպես Սովետական Միության մի շարք մարզերում և ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայաստանում, ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի հունվարի 5-ի որոշումով տրված դիրեկտիվները կոպիտ կերպով խախտվեցին: 1930թ. փետրվարի կեսերին կոլեկտիվ շարժման մեջ դրսևորվեցին լուրջ սխալներ և պարտիայի դժի աղավաղումներ:

Տարվելով Սովետական Միության սուռաավոր շրջանների կոլեկտիվացման տեմպերին հասնելու և անցնելու ձգտումներով, Հայաստանում նույնպես թույլ տրվեցին մի շարք կոպիտ սխալներ: Առանձին շրջանների նկատմամբ կոնկրետ մոտեցում չցուցաբերվեց: Տեղերին ցուցում տրվեց կոլեկտիվացումը 1930 թ. դարնանը հիմնականում ավարտելու մասին, չնայած դրա համար ժամանակ էր սահմանվել մինչև առաջին հնգամյակի վերջը: Ռեսպուբլիկայի մի շարք այնպիսի շրջաններում սկսեցին համատարած կոլեկտիվա-

ցում իրականացնել, որտեղ դրա համար անհրաժեշտ պայմաններ  
գեռևա չէին ստեղծվել: Այսպես, օրինակ, Բասարգեշարի շրջանը  
նկատի էր առնվել համառարած կոլեկտիվացման համար որպես  
պատրաստ շրջանի, մինչդեռ այդտեղ գեռևա պայմաններ չկային:  
Երևանի գաղափարի նկատմամբ դիֆերենցացված մոտեցում չէր ցուցա-  
բերվել: Նույնը պետք է ասել նաև մի շարք այլ շրջանների մասին:  
Ռեսպուբլիկական և տեղական կազմակերպությունները շատ վայ-  
րերում փորձեցին համառարած կոլեկտիվացումը իրականացնել  
հարկադրական միջոցներով: Ետո վայրերում միջակ գյուղացու  
նկատմամբ ուժ գործադրվեց, նրան դասելով կուլակների շարքը:  
Կոպիտ կերպով խախտվեց կամալորություն լենինյան սկզբունքը:

Կոլեկտիվացման բարձր տոկոսի հասնելու նպատակով, կա-  
մավորության լենինյան սկզբունքը խախտելու դեմով, ռեսպուբլիկա-  
յի առանձին գյուղերում ստեղծվեցին հասպենսյորեն հավաքագրված,  
փքուն կոլտնտեսություններ, որոնք բնականաբար շատ անկայուն  
գուրս եկան և շուտով մեծ մասում տվեցին, իսկ որոշ կոլտնտեսու-  
թյուններ էլ ամբողջովին կազմալուծվեցին:

Մի քանի շրջաններում որոշ աշխատողներ, խեղաթյուրելով  
պարտիայի դիմը, փորձում էին ցատկել տվյալ էտապում կոլեկտիվ  
տնտեսության հիմնական ձևի՝ արտերի վրայից դեպի կոմունա:  
Նրանք հանրայնացնում էին կոլտնտեսություն մտնող գյուղացու  
բնակելի շենքը, մանր անասունները, տնային թռչունները և այլն:  
Այս ամենը խիստ բացասական հետևանք ունեցավ կոլտնտեսային  
շինարարության գործի համար, որի հետևանքով կոլտնտեսություն-  
ներից զգալի մասում կատարվեց:

Կուլակները, նրանց կամակատար դաշնակցական թափթիփուկ-  
ներն ու մյուս հակասովետական տարրերը, օգտագործելով կոլ-  
տնտեսային շարժման գործում կատարված սխալներն ու շեղում-  
ները, կոլեկտիվ տնտեսության դեմ պայքար սկսեցին:

Նրանք աշխատում էին դժգոհություն սերմանել գյուղի հետա-  
մնաց խափերի մեջ ընդդեմ կոլտնտեսությունների կազմակերպման:  
Համոզում էին գյուղացիներին ոչնչացնել անասունները մինչև կոլ-  
տնտեսության մեջ մտնելը: Առանձին գյուղերում կուլակային տար-  
րերը, կոլտնտեսության մեջ թափանցելու փորձերից բացի, աշխա-  
տում էին իրենց գործակալներին խցիկել կոլտնտեսության ղեկավար  
պաշտոններում, որպեսզի ներսից քայքայեն կոլտնտեսությունները:  
Կուլակային-դաշնակցական տարրերը դիմում էին պարտիական,  
կոմերիտական սովետական և կոլտնտեսային ակտիվի դարանա-

մուտ սպանությունների, այրում էին կոլտնտեսութայունների շենքերը, անասնակերը, փշայնում էին մեքենաները, վնասում էին քաշող անասունները և այլն:

1930 թ. փետրվարի 2-ին Ղամարուի (Արտաշատ) շրջանի կոլտնտեսությունները սպանեցին կոլտնտեսության շարժման ակտիվ մասնակիցներ, Աղբաշի (Արեշատ) ազգեկործական ընկերության նախագահ Արտաշես Միրզոյանին և նույն ընկերության գանձապահ Զավեն Սարգսյանին: Նույն օրը այդ շրջանի Յուզա գյուղի կոլտնտեսությունները կազմակերպում են ակտիվ կոմերիտական բատրակ Բորգոմ Արգրսյանի սպանությունը: Կոլտնտեսության թշնամի տարրերը սպանեցին նաև Ապարտեի շրջանի Ղարաքիլիսա (Հարթավան) գյուղի կոլտնտեսության վարչության քարտուղար, կոլտնտեսության հիմնադիր Ա. Նվիպարյանին:

Դասակարգային թշնամին ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում, որպեսզի վիժեցներ կոլտնտեսությունների գարնանացանի կամ սպանիան: Նրանք այրում են Իջևանի, Դսեղի, Գյուլքյանդի, Ղուլալիի, Զարխեյի և մի շարք այլ գյուղերի կոլտնտեսությունների և Մարտունու վարկային ընկերության անասնակերը:

Առանձին շրջաններում դաշնակ-կոլտնտեսության տարրերը կազմակերպում են բանդիտակառն ելույթներ ընդդեմ Սովետական իշխանության: Սովետական իշխանության թշնամիները փորձում էին խզել լատնվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, որպեսզի վիժեցնեն գյուղի սոցիալիստական շինարարության գործը:

Կոլտնտեսության-դաշնակցական տարրերի հակասովետական և հակակոլտնտեսային աշխատանքին ու պրովոկացիաներին օգնում էին տրոցկիստական աշխատակազմներն ու այդ օպորտունիստները, որոնք ձգտում էին գյուղացիների աչքում վարկաբեկել կոլտնտեսությունը, ձախողել պարտիայի գլխավոր դժի կիրառումը գյուղում: Սակայն դասակարգային թշնամին անվոր էր արգելակելու պատմականորեն անխուսափելի անհրաժեշտություն հանդիսացող գյուղի սոցիալիստական վերափոխումը և նրա հիման վրա սկսված աշխատավոր գյուղացիության հիմնական մասաների շրջադարձը սոցիալիզմի կողմը: Կուլակի և նրա գործակալների բոլոր փորձերը անհաջողության են մատնվում: Ինչպես կոլտնտեսության, այնպես էլ նրան օգնող «ձախ» և այդ օպորտունիստական տարրերի բոլոր մտադրություններն ու ձգտումները կոլտնտեսային շարժումը ձախողելու ուղղությամբ պարտիայի գեկավարությունը ժամանակին մերկացվում և վերացվում են:

Կոմունիստական պարտիան իր լենինյան Կենտկոմի գլխավորութեամբ վճռական պայքար է ծավալում պարտիայի զծից կատարված շեղումներն ու սխալները վերացնելու և կոլտնտեսային շինարարութեանը ճիշտ ուղու վրա դնելու համար:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշմամբ, 1930 թ. մարտի 2-ին, հրատարակվում է Ի. Վ. Ստալինի «Գլխատույտ հաջողություններից» հոդվածը, որով բացահայտվեց կոլտնտեսային շարժման բնագավառում տեղ գտած «ձախ» շեղումների արմատները և ցույց տրվեց նրանց խիստ վնասակարութունը պլուզի սոցիալիստական շինարարության գործում:

1930 թ. մարտի 15-ին «Պրավդա» թերթը տպագրում է ՀամԿ(բ)Պ Կենտկոմի նույն ամսի 14-ի ընդունած որոշումը կոլտնտեսային շարժման մեջ պարտիական զծից կատարված շեղումների և նրանց վերացման համար ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Տեղիքում թույլ տրված պարտիայի դիրեկտիվների խեղաթյուրումներն ու խախտումները Կենտկոմը համարում էր լուրջ արդևակներ կոլտնտեսային շինարարության հետագա զարգացման համար: Այն դիտվում էր որպես ուղղակի օգնություն դասակարգային թշնամիներին: Կենտկոմը պարտիական կազմակերպություններից պահանջում էր անհապաղ և մինչև վերջը վերացնել շեղումները, շտկել կատարված սխալները և ապահովել կոլտնտեսությունների հետագա նորմալ զարգացումը<sup>1</sup>:

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի Նախագահությունը, ելնելով ՀամԿ(բ)Պ-ի Կենտկոմի մարտի 14-ի որոշումից, ձեռնամուխ եղավ թույլ տրված սխալները և գյուղատնտեսության կոլեկտիվացման լենինյան սկզբունքների ազավազումները վերացնելու: Իր ասրիլի 15-ին ընդունած որոշման մեջ ՀԿ(բ)Պ Կենտկոմի Նախագահությունը, մատնանշելով ինչպես տեղական կազմակերպությունների, նույնպես և Կենտկոմի կողմից թույլ տրված սխալների էությունը, ցույց տվեց, որ դեռևս հունվարի 6-ի իր որոշման մեջ Կենտկոմը թույլ է տվել մի շարք էական սխալներ: Այդ սխալները կայանում էին նրանում, որ բավարար չափով հաշվի չէր առնված առանձին շրջանների կոնկրետ առանձնահատկությունները և նրանց պատրաստ լինելը համատարած կոլեկտիվացման համար: Սխալ էր նաև այն, որ վերևից հրահանգվել էր ամբողջ շրջաններ համատարած կոլեկտիվացման ենթարկել գյուղատնտեսական կամպա-

<sup>1</sup> Տե՛ս «ՄԻԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», 11 մաս, էջ 844—848:

Նիաշյի հենց սկզբից: Ճիշտ չէր Կենտկոմի որոշման մեջ այն ձե-  
վակերպումը, թե կոլտնտեսություններ պետք է կազմակերպել առա-  
վելապես բարձր ձևերի կանոնադրության հիման վրա՝ արտելնեշի  
հետ միասին նաև կոմունաներ: Ահա այդ սխալ դիրեկտիվների  
հիման վրա էլ թույլ տրվեցին այն խնդարությունները, որոնք կա-  
տարվեցին Հայաստանում կոլտնտեսային շինարարության առա-  
ջին շրջանում:

1930 թ. ապրիլի 2-ին հրապարակվեց ՍՍՌՄ Կենտգործկոմի  
և Ժողկոմսովետի որոշումը «կոլտնտեսությունների և նրանց ան-  
դամների նոր արտոնությունների մասին», որը կարևոր նշանակու-  
թյուն ունեցավ կոլտնտեսային շարժման զարգացման համար: Սո-  
վետական իշխանությունը այդ որոշումով երկու տարով հարկա-  
դրումից ազատեց կոլտնտեսությունների հանրայնացված բոլոր բա-  
նող անասունները և կոլտնտեսականների տրամադրության տակ  
եղած կովերը, խոզերը, ոչխարները և թռչունները: Կառավարու-  
թյունը մինչև 1930 թ. նոյեմբերի 1-ը երկարաձգեց վարկային հիմ-  
նարկներին կոլտնտեսականների սլարտերի վճարման ժամկետը,  
ազատեց նրանց բոլոր տուգանքներից և դատական գանձումներից,  
որին նրանք ենթարկվել էին մինչև 1930 թ. ապրիլի 1-ը: Որոշումը  
նախատեսում էր 1930 թ. ընթացքում կոլտնտեսություններին բաց  
• թողնել 500 միլիոն ռուբլու վարկ:

Ճիշտ որոշման հետ միասին Ի. Վ. Ստալինի «Գլխապետույտ  
հաջողություններից», ինչպես նաև ապրիլի 2-ին լույս տեսած  
«Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» հոդվածները ճիշտ  
ուղղություն տվեցին և վճռական նշանակություն ունեցան հաջողու-  
թյուններից գլխապետույտի եկած աշխատողներին ու կազմակեր-  
պություններին զրաստացնելու դործում:

Հայաստանի պարտիական կազմակերպությունները մեծ պայ-  
քար ծավալեցին կոլտնտեսային շարժման գործում թույլ տրված  
ազավազումներն ու սխալները լիկվիդացնելու մասին պարտիայի և  
կառավարության ղրհկտիվները կենսագործելու ուղղությամբ, և  
որոշ ժամանակից հետո հասան որոշակի հաջողությունների: Կոլ-  
տնտեսային շարժման մեջ կատարված սխալների վերացման գոր-  
ծում պարտիային աջակցում էին կոլտնտեսական մասսաները,  
բանվորական շեֆ կազմակերպությունները, կոմերիտմիտությունը և  
բանվոր 25 հազարականները: Այդ ուղղությամբ կարևոր դեր էին  
կատարում նաև գյուղական Սովետները, որոնց աշխատանքի վե-  
րահարուցման քնադավառում արդեն զգալի գործեր էր կատարվել:

Հայաստանի Կոմպարտիայի VII համագումարը (մայիս 1930 թ.) խիստ հակահարված տվեց «ձախ» խոտորիչներին և աջ օպորտունիստներին: Մերկացնելով կոլեկտիվացման գործում ռեսպուբլիկայում կատարված սխալները, համագումարը Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմից և սյարտիական կազմակերպություններից պահանջեց կոլեկտիվացման գործում թույլ արված սխալների մասին բանաձևեր և որոշումներ ընդունելուց անցնել կոնկրետ աշխատանքի, կարճ ժամկետում վերացնել սյարտիայի դժից կատարված շեղումները և կոլտնտեսային հետագա շարժումը կազմակերպել Պարտիայի Կենտկոմի դիրեկտիվներին ու ցուցումներին համաձայն:

Մեծ աշխատանք ծավալվեց միջակի նկատմամբ թույլ արված սխալներն ուղղելու և կոլտնտեսություններն ամրապնդելու բնագավառում: Այդ բոլորի հետևանքով դադարեց կոլտնտեսություններից գյուղացիների մասսայական մաղումը, կոլտնտեսությունները սկսեցին ամրանալ, ընդհանուր առմամբ հաջողությամբ ավարտվեցին 1930 թ. գարնանային գյուղատնտեսական աշխատանքները:

Կոլտնտեսություններն ամրապնդելու գործում կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, որ հրատարակվեց 1930 թ. մարտի 2-ին: Այդ կանոնադրությունը համապատասխանում էր կոլտնտեսային շինարարության սկզբնական էտապի խնդիրներին և հեշտացնում էր խոշոր տնտեսությունների մեջ մանր արտադրողներին միավորելու գործը: Կանոնադրության մեջ ասված էր, որ կոլտնտեսային շարժման հիմնական օղակը արտելն է, որը կամավոր կերպով իր մեջ է միավորում աշխատավոր գյուղացիներին: Կանոնադրության համաձայն արտելը միացնում է կոլտնտեսություն մտնող գյուղացու հողերը և արտադրական միջոցները, իսկ նրանց անհատական օգտագործման համար թողնվում էին անամերձ ճողամաս, կաթնատու և տնային մանր կենդանիներ:

Անհրաժեշտ համարվեց գյուղատնտեսական արտելի բերքի համախառն եկամտից և հանրայնացված կաթնատու անասունների եկամտից առանձնացնել 5% -ի շափով բաժանելու արտելի անդամներին ըստ նրանց հանրայնացված ունեցվածքի հարաբերություն<sup>1</sup>:

<sup>1</sup> *Տե՛ս* Приложение № 1 в сборнике „Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935“, стр. 543—544, Москва, 1957.

Այդպիսով, արտելի առաջին կանոնադրութիւնը արտացոլում էր կոլտնտեսային մասսայական շարժման առաջին էտապը, նրբ արդեն նա դառնում էր հիմնական ձև և հեշտացնում էր աշխատավոր գյուղացիներին անհատական մասնավոր սեփականատիրական տնտեսաձևից անցնելու խոշոր, կոլեկտիվ տնտեսութեան:

Գարնանացանի ընթացքում և նրանից անմիջապես հետո գումարվեցին առաջավոր կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների շրջանային և ապա ռեսպուբլիկական խորհրդակցութիւններ: Դրանք զգալի չափով ամրապնդեցին կոլտնտեսութիւնները, մտքի լիզացրին կոլտնտեսականներին կոլեկտիվ տարրերի պրովոկացիաների դեմ պայքարելու գործում:

Կոլտնտեսային շարժման կայունացման համար կարևոր նշանակութիւն ունեցավ նաև օկրուզների վերակառուցումը և ռեսպուբլիկայի շրջանացումը: Այդ միջոցառումը հնարավորութիւն տվեց դեկաւրութիւնը մոտեցնելու գյուղին, կոլտնտեսութեանը: Զգալի բանակով նոր կազմեր ուղարկվեցին շրջան և գյուղ՝ մշտական աշխատանքի: Արդյունաբերական ձեռնարկութիւնները ուժեղացրին գյուղին ցույց տրվող օգնութիւնը: Ավելի ծավալվեց շեֆտկան աշխատանքը, ամրապնդվեց բանվոր դասակարգի արտագրական կապը գյուղի, կոլտնտեսութիւնների հետ:

Կոլտնտեսութիւններին և կոլտնտեսականներին նոր արտոնութիւններ տալու մասին պարտիայի և կառավարութեան 1930 թ. ապրիլի 2-ի որոշումը հանդիսացավ կոլտնտեսութիւնները ամրապնդելու և կոլտնտեսութիւններից կատարվող մագումը դադարեցնելու միջոցներից մեկը: Այս բոլոր միջոցառումների կենսագործումը հիմք հանդիսացավ կոլտնտեսային շարժման նոր վերելքի համար, որը Հայաստանում սկիզբ առավ, հատկապես, 1930 թ. աշնան ամիսներին:

2. ԱՄԲՈՂՋ ԾԱԿԱՏՈՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ԴԵՄ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ  
ԾԱՎԱԼՈՒՆ ԷԱՐՁԱԿՈՒՄԸ: ՊԱՅՔԱՐ ԱՌԱՋԻՆ, ՀՆԿԱՄՅԱԿԻ ՊՂԱՆԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Սովետական ժողովուրդը հաջողութեամբ կատարում էր ժողովրդական տնտեսութեան զարգացման հնգամյա պլանը: 1929—1930 տնտեսական տարվա պլանային առաջադրանքների կատարման ուղղութեամբ ամբողջ երկրում ծավալված աշխատանքային խանդա-

վառությունը մեծ շարիերի էր հասել: Այս մեծագուշն նվաճումները, որ ձեռք էին բերվում սոցիալիստական շինարարության քաղոր բնագավառներում, հենվում էին սոցիալիստական ինդուստրիալիզացիայի հետագա ծավալման և գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում ունեցած հաջողությունների բաղայի վրա:

Մեր երկրում սոցիալիստական շինարարության ուղղությամբ եղած նվաճումների հանրագումարը ավեց պարտիայի XVI համագումարը, որը գումարվեց 1930 թ. հունիսի 26-ին և պատմության մեջ մտավ որպես ընդհանուր ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման անցնելու համագումար, կուլակությունը, որպես դասակարգի, լիկվիդացնելու և համաատարած կոլեկտիվացումը կենսագործելու համագումար:

Պարտիայի XV և XVI համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում Սովետական Միության անտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած պատմական մեծ նշանակութուն ունեցող արմատական փոփոխությունները իրենց արտացոլումը գտան XVI համագումարի ընդունած որոշումներում: Համագումարը արձանագրեց, որ Կոմունիստական պարտիայի լենինյան ճիշտ քաղաքականությունը ապահովեց ամբապնդելու Սովետների երկրի միջազգային հզորությունը և վիժխարի հաջողությունները մեր երկրի սոցիալիստական խնդուտրացման, հնգամյակի առաջին տարիների պլանների հաջող կատարման ու պերակատարման գործում: Համագումարը նեց, որ պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հիման վրա է՛լ ավելի ամբապնդվեց սովետական ժողովուրդների եզբայրական համագործակցությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության զաշինքը: Միջակ գյուղացու վճռական շրջադարձը դեպի սոցիալիզմը պարտիային հնարավորություն ավեց կուլակությանը սահմանափակելու և արտամղելու լողունգից անցնելու համատարած կոլեկտիվացման հիման վրա նրան որպես դասակարգ լիկվիդացնելու լողունգին<sup>1</sup>:

Եթե սոցիալիստական շինարարության նախորդ էտապներում կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի հարձակումը իրականացվում էր ժողովրդական տնտեսության առանձին ճակատամասերում, ապա այժմ արդեն սկսվել էր բոլոր ճակատամասերում սոցիալիզմի ընդհանուր հարձակման ժամանակաշրջանը:

<sup>1</sup> Տե՛ս «ՄՄԿԳ-ն ...բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 11:

Երկրի խոշոր արդյունաբերության արտադրանքի մեջ սոցիալիստական սեկտորը արդեն տիրապետող էր դարձել: Այդ նշանակում էր, որ արդյունաբերության բնագավառում «ուլ-ում»-ի հարցը անվերադարձ կերպով լուծվել էր հօգուտ սոցիալիզմի:

Վճռական փոփոխություններ էին կատարվել նաև ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշռի միջև: Մեր երկրի տնտեսության պատմության մեջ առաջին անգամ արդյունաբերության արտադրանքի բաժինը գերազանցում է գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի բաժնից: Այդ ցույց էր տալիս, որ Սովետական Միությանը արդեն գտնվում էր ագրարային երկրից ինդուստրիալ երկիր դառնալու նախօրյակին:

Սովետական Միության սոցիալիստական շինարարության հանջողությունները հիմք էին տալիս ուրվագծելու նոր, ավելի մեծ առաջընթաց արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսության վերակառուցման, կուլտուրայի և շինարարական աշխատանքների ծավալման համար:

Պարտիայի XVI համագումարը սովետական ժողովրդի և սոցիալիստական առաջ հնգամյա պլանի կատարումն ապահովելու համար մեծագույն կարևորություն ունեցող խնդիրներ դրեց: Երկիրը արդեն թևակոխել էր սոցիալիստական շինարարության վիթխարի ծավալման շրջանը, որից էլ բխում էին սոցիալիստական ինդուստրացման հետագա զարգացման էլ ավելի բարձր տեմպերի անհրաժեշտությունը: Ելնելով դրանից, համադրումարը պարտիայի և բանվոր դասակարգի առաջնահերթ խնդիրը համարեց ամեն կերպ զարկ տալ ծանր արդյունաբերության ծավալմանը՝ որսին սոցիալիստական շինարարության հիմնական բազայի: Համագումարը ցուցում տվեց զարգացնել և վերակառուցել երկաթուղային ու ջրային տրանսպորտը, ուժեղացնել մասսայական սպառման ապրանքներ արտադրող արդյունաբերության ճյուղերի զարգացումը, նրա հումքային բազան, անալոգման կատարել ինքնարժեքի իջեցման և արտադրանքի որակի բարձրացման պլանային առաջադրանքները, պլանաչափորեն իրականացնել արտադրության ռացիոնալացումը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Սոցիալիստական ինդուստրիայի զարգացման հզոր թափը, բանվորական մասսաների արտադրական խանդավառության հսկայական վերելքը պարտիային հնարավորություն տվեցին իր առջև դնելու հնգամյակը շուրս տալու կատարելու խնդիրը:

Գյուղի սոցիալիստական վերափոխման ուղղությամբ համադրամարը խնդիր դրեց «ամեն կերպ զարգացնել գյուղատնտեսության մեքենայացումը և արակտորացումը, սովխոզային հնգամյակը կատարել երեք տարում, գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացման համար ամուր մեքենատրակտորային բազա ստեղծել ամբողջ ՍՍՌՄ-ում»<sup>1</sup>:

Ժողովրդական տնտեսության հարաճուն զարգացման պահանջները, սոցիալիզմի կառուցման կենսական շահերը և երկրի պաշտպանունակության ամրացման անհրաժեշտությունը թելադրում էին ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել մեր երկրի տեխնիկական հետամնացությունը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը դինել նոր, առաջավոր տեխնիկայով, հին սարքավորումը փոխարինել նոր սարքավորումով, նոր տեխնիկայով:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մոբիլիզացնում էին սովետական ժողովրդի բոլոր ջանքերը տնտեսության վերակառուցումը արագ տեմպերով իրականացնելու համար: Այդ ուղղությամբ մեծ դործ է ծավալվում նաև Անդրֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ում: Նկատելի թափով առաջ էին մղվում հին ձեռնարկությունները նոր տեխնիկայով հագեցնելու, իսկ նոր կառուցվող դործարաններն ու ֆարրիկաները ժամանակակից տեխնիկայով սարքավորելու աշխատանքները:

Ժողովրդական տնտեսության վերակառուցման զործի ծավալմանը զուգընթաց առաջանում է մասնագիտական կադրերի սուր պահանջ: Անհրաժեշտ էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիների ծոցից դուրս կկած մարդկանցից պատրաստել ինժեներներ, տեխնիկներ, տնտեսավարներ, գյուղատնտեսական արտագրության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի տեխնիկային տիրապետած մասնագետներ: Կադրերի պատրաստման ուղղությամբ մեծ աշխատանքներ են ծավալվում և խոշոր միջոցներ ներդրվում ինչպես միութենական մասշտաբով, այնպես էլ ռեսպուբլիկաներում: Կազմակերպվում են բազմաթիվ տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատություններ, տեխնիկումներ, և մասսայական կադրեր պատրաստող այլ գալրոցներ: Զգալի ծավալ է ստանում արտագրության մեջ աշխատող բանվորների որակի բարձրացման գործը:

<sup>1</sup> «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 15—16:

Հայաստանում, բացի Պետական համալսարանից, որը միշտ հանդիսացել է բարձրորակ կադրերի պատրաստման հիմնական օջախը, կազմակերպվում են նաև մի քանի այլ բուհեր ու տեխնիկումներ: Ռեսպուբլիկայում գործում էին մի շարք ֆաբրործուսներ, որտեղ սովորում էին զգալի քանակով երիտասարդներ:

Պարտիայի և կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ժողովրդական տնտեսությունը հետզհետե ավելի ու ավելի շատ մասնագիտական կադրեր էր ստանում: Հնդգամյակի տարիներին, առաջավոր տեխնիկային տիրապետած մասնագետներին և բանվորներին ջանքերով բարելավվում էր նոր մեխանիզմների օգտագործումը, բարձրանում էր աշխատանքի արտադրողականությունը և սլայքար էր ծավալվում թողարկվող արտադրանքի որակը բարձրացնելու, սոցիալիզմի հիմքի կառուցման հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու համար:

\* \* \*

Պարտիայի XVI համագումարի պատմական որոշումները կենսադործելու, առաջին հնգամյակի երկրորդ տարվա պլանների կատարումն ու գերակատարումը ապահովելու նշանաբանով հսկայական քաղաքական-մասսայական և գործնական աշխատանք ծավալվեց ամբողջ երկրում: Նոր թափ ու ծավալ ստացավ մեր երկրի ինդուստրացումը, մանավանդ ծանր ինդուստրիայի զարգացումը և նորակառույցների շինարարությունը: Սովետական Միության աշխատավորությունը բանվոր դասակարգի գլխավորությունը և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հանդես բերեց հսկայական ոգևորություն սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումն ապահովելու համար:

Բանվոր դասակարգի և ամբողջ սովետական ժողովրդի առջև կանգնած ժողովրդատնտեսական խոշորագույն նշանակություն ունեցող խնդիրների լուծման գործում կարևոր գեր ունեցավ պարտիայի Կենտկոմի 1930 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը, ուղղված պաշտիական, անտեսական, պրոֆիտուբենալիստ և կոմերիստական կազմակերպություններին: Կենտկոմը անհրաժեշտ էր համարում կենսագործելու մի շարք անհետաձգելի միջոցառումներ հնգամյակի երկրորդ տարվա արտադրական-ֆինանսական պլանների կատարումն ապահովելու համար: Կենտկոմի դիմումը լայն քննության

առարկա հանգիստացավ ռեսպուբլիկայի գործարանների, ֆաբրիկաների, արանսպորտի բանվորների ժողովներում, արտադրական խորհրդակցություններում և առաջ բերեց աշխատանքային աննախընթաց խանդավառություն: Դիմումի քննման պրոցեսում բանվորների կողմից առաջ էին քաշվում բազմաթիվ գործնական առաջարկություններ արտադրության պրոցեսը լավ կազմակերպելու, արտադրական պլանների կատարմանը խանգարող խոչընդոտները վերացնելու և առաջացող դժվարությունները հաղթահարելու, թողարկվող արտադրանքի որակը լավացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և խնայողության խիստ ռեժիմ կիրառելու ուղղությամբ:

Կենտրոնական Կոմիտեի գիմումի քննարկումը նոր թափ հաղորդեց սոցիալիստական մրցության խորացմանը և հարվածային շարժման ծավալմանը ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային արանսպորտում, կոլտնտեսություններում ու սովխոզներում: Անհատական սոցիալիստական մրցության հետ միասին զղալի ծավալ ստացավ նաև կոլեկտիվ մրցումը: Աշխատանքի հարվածային մեթոդը սկսեց տարածվել գործարաններում, տեղամասերում, ցեխերում և բրիգադներում: Արտադրության մեջ հեռզհետև ավելանում էր հարվածային բրիգադների քանակը, որոնք ընդգրկում էին հազարավոր առաջավորներ, որոնց թիվը 1930 թ. սեպտեմբերին հասնում էր 17 հազարի:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում սոցիալիստական մրցությունը և հարվածային շարժումը գլխավորում էին կոմունիստական կազմակերպությունները: Կոմունիստների և կոմբրիտականների առաջավոր դերը արտադրության մեջ և նրանց օրինակելի աշխատանքը՝ խոշոր նշանակություն են ունենում աշխատավորական մասսաների աշխատանքային խանդավառությունը բարձրացնելու և ոգևորելու գործում: Կոմունիստների և կոմբրիտականների օրինակով հազարավոր բանվորներ իրենց կցում էին արտադրությանը մինչև հնգամյակի վերջը:

Լենինականի տեքստիլ կոմբինատի ավելի քան 1600 կամերիտական և արտամիութենական երիտասարդ բանվորներ պարտավորություն էին վերցրել աշխատել կոմբինատում մինչև հնգամյակի ավարտումը: Կոմբինատում կար 70 հարվածային բրիգադ: Երեվանի կարի ֆաբրիկայի բանվորների 80% հարվածայինների շարքերումն էին:

Զգալի պայքար էր ծավալվել բանվորական ուժի հոսունությունը վերացնելու և աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու համար:

Հայաստանի պարտիական, սրբոգիտությունական և կոմերիտական կազմակերպությունները, բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողները պարտիայի կենտրոնի դիմումին պատասխանեցին արդյունաբերական շատ ձեռնարկությունների արտադրական պլանների կատարումով և գերակատարումով: Կենտրոնի դիմումը քննելուց հետո նկատելի բեկում սկսվեց Երևանի կարի, առաջին և երկրորդ, Իսայտամշակման, ծխախոտի, Ձևթ-օճառի գործարանների, Լենինականի տեքստիլ կոմբինատի և շատ ուրիշ ձեռնարկությունների արտադրական պլանների կատարման գործում:

Հայաստանի Պրոֆմիությունների խորհրդի նախագահությունը իր 1930 թ. սեպտեմբերի 29-ի ընդլայնած նիստում քննության առավ ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական-ֆինանսական պլանների կատարման ընթացքը: Ամփոփելով կենտրոնի դիմումի կենսադործման ուղղությամբ ծավալված մեկ ամսվա պայքարի արդյունքները, ՀԱՄԽ-ի նախագահությունը նշեց Հայաստանի բազմաթիվ ձեռնարկությունների բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից ծավալված սոցիալիստական մրցության ու հարվածային աշխատանքի լավագույն արդյունքները: Արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ իրենց արտադրական պլանները կատարելու և գերակատարելու համար արժանացան կարմիր տախտակին: Այդ արդյունաբերական օբյեկտների թվումն էին՝ Լենինականի տեքստիլ կոմբինատը, Չորագէսը, Շամլուղի հանքերը, Երևանի Իսայտամշակման, «Արարատ», կարբիդի, կաշվի գործարանները, Հայպոլիգրաֆի և Հայկինոյի ձեռնարկությունները:

Այդպիսով, Հայաստանի շատ առաջավոր բանվորները, ընդօրինակելով միության առաջավոր ձեռնարկությունների հարվածային մեթոդներով աշխատող բանվորների փորձը, աշխատանքային մեծ նախաձեռնություն էին ցուցաբերում պարտիայի ու կառավարության դիրեկտիվները կատարելու գործում:

Այդպես, օրինակ՝ ռեսպուբլիկայի բազմաթիվ առաջավոր բանվորներից, իր անբասիր և օրինակելի աշխատանքով աչքի էր ընկնում Երևանի Ֆ. Չերժինսկու անվան մեխանիկական (այժմ հաստոցաշինական) գործարանի մեքենայական ցեխի անվանի վարպետ՝ խառատ Համայակ Դիլանյանը: Նա արտադրության տեխնիկական

տիրապետած, Սովետական Միութեան առաջավորների մեթոդով աշխատող բանվոր էր, և իր նորարարութիւններով շատերի համար օրինակ էր հանդիսանում: Յեխի արտադրական սլաննները կատարելու և դերակատարելու, աշխատանքային սրտցեսը ռացիոնալ ձևով կազմակերպելու, աշխատանքի արտադրողականութիւնը և արտադրանքի որակը բարձրացնելու, նյութի և էներգիայի խնայողութեան համար մղվող պայքարը զլխավորելու և կազմակերպելու գործում Հ. Դիլանյանը գրեթէ ամբողջով է իրեն որպէս իսկական առաջավոր բանվոր: Նա անընդհատ բարձրացնում էր իր տեխնիկական դիտելիքները և կատարելագործում իր որակը: Հ. Դիլանյանը մեծ ջանասիրութեամբ օգնում էր երիտասարդ կադրերին տիրապետելու աշխատանքի տեխնիկային և բարձրացնելու իրենց որակը:

Սկսած 1930 թվականից պարտիական, տնտեսական, սովետական և արհմիութենական կազմակերպութիւնները բաղմիցս նշել են Հ. Դիլանյանի լավագույն աշխատանքը, մի շարք անգամներ պարգևատրել նրան, և նրա աշխատանքի օրինակով ոգևորել շատ և շատ բանվորների ու վարպետների՝ արտադրութեան սլաննների կատարման համար մղվող պայքարում:

1930 թ. հոկտեմբերի 1-ին՝ «Հարվածայինի օրվա», և նույն թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում Սովետական իշխանութեան հաստատման 10-ամյակի օրը, հաստիկ հանձնաժողովի որոշմամբ Հ. Դիլանյանը, արտադրութեան մեջ ցուցաբերած իր օրինակելի և բեղմնավոր աշխատանքի համար, պարգևատրվում և բարձրացվում է կարմիր տախտակի: Հանձնաժողովը Հ. Դիլանյանին համարում է Ֆ. Զերժինսկու անվան դործարանի ամենալավ հարվածայինը: Նույն դործարանի առաջավորների շարքերում էին նաև ստաժավոր բանվոր խառատ Արտաշես Մատինյանը, փականագործ Միրայիկ Հովհաննիսյանը, հղկող Սեդրակ Մելքոնյանը և շատ ուրիշները:

«Արարատ» դործարանի առաջավոր բանվորների շարքերում էին սպիտիկ թորման ցեխի մեքենավար կոմունիստ Հովհաննես Հարութիւնյանը, որը սիստեմատիկաբար գերակատարում էր արտադրական սլանը, տալիս էր բարձր որակի արտադրանք և իր աշխատանքի լավագույն ցուցանիշներով դաստիարակում ու սղեսրում էր դործարանի շատ երիտասարդ բանվորների: Հ. Հարութիւնյանը, Վ. Ավագյանը, Վ. Մխիթարյանը, Արեքնազ Ավետիսյանը, Արաքսյա Թոխմասյանը «Արարատ» դործարանի սոցիալիստական մերցութեան և հարվածային շարժման սիոններներ էին, որոնք առաջին

նդամյակի տարիներին, ինչպես և հետագայում, երբեք չէին գիշում իրենց զիրքերը՝ արտադրողականությունը բարձրացնելու, պլաննե-րը գերակատարելու և արտադրանքի որակը բարելավելու ուղղու-թյամբ բարձր ցուցանիշներ տալու գործում:

Սոցիալիստական մրցությունը որպես նոր, սոցիալիստական հասարակության շինարարության մեթոդ, որը հիմնված է աշխա-տավորական լայն մասսաների մաքսիմում ակտիվության ու ստեղ-ծագործական նախաձեռնության վրա, փոխում է նրանց վերաբեր-մունքը դեպի աշխատանքը, հսկայական բեկում է առաջացնում արտադրության մեջ:

Բանվորների ստեղծագործ վիթխարի նախաձեռնության հիմքը սոցիալիստական տնտեսական սխտեմն էր, արտադրության մի-ջոցների հասարակական, սոցիալիստական սեփականությունը: «Սոցիալիզմը, — ասում է Վ. Ի. Լենինը, — ոչ միայն չի մարում մըր-ցությունը, այլ, ընդհակառակը, յոռաջինն է հնարավորությունն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական շա-փով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այն-պիսի աշխատանքի աստղարկող, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, զրսևորել տա-ղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ ազդյուր են և որոնց կա-պիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»<sup>1</sup>:

Սոցիալիստական մրցությունը, որի ծավալումը սերտ կերպով պայմանավորված էր սոցիալիստական արտադրական հարաբերու-թյուններով և հանդիսանում էր նրա անմիջական արտահայտու-թյունը, ինչպես ամբողջ միություն, այնպես էլ Սովետական Հայաս-տանի արտադրության բոլոր բնագավառներում 1930 թվականին արդեն հիմնականում արմատավորվել էր:

Արտադրության պլանների կատարման ու գերակատարման հա-մար ծավալված պայքարի, ինչպես նաև սոցիալիստական մրցու-թյունը խորացնելու և հարվածային շարժումը գլխավորելու ուղղու-թյամբ մեծ աշխատանքներ էին կատարում արհեստակցական միու-թյունները: Նրանք կոմունիստական կազմակերպությունների դե-կավարությունը կազմակերպում և զլխավորում էին բանվորների տխնիկական և կուլտուրական գիտելիքների բարձրացման, քա-ղաքի և գյուղի աշխատավորների անզրագիտության ու կիսազրա-գիտության վերացման աշխատանքները:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, ներկեր, հատ. 20, էջ 493 - 494:

Արհեստակցական միությունները նշանակալի դործ էին կատարում նաև աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, առաջավորների փորձը մասսայականացնելու և սոցիոնալիզատորական առաջարկությունները արտադրության մեջ կիրառելու ուղղությամբ: Պարտիական կազմակերպությունների հետ միասին արհեստակցական միությունները գլխավորում էին ձեռնարկությունների, ցեխերի, տրանսպորտի և անտեսական շինարարության այլ բնագավառների հետ մնալը վերացնելու համար մղվող պայքարը, պետական պլանները կատարելու և դերակատարելու համար ծավալված աշխատանքները:



Միանգամայն ակնհերև է, որ Սովետական Միության, այդ թվում նաև Սովետական Հայաստանի ու ազգային մշուռ ուսուցողականների ժողովրդական անտեսության դարդացումը, նրանց ինդուստրացումն ու գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը անհնարին կլինեք առանց երկրի ծանր ինդուստրիայի բուռն զարգացման: Ծանր ինդուստրիայի զարգացման այնպիսի տեմպեր, ինչպիսին տեղի ունեին Սովետական Միությունում, մանավանդ հնգամյակի տարիներին ու հետագայում, կադիտալիստական և ոչ մի երկրի հայտնի չէին: Ծանր ինդուստրիայի բաղալի վրա մեծ թափով զարգանում էր մեքենաշինությունը, այդ թվում տրակտորաշինությունը և գյուղատնտեսական այլ բարդ մեքենաների արտադրությունը, շահագործման էին հանձնվում սեխնիկայի վերջին խոտքով սարքավորված ծանր ինդուստրիայի և մեքենաշինության բաղմաթիվ նոր ձեռնարկություններ: Ծանր ինդուստրիայի և մեքենաշինական բաղմաթիվ գործարանների թվում 1930 թ. շահագործման հանձնվեց Ստալինգրադի Չերժինսկու անվան տրակտորային գործարանը՝ տարեկան 40 հազար տրակտորի արտադրության կարողությամբ, Խարկովի Օրջոնիկիձեի անվան տրակտորի գործարանը (1931 թ.)՝ տարեկան 40 հազար տրակտորի արտադրության կարողությամբ, Ռոստովի Ստալինի անվան գյուղատնտեսական բարդ մեքենաների գործաշանը (1930 թ.)՝ Ջապոտոժեյի «Կոմունար» կոմբայնի գործարանը (1931 թ.)՝ նույն թվականին շահագործման հանձնվեց նաև Սարատովի կոմբայնի գործարանը, 1930 թ. գործարկվեց Տաշքենդի Վորոշիլովի անվան գյուղմեքենաների գործարանը և այլն: Այդ

չործարանների հսկայական դերը գյուղատնտեսության մեքենայացման գործում սլաակերացնելու համար բավական է միայն նշել, որ Ռուստովի գյուղմեքենաների գործարանի տարեկան արտադրանքը հասնելու էր 115 միլիոն ռուբլու, իսկ ցարական Ռուսաստանի 900 տարբեր գյուղատնտեսական մեքենաշինական և գործիքաշինական ձեռնարկությունների տարեկան արտադրանքը չէր աճեցնում 70 միլիոն ռուբլուց:

Ինդուստրացման ուղղությամբ նշանակալի գործ էր ծավալվել նաև ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում: Հնգամյակի առաջին երկու տարիներին կառուցվում էին մի շարք ֆաբրիկաներ, գործարաններ և էլեկտրակայաններ, որոնց թվում հաբլ է հիշել Ալավերդու ֆլոտացիոն, Դավալուի (այժմ Արարատ) ցեմենտի, Երևանի պահածոների և փայտամշակման գործարանները, Կիրովականի քիմիական կոմբինատը, Քանաքեռի հիդրոէլեկտրակայանը և այլն: Արդյունաբերության զարգացման շնորհիվ արագ թափով սկսեց բարձրանալ նրա արտադրանքի բաժինը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ, որի տեսակարար կշիռը 1927—1928 տնտեսական տարվա 21,8% շիմաց 1929—1930 տնտեսական տարում հասավ մինչև 40,9 տոկոսի<sup>1</sup>:

Մեծ էին նվաճումները ՍՍՌՄ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Առաջին հնգամյա պլանի 1929—1930 տնտեսական տարվա նախադժոմները կոլտնտեսությունների և սովխոզների շինարարության ղեկավարողն էին: 1930 թ. կեսերին կոլտնտեսությունների ցանքատարածությունը հասնում էր 36 միլիոն հեկտարի, կամ՝ կոլտնտեսային շինարարության հնգամյա ծրագիրը զերակատարվել էր ավելի քան մեկ և կես անգամ: Սովխոզների ցանքատարածությունը, որ հնգամյակի վերջում պետք է կազմեր 5 միլիոն հեկտար, 1930 թվականին արդեն հասնում էր 3,8 միլիոն հեկտարի:

Կոլեկտիվ տնտեսությունների և սովխոզների լայն շինարարությունը, ՄՏԿ-ների կազմակերպման ծավալումը 1930 թվականին արդեն ամուր բազա էին ստեղծել գյուղում ապրանքային հացի կուլակային արտադրությունը սոցիալիստական սեկտորի արտադրությամբ փոխարինելու ուղղությամբ: 1930 թվականին հավաք-

<sup>1</sup> Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆելիալի Պարտարիիվ, ֆ. 1, պ. 75:

ված հացահատիկի արտադրանքային արտադրանքի մեջ հանրայնացված սեկտորի տեսակարար կշիռը կազմեց ամբողջ արտադրանքային արտադրանքի մոտ 50 տոկոսը՝ հնդամյակի վերջին տարվա համար ենթադրվող 43 տոկոսի դիմաց<sup>1</sup>։

Այսպիսով, 1930 թվականին կոլտնտեսությունների կողմից պետությունը վաճառված հացահատիկային կուլտուրաների արտադրանքային մասը (460 միլիոն փուլ) գերազանցեց 1926—1927 թվականին կուլտեսների արտադրուկային արտադրանքային հացի չափը (126 միլիոն փուլ) երեք և կես անգամ, և կալվածատերերի մինչպատերազմյան արտադրանքային հացի արտադրանքի չափը (280 միլիոն փուլ) 1,6 անգամ<sup>2</sup>։ Հետևաբար հանձին գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի Սովետական պետությունը արդեն ուներ կայուն տնտեսական բազա։

1930 թվականի դեկտեմբերի 1-ի տվյալներով կոլտնտեսություններում արդեն միավորվել էին ավելի քան 6,15 միլիոն գյուղացիական տնտեսություններ, կամ՝ բոլոր աշխատավորական տնտեսությունների 24,1 տոկոսը, իսկ հիմնական հացահատիկային շրջաններում՝ կոլտնտեսությունների մեջ էին աշխատավոր տղնտեսությունների 49,3 տոկոսը<sup>3</sup>։ Մինչև 1931 թ. մարտի 10-ը կոլտնտեսություններում միավորված էին 9,4 միլիոն տնտեսություն, կամ բոլոր չբավոր և միջակ տնտեսությունների 37 տոկոսը, ընդ որում հիմնական հացահատիկային շրջաններում կոլտնտեսությունների մեջ էին աշխատավոր գյուղացիների 74 տոկոսը, մնացած հացահատիկային շրջաններում՝ 40 տոկոսը, իսկ սպառողական շատու և ազգային ծայրամասերում՝ 22 տոկոսը<sup>4</sup>։ Այդ նշանակում է, որ կոլտնտեսային գյուղացիությունը արդեն հանդիսանում էր Սովետական իշխանության ամուր հենարանը գյուղում։

«ՍՍՌՄ-ում սոցիալիստական հարաբերությունները, — կարդում ենք պարտիայի 16-րդ համագումարի որոշումներում, — որոնք մինչև այժմ համարյա բացառապես հենվում էին սոցիալիստական արդյունաբերության վրա, այսուհետև սկսում են հենվել նաև արագորեն անող սոցիալիստական սեկտորի վրա (խոշոր արտադրություն՝ հանձին կոլտնտեսությունների և սովխոզների) գյուղատնտես-

<sup>1</sup> Տե՛ս «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 94։

<sup>2</sup> Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 376.

<sup>3</sup> Տե՛ս «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III-րդ մաս, էջ 94։

<sup>4</sup> Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 375.

սուրբյան մեջ»<sup>1</sup>։ Հետևաբար «...այժմ նոր ձևով է դրվում Սովետական իշխանության հենարանի հարցը գյուղում։ Այժմյանից ՍՍՌՄ կարևորագույն հացահատիկային շրջաններում գյուղը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ կոլտնտեսականների, որոնք հանդիսանում են Սովետական իշխանության իսկական և կայուն հենարանը, և ոչ կոլտնտեսական չքավորների ու միջակների»<sup>2</sup>, որոնք դեռևս կոլտնտեսության մեջ չէին, բայց որոնք շուտով համոզվելու էին կոլեկտիվացման ուղին բռնելու անհրաժեշտության մեջ։

ՍՍՌՄ Սովետների VI համագումարը (մարտ 1931 թ.) ընդգծեց, որ կոլտնտեսությունը մտնող միջակը կոլտնտեսական նախկին բատրակի և չքավորի հետ միասին դառնում է Սովետական իշխանության ամուր հենարանը գյուղում։ Դրանով իսկ հսկայական շափով ամրանում է բանվոր դասակարգի գաշինքը գյուղացիության հետ, լայնանում է բանվոր-գյուղացիական կառավարության հիմքը, որի համար «այսուհետ հիմնական և գլխավոր հենարանը գյուղում հանդիսանում է կոլտնտեսային գյուղացիությունը»<sup>3</sup>։ (Ընդգծումը մերն է — Շ. Կ.)։

Նկատելի էին հաջողությունները նաև Սովետական Հայաստանում։ Գյուղատնտեսության թև՝ կոլեկտիվացման և թև՝ նրանց ցանքատարածության դժով հնդամյա պլանով նախատեսված 1929—1930 տարվա ցուցանիշները կատարվել էին։ 1930 թ. փետրվար-մարտ ամիսներին թույլ տրված սխալների հետևանքով կոլտնտեսություններից տեղի ունեցող մտղումը ոչ միայն հիմնականում դադարել էր, այլև գյուղացիները սկսել էին վերագառնալ կոլտնտեսությունները։ Գոյություն ունեցող կոլտնտեսությունները ընդհանուր առմամբ սկսել էին կազմակերպորեն ամրապնդվել, որը կարևոր ֆակտոր էր հանդիսանում կոլտնտեսային շարժման հետագա վերելքի համար։

Այսպես, 1930 թ. հունվարի սկզբների տվյալներով ռեսպուբլիկայում, մինչև կոլտնտեսային մասսայական շարժման ծավալումը և թույլ տրված շեղումները, կազմակերպված կոլտնտեսությունների թիվը հասնում էր 303-ի, որոնք ընդգրկում էին 7750 տնտեսություն, կամ ամբողջ գյուղացիական տնտեսությունների 4,8%։ Տարվա սկզբի համեմատությամբ կոլտնտեսային շարժման բնագավառ-

<sup>1</sup> «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու սրտումներում», III մաս, էջ 94։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 378։

<sup>3</sup> «Коллективизация сельского хозяйства...», стр. 375.

ուում սկսված հետագա բեկումը նույն տարվա վերջերին՝ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին արտահայտվում է հետևյալ կերպ<sup>1</sup>:

	Գոլանտ. թիվը	Ընդգրկված տնտ. թիվը	կոլեկտիվացումը տոկոսով
Սեպտեմբերի 1-ին . . . . .	386	15914	9,5
Նոյեմբերի 1-ին . . . . .	411	17232	10,3
Դեկտեմբերի 1-ին . . . . .	452	18406	11,2
Դեկտեմբերի 15-ին . . . . .	458	18958	11,4

Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, 1930 թ. հունվարի համեմատությամբ տարվա վերջին ամիսներին ոչ միայն կոլտնտեսությունների թիվը ավելանում է 155-ով, այլև կոլտնտեսությունները խոշորանում են քանակապես ի հաշիվ նոր ընդունվածների, համապատասխանորեն ավելանում է նաև նրանց ցանքատարածությունը: Անհրաժեշտ է մատնանշել նաև, որ կոլտնտեսությունների գերակշռող ձևն արտելներն էին:

Չնայած պլուրատնտեսության կոլեկտիվացման քննադատումը 1930 թ. կեսերին ձեռք էին բերվել մեծ նշանակություն ունեցող հաշտություններ, սակայն երկրի շատ մարզերում և ազգային ուսուլուբլիկաներում, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ-ում, պլուրալիտետի մեծամասնությունը դեռևս միավորված չէր կոլտնտեսությունների մեջ: Միանգամայն հասկանալի է, որ չքավոր և միջակ անհատական տնտեսություններին ցույց տրվելիք տնտեսական ու այլ կարգի ուղղություն հարցերը շարունակում էին մնալ պարտիայի և կառավարության ուղղություն կենտրոնում: Այդ հարցին առանձնահատուկ նշանակություն է տալիս պարտիայի XVI համագումարը

Պարտիայի XVI համագումարը իր որոշումներում նշում էր, որ պրակտիկ աշխատանքում կենսագործելով կոլտնտեսականի վրա հենվելու լուրջ պարտիան պետք է վճռականորեն պայքարի չքավոր և միջակային անհատական տնտեսությունն անտեսելու,

<sup>1</sup> Տե՛ս ՍՄԿԳ կենտկամին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի Պարտ. արխիվ, ֆ. 1, ց. 43/3, թ. 46:

թերագնահատելու ամեն տեսակ տենդենցների դեմ: Համագումարը պարտիական կազմակերպություններին նախազգուշացրեց, որ անհատական տնտեսությունը, որը երկրի մի շարք շրջաններում գեոևս համեմատաբար երկար գոյություն կունենա, չպետք է անտեսվի<sup>1</sup>:

Միանգամայն հասկանալի է, որ անհատական տնտեսության նկատմամբ ճիշտ վերաբերմունքը, կոոպերացիայի միջոցով նրանց տնտեսության զարգացման գործին աջակցության կազմակերպումը, չքավորության ինքնուրույն կազմակերպումը Սովետներում, կոոպերացիայում և այլն, նշանակալի դեր պետք է կատարեն հետագայում նրանց կոլտնտեսությունների մեջ ներդրավելու ուղղությամբ:

Հայաստանի պարտիական կազմակերպությունները համապումարի դիրեկտիվներից արեցին անհրաժեշտ եղբակացություններ: Պայքար կազմակերպվեց այն տենդենցների դեմ, որոնք ուղղված էին լիկվիդացնելու կամ լավագույն դեպքում անուշադրության մատնելու գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունները: Միջոցներ ձեռնարկվեցին վերականգնելու և աշխուժացնելու գյուղատնտեսական արտադրական-վաճառահանման կոոպերատիվ ընկերությունների աշխատանքը, կազմակերպելու նորերը, ապահովելու նրանց աճը, կարողավորելու գյուղացիների վարկավորման ու մեքենամատակարարման գործը: 1931 թ. հունվարի 1-ի տվյալներով ռեսպուբլիկայում արդեն կազմակերպվել էին 424 գյուղական ընկերություններ, որոնք ընդգրկում էին ավելի քան 62 հազար տընտեսություն: Կառավարությունը գյուղկոոպերացիայի միջոցով շարունակում էր այդ ընկերությունների մեջ ընդգրկված չքավոր և միջակ անհատական տնտեսություններին օգնել վարկով, գյուղմեքենաներով և գործիքներով, ադրոմիջոցներով, սարարտանյութով և այլն: Միայն 1930 թվականի ընթացքում ռեսպուբլիկայում ստացվում և գյուղին է տրվում ավելի քան 8 հազար գութան, 392 հացահատիկային շարբացան, 556 բամբակի շարբացան, 1146 ձեռքի և 416 ձիու կուլախիատոր, 486 տրիեր և այլ տեսակի շատ գործիքներ, որոնց հիմնական մասը, օգտագործման համար, տրվում են անհատական տնտեսություններին:

Գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում ձեռք բերված նվաճումների կողքին կոլտնտեսային շինարարության բնագավառում գեոևս գոյություն ունեին զգալի դժվարություններ և լուրջ թեթություններ: Կազմակերպորեն և տնտեսապես բավականաչափ ամ-

<sup>1</sup> Տե՛ս «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», 111, մաս, էջ 70:

բապնդված կոլտնտեսությունների կողքին կային հետ մնացող և թույլ շատ կոլտնտեսություններ: Զգալի թվով կոլտնտեսություններում գեռես վատ էր զրված աշխատանքի կազմակերպումը, թույլ էր աշխատանքային կարգապահությունը, ցածր էր աշխատանքի արտադրողականությունը և այլն:

Ամփոփելով սուաշին հնդամյակի երկրորդ՝ 1929—1930 տնտեսական տարում տեղի ունեցած սոցիալ-դասակարգային տեղաշարժերի և պատմական իրադարձությունների ուրվագիծը, տնտեսական վերելքի հակիրճ պատմությունը՝ անհրաժեշտ է նշել, որ այդ վերելքը տեղի էր ունենում դասակարգային լարված պայքարի պայմաններում: Սովետական Միությունը թեև կոխել էր սոցիալիզմի ծավալուն հարձակման ժամանակաշրջանը, մեր երկրում կապիտալիզմի վերջին հենարանը հանդիսացող կուլակուլյան որպես դասակարգի վերացման շրջանը: Սոցիալիստական շինարարության գործում ձեռք բերված հաջողությունները փոխել էին դասակարգային ուժերի հարաբերակցությունը երկրի էկոնոմիկայի մեջ հօգուտ սոցիալիզմի: Տնտեսության բոլոր բնագավառներում կապիտալիստական տարրերի դեմ սկսված հարձակման ուժեղացումը անխուսափելիորեն առաջացնում է երկրում «կուլակային կապիտալիստական տարրերի կողմից դասակարգային պայքարի սրում և նրանց կողմից կատաղի դիմադրության փորձեր»<sup>1</sup>:

Դասակարգային պայքարը ինչպես կոլտնտեսության ներսում. այնպես էլ նրանից դուրս, ընդունելով տարբեր ձևեր, բողոքիված շարունակվում էր: Կուլակիների գործակալները խցկվելով կոլտնտեսության մեջ, ձգտում էին օգտագործել եղած թերությունները և արգելակել նրա անտեսական ու կազմակերպական ամրապնդումը: Մասնավորապես նրանք ստեղծում էին խոշընդոտներ կոլտնտեսությունների աճի դեմ, խանդարում էին աշխատանքի կազմակերպման և կարգապահության ամրացման գործը: Հետևապես կոլտնտեսային շինարարության տվյալ էտապում Պարտիայի և Սովետական կառավարության համար վճռական նշանակություն է ստանում կուլակային տարրերի գործունեության մերկացումը կոլտնտեսություններում, կոլտնտեսությունների մեջ կամավոր հիմունքներով չբավոր և միջակ անտեսությունների հետագա ներգրավումը, կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպումը, բերքի բաշխման պրոբլեմը, կոլտնտեսային կազմերի պատրաստումը և այլն:

<sup>1</sup> «ՄՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 17:

Պարտիայի առջև ծառայած հերթական կարևոր խնդիրներից մեկը դառնում է կոլտնտեսությունների ներսում մանր բուրժուական առտանումների հաղթահարման, կոլտնտեսությունների ամրապնդման, կոլտնտեսականների կուլտուրական մակարդակի բարձրացման պրոբլեմը: Ակներև է, որ այդ ֆուրը խնդիրների կենսագործումը պահանջում էր դյուղատնտեսական արտադրությունը դնել պարտիական, սովետական և հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, դշուղում կատարվող աշխատանքը վերականգնելով սոցիալիստական շինարարության տվյալ էտապի խնդիրներին համապատասխան:

Սոցիալիստական շինարարության առաջընթացը տեղի էր ունենում բազմաթիվ դժվարությունների հաղթահարման ճանապարհով, դժվարություններ, որոնք իրենց բնույթով էապես տարբերվում էին կապիտալիստական սիստեմում գոյություն ունեցող դժվարություններից, որոնք առաջանում էին նրա ներքին հակասություններից: Սովետական սիստեմի պայմաններում առաջացող դժվարությունները վերելքի, առաջընթացի դժվարություններ էին, որոնց հաղթահարման նպատակով էլ Կոմունիստական պարտիան մոբիլիզացնում էր սովետական ժողովրդի բոլոր ուժերը և դիսպլորում նրանց պայքարը ժողովրդատնտեսական պլանների կատարման և գերակատարման համար:

\* \* \*

Սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ հնգամյակի երկրորդ տնտեսական տարին ավարտեց խոշորագույն նվաճումներով: Հնգամյա պլանի առաջադրանքները թե՛ արդյունաբերության և թե՛ դշուղի սոցիալիստական վերականգնման ուղղությամբ կատարվեցին բոլոր հիմնական ցուցանիշների զգալի գերազանցումով: Այդ հնարավորություն տվեց 1931 թ. համար ընդունել սոցիալիստական շինարարության ծավալման էլ ավելի բարձր տեմպեր: Սովետական Միության, այդ թվում և Հակական ՍՍՌ բանվոր դասակարգի, կոլտնտեսականների և սովետական ամբողջ ժողովրդի առջև նոր կարևոր խնդիրներ առաջադրվեցին հնգամյակի երրորդ տարվա համար, որը մեր երկրի սոցիալիստական շինարարության պատմության մեջ մտավ որպես հնգամյակի վճռական տարի:

ՀամԿ(բ)Պ-ի Կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թ. դեկտեմբերյան միացյալ պլենումը քննեց 1931 թ. ժողովրդատնտեսական պլանի

հարցը և տվեց պարտիայի ու աշխատավորների անելիքների կոնկրետ պլանը: Ժողովրդական տնտեսության 1931 թ. եկամտի մոտավոր չափը սահմանվեց 49 միլիարդ ռուբլի, նախատեսելով եկամտի աճ մոտ 35%, 1930 թ. 19% աճի փոխարեն: Ժողովրդական տնտեսության հանրայնացված սեկտորի կապիտալ ներդրումները՝ սահմանվեց 17 մլրդ. ռուբլի, 1930 թ. 10 մլրդ. ռուբլու դիմաց: Արդյունաբերական լայն սպառման արտադրանքների ֆոնդը՝ 14,6 մլրդ. ռուբլի, 1930 թ. 11,5 մլրդ. ռուբլու դիմաց, որը գյուղատնտեսական արտադրանքների ֆոնդի աճի հետ միասին մանրածախս ցրջանառությունը պետք է ավելացնեն 25—30%-ով:

Նշելով մատնանշված կոնկրետ հանձնարարություններից կենտրոնի պլենումը նշեց, որ «1931 թ. ժողովրդատնտեսական պլանի դրած խոշորագույն խնդիրները լուծելու հնարավորությունը զգալի չափով հիմնվում է այն լուրջ հաջողությունների վրա, որ արդեն ձեռք են բերվել հնգամյակի անցած երկու տարում և հատկապես 1929/30 թ.»<sup>1</sup>:

1931 թ. համար նախատեսված այդ պլանային դիրեկտիվները հասնում էին համարյա թե հնգամյակի վերջին տարվա՝ 1933 թ. համար ենթադրվող չափին:

Այսպիսով, Սովետական Միության ժողովրդական տնտեսությունը կանգնած էր հնգամյա հույակապ պլանի ավարտման նախօրեին: Այդ հանգամանքը մեծապես ոգեշնչում էր երկրի աշխատավորներին սոցիալիզմի կառուցման աշխատանքների պլանի կատարման համար մղվող պայքարում:

Հայաստանի Սովետների VII համագումարը (փետրվար 1931 թ.), ամփոփեց հնգամյա պլանի առաջին երկու տարիների ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում և կուլտուրական շինարարության շատ արեղում ձեռք բերված նվաճումները: Համագումարի նախօրյակին հնգամյակի երկրորդ տարվա պլանային հիմնական առաջադրանքները կատարվել էին: Ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ զգալի չափով բարձրացել էր սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը: Գերակատարվել էին գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ուղղությամբ ընդունված առաջադրանքները: Կատարվել էր ժողովրդական տնտեսության մեջ նախատեսված կապիտալ ներդրումների պլանը: Այս բոլորը համագումարի

<sup>1</sup> «ՄՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 100:

համար հիմք էին հանդիսանում Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության 1931 թվականի սոցիալիստական շինարարության համար ևս ընդունել բարձր անմպեր: Համագումարը որոշեց պետական ցենզային և մանր տնայնագործական արդյունաբերության հանրայնացված հատվածի արտադրանքի ընդհանուր շափը 1931 թվականին հասցնել 100,1 միլիոն ուսլու: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ «Ա» խմբի արտադրանքը կազմելու էր 40 միլիոն ուսլու, 1929—1930 թթ. 19,2 միլիոն ուսլու դիմաց, իսկ «Բ» խմբի արտադրանքը՝ 65 միլիոն ուսլու, 1929—1930 թթ. 32 միլիոն ուսլու դիմաց<sup>1</sup>:

Միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի աճը սահմանվեց 102,8%, իսկ Անդրկովկասյան ֆեդերացիայի և ռեսպուբլիկական նշանակություն ունեցող ձեռնարկությունների արտադրանքի աճը՝ 110,3%: Ինչ վերաբերում է տնայնագործական մանր հանրայնացված արդյունաբերության արտադրանքի աճին, ապա այն կազմելու էր 100%:

Հայաստանի բանվոր դասակարգի, ինժեներատեխնիկական աշխատողների, ինչպես և սովետական ու տնտեսական հիմնարկների առաջ խնդիր էր դրվում՝ 1931 թ. երկրին տալ 5100 տոննա սև պղինձ, 140 հազար խորանարդ մետր Արթիկ-տուֆի շինանյութ, 5,6 հազար տոննա բամբակի թել, 2,7 հազար տոննա մանվածք, 16 միլիոն մետր բյազ և այլն<sup>2</sup>:

Արդյունաբերության աշխատողների առաջնահերթ խնդիրն էր անպայման կատարել պղնձաքարի հանույթի, պղնձի ձուլման և բոլոր տեսակի շինանյութերի արտադրության ծրագիրը, որպես ժողովրդական տնտեսության սլանի կարևորագույն օղակներից մեկի:

Համագումարն իր որոշումներում կարևոր համարեց հնգամյակի երրորդ տարվա ընթացքում պետական և տնտեսական հիմնարկների աշխատանքի հիմքում դնել մի շարք արդյունաբերական օբյեկտների շինարարությունը ավարտելու և գործարկելու հարցը: «Սահմանել, որ 1931 թ. հիմնական աշխատանքների սլանի կատարման կենտրոնական խնդիրը, — նշեց համագումարը, — պետք է լինի շինարարության մեջ մուծված միջոցների առավելագույն

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 112, դ. 814, թ. 3:

<sup>2</sup> Նույն տեղում:

ակտիվացումը՝ արագացնելով, ավարտելով և շահագործման մեջ մտցնելով կառուցվող օբյեկտները<sup>1</sup>:

1931 թ. ժողովրդական անտեսության զարգացման սլանաչին առաջադրանքների մեջ շատ կարևոր տեղ էր գրավում աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցը: Համագումարը որոշեց միութենական նշանակություն ունեցող ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 7,3%-ով, իսկ մնացած արդյունաբերության գծով 51,4%-ով: Դրա հետ միասին անհրաժեշտ էր պայքար ծավալել արտադրանքի ինքնարժեքը ղգալի չափով իջեցնելու և նրա որակը բարձրացնելու համար:

Առանձնակի նշանակություն տալով սեփականության էլեկտրիֆիկացիայի զործին, համագումարը զիրեկտիվ ընդունեց տարվա վերջում գործող էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը հասցնել 35 հազար կիլովատի, տարեկան 76 միլիոն կվ. ժամ արտադրանքով: Անհրաժեշտ համարվեց գյուղի էլեկտրիֆիկացիայի ուղղությամբ հասնել այն բանին, որ բարձրացվի գյուղի էլեկտրոկենդրդիայի մատակարարումը ինչպես խոշոր էլեկտրակայանների միջոցով, այնպես էլ ինքնուրույն գյուղական էլեկտրակայանների կառուցման միջոցով:

Գյուղատնտեսության զարգացման և նրա սոցիալիստական վերափոխման հարցերը կարևոր տեղ էին գրավում համագումարի որոշումների մեջ: Անհրաժեշտ է համարվում բոլոր գլխավոր կուլտուրաների գծով ընդլայնել ցանքատարածությունը, բարձրացնել բերքատվությունը հատիկային մշակույթների աստղարեղում՝ 5,7%-ով, բամբակինը՝ 30%-ով և ծխախոտինը՝ 36%-ով:

«Գյուղացիական լայն մասսաների վճռական շրջադարձը դեպի սոցիալիզմը, — ասված է համագումարի որոշումներում, — պրոլետարական պետության նյութական և ֆինանսական օժանդակությամբ կոլտնտեսություններին, մեքենայացման (ՄՏԿ) ուժեղ տեմպը՝ այդ բոլորը ապահովում են գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման հնարավորությունը 1931 թ. ոչ պակաս բան 25%-ով, իսկ բամբակագործության հիմնական շրջաններում՝ մինչև 50%»<sup>2</sup>:

Դրան համապատասխան նախատեսվում էր կոլտնտեսային սեկտորի ցանքերի տարածությունը հասցնել սեփականության էլեկտրիֆիկացիայի ընդ-

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՄՍՌ ԿՊԱ, ֆ. 112, դ. 814, թ. 4:

<sup>2</sup> Նույն տեղում:

հանուր ցանքատարածության 25—26% -ին, բամբակի ցանքատարածությունը՝ 60% -ին, ծխախոտինը մինչև 35% -ին: Համագումարը կոնկրետ առաջադրանքներ ընդունեց անասնաբուծության զարգացման, սովխոզ շինարարության ծավալման և դյուղատնտեսության մեքենայական բազայի ուժեղացման ուղղությամբ: Համագումարը նշեց. «Սահմանել, որ 1931 թ. ընթացքում գյուղացիական տնտեսություններում արորը բացարձակապես պետք է փոխարինվի դոլթանով և առավելագույն չափով պետք է օգտագործվեն մեքենայացված գործիքները»<sup>1</sup>:

Սովետների VII համագումարը կարևոր որոշումներ ընդունեց նաև 1931 թ. աշխատավարձի բարձրացման, բնակարանային և կոմունալ շինարարության ծավալման, մատակարարման գործի էլ ավելի բարելավման և կուլտուրական շինարարությանը ռեսպուբլիկայում զգալի թափ հաղորդելու ուղղությամբ:

Համագումարը նշեց, որ 1931 թ. ժողովրդական տնտեսության զարգացման վերաբերյալ նախատեսված ցուցանիշների կատարումը խոշոր քայլ պետք է լինի սոցիալիզմի կառուցման գործում: Այդ ցուցանիշները «բանվոր դասակարգի լայն մասսաների և կոյտընտեսայինների առաջ դնում են այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է... կազմակերպվածություն ու դիսցիպլինա, տնտեսական ու կուլտուրատիվ ապարատի բոլոր օղակների աշխատանքի որակի վճռական բարելավում, սլանային սկզբունքի անշեղ կիրառում... և աշխատավոր մասսաների ակտիվության հետագա աճում»<sup>2</sup>:

Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակի երրորդ տարվա սլանային խոշորագույն խնդիրների կատարման համար հիմք էին հանդիսանում այն հաջողությունները, որոնք արդեն ձևով էին բերվել հնգամյակի առաջին երկու տարիների ընթացքում, հատկապես 1929—1930 թվականին, չնայած այն թերակատարումներին, որ գոյություն ունեին առանձին դժերով: Ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալներ էլ ավելի բարձր տեմպերով առաջ մղելու թե՛ երկրի ինդուստրացումը և թե՛ դյուղատնտեսության կուլեկաիվացումը:

1931 թվականին ժողովրդական տնտեսության սլանի կատարման երաշխիք էր այն, որ մեր հայրենիքն ուներ բնական անհրա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ-ի ԳՊՍ, Ֆոնդ 112, գ. 814, թ. 5:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 8—9:

ժեշտ հարստություններ՝ երկաթ, քարածուխ, նավթ, հաց և այլն: Կարևորագույն երաշխիք էր աշխատավորների իշխանության՝ Սովետական պետության առկայությունը, որը երկրի ընդերքի բոլոր բարիքները ծառայեցնում էր ժողովրդի շահերի համար, նրանք բարօրությունը բարձրացնելու նպատակներին, իշխանություն, որը վայելում էր ժողովրդական լայն զանգվածների ակտիվ աջակցությունը՝ աշխատանքի և սպառարի բոլոր ճակատամասերում: Այնուհետև, վճռական երաշխիք էր հանդիսանում սովետական հասարակարգի առկայությունը, որը ղերծ էր այն անբուժելի խոցերից, որոնք հասուել էին կապիտալիզմին: Վերջապես, Կոմունիստական սպարտիաչի առկայությունը, սպարտիա, որը իր ժամուջ գործունեությամբ բանխոր դատակարգի և բոլոր աշխատավորների ստեղծագործական եռանդի նկատմամբ ներթափանցված խորին հավատով ղլխավորում և մի նպատակի էր մղում նրանց բոլոր ջանքերը:

Այս բոլորի հետ միասին սլլանի կատարման համար կարևոր նախապայման էր հանդիսանում այդ հնարավորությունները օգտագործելու շնորհքը՝ արդյունաբերական ձեռնարկությունները, սովխոզները, կոլտնտեսությունները ճիշտ ղեկավարելու կարողությունը: Իսկ այդ պահանջում էր, որ կադրերը, արտադրության ղեկավարները տիրապետեն իրենց գործի տեխնիկային, լավ օգտագործեն այդ տեխնիկան:

Շարունակելով բարձր տեմպերով զարգացնել արդյունաբերությունը, մասնավոր ծանր ինդուստրիան և նրա միջուկը հանդիսացող մեքենաշինությունը, Կոմունիստական սպարտիան, աշխատավորների արտադրական նախաձեռնությունը և խանդավառությունը ուղղում էր այն նպատակին, որ վերացնեինք մեր երկրի տեխնիկատնտեսական հետամնացությունը, հասնեինք և անցնեինք կապիտալիստական առաջավոր երկրներից, որոնցից մենք հետ էին մնացել 50—100 տարով: Այդ ճանապարհը մենք պետք է անցնեինք պատմական կարճ ժամանակամիջոցում՝ տաս տարում, սակայն այդ անհնարին կլիներ առանց նոր տեխնիկայով ժողովրդական տնտեսությունը ղինելու, առանց այդ տեխնիկային տիրապետելու, իսկ տեխնիկան վերակառուցման ժամանակաշրջանում կատարում էր որոշիչ դեր, ստանում էր վճռական նշանակություն:

Մեր երկրի ժողովրդական տնտեսությունը արդեն թևակոխել էր սոցիալիզմի ժամանակաշրջանը, որի հիմքի կառուցման համար 1931 թվականը հանդիսանալու էր նոր նվաճումների տարի: Սո-

ցիալիստական արդյունաբերության հզոր զարգացման հետ միասին և նրա հիման վրա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նախագծումների իրականացումը կապահովեր սոցիալիստական տարրերի բացարձակ բերակշռությունը դյուրյի անհատական սեկտորի նկատմամբ, է՛լ ավելի կամրապնդեր բանվոր դասակարգի զոդումը գյուղի աշխատավորների հետ, կավարտվեր «ՄՍՌՄ» սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը: Դա համաշխարհային-սլատմական նշանակություն ունեցող հաղթանակ»<sup>1</sup> կլիներ, — ասվում էր ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ԿԿԼ-ի 1930 թվականի դեկտեմբերյան միացյալ պլենումի կողմից 1931 թվականի ժողովրդատնտեսական պլանի կոնտրոլ թվերի մասին ընդունած որոշման մեջ:

Բացի 1931 թվականի ժողովրդատնտեսական պլանի կոնտրոլ թվերի մասին ընդունած դիրեկտիվներից, պլենումը կարևոր նշանակություն ունեցող որոշումներ ընդունեց մսի և բանջարեղենի մատակարարման զործի կարգավորման, սպառողական կոոպերացիայի աշխատանքի լավացման և Սովետների առաջիկա ընտրությունները կազմակերպված և հաջող անցկացնելու մասին: Ինչպես պարտիայի XVI համագումարի դիրեկտիվները, այնպես էլ այդ պլենումի որոշումները կոնկրետ ծրագրեր էին, որոնց կենսագործման համար Հայաստանի պարտիական կազմակերպությունները գործնական մեծ աշխատանքներ ձեռնարկեցին:

Առաջին հնդամյակի երրորդ «վճռական տարվա» պլանների կատարման համար կարևոր նշանակություն ունեցավ նաև 1931 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցած տնտեսվարների համամիութենական խորհրդակցությունը, որտեղ Ի. Վ. Ստալինը, պարտիայի Կենտկոմի հանձնարարությունամբ տված իր զեկուցման մեջ առաջ քաշեց վեց կարևոր պայմաններ, որոնք վճռական նշանակություն ունեին ժողովրդատնտեսական պլանների կատարման և նոր իրադրության սլայմաններում աշխատանքի վերակառուցման համար:

Հայաստանի Կոմպարտիայի գլխավորությունը ռեսպոնդիկայի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, ինժեներատեխնիկական աշխատողները, պետական և հասարակական բոլոր կազմակերպությունները պայքար ծավալեցին արտադրական պլանների կատարումը տնտեսության բոլոր բնագավառներում ապահով-

<sup>1</sup> «ՄՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», 111 մաս, էջ 101:

վելու համար: Սոցիալիստական մրցությունը և հարվածային շարժումը նոր թափով ծավալվում է պլանների կատարման և դերակատարման նշանաբանով:

Հետևողական պայքար ծավալվեց արդյունաբերական ձեռնարկություններն ու նորակառույցները բանվորական ուժով ապահովելու համար՝ այն կոլտնտեսություններից կազմակերպված հավաքադրելու միջոցով: Անհրաժեշտ աշխատանք կատարվեց բանվորական ուժի հոսունությունը վերացնելու, աշխատավարձի «ձախ» հավասարեցումը լիկվիդացնելու, ինժեներատեխնիկական ուժերը արտադրության մեջ ճիշտ դասավորելու, բանվորների տեխնիկական որակը բարձրացնելու նպատակով տխուսուցման դործը ծավալելու, խնայողության ուժիմ կիրառելու, տնտեսաշվարկը արմատավորելու և դիմազրկությունը վերացնելու բնագավառներում: Այդ բոլորի շնորհիվ սկսեց նկատելիորեն բարելավվել արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, ամրապնդվել միանձնյա ղեկավարությունը: Մի շարք ձեռնարկություններ և շինարարական օբյեկտներ զբաղի հաջողությունների հասան արտադրական-ֆինանսական պլանների կատարման ու դերակատարման ուղղությունում: Սակայն ոչ բոլոր ձեռնարկությունները ապահովեցին իրենց պլանների կատարումը: 1931 թվականի առաջին կիսամյակում պլանների թերակատարում տվեցին արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որպիսիք էին տեքստիլ, պղնձի արդյունաբերությունը և ուրիշ ձեռնարկություններ: Դրա հետևանքով ամբողջ ռեսպուբլիկայի պլանը թերակատարվեց մոտ 19 տոկոսով: Թերակատարվեց նաև ինքնարժեքի իջեցման պլանը:

Արտադրական պլանների թերակատարումը հետևանք էր այն բանի, որ դեռևս ոչ բոլոր ձեռնարկություններն էին իրականացնում վերևում հիշատակված միջոցառումները, վատ էին օգտագործվում մեխանիզմները, դեռևս թույլ էր պայքարը ներքին միջոցների մոբիլիզացման ուղղությամբ, մինչև վերջը չէր լիկվիդացված աշխատանքի բնագավառում տիրող հավասարեցումը և այլն:

Առաջացած ճեղքվածքը վերացնելու համար հարկ եղավ մոբիլիզացնելու ռեսպուբլիկայի բոլոր ուժերը, դործի դնելու բոլոր հնարավորությունները, աշխատանքի բարելավման բոլոր լծակները: Հայտարարվեց ճեղքվածքը լիկվիդացնելու ամսյակ: Գումարվեցին հարվածայինների հավաքներ, պարտիական խորհրդակցություններ, բանվորների մասսայական ժողովներ, որոնք մյուս կարգի միջոցառումների հետ միասին նպաստավոր դեր կատարեցին և բեկում

առաջացրեցին արտադրության պլանների կատարման ընթացքի մեջ: Ուժեղացվեցին բանվորների և աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման և սպասարկման աշխատանքները: Պայքար ծավալվեց այն վնասակար տենդենցի դեմ, որը փորձում էր կասկածանքի տակ վերցնել պլանների ռեալ լինելը, նրանց դեմ, ուլքեր իրենց անկարողությունը և անձեռնհրեցությունը քողարկելու համար պլանների թիրախատարումը բացատրում էին ինչ որ «օրյեկտիվ» պատճառներով և այլն:

1931 թվականի պլանային աշխատանքների կատարումը Հայաստանի Կոմպարտիայից, պետական և հասարակական կազմակերպություններից, բոլոր աշխատավորներից պահանջում էր ուժերի մաքսիմալ լարում, սոցիալիստական մրցության և հարվածային շարժման է՛լ ավելի մեծ ծավալում: Անհրաժեշտ էր մաքսիմալ շարժում ակտիվացնել կապիտալ ներդրումները, պայքարել բարձրորակ շինարարության համար, ժամանակին թողարկել կառուցվող ձեռնարկությունները, դրանք ապահովելով բանվորական ուժով և տեխնիկական կադրերով:

Հայաստանի պարտիական կազմակերպությունների և կառավարության համար մեծ օգնություն եղավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը՝ Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների աշխատանքի և ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրների մասին:

Անդրերկոմի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կոմպարտիաների կենտկոմների ղեկուցումների առթիվ ընդունված այդ որոշման մեջ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը նշեց, որ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում, նշանակալի հաջողություններ են ձեռք բերվել ինդուստրացման ասպարեզում, ինչպես նաև շինարարության թափի ու սրակի բնագավառում: Դրահետ միասին Կենտկոմն անհրաժեշտ համարեց հետագայում Անդրերկովկասի ինդուստրացման գործում ջանքերը կենտրոնացնել նավթի, գունավոր մետաղների, քարածուխի հանույթի կազմակերպման, բամբակագործության, մետաքսագործության հետագա լավացման և տեքստիլ արդյունաբերության ընդարձակման ուղղությամբ: Կենտկոմը Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկներին ցուցում տվեց՝ զարկ տալ գունավոր մետալուրգիային, մանավանդ պղնձի արդյունաբերության լայն զարգացմանը, մատնանշելով, որ այդ կարևոր խնդրի իրականացման նպատակով անհրաժեշտ է ձևու-

նարկել Ղափանի և Ալավերդու պղնձահանքերի տեխնիկական արմատական վերակառուցման և վերասարքավորման գործը<sup>1</sup>։

Պարտիայի Կենտկոմի այդ դիրեկտիվները ուղեցույց հանդիսացան Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կոմպարտիաների ու բանվոր դասակարգի՝ աշխատանքը վերակառուցելու և հետագայում երկրի ինդուստրացումն նոր թափով ծավալելու գործում։

Կոմունիստական պարտիայի ղեկավարութանը սովետական մարդկանց ջանքերով ժողովրդական տնտեսութան սարքեր ճյուղերում արմատավորվում էր նոր տեխնիկան, յուրացվում էին արտադրության նոր տեսակներ։

1931 թվականը վճռական տարի էր ամբողջ ժողովրդական տնտեսության նոր հզոր տեխնիկական բաղադրի ստեղծման, ծանր արդյունաբերության և մեքենաշինական արդյունաբերության կարևոր ճյուղերի էլեկտրիֆիկացման և արտադրության կարևոր տեսակների յուրացման բնագավառներում։

Սովետական Միության, այդ թվում նաև Հայաստանի, աշխատավորները հաղթահարելով կղաժ դժվարությունները, արտադրության պլանների կատարման ընթացքի մեջ 1931 թվականի երկրորդ կեսին որոշակի բեկում առաջացրին և հասան աննախընթաց հաջողությունների։

ՀամԿ(բ) պարտիայի XVII կոնֆերենցիան տալով 1930—1931 տնտեսական տարվա հանրագումարները նշեց, որ այդ հանրագումարներով ապահովվում է արդյունաբերության հնգամյակի կատարումը շուրս տարում<sup>2</sup>։ 1930 թվականի համեմատությամբ ամբողջ սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը 1931 թվականին աճեց 21 տոկոսով, արտադրության մի շարք ճյուղեր իրենց հնգամյա պլանը կատարեցին և զերակատարեցին երկու և կես — երեք տարում։ «Ամբողջ արդյունաբերության ընդհանուր աճի հետ ձիասին, — կարգում ենք կոնֆերենցիայի որոշման մեջ, — 1931 թվականին տեղի ունեցան որակական ամենախոր տեղաշարժեր հենց արդյունաբերության ներսում»<sup>3</sup>։ Հսկայական հաջողությունների հետ միասին կոնֆերենցիան նշեց, որ 1931 թվականի սարեկան պլանը իր քանակական և որակական ցուցանիշների դժով թերակատարվեց։ Մատնանշելով այդ գործում եղած թերություններն

<sup>1</sup> Տե՛ս «Ենորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի 1931։

<sup>2</sup> Տե՛ս «ՄՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», !!! մաս, էջ 199։

<sup>3</sup> Նույն տողում։

ու բացերը և գրանց պատճառները, կոնֆերենցիան պարտիայի ու բանվոր դասկարգի ուշադրությունը բեռնեց այդ թերությունները հաջորդ տեսնուսական տարում անպայման վերացնելու վրա:

Հնգամյակի 3-րդ տարվա պլանների կատարման ընթացքը Հայաստանում ամփոփեց Հայաստանի Կոմպարտիայի VIII համագումարը: Ինդուստրացման և դյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ուղղությամբ որոշակի հաջողություններ էին ձեռք բերվել Հայկական ՍՍՌ-ում: Այդ հաջողություններն արդյունաբերության ասպարեզում նշանավորվեցին «Սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճմամբ, արդյունաբերության նոր կենտրոնների ստեղծմամբ, բանվորական մասսաների արտադրական խանդավառության և ակտիվության հզոր վերելքով»<sup>1</sup>:

Հայկական ՍՍՌ ինդուստրացման մասին էին վկայում այնպիսի ձեռնարկությունների շինարարությունը, ինչպիսիք էին՝ Չորագէսը, Քիմշինը, Ցեմշինը, Քանաքեռգէսը և շատ ուրիշներ, որոնք հաստատում էին, որ Հայաստանի Կոմունիստական պարտիան հետևողականորեն կենսագործելով պարտիայի լենինյան հիմնական դիժը՝ անշեղորեն իրականացում է երկրի ինդուստրացման լենինյան քաղաքականությունը: Նա կազմակերպում ու գլխավորում էր աշխատավորական լայն մասսաների պայքարը ռեսպուբլիկայի սոցիալիստական շինարարության բնագավառում 1931 թվականի առաջին կեսին գոյություն ունեցող թերություններն ու դժվարությունները հաղթահարելու և ինդուստրացման գործը առաջ մղելու համար:

Արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների կառուցումը և նրանցից շատերի ավարտումն ու գործարկումը նպաստեցին սոցիալիստական ինդուստրիայի տեսակարար կշռի անշեղ բարձրացմանը Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ:

1931 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքը նախորդ՝ 1930 թ. համեմատությամբ բարձրացավ 16,1% -ով: Արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ՝ 1930 թ. 33,3% -ից 1931 թ. հասավ 42,4% -ի<sup>2</sup>:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը 1931 թ. ավելացավ 24,4% -ով, իսկ նրա սպառումը՝ աղգաբնակության չորսաքանչյուր

<sup>1</sup> «Համկ(ր)Պ VIII համագումարի բանաձևերը», Երևան, Պետհրատ, 1932, էջ 5:

<sup>2</sup> Նույն տեղում:

շնչի հաշվով, 1930 թ. 39,6 կիլովատ ժամի փոխարեն՝ 1931 թ. բարձրացավ 47,3 կիլովատ ժամի: Հնդամյակի երրորդ տարում ժողովրդական տնտեսության մեջ հիմնական ներդրումները կազմեցին 82 միլիոն ռուբլի, 1930 թ. համեմատությամբ տալով 55% -ի աճ<sup>1</sup>:

Ռեսպուբլիկայի արդյունաբերության դարգացման զուգընթաց գլխի չափով ավելացավ արդյունաբերական բանվորների քանակը: Միաժամանակ ավելացավ նաև աշխատավարձի ֆոնդը: Աշխատավարձի տարեկան միջինը 1930 թ. համեմատությամբ՝ 1931 թ. աճեց՝ ցենդային արդյունաբերության մեջ 18,1% -ով, ոչ ցենդային արդյունաբերության մեջ՝ 15,4% -ով, շինարարության բնագավառում՝ 20,7% -ով<sup>2</sup>:

\* \* \*

1930 թ. առաջին ամիսների կոլտնտեսային շարժման բնագավառում ռեսպուբլիկայում թույլ տրված սխալների ուղղման և թերությունների վերացման բնագավառում պարտիական կազմակերպությունների կողմից ծավալված պայքարը տվեց իր արդյունքը, զգալիորեն բարելավեց կոլտնտեսային արտադրության ղեկավարումը:

Ռեսպուբլիկայի շրջաններից շատերում գյուղական պարտիական կազմակերպությունները և կոմունիստները գյուղի սոցիալիստական վերափոխման համար ծավալված պայքարում հանդես էին դալիս ավանգարդային դերում: 1930 թ. հոկտեմբերի 1-ի ավյալներով կոլտնտեսությունների մեջ էին Հոկտեմբերյանի շրջանի կոմունիստների 97% -ը, Արտաշատի շրջանում՝ 97,5% -ը, էջմիածնի շրջանում՝ 93% -ը, Ապարանի շրջանում՝ 85% -ը: Հետ չէին մնում նաև Սիսիանի, Աշտարակի, Գուղքյանդի (Ախուրյան) և մի շարք այլ շրջաններ: Սակայն դրանց կողքին կային նաև հետ մնացող առանձին շրջաններ, դրանց թվում էին Գորիսի, Ստեփանավանի, Մուլլագոբջայի (այժմ Աղինի) և այլ շրջաններ: Այդ վայրերում դեռևս թույլ էին գյուղական պարտիական կազմակերպությունները, նրանց քաղաքական-կազմակերպական աշխատանքը զգալիորեն ետ էր մնում գյուղի սոցիալիստական շինարարության տեմպերից ու պահանջներից:

<sup>1</sup> Տե՛ս «Համի(ր) VIII համագումարի բանաձևերը», էջ 51:

<sup>2</sup> Նույն տեղում:

Կային զգալի քանակով կոլտնտեսություններ, որոնք դեռևս տնտեսապես թույլ էին, աշխատանքի կազմակերպումը այդ կոլտնտեսություններում վատ էր զրված, նրանք դանդաղ էին աճում, իսկ գյուղական պարտիական կազմակերպությունները դեռևս չէին տիրապետել կոլտնտեսության ղեկավարման գործին: Կոլտնտեսությունների առանձին օղակներում դեռևս մնում էին խորթ տարրերը, որոնք մերվում էին դասակարգային թշնամու գործակալների հետ և արտահայտում էին կուլակների ու նրանց արբանյակների կամքը:

Գյուղական պարտիական բջիջներում անբավարար էր բնթանում կոմունիստների պաղափարական դաստիարակությունը: Մի շարք բջիջներում հետևողական պայքար չէր մղվում կուլակային տարրերի դեմ, որոնք ձգտում էին քողարկված կերպով թափանցել կոլտնտեսությունների մեջ: Անդրկովկասի գյուղական բջիջների զգալի մասը, — ասված է Անդրերկումի և Անդրկովկասի ՎՀ-ի միացյալ պլենումի 1931 թ. հուլիսի 5-ին գյուղի պարտիական աշխատանքի մասին ընդունված որոշման մեջ, — դեռևս չի վերակառուցել իր աշխատանքների ձևերն ու մեթոդները և միջոցներ ձեռք չի առել, որ ճիշտ կենսագործվեն պարտիայի հիմնական լոզունգները և ժամանակին ուղղվեն այդ օպորտունիստական սխալներն ու «ձախ» շեղումները<sup>1</sup>:

Պլենումը իր որոշումներում նշեց նաև, որ «Մի շարք շրջաններում դեռևս աննշան է գյուղական բջիջների գերը գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման գործում», որ պարտիական կարևորագույն ձեռնարկումները «գյուղում դեռևս կենսագործում են առավելապես շրջանային և ռեսպուբլիկական կազմակերպություններն անմիջականորեն գյուղբջիջների գլխի վրայով»<sup>2</sup>:

Գյուղական պարտիական բջիջների աշխատանքի և նրանց զրության այս դնահատականը վերաբերվում էր նաև Հայաստանի մի շարք գյուղական պարտիական բջիջներին: 1931 թվականի հոկտեմբերի 31-ի հայտնի որոշման մեջ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը նշեց, որ քաղաքների պարտիական մասսայական աշխատանքի հիմնական թեթությունը ստորին օղակի (ցեխ, քրիդադ) ծայրահեղ թուլությունն է, որ մի շարք ձեռնարկություններում դեռևս չեն ձևավորված պարտիական այդ օղակները: Այդպիսի ձեռնարկությունների թվումն էր նաև Ղափանի պղնձահանքերը: Կենտկոմը խնդիր դրեց պարտիա-

<sup>1</sup> «Սորհրդային Հայաստան», № 167, 1931:

<sup>2</sup> Նույն տեղում:

Ջրան մասնատարական աշխատանքի ծանրությունը փոխադրել ցեխ, բրդ-  
գաղ, ընտրելով ցեխաչին և բրդգաղաչին հեղինակավոր ակտիվի  
կայուն կադրեր:

ՀամԿ(բ)<sup>Պ</sup> Կենտկոմը նաև արձագանքեց պարտիական կազ-  
մակերպությունների ծայրահեղ թուլությանը գյուղում, նշեց խորթ  
տարրերով նրանց խճողված լինելը, նրանց աշխատանքում վարչա-  
րարության տարրերի, չսփառանցությունների լայն տարածման հար-  
ցը: Հետևաբար «Անդրերկրում և Ազգային Կոմպարտիաների Կենտ-  
կոմները պետք է հատուկ ուշադրություն նվիրեն գյուղի պարտիական  
կազմակերպությունների ստեղծման ու ամրացման դրոժին, առաջին  
հերթին խորհրդատեսություններում և խոշոր կոլտնտեսություններում  
մի շարք ամուր հենակետեր կազմակերպելու միջոցով, — հենակե-  
տեր, որոնք պիտի ապահովեն գյուղական բջիջների իսկական բու-  
շեխկյան ղեկավարությունը»<sup>1</sup>: Կենտկոմը անհրաժեշտ համարեց  
բարձրացնել գյուղական կոմունիստների դադափարական զինվա-  
ծությունը, դրա համար ցուցում ավելց կոմունիստներին ընդգրկել  
պարտիական քաղաքական ուսուցման ցանցում:

Պարտիայի Կենտկոմի այս որոշումների հիման վրա Հայաս-  
տանի Կոմպարտիայի Կենտկոմը միջոցառումներ մշակեց և այն  
իրականացնելու համար նկատելի աշխատանք ծավալեց թե՛ գյուղե-  
րում և թե՛ քաղաքներում:

Պարտիական աշխատանքը անհրաժեշտ էր սերտ կերպով զու-  
գակցել և համապատասխանեցնել ժողովրդական տնտեսության և  
կուլտուրական շինարարության զարգացման պահանջներին: Ելնե-  
լով դրանից, համապատասխան կադրերով ուժեղացվեց գյուղական  
ուսչկոմների ղեկավար կազմը, է՛լ ավելի բարձրացվեց պարտիական  
ակզդնական կազմակերպությունների պատասխանատվությունը  
հնգամյա պլանի քանակական և որակական ցուցանիշների կատար-  
ման համար մզվող պայքարը զլխավորելու դրոժում: Հայաստանի  
պարտիական կազմակերպությունները ավելի ուժեղացրին պայ-  
քարը գյուղացիական հարցում, հատկապես կոլեկտիվացման դր-  
ծում անցյալի սխալները միջև և վերջ վերացնելու ուղղությամբ:

Ի տարրերություն մոտիկ անցյալի՝ 1931 թվականին, կոլ-  
տնտեսային շինարարության առաջընթացը պահանջում էր հաս-  
նել այն բանին, որպեսզի կոլեկտիվ տնտեսության արտադրու-  
թյունը դրվի առավել բարձր կազմակերպական հիմքերի վրա,

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի 1931:

Ճիշտ կազմակերպվի աշխատանքը արտադրության մեջ, է՛լ ավելի բարձրացվի տնտեսության մեքենայական բաղան, կուլտնտեսությանը ղեկավարելու համար պատրաստվեն և առաջ քաշվեն անհրաժեշտ քանակով համապատասխան կադրեր, ամրապնդվեն կուլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպչորեն: Իսկ այդ կարևոր տնտեսական և կազմակերպական խնդիրներն լուծումը պահանջում էր բարելավել պարտիական և պետական ղեկավարությունը, վերակառուցել նրանց աշխատանքը գյուղի սոցիալիստական շինարարության նոր խնդիրներին համապատասխան:

Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը հսկայական օգնություն էին նախատեսում 1931 թվականին կուլտնտեսային շինարարության համար: Նախագծվում էր գյուղատնտեսության մեջ ուղարկել 120 հազար տրակտոր, կազմակերպել ավելի քան հազար մեքենա-տրակտորային կայան, կրկնապատկել գյուղատնտեսական մեքենաների մատակարարումը, մեծ պայքար ծավալել գյուղատնտեսության վնասատուների դեմ, գյուղատնտեսությունը տալ մեծ քանակությամբ սլարարտանյութ, բարձրորակ տեսակավոր սերմեր, երկարատև վարկեր, նախօրոք ֆինանսավորում կոնտրակտացիայի դիմաց և այլն<sup>1</sup>:

Հայաստանի կուլտնտեսային շինարարությունը նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու անհրաժեշտությունը Հայաստանի Կոմպարտիայից պահանջում էր բարձրացնել գյուղական պարտիական կազմակերպությունների դերը գյուղի սոցիալիստական շինարարության մեջ, վերացնել այն հետամնացությունը այդ բնագավառում, որ գոյություն ունի մի շարք շրջաններում, հասնել այն բանին, որ գյուղի պարտիական կազմակերպությունները դառնան այնպիսի կարևոր, իրապես դործունյա օղակներ գյուղատնտեսական արտադրությունը ղեկավարելու գործում, ինչպիսին հանդիսանում էին արդյունաբերական ձեռնարկությունների պարտիական կազմակերպությունները արտադրության մեջ:

Ղեկավարվելով պարտիայի XVI համագումարի կողմից գյուղատնտեսության սոցիալիստական շինարարության հետագա զարգացման մասին ընդունած դիրեկտիվներով, հետևողական պայքար մղելով «Ծրեսով դեպի կուլտնտեսային արտադրությունը» լուղունդի կենսագործման համար, Հայաստանի Կոմպարտիան պայքար

<sup>1</sup> Տե՛ս «Стенографический отчет VI съезда Советов СССР».

քար ծավալեց և որի շնորհիվ զգալի նվաճումների հասավ կոլտրնտեսությունների, սովխոզների և մեքենատրակտորային կայանների արտադրության կազմակերպման, պարտիական բջիջների աշխատանքի վերակառուցման ու նրա բարելավման ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումները որոշակի նշանակություն ունեցան կոլտնտեսային շարժման ծավալման գործում: 1931 թ. Հայաստանի գյուղատնտեսության կոլեկտիվացումը, նախորդ տարվա համեմատությամբ նոր վերելք ապրեց, մանավանդ տեխնիկական կուլտուրաների շրջաններում այն ավելի մեծ ծավալ ընդունեց: Զգալի քայլեր կատարվեցին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեքենայական բազան բարելավելու ուղղությամբ: 1931 թ. ընթացքում կազմակերպվեց երեք նոր ՄՏԿ-ներ, որի շնորհիվ զգալիորեն բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, մանավանդ բամբակագործական շրջաններում:

1931 թ. հունվարի 1-ին ռեսպուբլիկայում կոլտնտեսությունների թիվը հասնում էր 495-ի, որոնք ընդգրկում էին շուրջ 30 հազար տնտեսություն, կամ գյուղացիական աշխատավորական տնտեսությունների 12,1%-ը: Վեց ամիս հետո, 1931 թ. հունիսի 20-ին, Հայաստանի գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման միջինը կազմում էր 21,6%, 754 կոլտնտեսություններում ընդգրկված էին մինչև 42 հազար տնտեսություն: Բամբակագործական այգեգործական շրջա շրջաններում՝ Հոկտեմբերյանում, Արտաշատում, Էջմիածնում և Մեղրիում կոլեկտիվացումը նույն ժամանակամիջոցում կազմում էր 37,5%, իսկ 22 լեռնային՝ հացահատիկային անասնապահական շրջաններում կոլեկտիվացումը համեմատաբար դեռևս հետ էր մնում<sup>1</sup>:

Բամբակագործական շրջաններում կոլտնտեսային շարժման վերելքի մասին պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է, հիշատակել Արտաշատի և Հոկտեմբերյանի շրջանները: Արտաշատի շրջանում 1931 թվականի նոյեմբերի 1-ին շրջանի աշխատավոր գյուղացիների 55,5%-ն արդեն մտել էին կոլտնտեսությունների մեջ: Միայն օգոստոսի 5-ից մինչև 25-ը կոլտնտեսությունները մտան 1200 տնտեսություն: Մի քանի գյուղերում նոր կոլտնտեսություններ կազմակերպվեցին, համատարած կոլեկտիվացված գյուղերի քանակը շրջանում հասավ 15-ի:

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, Կ. 744, էջ 294—295:

Հոկտեմբերյանի շրջանում սեպտեմբերի 1-ին կոլեկտիվացման տոկոսը հասնում էր մոտ 62-ի, ութը գյուղեր համատարած էին: Այսպես, օրինակ, Արջախ (այժմ Արևիկ) գյուղը, բաղկացած էր 198 աշխատավորական տնտեսությունից: Մինչև 1931 թ. ապրիլի 1-ը կոլտնտեսության մեջ էին 139 տնտեսություն, իսկ գարնանացանի ընթացքում գյուղը ամբողջովին կոլեկտիվացվեց, գյուղին տրված 1931 թ. բամբակի պլանը՝ 597 հեկտար ամբողջովին կատարվեց կոլտնտեսության կողմից: Այդպիսի գյուղերի թիվը ռեսպուբլիկայում հետզհետե ավելանում էին:

ՀամԿ(բ) պարտիայի Կենտրոնական Կոմիտեն 1931 թ. օգոստոսի սկզբներին «Կոլեկտիվացման տեմպի մասին» ընդունած հայտնի որոշման մեջ պարզաբանեց, որ այս կամ այն շրջանում կամ մարդում կոլեկտիվացումը հիմնականում ավարտված լինելու շահանիշը հանդիսանում է ոչ այն հանգամանքը, որ անալոգման ընդգրկված լինի չքավոր և միջակ տնտեսությունների ամբողջ 100%-ը, այլ այն, որ կոլտնտեսությունները ներգրավված լինեն պտղաբերական տնտեսությունների ոչ պակաս քան 68—70%-ը և պտղաբերական տնտեսությունների ցանքատարածությունների ոչ պակաս քան 75—80%-ը<sup>1</sup>:

Պարտիայի Կենտկոմի այս ցուցումի համաձայն 1931 թ. հոկտեմբերի 20-ի տվյալներով Հոկտեմբերյանի, Մեղրու և Արտաշատի շրջաններում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտված էր, կոլտնտեսությունների մեջ էր Հոկտեմբերյանի շրջանի աշխատավոր գյուղացիների 79,6%-ը, Մեղրու շրջանի՝ 69,6%-ը, Արտաշատի շրջանի՝ 62,8 տոկոսը: Մի շարք շրջաններ, այդ թվում Գորիսը, Ղափանը, էջմիածինը, Իջևանը և Աշտարակը գտնվում էին համատարածի նախօրյակին: Նույն տվյալների համաձայն այդ շրջանների կոլեկտիվացման միջին մակարդակը տատանվում էր 41,6%-ի և 52%-ի միջև: Առանձնապես հետ էին մնում Թալինի շրջանը, ուր կոլեկտիվացման տոկոսը հասնում էր 14,2-ի, Դարալագյաղը (այժմ Միկոյանի և Ազիզբեկովի շրջանները) 19,7%-ի, Ալավերդին՝ 21,2%-ի և այլն:

Այսպիսով, գյուղացիական աշխատավորական տնտեսությունների կոլեկտիվացման, հետևապես նաև ցանքային տարածությունների համայնացման բնագավառում տեղի ունեցող վերելքը 1931 թ.

<sup>1</sup> Տե՛ս «Յորհրդային Հայաստան», № 180, 1931:

զգալի թափ էր ստացել: Չնայած այդ նվաճումներին, այնուհանդերձ մեր Ռեսպուբլիկայում գյուղացիական տնտեսությունների կուլեկտիվացման մակարդակը միութենական միջին մակարդակի համեմատությամբ ցածր էր: Այսպես, ՍՍՌՄ ՀԺԿ-ի ավյալներով 1931 թ. մարտի 1-ին Սովետական Միության մեջ կուլտնտեսություններն ընդգրկում էին 8 միլիոն 830 հազար աշխատավորական տնտեսություն, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 35,3%-ը: Տարվա վերջին կուլեկտիվացման միջին մակարդակը 60%-ից անցնում էր:

1931 թ. վերջերին Անդրկովկասի գյուղացիության կուլեկտիվացումը միջին թվով հասնում էր 30,4%-ի: Այսպիսով, վերևում բերված ավյալները ցույց են տալիս, որ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ձեռք բերված աննախընթաց հաջողությունների հետ միասին, այնուամենայնիվ մենք հետ էինք մնում: Այդ հետամնացությունը հետևանք էր դեռևս 1930 թ. սկզբներին գյուղացիության հարցում, մասնավորապես կուլտնտեսային շարժման բնագավառում, թույլ տված կոպիտ քաղաքական սխալների, որոնք վճռականորեն մինչև վերջ դեռևս չէին վերացվել: Քիչ չէին նաև «ձախ» սրակտիկայի դեպքերի առկայությունը, որոնք մի շարք շրջաններում արմատախիլ չէին արվել: Վերջապես, այն հետևանք էր առանձին վայրերում դասակարգային թշնամու գործակալների դեմ մղվող անբավարար սլայքարի, որոնք թափանցել էին առանձին կուլտնտեսությունների մեջ և քայքայիչ աշխատանք էին տանում: Զգալի թվով կուլտնտեսություններ դեռևս կազմակերպչորեն չէին ամրացել:

Գյուղացիության հարցում ընդհանրապես, կուլտնտեսային շինարարության բնագավառում առանձնապես, գոյություն ունեցող շեղումներն ու սխալները Անդրկովկասում ու Հայաստանում վերացնելու գործում չափազանց կարևոր նշանակություն ունեցավ, ինչպես հիշատակել ենք վերևում, ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը, որն ընդունվեց ՀամԿ(բ)Պ Անդրեկոմի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի Կենտկոմների ղեկուցումների առթիվ:

Այդ որոշումը խոշոր նշանակություն ունեցավ Անդրկովկասյան գյուղում պարտիայի գծից կատարված շեղումները մինչև վերջը վերացնելու գործում: ՀամԿ(բ)Պ Կենտկոմը արձանադրեց, որ «...Անդրեկոմի և սզգային կոմպարտիաների կենտկոմների աշ-

խատանքների մեջ թույլ են տրված լուրջ քաղաքական սխալներ, որոնցից հիմնականը հանդիսանում էր գյուղացիական հարցում կատարած սխալը»<sup>1</sup>:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը առանձնապես մատնանշեց, որ շնայած գյուղացիութեան հիմնական մասսաները շրջադարձ են կատարել գեղի գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը, բայց քանի որ կոլտնտեսութեան տնտեսական-քաղաքական ամրապնդման հարցերը պարտիական կազմակերպութեան կողմից բավարար չափով ուշադրութեան չեն արժանացել, ուստի կոլակալին և հակասովետական տարրերը հնարավորութեան են ստացել օգտագործելու կատարված սխալներն ու շեղումները: Իսկ Անդրկոլկոմը և աղաչյին կենտկոմները «երևան չեն հանել և ժամանակին չեն ուղղել այդ սխալները, այլ սկսել են ուղղել դրանք միայն ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ցուցումների շնորհիվ»<sup>2</sup>:

Կենտկոմը պարտավորեցրեց Անդրկոլկասի պարտիական կազմակերպութեաններին անմիջապես ձեռնամուկս լինել թույլ տված սխալները մինչև վերջը ուղղելու և բոլոր ջանքերը կենտրոնացնելու կոլտնտեսութեան կազմակերպական, տնտեսական ու քաղաքական ամրացման վրա, հաշվի առնելով յուրաքանչյուր շրջանի առանձնահատկութեանները:

Կենտկոմը ցուցում տվեց վճարար վերակառուցման ենթարկել ռոտոման տնտեսութեան վիճակը, դարկ տալ անասնաբուժական սովխոզներին և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին<sup>3</sup>:

Պարտիայի Կենտկոմի այդ որոշումը կենսագործելու նպատակով Անդրկոլկասի և Հայաստանի պարտիական կազմակերպութեանները պայքար ծավալեցին կոլեկտիվացման գործում գեռևս գոյութեան ունեցող սխալները ուղղելու և կոլտնտեսային վերելքը ասպահովելու համար:

Սովխոզների և կոլտնտեսութեանների ծավալուն շինարարութեան հիման վրա, հաջողութեամբ լուծելով հացահատիկային պրոբլեմը, վճռական նվաճումների հասնելով տեխնիկական կոլտուրաների զարգացման ասպարեզում, պարտիան և կառավարութեանը ձեռնամուկս եղան գյուղատնտեսութեան մշուս կարևոր բնագավառի՝ կենդանաբուծութեան պրոբլեմի լուծման հարցին: Գյուղատնտեսու-

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի 1931:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

Յյան բուր ճյուղերի մեջ անասնապահությունն այդ տարիներին ամենահետամնաց ճյուղն էր: 1930—1931 թթ. դասակարգային թշնամին այդ բնագավառին մեծ վնաս էր հասցրել:

Պարտիայի XVI համագումարը նշեց, որ կենդանաբուծության ասպարեկում եղած ցուցանիշները տաղնապալից են: Դրությունն ասվելի անմխիթարական էր կենդանաբուծության ապրանքային արտադրանքի տեսակետից: Մինչդեռ սննդամթերքի արագորեն աճող պահանջները, հումքի կարիքը թե՛ արդյունաբերական կենտրոններում և թե՛ գյուղում խիստ հրամայական էին դարձնում անասնաբուծության արագ վերականգնումը և նրա զարգացման համառուժեղ տեմպերի ապահովումը:

Պարտիայի XVI համագումարը ցուցում էր տվել արագ տեմպերով վերականգնել և զարգացնել անասնաբուծությունը: Համագումարի որոշումներում նշվում էր մասնավորապես այն մասին, որ կենդանաբուծության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ է առաջին հերթին զարկ տալ անասնապահական սովխոզների և կոլտնտեսությունների բարձր ապրանքային ֆերմաների շինարարությանը, լայնացնելով կերի բազան<sup>1</sup>:

Համագումարի որոշումների հիման վրա լուրջ աշխատանք ծավալվեց անասնաբուծության պրոբլեմը լուծելու ուղղությամբ: 1930 թ. սկսած որոշակի աշխատանք կատարվեց նաև՝ Հայաստանում. կազմակերպվեցին մի շարք անասնաբուծական սովխոզներ և բազմաթիվ կոլտնտեսային ֆերմաներ: Կենդանաբուծության զարգացման գործում մեծ նշանակություն ունեցան նաև ՀամԿ(Ե)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1931 թ. հուլիսի 30-ի որոշումը և այդ որոշման հիման վրա օգոստոսի 3-ի անասնաբուծության զարգացման հարցի մասին դիմումը: ՀամԿ(Ե)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ Ժողկոմսովետի հիշյալ որոշման և դիմումի մեջ ասված էր, որ գյուղատնտեսության ասպարեկում մոտակա ժամանակներում մեր կենտրոնական խնդիրը անասնաբուծության սոցիալիստական հստվածի՝ սովխոզների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ստեղծման և ամրացման հարցն է: «1931 և 1932 թթ. անասնաբուծության ծավալման ասպարեկում, — ասված է այդ որոշման մեջ, — պետք է լինեն նույնպիսի վճռական բեկման տարիներ, ինչպիսին

<sup>1</sup> Տե՛ս «ՍՄԿՊ-ն...բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 67:

էին 1929—1930 թթ. սոցիալիստական հացահատիկային տնտեսութեան կազմակերպման բնագավառում»<sup>1</sup>:

Այդ դիմումը սյարտիական, սովետական և կոլտնտեսային կազմակերպութեաննորի ուշադրութեանը առանձնապէս բեւոռւմ էր այն հանգամանքի վրա, որ կոլտնտեսային ապրանքային ֆերմաները տվյալ էտապում լինելով ամենահամապատասխան ձևերը, անասնապահական սովխոզների հետ միասին ամենից արագ կկարողանան լուծել խոշոր ապրանքային անասնաբուծութեան սանդձելու պրոբլեմը: «Կոլտնտեսական ֆերմաները հանդիսանալով կոլտնտեսութեան ամենաշահավետ գյուղատնտեսական ճյուղը, — կարգում ենք դիմումի մեջ, — զարգանալով կոլտնտեսականների անհատական սպառողական անասնաբուծութեան տնտեսութեան և կոլտնտեսութեաննորի հանրայնացում հոտերի հետ միասին, հետագայում, անտարակույս, դառնալու են պետութեան համար կարևորագույն անասնաբուծական մթերք արտադրողներ»<sup>2</sup>:

Պարտիայի և կառավարութեան այս դիրքիտիվների կենսագործման նպատակով 1931 թ. օգոստոսի 19-ին գումարված Սեանի ավազանի (Բայազետ, Ախտա, Բասարգեշար և Մարտունի) շրջանների և օգոստոսի 26-ին՝ Հայաստանի հյուսիսային (Ստեփանավան, Լենինական, Աղբաբա, Շամշաղին և այլն) 11 շրջանների անասնապահական ֆերմաների հարվածային կոլտնտեսականների միջշրջանային համագումարները քննեցին Հայաստանի անասնաբուծութեան զարգացման խնդիրները և կոնկրետ միջոցառումներ ընձեռեցին հիշված դիմումի կենսագործման առթիվ: Այդ համագումարները առանձին-առանձին մշակեցին լուրջ միջոցառումներ ինչպէս ֆերմաների շինարարութեան, այնպէս էլ նրանց տիպերի ու անասունների գլխաբանակի ավելացման մասին, յուրարանչուր ուսյունին տալով կոնկրետ հանձնարարութեաններ: Այդ համագումարները բոլոր կոլտնտեսութեաննորին և մենատնտեսներին ուղղեցին հատուկ դիմումներ, մատնանշելով միջոցառումներ 1931—1932 թթ. ռեսպուբլիկայում սոցիալիստական անասնաբուծութեան զարգացման, ինչպէս նաև կոլտնտեսային շինարարութեան ծավալման ուղղութեամբ կատարվելիք աշխատանքների մասին: Հարվածային անասնապահ կոլտնտեսականները իրենց դիմումներում գրում էին, որ անասնաբուծութեան զարգացման մասին սլար-

1 «Նորհրդային Հայաստան», № 178, 1931:

2 Նույն տեղում:

տիայի և կառավարութեան դիրքակալները կենսագործումը և իրենց համադումարներում ընդունված սպորտախորությունների իրակա- նացումը հնարավոր է դասակարգային թշնամու՝ կուլակի և նրա գործակալների դեմ անողոք պայքար ծավալելու միջոցով<sup>1</sup>։

Պարտիայի և կառավարության վերևում հիշված դիմումը և անասնապահական կոլտնտեսությունների հարվածայինների միջ- շրջանային համադումարների սրտշումները մեծապես օգնեցին։ Ան- սպորտիկայի պարտիական կազմակերպություններին ու կոլտնտե- սականներին զգալի շարժում առաջ մղելու անասնաբուժության զար- գացման գործը։ Միայն 1931 թ. ընթացքում կազմակերպվեցին կոլ- տնտեսային 120 կաթնատուրանքային, 107 ոչխարաբուծական և 42 խոզաբուծական ֆերմաներ։

Հայաստանի Կոմպարտիայի VIII համադումարը նշեց, որ մի շարք նվաճումներ են ձևեր բերվել նաև սովխոզների դժով։ «Անց- յալ տարի սովխոզներում, — ասված է համադումարի որոշման մեջ, — խոշոր եղջերավոր անասունների թիվը 3,8 հազար գլխից հասավ 16,7 հազար գլխի, իսկ մանր եղջերավոր անասունների թիվը 16,1 հազար գլխից հասավ 35 հազար գլխի»<sup>2</sup>։

Ամբողջ ՄՍՍՄ, այդ թվում և Սովխտական Հայաստանի անաս- նապահության զարգացման ուղղությամբ կատարվելիք աշխատան- քի հիմքում, զրվեց պարտիայի այն ցուցումը, որ պետք է հասնել այնպիսի դրություն, որպեսզի 1931—1932 թթ. ամուր հիմք դրվի անասնաբուժության սոցիալիստական հատվածի զարգացման հո- մար, որպեսզի գյուղատնտեսության արտադրության դեռևս թույլ հանրայնացված այդ ճյուղում ևս հաղթանակի իրոք կազմակերպ- ված, մեքենայացված, դիտության վերջին նվաճումների վրա հիմ- նըված սոցիալիստական անասնաբուժությունը։

Բնակչության սրահանջմունքները մտով և կաթնամթերքներով, իսկ թեթև արդյունաբերության պահանջները անասնաբուժությունից ստացվող հումքի կարևոր տեսակներով ապահովելու պրոբլեմը, ինչպես առաջին հնդամյակի ժամանակամիջոցում, այնպես էլ հե- տագայում մնում էր որպես կարևորագույն պրոբլեմ, որի լուծումը պահանջում էր ջանքերի առավելագույն գործադրում անասնաբու- ժությունը ընդհանրապես զարգացնելու, և առանձնապես սոցիա- րիստական հատվածում նրա վերելքը ապահովելու համար։

<sup>1</sup> Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 178, 1931։

<sup>2</sup> «ՀԿ(Բ)Պ VIII համադումարի բանաձևերը», Հայպետհրատ, 1932, էջ 6։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման գործում 1931 թ. ձևաք բերված նվաճումները և առանձին մարզերում ու շրջաններում հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտումը շատ մեծ կարևորություն ունեցող նոր հարցեր էին առաջադրում կոլտնտեսային շինարարության բնագավառում: Կոլտնտեսությունների տնտեսական և կազմակերպական ամրապնդման խնդիրը դառնում էր կոլտնտեսային շինարարության կենտրոնական հարցը: Սակայն առանց աշխատանքի ճիշտ կազմակերպման անհնարին կլինեք զարգացնել կոլտնտեսությունները, բարձրացնել նրանց կազմակերպվածությունը: Այդ իսկ պատճառով աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում լուրջ նշանակություն է ստանում և դրվում է պարտիայի ու կառավարության ուշադրության կենտրոնում:

Կոլտնտեսությունների աշխատանքներում գոյություն ունեցող պիսավոր թերությունները, որոնք լուրջ խոչընդոտ էին նրանց ամրացման համար, հանդիսանում էին աշխատանքի վատ կազմակերպումը, գործավարձի բացակայությունը, եկամտի ոչ ճիշտ բաշխումը, արտադրական բրիգադային սիստեմի բացակայությունը կամ նրանց ղեռնա շատ թույլ կազմակերպվածությունը:

ՍՍՌՍ Սովետների VI համագումարը (մարտ 1931 թ.) իր որոշումներում նշեց, որ կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպումը և եկամտի բաշխումը ըստ կոլտնտեսականի ծախսած աշխատանքի քանակի և տված որակի՝ հանդիսանում են կոլտնտեսությունների ամրացման, նրանց վարգացման և աճի անհրաժեշտ նախապայմանը: Համագումարը ջուջում տվեց վերացնել կոլտնտեսություններում գոյություն ունեցող դիմադրիությունը, եկամտի բաշխման գործում եղած հավասարեցման վնասակար պրակտիկան, արմատալորել գործավարձը և ամրապնդել աշխօրը<sup>1</sup>:

Համագումարը նշեց, որ տնտեսության արտելային ձևի պայմաններում, կոլտնտեսականների աշխատանքի ճիշտ կազմակերպման կարևորագույն օղակը կարող էր լինել արտադրական բրիգադը, որի կազմակերպման ու ամրապնդման խնդիրը հսկայական կարևորություն է ստանում: 1930—1931 թթ. ինչպես Սովետական

<sup>1</sup> Տե՛ս «Стенографический отчет VI съезда Советов СССР».

Միութեան շատ վայրերում, այնպես էլ Հայաստանի բազմաթիվ կոլտնտեսություններում, արտադրական բրիգադը դեռևս չէր դարձել արտադրությունը կազմակերպելու, աշխատող ձեռքերը ճիշտ դասավորելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու արտադրական պլանավոր միավորը:

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման այդ հիմնական միավորի՝ բրիգադի նշանակությունը և կարևորությունը իր պարզ արտացոլումն է գտնում նաև ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1932 թվականի փետրվարի 4-ի — «Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման հերթական միջոցառումների մասին» հայտնի որոշման մեջ: Կենտկոմը պարտիական, սովետական և կոլտնտեսային կազմակերպությունների ուշադրությունը սրում էր այն հանգամանքի վրա, որ այսուհետ «աշխատանքի կազմակերպման կարևորագույն օղակը կոլտնտեսություններում պետք է դառնա բրիգադը»<sup>1</sup>:

Հաշվի առնելով լավագույն դյուղատնտեսական արտելների փորձը, Կենտրոնական Կոմիտեն նպատակահարմար էր համարում կոլտնտեսային բրիգադները կազմակերպել «կոլտնտեսականների մշտական կազմով, այն հաշվով, որ այդ բրիգադները, որպես կանոն, դյուղատնտեսության հիմնական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում կատարեն որոշ հողամասերով»<sup>2</sup>:

Կենտրոնական Կոմիտեն ցուցում տվեց պաշտային աշխատանքների ժամանակաշրջանում բրիգադներին հատկացնել անհրաժեշտ մեքենաներ, ինվենտար, քաշող ուժ և տեղական պայմաններից ելնելով նրանց ամրացնել դաշտամասեր: Անհրաժեշտ համարվեց բարձրացնել բրիգադիւրների պատասխանատվությունը, վերացնել նրանց կազմի հոսունությունը, բարելավել նրանց ցույց տրվող օգնությունն ու ղեկավարությունը: Կենտրոնական Կոմիտեն պահանջում էր բրիգադներին հանձնել աշխատանքի կազմակերպման մի շարք ֆունկցիաներ, այն զուգակցելով կոլտնտեսության ընդհանուր վարչական ծախսերի կրճատման հետ: Անհրաժեշտ համարվեց բրիգադիւրների աշխատանքի վարձատրությունը կատարել ամբողջ բրիգադի աշխատանքի վերջնական արդյունքների համաձայն:

Կենտրոնական Կոմիտեն մատնանշում էր նաև զործավարձը արմատավորելու մասին Սովետների VI համագումարի որոշման մինչև

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստան», № 34, 1932:

<sup>2</sup> Նույն տեղում:

վերջը կենսագործելու անհրաժեշտությունը: Խնդիր էր դրվում բարելավելու հաշվառումը, կոլտնտեսականի աշխատանքը գնահատելու՝ համաձայն նրա կատարած գործի քանակի և որակի: «Միևնույն ժամանակ,— ասվում է այդ որոշման մեջ,— կենտկոմը նախազգուշացնում է գործավարձի ձևերը շահագանց բարդացնելուց, սլոբգրեսիվ գործավարձ մտցնելուց, անհատական գործավարձի ձևերն ավելացնելուց...»<sup>1</sup>:

Այդ միջոցառումների կիրառումը կոլտնտեսային շինարարության բնագավառում կենտկոմը համարում էր սլարտիական կազմակերպությունների գլխավոր և անմիջական խնդիրը:

Այդ բոլոր միջոցառումների իրականացումը կոլտնտեսություններում, անտարակույս, բարձրացնում են ամբողջ բրիգադի և բրիգադավարի շահագրգռվածությունն ու նախաձեռնությունը բարելավելու հողի մշակումը, կոլտնտեսականներին ճիշտ դասավորելու արտադրության մեջ և պայքար կազմակերպելու բերքը բարձրացնելու համար:

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպումը անհրաժեշտ բարձրության հասցնելու, բրիգադները ճիշտ կոմպլեկտավորելու և դրանք ամրապնդելու մասին սլարտիայի և կառավարության որոշումների կիրառումը հանդիպում էր հակակոլտնտեսային տարրերի դիմադրությանը: Դասակարգային թշնամու գործակալները ձգտում էին արգելակել արտադրական այդ կարևոր միավորի՝ որիգադի ամրապնդումը, թուլացնել աշխատանքային կարգապահությունը, խոչընդոտներ ստեղծել աշխատանքային զբոսկյների կիրառման և հաշվառման գործի բարելավման բնագավառներում: Հետևապես, սլարտիայի և կառավարության կողմից առաջադրված հիշված միջոցառումների կենսագործման ապահովումը պահանջում էր առաջին հերթին մերկացնել և ջախջախել կուլակային տարրերի ու նրանց գործակալների դիմադրությունը:

Հայաստանի Կոմպարտիան, շրջանային և գյուղական սլարտիական կազմակերպությունները, ղեկավարվելով սլարտիայի կենտոմի և Սովետների VI համագումարի որոշումներով, կոլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպչորեն ամրապնդելու մասին որոշակի աշխատանք են ծավալում, մորիլիզացնում են աշխատավորներին սլարտերելու այդ գիրկկտիվների կատարումը ապահովելու համար: Պարտիական, սովետական կազմակերպություն-

<sup>1</sup> «Սորհրդային Հայաստան», № 34, 1932:

ների և կոլտնտեսականների բոլոր ուժերը մոբիլիզացնում են կոլտնտեսային շինարարության բնագավառում եղած թերութունները լիկվիդացնելու, մասնավորապես կոլտնտեսային արտադրության մեջ եղած դիմազրկությունն ու «ձախ» հավասարեցման տարրերը վերացնելու, գործավարձը արմատավորելու, դաշտերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը բարձրացնելու, աշխօրը ամրապնդելու համար: Նկատելի աշխատանք է կատարվում քրիդադները կազմակերպորեն ամրացնելու, նրանց կազմը կայունացնելու և աշխատանքը սլանավորելու ուղղությամբ: 1932 թ. նոյեմբերին ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում արդեն կազմակերպված էր 2987 դաշտավարական, անասնապահական և տնտեսության մյուս ճյուղերում մշտական կազմով և կայուն սլանով աշխատող քրիդադներ. կարգավորվում էր կոլտնտեսականների աշխօրերի ամենօրյա գրանցումը:

Այդ բոլորը ամուր հիմք հանդիսացան հնգամյակի չորրորդ տարում, ինչպես և հետագայում, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ուղղությամբ նոր հաջողությունների հասնելու համար:

\* \* \*

1932 թ. մտավ ասաջին հնգամյակի պատմության մեջ որպես «չորրորդ ավարտական» տարի: Սովետական Միության, այդ թվում և Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, ինժեներատեխնիկական աշխատողները, կոլտնտեսային բազմամիլիոն գյուղացիությունը, սովետական ինտելիգենցիան, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պայքարում էին հնգամյակը չորս տարում ավարտելու համար: Արտադրական վիթխարի խանդավառությունը նոր թափ ստանալով համակել էր մատասներին: Սոցիալիստական մրցությունը և հարվածային շարժումը է՛լ ավելի մեծ ծավալ էր ընդունել, ընդգրկելով արտադրության բոլոր ճյուղերը, արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները և սոցիալիստական գյուղատնտեսությունը:

Արտադրության առաջավերների փորձը արդյունաբերության ղանադան ճյուղերում և տրանսպորտում ավելի ու ավելի արմատավորվելով հետզհետե ընդգրկում էր արտադրության բազմահազար աշխատողների, դառնում էր աշխատանքի արիության ու հերոսության հսկայական շարժում:

Հնգամյակի շարքով՝ ավարտական տարում մեկը մյուսին հաջորդելով, ամբողջ երկրում գործարկվում էին արդյունաբերական հարյուրավոր նոր ձեռնարկություններ, կոմբինատ-գիգանտներ, հիդրոէլեկտրակայաններ, հանքեր, ՄՏԿ-ներ, սովխոզներ և այլն. որոնք սարքավորվում էին հայրենական արտադրության առաջավոր տեխնիկայով:

Արդյունաբերության զարգացման բնագավառում մեծ էին նվաճումները նաև Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում:

Հնգամյակի վերջին տարում երկրի ժողովրդական տնտեսության մեջ Սովետական պետությունո հսկայական կապիտալ միջոցներ է ներդնում, արագացնելով սոցիալիստական շինարարության տեմպերը: Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ 1932 թ. կատարված կապիտալ ներդրումները կազմեցին ավելի քան 123 միլիոն ռուբլի, որը 3,2 անգամ ավելի էր, քան հինգամյակի առաջին տարում ներդրված գումարը: Համեմատության նպատակով ավելորդ չէր լինի հիշել, որ միայն 1932 թ. կապիտալ ներդրումները երկու անգամ ավելի էին, քան ռեսպուբլիկայի տնտեսության մեջ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում ներդրված միջոցները:

Անհրաժեշտ է հիշատակել, որ այդ ներդրումների 43,8%-ը հատկացվում է էներգետիկայի և արդյունաբերության զարգացմանն ու նոր շինարարության նպատակներին: 1932 թ. արդյունաբերության բնագավառում ներդրված 38,2 միլիոն ռուբլուց, 29,17 միլիոն ռուբլին, կամ 65%-ը ծախսվում է ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության զարգացման նպատակների համար:

Հայկական ՍՍՌ-ի նդուստրացումը արագ տեմպերով առաջ մղելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ կենսագործվեցին ինչպես նոր շինարարության, այնպես էլ հին ձեռնարկությունների վերակառուցման ու վերասարքավորման ուղղությամբ: Որոշակի աշխատանք է ծավալվում առանձնապես պղնձի արտադրությունը բարձրացնելու, հանքային հանույթը և պղնձի ձուլումը ավիացյան հիւսնադավառում: Լայնացվում է երկրաբանական հետախուզական աշխատանքը՝ գործող հանքերի պաշարները ճշտելու և նոր հանքավայրեր հայտնաբերելու ուղղությամբ: Վերակառուցվեցին հանքի հանույթի և նրա մշակման պրոցեսները, ձեռնարկվեց նոր պղնձա-ձուլական գործարանի կառուցումը Ալավերդում:

Առաջին հնգամյակի նորակառույց ձեռնարկությունները նախատեսված ժամկետին ավարտելու ու դործարկելու համար Հայաստանի աշխատավորները ջանքեր չէին խնայում: Արտադրական սլանների կատարման դործում 1932 թ. առաջին ամիսներից սկսած ռեսպուբլիկայի արդյունաբերական շատ ձեռնարկություններ զգալի նվաճումների էին հասել, շնայած կային նաև հետ մնացող որոշ օբյեկտներ:

Հայաստանի Կոմպարտիայի VIII համագումարը, արդյունաբերության մասին ընդունած իր որոշումներում ցույց տվեց այն պատճառները, որոնցով պայմանավորված էր 1931 թ. մի քանի ձեռնարկությունների հետ մնալը: Այն ձեռնարկությունները, որոնք ճիշտ էին կազմակերպել արտադրությունը, հետևողական պայքար էին մղում աշխատավարձի «ձախ» հավասարեցման դեմ, լավ էին դասավորել բանվորական ուժը արտադրության մեջ, կտրգավորել էին մեխանիզմների ճիշտ օգտագործումը, դրանք իրոք ապահովել էին արտադրական-ֆինանսական սլանների կատարումն ու գերակատարումը: Բայց «այն ձեռնարկություններում, — ասված է համագումարի որոշման մեջ, — որտեղ մեր տնտեսական, պարտիական և արհմիութենական կազմակերպությունները չեն կարողացել վերակառուցվել, աշխատել նոր ձևով, ղեկավարել նոր ձևով, չեն ապահովել քանվորների մասսայական ծավալուն պայքարը մեխանիզմների դիմադրելիությունը և աշխատավարձի հավասարեցումը վերացնելու համար, անտ. հաշվարկը և աշխատանքի սոցիալիստական ձևերը արմատավերելու համար, — մենք ճնշվածքներ ունեցանք սլանային շտապագորանքների կատարման աստիճանում»<sup>1</sup>:

Համագումարը ընդունեց միջոցառումներ այդ հետամնացությունը 1932 թ. վերացնելու համար: Ռեսպուբլիկայի արդյունաբերության հետագա զարգացումը պահանջում էր ձեռնարկություններում արդեն կիրառվող աշխատանքի սոցիալիստական ձևերի հետ միասին ծավալել նաև սոցմրցության ավելի բարձր ձևեր, կազմակերպել անտհաշվարկային բրիգադներ, կիրառել հերթափոխությունների հանդիսական սլանների ձևը և այլն: Անհրաժեշտ համարվեց առավելագույն չափով ամրաստնեցնել աշխատանքային կտրգապահությունը, ճիշտ կազմակերպել աշխատանքը, կազմակերպված կատարել բանուժի հավաքագրումը, բարելավել քանվորների որա-

<sup>1</sup> «ՀԿ(Բ)Պ VIII համագումարի բանաձևերը», էջ 8:

կալորման և տնտեսական ու տեխնիկական նոր զեկավար կազմերի պատրաստման գործը<sup>1</sup>։

1932 թ. արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական պլանների կատարումը և նոր շինարարության հաջող ընթացքը ապահովելու հետ միասին անհրաժեշտ պայքար է կազմակերպվում արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և արտադրանքի որակը բարելավելու ուղղությամբ։

Հայաստանի բանվոր դասակարգը, տնտեսական և արհմիութենական կազմակերպությունները, պարախայի զեկավարությունները, անհրաժեշտ նախաձեռնություններ զրուստրեցին և մեծ աշխատանք կատարեցին հիշված միջոցառումները կենսագործելու բնագավառում։ Առանձնակի ուշադրության են արժանանում մի շարք արդյունաբերական և էլեկտրաշինարարական օբյեկտների, ինչպես օրինակ՝ շինանյութերի (ցեմենտի), քիմիական, սննդի արդյունաբերության գործարանների, Չորագլխի, Երևանի երկրորդ հիդրոէլեկտրակայանի և մյուս ձեռնարկությունների կառուցումը՝ նախատեսված ժամկետին ավարտելու և շահագործման հանձնելու գործը։

1932 թ. նոյեմբերի 5-ին գործարկվեց Երևանի ավտոմատ հիդրոէլեկտրակայանը։ Որոշ ժամանակ անց, նոյեմբերի 15-ին շահագործման հանձնվեց սևապղնձիկայի պարծանք, առաջին հնգամյակի ծնունդ խոշոր հիդրոէլեկտրակայանի՝ Չորագլխի առաջին հերթը, իսկ դեկտեմբերի 6-ին Լենինականի հիդրոէլեկտրակայանի երկրորդ հերթը։ Հնգամյակի ավարտական տարվա ընթացքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների շարքը մտան մի շարք այլ օբյեկտներ, որոնց թվում էին Երևանի կարի, Ֆերմենտացիոն, պեմզա-բլոկի, Լենինականի նոր գործվածքային գործարանները և ուրիշները։ Իսկ հնգամյակի նորակառույցների շարքումն էին, ինչպես նշել ենք վերևում Կիրովականի ազոտային պարարտանյութերի գործարանը, որը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման համար, Դավալուսի ցեմենտի գործարանը, և շատ ուրիշներ, որոնք գործող ձեռնարկությունների շարքն անցան երկրորդ հնգամյակի տարիներին։

Կապիտալ շինարարության հսկայական թափը սևապղնձիկայում, որոշ ձեռնարկությունների վերակառուցման ավարտումը և մի շարք արդյունաբերական նոր օբյեկտների շահագործման հանձնումը

<sup>1</sup> Տե՛ս «ՀԿ(Բ)Պ VIII համագումարի բանաձևերը», էջ 8։

վրացիներին բարձրացրին արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ:

Հնգամյակի ավարտական տարվա սլանային առաջադրանքների կատարման ուղղությամբ ծավալված աշխատանքը, սոցիալիստական մրցության առաջավոր ձևերի կենսագործումը՝ ռեսուրսը իկայի արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության բնագավառներում ապահովեցին առաջին հնգամյա սլանի ժամկետից շուտ ավարտումը:

Առաջին հինգամյակի ավարտական տարում մեծ հաջողություններ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու նրա զարգացման ասպարեզում:

1932 թ. ընթացքում կազմակերպվեց երեք նոր մեքենատրակտորային կայան, որով նրանց թիվը հասավ յոթի: ՄՏԿ-ներ կային Լենինականի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Ուլուխանլուի (Մասիս), Դավալուի (Արարատ), Ստեփանավանի և Ախտալի շրջաններում:

Մեքենատրակտորային կայանների կողմից սպասարկվող կոլեկտիվ տնտեսությունների թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ 117-ով, իսկ մշակվող ցանքատարածությունները 1931 թ. 28,9 հազար հեկտարից 1932 թ. հասավ 51,7 հազար հեկտարի, որը կազմում էր ռեսուրսը իկայի կոլտնտեսությունների ամբողջ ցանքատարածության 36,4 տոկոսը<sup>1</sup>:

Ջրալի տեղաշարժեր տեղի ունեցան կոլտնտեսային շինարարության բնագավառում: Կազմակերպվեցին բազմաթիվ նոր կոլտնտեսություններ, ավելացավ աշխատավոր մեծատնտես գյուղացիների ընդգրկումը կոլտնտեսություններում: Այսպես, 1932 թ. հուլիսին ռեսուրսը իկայի կոլտնտեսությունների քանակը հասնում էր 892-ի, նախորդ տարվա հուլիսի 754 կոլտնտեսության դիմաց: Աշխատավորական տնտեսությունների ընդգրկումը 1931 թ. հուլիսի 42,5 հազարից 1932 թ. հուլիսին հասնում է 63,1 հազարի 63,1 կոլեկտիվացման միջինը ռեսուրսը իկայում 1931 թ. հուլիսի 1-ին կազմում էր 25,2%, սակայն 1932 թ. հուլիսին այն կազմում էր 37,9%: Ցանքատարածության համայնացման տեսակարար կշիռը նույն ժամանակամիջոցում ռեսուրսը իկայի ամբողջ տարածության 21,6%-ից բարձրացավ 39,2%-ի<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР (1920—1940 гг.)», стр. 57.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 42:

Ռեսպուբլիկայի կողակախի տնտեսությունների գերակշռող ձևը պտղատնտեսական արտելն էր, որը հաստատում էր կոլտնտեսային շինարարության բարձր աստիճանի մասին: Գոյություն ունեցող 892 կոլեկտիվ տնտեսություններից 820-ը արտելներ էին, 68-ը՝ հողօգտագործական ընկերություններ, իսկ 4-ը կոմունաներ:

Բերված տվյալները ցույց են տալիս, թե ինչպիսի նվաճումներ էին ձեռք բերվել պուլի սոցիալիստական վերակառուցման և գյուղատնտեսության արտապրողական ուժերի բարձրացման ուղղությամբ:

Սոցիալիզմի ծափալուն հարձակումը կապիտալիստական տարրերի դեմ, Հայաստանի բանվորների, կոլտնտեսականների ու մշուսաշխատավորների նվաճումները սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում կատարվում էր դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում, թշնամի, որը փոխելով իր պայքարի տակտիկան ու մեթոդները, մեծ ճիգեր էր գործադրում մեր երկրի ժողովրդական տնտեսության արագ զարգացումը կասեցնելու, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը խզելու, գյուղի սոցիալիստական վերափոխումը արգելակելու և կոլտնտեսությունները քայքայելու համար: Այդ պայքարի ձևերից մեկը և դիսավորը այդ ժամանակ, որ գործադրում էին սոցիալիզմի թշնամիները՝ սոցիալիստական սեփականություն հափշտակումն էր, որը նրանք փորձում էին իրականացնել երկրի էկոնոմիկայի բոլոր բնագավառներում: Կոնտրոլույուցիոն տարրերը զգալով, որ սովետական տնտեսության հիմքը հանրային սեփականությունն է՝ ձգտում էին սասանել այդ հիմքը, կազմակերպելով նրա կազմալուծումը և հափշտակումը:

Բուրժուազիան իր զարգացման սկզբնական շրջանում մասնավոր սեփականությունը հայտարարեց սրբազան ու անձեռնմխելի, նպատակ ունենալով ամրապնդել կապիտալիստական իրավակարգը, քանի որ մասնավոր սեփականությունը կապիտալիզմի հիմքն էր: Միանգամայն ակնբախ է, որ Սովետական պետությունը, Կոմունիստական պարտիան պետք է անհաշտ պայքար մղեին Սովետական Միության տնտեսական հիմքը՝ սոցիալիստական, հանրային սեփականությունը պաշտպանելու համար: «Եթե կապիտալիստները մասնավոր սեփականությունը հռչակեցին սրբազան ու անձեռնմխելի... — նշում է Ի. Վ. Ստալինը, — ապա մենք, կոմունիստներս, առավել ևս սրբազան ու անձեռնմխելի պետք է հռչակենք հանրային սեփականությունը, որպեսզի դրանով իսկ ամ-

րացնենք անտեսութիւյան սոցիալիստական նոր ձևերը յարտադրութեան ու առևարի բոլոր բնագավառներում»<sup>1</sup>։

Սոցիալիստական սեփականութեանը համընդհանուր նշանակություն ու գոգերից պաշտպանելու գործում հսկայական նշանակություն ունեցավ ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտաբնների Սովետի՝ «Պետական ձեռնարկությունների, կոլանտեսութեանների և կոոպերացիայի գույքը պահպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունն ամրապնդելու մասին» որոշումը, որն ընդունվեց 1932 թ. օգոստոսի 7-ին։ Այդ որոշման մեջ ասված է. «ՍՍՌՄ Կենտրոնական և Ժողովրդական գտնում են, որ հանրային (պետական, կոլտնտեսային, կոոպերատիվ) սեփականությունը սովետական հասարակարգի հիմքն է. նա սրբազան է և անձեռնմխելի և հանրային սեփականության նկատմամբ ոտընձգություն կառարող մարդիկ պետք է դիտվեն որպես ժողովրդի թշնամիներ, ուստի և հանրային գույքը համընդհանուրների դեմ վճռական պայքարը Սովետական իշխանության օրդանների ամենաառաջին պարտականությունն է»<sup>2</sup>։

Սովետական պետության այդ կարևոր որոշման հիման վրա սոցիալիստական սեփականության պաշտպանության ուղղությամբ մեծ պայքար ծավալվեց նաև Հայաստանում։ Հայաստանի պարտիական կադմակերպությունները, դատական հիմնարկները, ռեսպուբլիկական մամուլը խոշոր աշխատանք կատարեցին քաղաքի և գյուղի աշխատավորներին մոբիլիզացնելու ու սոցիալիստական սեփականության համընդհանուրներին մերկացնելու և պատժելու ուղղությամբ։ Բանվորների, կոլանտեսականների և պետական ու տնտեսական հիմնարկների աշխատողների լայն մասսաների մեջ օգոստոսի 7-ի որոշման մասսայականացումը բարձրացրեց նրանց զգուցությունը և մոբիլիզացրեց նրանց ուղղորդված սոցիալիստական սեփականության պաշտպանության հարցերի վրա։ Քաղաքի և գյուղի աշխատավորները ակտիվ պայքար ծավալեցին հանրային սեփականության դեմ ոտնձգություն կատարողներին հայտնաբերելու և պատժելու գործում։

<sup>1</sup> Ի. Ս տ ա լ ի ն, Երկեր, հատ. 13, էջ 233։

<sup>2</sup> „Правда“, № 218, 1932.

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարութիւնը ինչպէս միշտ, այնպէս էլ հնդամյակի ժամանակամիջոցում մեծ կարևորութիւն էին տալիս քաղաքի և գյուղի միջև սպարանքաշրջանառութեան զարգացման գործին, սովետական և կոպերատիվ առևտրի ծավալման հարցին:

Առաջին հնդամյա պլանով նախատեսվում էր զգալիորեն ավելացնել լայն սպառման ապրանքների արտադրութիւնը, ծավալել պետական և կոոպերատիվ առևտուրը, առևտրի բնագավառից դուրս մղել մասնավորին, իջեցնել մանրածախ ապրանքների գները և բարձրացնել աշխատավորների սպառողական պահանջմունքների բավարարման մակարդակը:

Ելնելով դրանից, պարտիան 1930—1932 թթ. մի շարք կարևոր որոշումներ ընդունեց աշխատավորների մատակարարման, սովետական առևտրի ծավալման և առևտրական կազմակերպութիւնների աշխատանքների վերակառուցման մասին<sup>1</sup>:

Սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան զարգացման պահանջներին համապատասխան, սովետական

<sup>1</sup> Առաջին հնդամյակի պլանային առաջադրանքներին համապատասխան պարտիայի XVI համագումարը նշեց, որ պարտիայի ջանքերը պետք է կենտրոնացնել ուժեղացնելու «մասսայական սպառման ապրանքների արտադրող արդյունաբերութեան ճյուղերի (թեթև ինդուստրիա) զարգացումը, ինչպէս և զարգացնել հումքային բազան...»: Ելնելով պետական և կոոպերատիվ առևտրական սիստեմի անբավարար ճկունութիւնը և նրա աշխատանքուհեղած չափողանց վերադիր ծախսերը, համագումարը հանձնարարեց կ'վճարճ-ին շարունակել ապրանքի իրացնող ապարատի ուղղորդման աշխատանքը, հասնելով ավելորդ օղակների լիակատար վերացմանը: (Տե՛ս «ՄԿԳ-ն... քանաձևերում ու որոշումներում», 111 մաս, էջ 17, 30—31):

Համկ(բ) ԿԿ և ԿՎՀ-ի 1930 թ. պեկտեմբերյան միացյալ պլենումը հատուկ քննութեան ենթարկեց մաի և բանջարեղենի մատակարարման բարելավման, սպառողներացիայի աշխատանքների լավացման հարցերը, որոնց մասին ընդունեց կարևոր միջոցառումներ: (Տե՛ս նույն տեղում, էջ 102—111):

Համկ(բ) ԿԿ և ԿՎՀ-ի 1931 թ. հոկտեմբերյան պլենումը հատկապէս զբաղվեց սովետական առևտրի ծավալման և բանձրների մատակարարման բարելավման հարցերով, իսկ 1932 թ. հոկտեմբերյան պլենումը քննեց սովետական առևտրի զարգացման հարցը: Վերևում հիշված հարցերի քննման կապակցութեամբ կենտկոմի պլենումների ընդունած որոշումները, ինչպէս և այդ հարցերի մասին կենտկոմի Քաղբյուրոյի համապատասխան գլխավորութիւնները, հանդիսացան պարտիական, սովետական, առևտրական կազմակերպութիւնների աշխատանքի ծավալուն ծրագիր:

առևտրի ծավալման անհրաժեշտությունից բխող պարտիայի և կառավարության դիրքակալիվների կատարումը լուրջ խնդիրներ էին դնում Հայաստանի պարտիական, սովետական և մյուս կազմակերպությունների առջև, հրամայական դարձնելով անհրաժեշտ վճռական պայքարի կազմակերպումը նրանց կենսագործման համար:

Հայաստանի Կոմսոցարտիայի VIII համագումարը առանձնակի տեղ տալով աշխատավորների մատակարարման գործի է՛լ ավելի լավացման և առևտրի ծավալման հարցերին, նշեց, որ հարկավոր է «վճարար բարելավել պարենամթերքի և արդյունաբերական ապրանքների հայթայթումը ազգաբնակչությանը: Այդ նպատակով մանրածախ առևտուր ծավալել թեթև արդյունաբերության, անասնադործական կոոպերացիայի, Մատժողկոմատի ճյուղային միավորումների գծով, ինչպես և կոլտնտեսությունների ու խորհրդատեսությունների առևտուրը» լայնացնելու միջոցով, գտնել նաև ապրանքային ֆոնդերի լրացուցիչ աղբյուրներ<sup>1</sup>:

Ղեկավարվելով այդ որոշումներով, Հայաստանի մատակարարման և առևտրական հիմնարկները, պարտիական կազմակերպությունների գլխավորությունը նշանակալի աշխատանք կատարեցին ազգաբնակչության մատակարարումը բարելավելու, առևտրական կազմակերպությունների աշխատանքի բովանդակությունը լավացնելու և այն վերակառուցելու, ինչպես նաև սովետական առևտուրը զարգացնելու ուղղությամբ: Բանվորական մատակարարումը լավացնելու համար հնգամյակի տարիներին կազմակերպվեցին բավական քանակով փակ բաշխիչներ, բանմատակարարման կազմակերպություններ, օժանդակ տնտեսություններ, որոնք ունեին զգալի քանակով ցանքատարածություն, մթերատու անասուններ և այլն:

1930—1931 թթ. բավականաչափ ավելացավ սոյառկոոպերացիայի առևտրական կետերի քանակը: 1929 թ. 740-ի փոխարեն 1931 թ. այն հասավ 1927-ի: Համապատասխանորեն ավելացավ նրա շրջանառությունը մոտ 37,2 միլիոն ռուբլուց հասնելով 75,3 միլիոն ռուբլու<sup>2</sup>:

Չնայած այդ նվաճումներին, առևտրի քնադավառում գոյություն ունեին մի շարք լուրջ թերություններ, որոնց վերացումը մեծապես կարող էր բարելավել առևտրական կազմակերպությունների

<sup>1</sup> Տե՛ս «ՀԿ(Բ)Պ VIII համագումարի բանաձևերը», էջ 21:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍԽ ԿՊԱ, ֆ. 113, դ. 2273, թ. 1—8:

աշխատանքները: Անհրաժեշտ էր առևտրի ասպարեզից, մանավանդ սպառողական կոոպերացիայի ասպարատից, դուրս մղել թշնամական-նևայմանական տարրերին, որոնք լուրջ խոչընդոտներ էին ստեղծում սովետական առևտրի դարդացման բնագավառում:

Պարտիան ու կառավարութունը պահանջում էին վերջ առ առևտրական հիմնարկներում, մանավանդ սպառկոոպերացիայի սիստեմում, շարշիական տենդենցներին, վճարար հասնել վերադիր ծախսերի կրճատմանը և բազաներում ապրանքների երկարատև կուտակումներին, ճիշտ բաշխել ապրանքների տեսակները առևտրական ցանցի միջև և ապրանքը ժամանակին հասցնել սպառողին, իջեցնել մանրածախ ապրանքների գները և այլն: Առաջին հնգամյակի ընթացքում, ինչպես և երկրորդ հնգամյակի տարիներին մեծ պայքար է ծավալվում պարտիայի այդ դիրեկտիվները կենսագործելու համար:

### 3. ԱՌԱՋԻՆ ՀՆԿԱՄՅԱԿԻ ԱՄԻՅՈՒՆՔՆԵՐԸ

#### ա) Արդյունաբերության բնագավառում

Սովետական Միության բանվոր դասակարգը, գյուղացիութունը և աշխատավոր ինտելիգենցիան, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարությամբ, 1932 թվականի վերջերին, հաջողությամբ և ժամկետից շուտ՝ չորս տարի և երեք ամսում ավարտեցին առաջին հնգամյա պլանը:

Հնգամյա պլանի կատարման արդյունքները ամփոփվեց Համկ(բ)Պ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան միացյալ պլենումում: Հնգամյա պլանի կատարման հանրագումարները ցույց տվեց, որ նրա իրականացման շնորհիվ լուծվել է պլանի հենարոնական, զլխավոր խնդիրը՝ այն է, ստեղծվել է ծանր ինդուստրիա և նրա հիման վրա ժամանակակից հաստոցաշինական արդյունաբերութուն, հետևապես տեխնիկական հզոր բաղա մաբողջ արդյունաբերութունը, տրանսպորտը և գյուղատնտեսութունը վերակառուցելու, այն տեխնիկապես վերազինելու համար: «Ինդուստրացման քաղաքականության անշեղ կիրառման և ամբողջ ճակատով սոցիալիստական ծավալուն հարձակման շնորհիվ,— Նշեց պլենումը իր ընդունած որոշման մեջ,— ՍՍՄԲ բանվոր դասակարգը բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ հաջողությամբ կատարել է հնգամյա-

կի հիմնական խնդիրը՝ սեփական առաջավոր տեխնիկական բազայի ստեղծումը ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար»<sup>1</sup>։

Առաջին հնգամյակի սլանի կատարման շնորհիվ Սովետական Միությանը տեխնիկա-տնտեսական տեսակետից հետամնաց, մանր-դյուրացիական երկրից, ինչպիսին որ նախկին Ռուսաստանն էր, դարձավ առաջավոր երկիր։

Սոցիալիստական շինարարության բնագավառում ձևոք բերված պատմական հաղթանակների շնորհիվ վերացվեց գործազրկությանը քաղաքում, իսկ կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ՝ աղքատությունն ու չքավորությունը գյուղում։ Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում վերացվեց մարդու միջոցով մարդու շահագործումը։ Սովետական Միության բանվոր դասակարգը և գյուղացիությունը, այգյուրով, հնարավորություն ստացան իրենց համար ապահովելու ունեւոր և բարեկեցիկ կյանք։

Հնգամյա սլանի կատարման շնորհիվ ամբողջով ՍՍՌ-ն պաշտպանունակությունը՝ նա դարձավ հզոր տերություն։

Հնգամյակի արդյունքների մեջ փայլուն կերպով իր արտացոլումը գտավ Կոմունիստական մեծ պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը, նրա հիասթափ պատմական հետևանքը։ Հնգամյա սլանի կենսագործման շնորհիվ մեծ տեղաշարժեր կատարվեցին ազգային ռեսուրսիկանների էկոնոմիկայի մեջ, նրանք գործան առաջավոր ինդուստրիայի և խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության երկրներ։

Սովետական Հայաստանը, որը անցյալում հանդիսանում էր հետամնաց ազրարային երկիր, Սովետական Միության և Անդրկովկասի ժողովուրդների եզրայրական աջակցության շնորհիվ առաջին հնգամյակի ժամանակաշրջանում հսկայական վերելք ապրեց ինդուստրիայի, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման և կոլտնտեսական շինարարության բնագավառներում։

Հայաստանի տեխնիկա-տնտեսական հետամնացության վերացումը պահանջում էր առաջին հնգամյակի տարիներին իրականացնել վիթխարի շինարարական ծրագիր, որի համար անհրաժեշտ էին հսկայական կապիտալ ներդրումներ։

<sup>1</sup> ՇՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 217։

Համեմատության նպատակով հիշատակենք, որ Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ վերականգնման ժամանակաշրջանում կատարված ներդրումները կազմեցին 69,1 միլիոն ուսուցիչ, իսկ առաջին հնգամյակին՝ այսինքն չորս և կես տարվա ընթացքում կատարված փաստացի ծախսումները կազմեցին 312,3 միլիոն ուսուցիչ, Հայաստանի Սովետների VI համագումարի կողմից հաստատված 274,14 միլիոն ուսուցիչի դիմաց, կամ գերակատարվեց 14,5% -ով: Արդյունաբերության և էլեկտրաշինարարության մեջ ներդրված գումարը կազմեց 118,2 միլիոն ուսուցիչ, որը պայմանավորեց արդյունաբերության բուն զարգացումը և նրա առաջատար դերի ապահովումը ժողովրդական տնտեսության մեջ:

Առաջին հնգամյա պլանով նախատեսված արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ ավարտվեցին և շահագործման հանձնվեցին: Այդ ժամանակամիջոցում սկսվեց մի շարք արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումը, որոնք ավարտվեցին և գործող օբյեկտների շարքն անցան երկրորդ հնգամյակի տարիներին:

Առաջին հնգամյակի ժամանակամիջոցում ուսուցիչի արդյունաբերության տարրեր ճյուղերի զարգացումը մեծապես կապված էր այդ ճյուղերի գծով կատարված կապիտալ ներդրումների հետ: Այդ առանձնապես աչքի էր ընկնում ծանր արդյունաբերության գծով, որի աճը հնգամյակի առաջին տարվա համեմատությամբ 1932 թվականին ավելացավ ավելի քան վեց անգամ: Ծանր արդյունաբերության բնագավառում կատարված ծախսումների տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ 1928—1929 տարվա 42% -ից 1932 թ. հասնում է մինչև 65% -ի:

Ինչպես նշեցինք, ի տարբերություն վերականգնման ժամանակաշրջանի, առաջին հնգամյակը հանդիսացավ նոր շինարարության հսկայական ծավալման հնգամյակ: Հնգամյակում կապիտալ ներդրումների մեծ բաժինը արամազրվեց նոր ձեռնարկությունների շինարարության նպատակին: Այսպես, չորս հիմնական ժողովուհաների՝ ծանր, թեթև, մատակարարման և անտառարդյունաբերության գծով կապիտալ ներդրումները նոր շինարարության բնագավառում հնգամյակի առաջին տարում կազմեց 52%, իսկ 1932 թ. 63,0%, մնացած 37,0% -ը հատկացվեց կապիտալ վերանորոգումների, ձեռնարկությունների լայնացման ու վերակառուցման նպատակներին:

Ուսուցիչի խոշոր արդյունաբերության արտադրանքի տարեկան միջին աճը հնգամյակում կազմեց 38,8%, Անդրֆիկերա-

ցիայի 29,5%-ի դիմաց, այդ թվում՝ «Ա» խմբի դժով՝ 26,2%, իսկ «Բ» խմբի դժով 50,9%<sup>1</sup>:

Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացման լավագույն ցուցանիշը կարող է համարվել ժողովրդական անտեսույթյան մեջ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալի չափի աճը, որը 1926—1927 թթ. անփոփոխ գներով 1932 թ. վերջում գերազանցեց 1927—1928 թթ. մակարդակը մոտ չորս անգամ: Ինչ վերաբերում է խոշոր արդյունաբերության արտադրանքին, ապա այն հնգամյակի վերջում, գերազանցեց 1928 թ. մակարդակը մոտ չորս և կես անգամ<sup>2</sup>: Խոշոր արդյունաբերության հիմնական արտադրական միջոցները 1928 թ. համեմատությամբ 1932 թ. վերջում ավելացավ ավելի քան երեք անգամ<sup>3</sup>:

Առաջին հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում սկսվեց ստեղծվել արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր, այդ թվում բիմիական, մսի, սրահածոների, ծավալվեց շինանյութերի արդյունաբերությունը, այդ թվում ցեմենտի, տուֆի, շինարարական պեմզայի, կղմինդրի և այլն: Շինանյութերի արդյունաբերության գծով ներդրվեց ավելի քան 18 միլիոն ռուբլի:

Զգալի զարգացում տեղի ունեցավ նաև թեթև արդյունաբերության բնագավառում: Կապիտալ ներդրումները հիմնականում ուղղվեցին տեքստիլ, կարի, մետաքսագործության և կաշվի արդյունաբերության մեջ: Հատկապես մեծ ուշադրություն դարձվեց Լենինականի տեքստիլ արդյունաբերության շինարարության վրա, որի համար ծախսվեց 9,5 միլիոն ռուբլի, որը կազմեց ամբողջ թեթև արդյունաբերության մեջ ներդրված միջոցների մոտ 80%-ը<sup>4</sup>:

Զգալիորեն լայնացվեց սննդի արդյունաբերությունը, ինչպես նաև վերակառուցման ենթակառուցվածքի մի քանի հին ձեռնարկություններ: Առաջին հնգամյակում զարկ արվեց տեղական արդյունաբերությանը, որը հիմնականում զարգանում էր Երևանում և Լենինականում: Տեղական արդյունաբերության զարգացման նպատակներին առաջին հնգամյակում հատկացվեց ավելի քան 2,5 միլիոն ռուբլի: Այդ արդյունաբերության գծով արտադրվում էր գլխավորապես լայն սպառման առարկաներ:

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊՍ, ֆ. 40/113, դ. 2701, թ. 5—18:

<sup>2</sup> Տե՛ս «Солетронтедьство АрмССР», стр. 23.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 31:

<sup>4</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊՍ, ֆ. 40/113, դ. 2701, թ. 5—18:

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում բավական զարգացում տեղի ունեցավ արհեստագործական կոոպերացիայի արտադրական ձեռնարկությունների բնադավառում, որոնց համախառն արտադրանքը 1932 թ. կազմեց ավելի քան 22 միլիոն ռուբլի:

Հայկական ՍՍՌ առաջին հնգամյա պլանի մեջ շափազանց կարևոր տեղ էր գրավում երկրի էլեկտրիֆիկացիայի զարգացման ծրագիրը:

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության առանձնակի հոգատարության շնորհիվ սեսպուրլիկայի էլեկտրաշինարարության բնագավառում հնգամյա պլանի նախագծումները զգալի չափով գերակատարվեցին: Հնգամյակի տարիներին ավարտվեցին Զորագէտի շինարարությունը, Լենինականի հիդրոկայանի երկրորդ հերթը և Երևանի ավտոմատ հիդրոկայանը: Բացի այդ, լայնացվեցին և նոր կառուցվեցին մի շարք գործարանային, կոմունալ և գյուղական էլեկտրակայաններ: Ավարտվեց Զորագէտ — Կիրովական, Զորագէտ — Այավերդի բարձր լարման դիժը, սկսվեց խոշոր հիդրոկայանի՝ Քանաքեռգէտի, ինչպես նաև երկու գյուղական մեծ կայանների՝ Շաքիի և Մեղրի գէտերի կառուցման աշխատանքները: Աշխատանք ծավալվեց մի շարք ենթակայանների կառուցման, հաղորդման գծերի անցկացման և նրանց փնջավորման ուղղությամբ:

Առաջին հնգամյակում սեսպուրլիկայի էլեկտրաշինարարության ուղղությամբ կատարված կապիտալ ծախսումները հասան 38,86 միլիոն ռուբլու, որը բաժանվում էր հետևյալ կերպ. շրջանային էլեկտրակայանների շինարարության գծով 28,02 միլիոն ռուբլի, տեղական էլեկտրակայանների գծով 5,96 միլիոն ռուբլի, հաղորդման գծերի և ենթակայանների կառուցման ուղղությամբ 2,9 միլիոն ռուբլի: Այդ ներդրումների հետևանքով սեսպուրլիկայի էլեկտրիֆիկացիան զգալի բարձրության հասավ: Հնգամյակի վերջում Հայաստանում գործում էին 29 էլեկտրակայաններ 21,3 հազար կիլովատ կարողությամբ, որոնց հզորությունը 1927—1928 թթ. հզած հզորությունը գերազանցում էր ավելի քան չորս անգամ: Բոլոր էլեկտրակայանները միասին 1932 թ. արտադրում էին 53,6 միլիոն կիլովատ ժամ էներգիա, 1927—28 թթ. 20,6 միլիոն կիլովատ ժամի դիմաց<sup>1</sup>:

Արդյունաբերական հսկայական շինարարությունը և նրա զարգացման բարձր տեմպերը արմատական փոփոխություն առաջաց-

<sup>1</sup> Տե՛ս „Соцстроительство АрмССР“, стр. 24.

րին ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղերի՝ արդյունաբերության և դյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշռի հարաբերության մեջ հօդուտ արդյունաբերության: Արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը 1928 թ. 21,5% -ից 1932 թ. հասավ 52,4%: Այդ նշանակում էր, որ անցյալում հետամնաց գյուղատնտեսական-ագրարային Հայաստանը, առաջին հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ, արդյունաբերության առաջատար դերի ապահովման միջոցով, դարձավ ինդուստրիալ-ագրարային երկիր, որը անհրաժեշտ նախադրյալներ նախապատրաստեց երկրորդ հնգամյակում արդյունաբերության հետագա է՛լ ավելի հզոր զարգացման համար:

### բ) Գյուղատնտեսության բնագավառում

Առաջին հնգամյակի տարիներին արմատական փոփոխություններ տեղի ունեցան նաև գյուղատնտեսության բնագավառում: Սովետական Միության սոցիալիստական ինդուստրիալիզացիան ապահովեց ոչ միայն ծանր ինդուստրիայի հզոր զարգացումը, այլև նյութական-տեխնիկական պայմաններ ստեղծեց գյուղի սոցիալիստական վերափոխման համար: Գյուղատնտեսական մասը արտադրողների լայն մասսաները անհատական, մասնավոր սեփականատիրական-կապիտալիստական ուղուց շուտ եկան դեպի հանրային, խոշոր սոցիալիստական ուղին: Հաջողությամբ իրականացնելով լենինյան կոոպերատիվ պլանը, բանվոր դասակարգը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, մանր գյուղացիական արտադրությունը վերափոխեց հանրային, կոլտնտեսային արտադրության, դրանով իսկ Սովետական Միությունը դարձավ խոշոր, առաջավոր գյուղատնտեսական երկիր:

Առաջին հնգամյակի ժամանակամիջոցում Սովետական Հայաստանի գյուղատնտեսության մեջ (ներառյալ և իրիզացիան) կատարած կապիտալ ներդրումը կազմեց 96,6 միլիոն ռուբլի, որից կոլտնտեսությունների զարգացման գործին հատկացվեց 13,6 միլիոն ռուբլի, իրիզացիոն շինարարության համար՝ 33,8 միլիոն ռուբլի, սովխոզինարարության գծով՝ 31,4 միլիոն ռուբլի և մեքենատրակտորային կայանների կազմակերպման գործին տրամադրվեց 3,2 միլիոն ռուբլի, իսկ մնացած 14,6 միլիոն ռուբլին ծախսվեց գյուղատնտեսական այլ

շինարարության ուղղությամբ<sup>1</sup>: Այդպիսով, հնդամյակի շորս և կես տարիներին Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության բնագավառում կապիտալ միջոցների ներդրումը 1920—1928 թթ. կատարված ներգրումների շափը գերազանցեց ավելի քան 5,4 անգամ:

Իրիզացիոն շինարարության դծով զգալի աշխատանք կատարվեց՝ վերանորոգվեց և վերակառուցման ենթարկվեց գոյություն ունեցող ոռոգման սիստեմը, նոր ծավալուն շինարարություն սկսվեց, Ստալինի անվան ջրանցքի հարավային տեղամասում, ավարտվեց Փոքր Սարդարաբադի ջրանցքը և Այդր լճի վրա կառուցվող մեխանիկական ոռոգման շինարարությունը: Այդ բոլորի շնորհիվ ավելացավ ռեսպուբլիկայի ոռոգելի տարածությունը, հնգամյակի վերջում հասնելով 119,2 հազար հեկտարի: Կրացուցիչ ոռոգվող տարածությունը հիմնականում օգտագործվեց բամբակենու մշակույթի տարածությունը լայնացնելու և այգեգործությունը զարգացնելու համար:

Հնգամյակի տարիներին գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը հզորանում և վճռական ուժ է դառնում: Այդ տարիներին ռեսպուբլիկայում կազմակերպվում են զգալի քանակությամբ նոր սովխոզներ, որոնց թիվը 1932 թ. հասնում է 57-ի: Հնգամյակի վերջում ռեսպուբլիկայում գործող 7 ՄՏԿ-ների տրակտորային պարկը հաշվվում էր 296 միավոր, իսկ ամբողջ ռեսպուբլիկայի տրակտորային պարկը՝ 540 միավոր, որը հավասարազոր էր 7048 ձիու ուժի հզորության: Սովխոզներում և կոլտնտեսային դաշտերում, բացի տրակտորներից, աշխատում էին մեծ քանակությամբ գյուղատնտեսական դանազան մեքենաներ՝ կալսիչներ, տրակտորային շարքացաններ, սերմազտիչներ և շատ այլ փարդ և պարզ մեքենաներ ու գործիքներ: Հնգամյակի վերջում ՄՏԿ-ները սպասարկում էին 270 կոլտնտեսություն, մշակելով կոլտնտեսային սեկտորի ամբողջ ցանքատարածության 36,4% -ը:

Գյուղատնտեսության տեխնիկական զինվածության բարձրացումը հնարավորություն է տալիս առաջին հնգամյակում ընդլայնելու ռեսպուբլիկայի ցանքատարածությունը 16% -ով, այդ թվում հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները 7 տոկոսով, իսկ տեխնիկական կուլտուրաներինը՝ 110% -ով:

Սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը գյուղատնտեսության ցանքատարածության մեջ 1928 թ. 0,9% -ից 1932 թ. բարձ-

<sup>1</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР», стр. 43.

բանում է 40,6%<sup>1</sup>-ի, բնդ սրում հացահատիկային կուլտուրաների բաժինը կազմում էր ռեսպուբլիկայի ընդհանուր ցանքերի 34,4%-ը, անխնիկական կուլտուրաներինը՝ 64,8%-ը և կերարույաներինը՝ 87,5%-ը<sup>1</sup>։

Հնգամյակի տարիներին դյուղատնտեսության կոլեկտիվացման հաջողությունների հետ միասին զգալի նվաճումներ են ձեռք բերվում համայնական անասնաբուծության զարգացման ուղղությամբ։ Այսպես, 1928 թ. հունվարին համայնացված ձիերի գլխաքանակը հասնում էր 0,2 հազարի, իսկ 1932 թ. հունվարին՝ 11,3 հազարի, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նույն ժամանակամիջոցում 2,2 հազարից հասնում է 107,5 հազարի, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 6,3 հազարից բարձրանում է մինչև 167,1 հազարի, իսկ խոզերինը՝ 1,0 հազարից հասնում է 9,6 հազար գլխի<sup>2</sup>։

Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Սովետական Միության կառավարության ձևոնարկած միջոցառումների շնորհիվ, կոլտնտեսային անասնաբուծության զարգացման և կոլտնտեսային ֆերմաների կազմակերպման ուղղությամբ զգալի բեկում է առաջանում ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում։ Հնգամյակի ընթացքում ռեսպուբլիկայում կազմակերպվում են 422 անասնապահական և կաթնասպարանքային ֆերմաներ, որոնցում բնդգրկված ձիերի քանակը 1932 թ. վերջում հասնում էր 1,6 հազարի, խոշոր եղջերավոր անասուններինը՝ 29,4 հազարի, մանր եղջերավորներինը՝ 74,6 հազարի, իսկ խոզերինը՝ 11,4 հազար գլխի<sup>3</sup>։

Հայաստանի անասնաբուծության զարգացման լնագավառում, 1930 թ. հունվար-մարտ ամիսների համեմատությամբ առաջին հրնգամյակի վերջում որոշ վերելք է տեղի ունենում։ Սակայն այդ բոլորը դեռևս բավարար չինելուց շատ հեռու էր։ Այդ իսկ պատճառով անասնաբուծության զարգացման սրտբլեմը հետագա տարիներին շարունակում էր մնալ պարտիայի և կառավարության ուշադրության կենտրոնում, որպես մեծագույն կարևորություն ունեցող խնդիր։

<sup>1</sup> Տե՛ս Статистический сборник „15 лет Советской Армении в цифрах“, стр. 136.

<sup>2</sup> Տե՛ս „Соцстроительство АрмССР“, стр. 80.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 80 և 81։

Այդպիսով, թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության քննադատում առաջին հնգամյա պլանը հանդիսացավ մեր երկրում սոցիալիստական տնտեսաձևի համար լիակատար հաղթանակ նվաճելու պլան, սոցիալիզմի հաղթարշավը հետագայում է՛լ ավելի մեծ թափով առաջ մղելու հիմք: Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի աննախընթաց աճման, երկրի հացահատիկային շրջաններում համատարած կուլեկտիվացման ծավալման և կուլակության սրպես զասակարգի վերացման քաղաքականության հիման վրայ լուծվեց «ով-ուս» հիմնական հարցը հօգուտ սոցիալիզմի: Առաջին հնգամյակի ավարտումով կառուցվեց սոցիալիզմի հիմքը մեր երկրում:

#### գ) Սովետական առևտրի զարգացման և աշխատավորների նյութական դրուրյան բարելավման բնագավառում

Սոցիալիստական ինդուստրիայի հաջողությունները, գյուղի մասնիկ ասրանքային տնտեսությունների մեծամասնության անցումը սոցիալիստական արտադրության ձևին, բանվոր զասակարգի և գյուղացիության արտադրական ղողումը, որը դարձավ գյուղի և քաղաքի մերձեցման հիմնական ձև, ինչպես և լայն սպառման ասպրանքների արտադրության ավելացումը՝ այս բոլորը միասին վերցրած առաջին հնգամյակի ժամանակամիջոցում նոր աստիճանի բարձրացրին սովետական առևտուրը:

Սովետական առևտուրը Հայկական ՍՍՌ-ում աճեց և ամրացավ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ միասին: Ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում պետական և կոոպերատիվ առևտուրը իշխող դիրք գրավեց հնգամյակում, լուրջ հաջողությունների հասնելով առևտրի բնագավառից մասնավորին դուրս մղելու գործում:

Լայն սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության զարգացումը առաջին հնգամյակում, ինչպես ընդհանուր միութենական մասշտաբով, այնպես էլ Անդրֆեդերացիայում և առանձին ռեսպուբլիկաներում նշանակալի դեր կատարեց սովետական առևտրի ծավալման գործում: Ինչպես ցույց ենք տվել նախորդ էջերում, Հայաստանի թեթև, սննդի և կոոպերատիվ արդյունաբերության բնագավառում հնգամյակում կատարած կասյիտալ ներդրումները նպաստեցին այդ ճյուղերի զարգացմանը: 1928 թվականի համեմա-

տուձյամբ թեթև արդյունաբերութեան համախառն արտադրանքը հնգամյակի վերջում ավելացավ 649,8 տոկոսով, սննդի արդյունաբերութեան արտադրանքը՝ մոտ 4,5 անգամ, տեղական արդյունաբերութեան արտադրանքը ավելի քան 4,9 անգամ, իսկ կոտակերատիվ արդյունաբերութեան համախառն արտադրանքը ավելի քան 5 անգամ:

Լայն սպառման շառարկաների և սննդամթերքների արտադրութեան աճի մասին որոշ պատկերացում է տալիս ռեսպուբլիկայի սննդի արդյունաբերութեան ճյուղերից պահածոների, գինու և ծխախոտի արտադրութեան չափը: 1927—1928 թվականներին պահածոների արտադրութեան ձեռնարկութունները արտադրել են 1,1 միլիոն պայմանական տուփ, իսկ 1932 թ. նրանց արտադրութունը կազմել է 12,4 միլիոն պայմանական տուփ: Եթե 1927—1928 թթ. խաղողից պատրաստվել է 15,8 հազար հեկտոլիտր գինի, ապա 1932 թվականին արտադրվել է 68,2 հազար հեկտոլիտր: Ծխախոտի պլանակներ 1927—1928 թթ. արտադրվել է 40,8 միլիոն հատ, իսկ 1932 թ. 565,6 միլիոն հատ: Զգալի չափով ավելացել էր նաև յուղի, պանրի, հրուշակեղենի, մսի և այլ մթերքների արտադրութունը:

Տեքստիլ և տրիկոտաժի արդյունաբերութեան բնագավառում համախառն արտադրանքի աճը նույնպես հաստատում է առաջին հնգամյակում լայն սպառման ապրանքների արտադրութեան վերելքի մասին: Բամբակյա գործվածքի արտադրութունը 1932 թ. գերազանցում է 1927—1928 թթ. մակարդակը չորս և կես անգամ: Եթե 1927—1928 թթ. Հայաստանի պետական արդյունաբերութունը չէր արտադրել և ոչ մի մետր մետաքսյա գործվածք, ապա 1932 թ. արտադրեց 8,1 հազար մետր: Այս տվյալները ցույց են տալիս, որ ռեսպուբլիկայում արտադրվող լայն սպառման ապրանքները լրացնում էին միութենական մյուս քաղաքներից և ռեսպուբլիկաներից կենտրոնացված կարգով ապրանքամատակարարման այն հսկայական քանակը, որ ստանում էր Հայաստանը: Բնակահարար ապրանքային մասի ավելացումը պետք է նպաստեր և ապրանքաշրջանառութեան բարձրացմանը: Մանրածախ առևտրի դժուր կատարված ապրանքաշրջանառութեան ծավալումը աշխատավորների նյութական դրութեան բարելավման անմիջական ցուցանիշներից մեկն է հանդիսանում:

Սոցիալիստական հատվածի աննախընթաց նվաճումները, տնտեսութեան բոլոր ճյուղերից մասնավոր կապիտալիստական էլեմենտների արտամղումը անհրաժեշտ նախադրյալներ են ստեղ-

ծում աշխատավորների եկամուտները ավելացնելու, նրանց նյութա-  
կան, կենցաղային ու կուլտուրական պայմանները է՛լ ավելի բարն-  
լավելու համար: Բարձրանում է աշխատավորների գնոգոնակու-  
թյունը, որն իր հերթին նպաստում է պետական և կոոպերատիվ  
առևտրի ծավալմանը թե՛ բազաբում, թե՛ գյուղում:

Այսպես, մանրածախ ապրանքաշրջանառությունը հնգամյակի  
ընթացքում 67,5 միլիոն ուրբուց բարձրանում է 201,0 միլիոն  
ուրբու: Առաջին հնգամյակում զգալի աճ է կատարվում հասարա-  
կական սննդի շրջանառության ասպարեզում: Ռեսպուբլիկայի հա-  
սարակական սննդի հիմնարկների շրջանառությունը քաղաքում  
հնգամյակի սկզբի մակարդակը 1933 թ. գերազանցում է բա-  
սանգամ, իսկ գյուղում՝ ավելի քան քսան անգամ: Հնգամյակի վեր-  
ջերին սկիզբ է առնում կուլտեսեսային առևտուրը, որը մեծ նշանա-  
կություն է ունենում քաղաքների բնակչության մատակարարման  
գործը բարելավելու ուղղությամբ:

Առաջին հնգամյակի տարիներին ակնառու զարգացում է ունե-  
նում կոոպերատիվ առևտուրը, աճում է աշխատավորների կոոպե-  
րացումը և առևտրի ցանցը: Հայաստանի կոոպերացիան՝ Հայկոոպը,  
1928 թ. ընդգրկում էր հասակավոր աշխատավորների 30 ասիստը,  
իսկ 1932 թ. այն ավելի քան եռապատկվում է: Այդ ժամանակամի-  
ջոցում առևտրական կետերի թիվը 472-ից հասնում է 1567-ի:

Բանվորների և ծառայողների նյութական դրուժյան բարելավ-  
ման ցուցանիշ էր հանդիսանում յուրաքանչյուր շնչին ընկնող ապ-  
րանքաշրջանառության դումարի չափի աճը, որը 1930 թվականին  
71 ուրբուց 1932 թվականին հասնում է 185 ուրբու: Բացի Հայ-  
կոոպի ցանցից, զգալի զարգացում է ունենում պետական առևտրի  
ցանցը: 1929 թ. հունվարի 1-ին Հայառը ուներ 64 առևտրական  
կետ, իսկ 1932 թվականի նույն ամսին այն արդեն հասնում էր  
106-ի<sup>2</sup>:

Մանրածախ առևտրի հետ միասին, զգալիորեն ծավալվում էր  
նաև մեծածախ առևտրի ցանցը: Բացի Հայկոոպի և Հայառի մեծա-  
ծախ բազաներից, ռեսպուբլիկայում կազմակերպվում են մի շարք  
նոր հիմնարկներ, այդ թվում՝ Սոյուզխլոպկոսբիտ, Սոյուզտրիկո-  
տաժ, շեկոսբիտ, բեդինոտրեստ և այլն, որոնց թիվը 10-ից անց-  
նում էր:

<sup>1</sup> Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934)՝  
Սովետների VIII-րդ համագումարում», էջ 95:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ, ԿՊԱ, ֆ. 113, գ. 2214, թ. 1—5:

Բանվորների և ծառայողների մատակարարման գործը ռարի-  
լավելու նպատակին էին ծառայում ապակենտրոնացված մթերոսմ-  
ները, արտադրական ձեռնարկություններին և սովետական հիմ-  
նարկներին կից, ստեղծված մերձքաղաքային տնտեսությունները և  
այլն:

Այսպիսով, հնգամյակի տարիներին, արդյունաբերության և  
գյուղատնտեսության արտադրանքի նկատելի աճի հետևանքով  
առաջանում է նաև ապրանքային ռեսուրսների աճ, որը բանվորների  
և գյուղացիների պահանջմունքների բավարարման հետ միասին  
կարևոր դեր է կատարում քաղաքի և գյուղի միջև կատարվող ապ-  
րանքաշրջանառությունը ընդարձակելու ասպարեկում: Սովետական  
առևտրի ծավալումով քաղաքի և գյուղի արտադրական ղողմը,  
որպես հիմնական ձևի, լրացվում է ապրանքային ղողմով, որը  
ավելի էր ամրացնում նրանց կապը:

Մեր կրկրի բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորները,  
հանդիսանալով սոցիալիստական տնտեսության անտիվ շինարար-  
ներ, հսկայական խանդավառություն ցուցաբերեցին իրենց բար-  
օրության ավելյուրը հանդիսացող սոցիալիստական էկոնոմիկայի  
հիմքի կառուցման գործում: Տնտեսական և կուլտուրական շինարար-  
ության հաջողությունների բազայի վրա է՛լ ավելի բարելավվեց աշ-  
խատավորների նյութական գրությունը:

Հնգամյակի ավարտման շնորհիվ աշխատավորների նյութական  
գրության մեջ առաջացած բարելավումը նախ և առաջ արտահայտ-  
վեց գործադրիության ռնչացումով քաղաքում, վախի վերացումով  
վաղվա օրվա նկատմամբ բանվորների մեջ, և աղքատություն ու  
պատույթի դմ առաջացնող պատճառների վերացումով գյուղում:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ծավալված և  
հսկայական թափով առաջ ընթացող սոցիալիստական շինարարու-  
թյունը մեծապես խթանեց, ինչպես Սովետական Միության, այնպես  
էլ Հայկական ՍՍՄ բանվորների ու ծառայողների քանակային աճը:  
Ռեսպուբլիկայի բանվորների և ծառայողների քանակը հնգամյակի  
սկզբում 42,473 մարդուց 1932 թ. հասավ 93.996 մարդու: Դրա հետ  
միասին մեծ փոփոխություն կատարվեց բանվորական ուժի կազմի  
մեջ, որը իր հերթին արտացոլում էր սոցիալիստական ինդուստրաց-  
ման ընթացքը:

<sup>1</sup> Տե՛ս «Состроительство АрмССР», стр. 12.

Արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 1928 թ. 9593-ից հասնում է 18595-ի՝ 1932 թ.: Շինարարության մեջ աշխատողների քանակը նույն ժամանակամիջոցում 6088-ից բարձրանում է 19293-ի<sup>1</sup>: Եթե հնգամյակի սկզբում գյուղատնտեսական բանվորների հիմնական մասը՝ գյուղի վարձու բանվորները՝ բառարկներն չեն, ապա հնգամյակի վերջում դրանց բացարձակ մեծամասնությունը սովորեն երում, մեքենատրակտորային կայաններում և անասառային տնտեսության մեջ աշխատող, հիմնականում ինդուստրիալ տիպի բանվորներ էին, ինչպես օրինակ, տրակտորիստները, վերանորոգման արհեստանոցների բանվորները և այլն:

Հայաստանի բանվոր դասակարգի հիմնական միջուկը կազմում էր տեղական կադրը, որը աճել և տեխնիկական որակավորում էր ստացել երկրի ինդուստրացման հետ միասին, մանավանդ առաջին հնգամյակի տարիներին և հետագայում:

1928—1932 թթ. ոչ միայն ամբողջովին վերանում է գործադրությունը և ամբողջ ազատ բանվորական ուժը ընդգրկվում է արդյունաբերության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում, այլ և բանվորական ուժի նոր, հսկայական պահանջ է առաջանում, շնորհիվ արդյունաբերության բուռն զարգացման և նոր շինարարության ծավալման: Արտադրության մեջ ներդրում է մեծ քանակությամբ նոր բանվորական ուժ, որի աղբյուրներն էին հանդիսանում մի կողմից քաղաքի բնակչությունը՝ երիտասարդությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ու տեխնիկումների շրջանավարտները, տնայնագործները, մասնավոր ձեռնարկությունների ու արհեստանոցների վարձու աշխատողները, մինչ այդ արտադրության մեջ շաշխատած կանայք, իսկ մյուս կողմից, գյուղական բնակչությունը, գլխավորապես կոլտնտեսականները, որոնք արտադրություն էին դալիս կազմակերպված, պայմանագրային կարգով:

Հատկապես հիշատակելի է արտադրության մեջ հնգամյակի ընթացքում կանանց ուժի ընդգրկման ինտենսիվ ընթացքը: 1929—1932 թթ. ժամանակամիջոցում ժողովրդական տնտեսության մեջ աշխատող կանանց թիվը վեց հազարից բարձրանում է մինչև քսաներկու հազարի, կամ աճում է ավելի քան 262%-ով: Կանանց տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ աշխատողների թվի համեմատությամբ բարձրանում է 29,3 տոկոսի, շինարա-

<sup>1</sup> ՏՆ՝ „Соцстроительство АрмССР“, стр. 12.

րության մեջ՝ 4,2% -ի, իսկ տրանսպորտում և կապի բնագավառում՝ 8,7%<sup>1</sup>:

Շինարարական աշխատանքների բնագավառում սեզոնայնության զգալի կրճատման շնորհիվ ավելանում է կառուցող բանվորների մշտական աշխատանքով զբաղված կադրի կազմը, իսկ նոր կառուցումներում որոշ պրոցեսների մեքենայացումը և նոր մեխանիզմների արմատավորումը պայմանավորում է նոր պրոֆեսիաների առաջացումը շինարարության մեջ:

Բանվորական ուժի տեխնիկական դիտելիքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ նշանակալի դեր են ունենում արտադրության նոր ճյուղերի առաջացումը, գոյություն ունեցող ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցումը, որոնք թիվազրույթով էին նոր որակյալ կադրերի ընդլրկումը արտադրության մեջ: Բացի բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատություններից և տեխնիկումներից եկող կադրերից, հոգ էր տարվում նաև բարձրացնելու բանվորների և միջին որակի կադրերի տեխնիկական որակը՝ տեխնիկական ուսուցման տարրեր ձևերի, կարճատև կուրսերի, ֆաբրիկաների, խոշոր գործարաններին կից գործող տեխնիկայի տիրապետման դպրոցների միջոցով:

Արդյունաբերական հին ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցումն ու վերասարքավորումը և նոր ձեռնարկությունների գործարկումը, բանվորների որակավորումը, նրանց արտադրական նախաձեռնության բարձրացումը, սոցմրցման և հարվածանության աճումը մի կողմից, մեկ բանվորի միջին էներգազինվածության զգալի ավելացումը՝ մյուս կողմից, նպաստում էին բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը: Այսպես, առաջին հնգամյակի տարիներին աշխատանքի արտադրողականության բարձրացումը արդյունաբերության մեջ միջին հաշվով կազմում է 28,1%: Ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության ձեռնարկություններում մեկ բանվորի տարեկան միջին արտադրանքը 1927—1928 թթ. համեմատությամբ հնգամյակի վերջում աճ է տալիս 113,5%, թևթև արդյունաբերության ձեռնարկություններում՝ մոտ 71,4%, իսկ սնունդ-համր արդյունաբերության մեջ՝ մոտ 82%<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934)՝ Սովետների VIII համագումարին», էջ 105—107:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊՍ, ֆ. 46/113, դ. 2217 թ., 1—48:

Աշխատանքի կազմակերպումը, արտադրողականության բարձրացումը և արտադրության տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավումը, ներքին ռեսուրսների մոբիլիզացումը, խնայողությունն ուսումնական կիրառումը նպաստում են նկատելիորեն իջեցնելու արտադրանքի խնքնարժեքը, բարձրացնելու նրա որակը և ավելացնելու ապրանքների տեսակների թողարկումը:

Բանվորների բարեկեցության բարելավման կարևոր ցուցանիշներից մեկը աշխատավարձի մակարդակի բարձրացումն էր: Արդյունաբերության մեջ աշխատող բանվորի միջին տարեկան աշխատավարձը հնգամյակի սկզբի մակարդակը հնգամյակի վերջում գերազանցում է ավելի քան երկու անգամ, շինարարության բնագավառում՝ ավելի քան 2,6 անգամ, լուսավորության բնագավառում ավելի քան 2,4 անգամ և այլն, իսկ ընդհանուր ռեսուրսը՝ ավելի քան 2,1 անգամ<sup>1</sup>:

1928 թ. ռեսուրսիկալի ընդհանուր աշխատավարձի ֆոնդը 30,1 միլիոն սուբյուց հնգամյակի վերջում հասնում է 144,8 միլիոն ռուբլու կամ գերազանցում է 4,8 անգամ: Արդյունաբերության աշխատողների աշխատավարձի ֆոնդը նույն ժամանակամիջոցում ավելանում է ավելի քան 4 անգամ, շինարարության բնագավառում՝ ավելի քան 8 անգամ և այլն<sup>2</sup>, որը բացատրվում էր մի կողմից աշխատողների աշխատավարձի միջին չափի բարձրացումով, իսկ մյուս կողմից արդյունաբերության և շինարարության աննախընթաց ծավալման շնորհիվ բանվորների նոր կոնտինգենտի ավելացումով:

Հնգամյակի տարիներին պետության և հասարակական կազմակերպությունների կողմից, աշխատավարձից դուրս, բանվորներին ու ծառայողներին վճարվող միջոցները՝ սոցալի, առողջապահության, լուսավորության, քնակարանային — կոմունալ շինարարության և այլ գծերով կատարվող ծախսերը զգալի չափով նպաստում էին բարձրացնելու բանվորների և ծառայողների նյութական պայմանների մակարդակը: Եթե դրան դումարենք նաև այն միջոցները, որոնք ծախսվում էին աշխատավորների սոցիալ-կենցաղային սպասարկման գծով, այդ թվում մանկամսուրների, մանկապարտեզների, հանգստի տների և սանատորիաների բնագավառում կատարվող ներդրումները, ապա պատկերը լրիվ կլինի:

Աշխատավորների նյութական բարեկեցության պայմանների անշեղ բարձրացման հետ միասին աճեց նաև Սովետական Հայաս-

<sup>1</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР», стр. 14.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 13:

տանի բնակչությունը, որը 1934 թ. կազմեց 1.177.800 մարդ: Միայն 1928—1934 թթ. ընթացքում բնակչության աճը կազմեց 22,6%: Առանձնապես աչքի էր ընկնում քաղաքային բնակչության աճը, որը 1928 թ. 192,9 հազարից 1934 թ. հասնում է 300 հազարի<sup>1</sup>:

Փոխվում է Հայաստանի քաղաքաների դեմքը շնորհիվ այն հակայական արդյունաբերական և բնակարանային շինարարության, որ կատարվում է ինչպես մինչև 1928 թ., այնպես էլ հետո՝ մանավանդ հնդամյակների տարիներին: Արդյունաբերության զարգացման զուգընթաց միանգամայն վերաշինվում են Երևանը և Լենինականը: Առաջ են գալիս նոր, սոցիալիստական քաղաքներ և բանվորական ավաններ, ինչպիսիք են Ղափանը, Հոկտեմբերյանը, Արթիկ-տուֆը, Անի-սեմզան և ուրիշներ: Կերպարանափոխվում են Ալավերդին, Ղարաբլիտան, Դիլիջանը, Գորիսը և մյուս շրջանների կենտրոնները:

Երևանի շուրջը, միանգամայն ամալի վայրերում, առաջանում են քաղաքատիպ ավաններ՝ Նոր Արաբկիրը, Բուժանիան և մյուսները, որոնք հետագայում ընդարձակվելով միանում են քաղաքին:

Աշխատավորների նյութական և կենցաղային սլայմանները բարելավելու ուղղությամբ խոշոր նշանակություն ունեւր նաև բնակարանային շինարարությունը, կոմունալ սպասարկման բարելավումը, քաղաքի բարեկարգումը և այլն:

Առաջին հնդամյակում բնակարանային շինարարության գծով կատարված կապիտալ ներդրումները կազմում են 22,1 միլիոն ռուբլի, որի շնորհիվ զգալի ծավալ է ընդունում բնակարանային շինարարությունը Երևանում, Լենինականում, Կիրովականում, Արթիկ ավանում, Անի-սեմզայում, Ալավերդում, Ղափանում, Քանաքեռէթիսի, Դավալուի ցեմենտի գործարանի և մյուս բանվորական ավանների շրջակայքում: Այդ բոլորի շնորհիվ ընդարձակվում է բանվորների և ծառայողների բնակելի տարածությունը: Արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում աշխատող բանվորների և ինժեներատեխնիկական կազմի մի զգալի մասը ապահովվում է նոր բնակելի տարածությամբ:

Պարտիան և կառավարությունը առանձնապես մեծ ուշադրություն էին դարձնում նաև քաղաքների կոմունալ շինարարության մյուս բնագավառների վրա: Նախասովետական Հայաստանի քա-

<sup>1</sup> Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934) Սովետների VIII համագումարին», էջ 107:

դաքները՝ Երևանը և Ալեքսանդրապոլը (Լենինական) համարյա  
դուրի էին կոմունալ տնտեսության մի շարք անհրաժեշտ պայման-  
ներից: Միայն Սովետական իշխանության օրոք քաղաքների կոմուն-  
նալ տնտեսությունը դրվեց ուշադրության կենտրոնում:

Առաջին հնգամյակում Հայաստանի կոմունալ տնտեսության  
զարգացման համար ծախսվեց 12,7 միլիոն ռուբլի: Միանգամայն  
նոր նյութական-տեխնիկական հիմքի վրա կազմակերպվեց Երևանի  
քաղաքային տնտեսությունը, հնգամյակի վերջում շահագործման  
հանձնվեցին մի շարք խոշոր կոմունալ կառուցումներ, ինչպիսիք էին  
քաղաքային էլեկտրաբարձը, նոր ջրմուղը, և այլն: Ծավալվում էր  
քաղաքի ֆոր կոյուղու կառուցումը, շարունակվում էր քաղաքի բա-  
րեկաբոսը և այլն:

Այսպիսով, Սովետական իշխանությունը, Կոմունիստական  
պարտիայի ղեկավարությամբ վիթխարի նվաճումներ ձեռք բերեց  
ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակա-  
ռուցման, նրա տեխնիկական վերադինման բնագավառներում, որի  
քաղաքի վրա էլ հնարավոր դարձավ բարձրացնելու սովետական ժո-  
ղովրդի նյութական, կենցաղային և կուլտուրական կյանքի պայ-  
մանները:

Առաջին հնգամյա պլանը, հետևաբար, Սովետական Միության  
նում սոցիալիստական տնտեսաձևի հիմքի կառուցման և նրա հաղ-  
թանակի առաջնություն պլան էր, սոցիալիզմի հաղթարշավը հետա-  
դաշում նոր թափով ծավալելու համար անհրաժեշտ տեխնիկա-  
տնտեսական բազա ստեղծելու պլան:

Սովետական ժողովուրդը թե՛ տնտեսական շինարարության, թե՛  
կուլտուրայի բարձրացման և թե՛ աշխատավորների նյութական  
պայմանների բարելավման բնագավառներում նոր առաջընթաց կա-  
տարեց երկրորդ հնգամյակում և հետագա տարիներին:

Ամփոփելով հնգամյակի արդյունքները հունվարյան պլենումը  
նշեց այն դիտավոր ուժերի մասին, որոնք ապահովեցին հնգամյակի  
կատարումը: Հնգամյա պլանի կատարումն ու գերակատարումը  
ապահովվեց նախ և առաջ շնորհիվ բանվորների և կոլանտեսա-  
կանների միլիոնավոր մասսաների ցուցարերած ակտիվության, ար-  
տադրական խանդավառության ու նախաձեռնության: Այդ մասսա-  
ները ինժեներա-տեխնիկական ուժերի հետ միասին հսկայական  
թափով դարգացրին սոցիալիստական մրցումն ու հարվածային  
շարժումը, որը պլանների կատարման խթան հանդիսացավ: Այնու-

Նեակ հնգամյակի կատարումը հնարավոր ևզավ պարտիայի և կա-  
ռավարութեան հաստատուն դեկավարութեան, որոնք զլիսավորում  
էին այն պայքարը, որ մղվում էր առաջընթացի ճանապարհին ծա-  
ռացած դժվարութեանները վերացնելու համար: Վերջապես հաղթա-  
նակն ապահովվեց շնորհիվ անտեսութեան սովետական սխտեմի  
հատուկ արժանիքների և առավելութեանների, որի մեջ թաքնված  
են վիթխարի հնարավորութեաններ ամեն տեսակի դժվարութեան-  
ները հաղթահարելու համար: Այսպիսով, ինչպես նշեց Հունվարյան  
սլէնումը, պարսիան հնգամյակը հաղթականորեն ավարտեց  
մասսաների «ստեղծագործական ախտիւթյան ու արտադրա-  
կան նախաձեռնութեան անշեղ աճման հիման վրա, ավելի ու  
ավելի մեծ թվով բանվորների ու կոլտնտեսականների սոցիալիս-  
տական շինարարութեան հարվածայինների շարքերը ներդրավելու  
հիման վրա, ծավալուն սոցմրցման հիման վրա»<sup>1</sup>:

#### զ) Երկրորդ հնգամյա պլանը և նրա կատարման համար մղվող պայքարը (1933—1935)

ՍՍՌՄ-ի անսպառ բնական հարստութեանները, սոցիալիստա-  
կան շինարարութեան բոլշեիկյան տեմպերը, բանվորական և կոլ-  
տնտեսային լայն մասսաների աճող ախտիւթյունն ու կոմունիս-  
տական պարտիայի քաղաքական ճիշտ գիծն ապահովեցին լրիվ  
չափով Երկրի արտադրողական ուժերի նոր, է՛լ ավելի վիթխարի վե-  
րելը 2-րդ հնգամյակում:

1934 թ. հունվարին դումարվեց պարտիայի XVII համագումարը,  
որն ամփոփեց ՍՍՌՄ-ում սոցիալիստական էկոնոմիկայի կա-  
ռուցման բնագավառում ձեռք բերված հաղթանակների հանրագու-  
մարը: Պարզվեց, որ անտեսութեան սոցիալիստական սխտեմի տե-  
սակարար կշիւր արդյունաբերութեան բնագավառում կազմում էր  
ամբողջ երկրի արդյունաբերութեան 99%: Սոցիալիստական գյուղա-  
տնտեսութեանը, հաշված նաև հացահատիկային կուլտուրաների  
դանքատարածութեանը, ընդգրկել էր երկրի բոլոր ցանքերի 84,5%:

Ապրանքաշրջանառութեան բնագավառից կապիտալիստական  
տարրերը ամբողջովին դուրս էին մղվել: Երկրի էկոնոմիկայից վե-

<sup>1</sup> «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 227:

րացվել էին նահապետական, մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմի և պետական կապիտալիզմի կացութաձևերը, իսկ մանր ապրանքային արտադրությունը հետ էր մղված երկրորդական դիրքերը: Այդպիսով, սոցիալիստական կացութաձևը անբաժան կերպով տիրապետող էր դարձել ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Համագումարը քննեց և հաստատեց Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա<sup>1</sup> 1933—1937 թթ. սլանը, որի խնդիրներն ավելի մեծ էին, բան առաջին հնգամյակի խնդիրները:

Երկրորդ հնգամյակի քաղաքական հիմնական խնդիրներն էին՝ կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացումը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը ինչպես էկոնոմիկայի, այնպես էլ մարդկանց գիտակցության մեջ, երկրի բոլոր աշխատավորներին սոցիալիստական հասարակության ակտիվ և գիտական կառուցողներ դարձնելը<sup>2</sup>:

Պարագիտային դասակարգերի մնացորդների վերջնական վերացումը, ժողովրդական եկամտի ընդհանուր աճը և սոցիալիստական տնտեսության զարգացման նպատակներին նրա օգտագործումը պետք է ապահովելին 2-րդ հնգամյակում բանվորների և կոլտրնտեսականների բարեկեցության էլ ավելի արագ վերելք, աշխատավարձի զգալի բարձրացում, աշխատավորների սպառման մակարդակի ավելացում 2—3 անգամ<sup>3</sup>:

Այդ վիթխարի խնդիրները կարող էին իրականացվել միայն ամբողջ ժողովրդական տնտեսությունը ծավալուն տեխնիկական վերակառուցման ենթարկելու միջոցով: Հետևաբար երկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրն էր ամբողջ ժողովրդական տնտեսության վեքալառուցման ավարտումը, որի վճռական նախապայմանը հանդիսանում էր նոր տեխնիկայի և նոր արտադրության յուրացումը<sup>3</sup>:

Ելնելով դրանից Համագումարը մշակեց երկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու և արտադրանքի աճի հոյակապ ծրագիր: Համագումարը աահմանեց ամբողջ արդյունարևրության արտադրանքի ծավալը հրն-

<sup>1</sup> Տե՛ս «ՄՄԿԳ-ն... բանաձևերում և որոշումներում», [I] մաս, էջ 254:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

գամյակի վերջում 92,7 միլիարդ ուրբլի: Այդ նշանակում էր, որ երկրորդ հնգամյակի վերջում արդյունաբերության արտադրանքը 1932 թ. շափի համեմատությամբ ավելանալու էր 2,1 անգամ, և մոտ 8 անգամ գերազանցելու էր արտադրության նախապատերազմյան մակարդակը:

Կապիտալ շինարարության համար նախատեսված ընդհանուր ներդրումների ծավալն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ երկրորդ հնգամյակում կազմելու էր 133,4 միլիարդ ուրբլի: Արդյունաբերության ասպարեզում նախատեսվում էր ներդնել 69,5 միլիարդ ուրբլի, առաջին հնգամյակի 25 միլիարդ ուրբլու դիմաց, այդ թվում արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության բնագավառում ներդրվելու էր 53,4 միլիարդ ուրբլի, կամ 2,5 անգամ ավելի քան նախորդ հնգամյակում<sup>1</sup>:

Սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության բնագավառում հիմնական ներդրումները կազմելու էին 16,1 միլիարդ ուրբլի, կամ 4,6 անգամ ավելի քան առաջին հնգամյակում<sup>2</sup>:

Ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի աճը, նախորդ հնգամյակի վերջում եղած արտադրանքի շափի համեմատությամբ, սահմանվեց կրկնապատիկը՝ 26,2 միլիարդ ուրբլի: Կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ կազմելու էին 15,2 միլիարդ ուրբլի, 1,5 անգամ ավելի, քան առաջին հնգամյակում<sup>3</sup>: Գյուղատնտեսության զլխավոր խնդիրները երկրորդ հնգամյակում հանդիսանում էին նրա կարևորագույն ձյուղերի՝ հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացումը, անասունների զլխաքանակի զգալի ավելացումը և նրանց որակական ցուցանիշների (մթերատվության, կենդանի քաշի, մոտղաշների աճեցման և այլն) բարելավումը: Գյուղատնտեսության արագ զարգացման ասպարեզումը պահանջում էր լիովին ավարտել կուլեկտիվացումը, տնտեսապես և կազմակերպչորեն ամբապնդել կոլտնտեսություններն ու սովխոզները, տեխնիկապես վերակառուցել ամբողջ գյուղատնտեսությունը:

«...Գյուղատնտեսության արտադրանքի նշված աճը, — ասվում է համադրումարի որոշման մեջ, — կարող է ձևաք բերվել միայն կուլեկտիվացումն լիովին ավարտելու և ամբողջ գյուղատնտեսության

<sup>1</sup> Տե՛ս «ՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», 111 մաս, էջ 265:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

տեխնիկական վերակառուցումն իրականացնելու հիման վրա՝ Համագումարը դիրքիկտիվ տվեց հիմնականում ավարտել գյուղատնտեսության մեքենայացումը<sup>1</sup>։

Համագումարի որոշումներում առանձնապես նշվեցին մի շարք կարևորագույն զբոսայգիներ, որոնց կենսագործումը գյուղատնտեսության մեքենայացման հետ միասին պայմաններ էին ստեղծում գյուղատնտեսության զլխավոր մշակույթների բերքատվության բարձրացման սլանային առաջադրանքներն իրականացնելու համար։

Հավանական ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա սլանով, որը ամբողջ Սովետական Միության սլանի անրաժանելի մասն էր կազմում, նախատեսվում էր ավարտել ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը։ Հսկայական թափ էր ընդունելու ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացումը։ Գործող ձևնարկությունների շարքն էին անցնելու ոչ միայն այն արդյունաբերական օբյեկտները, որոնց կառուցումը սկսվել էր առաջին հնգամյակի տարիներին, այլև կառուցվելու և գործարկվելու էին մի շարք նոր գործարաններ, ֆաբրիկաներ և էլեկտրակայաններ։

1933—1937 թթ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ նախատեսվող կապիտալ միջոցների ներդրումը գերազանցում էր առաջին հնգամյակում կատարված փաստացի ներդրումների չափը ավելի քան երեք անգամ։ Երկրորդ հնգամյակում առանձնապես զարկ էր տրվելու գունավոր մետաղաձուլությանը, որպես ծանր արդյունաբերության կարևոր ճյուղի։ Այսպես, Ղափանի պղնձարդյունաբերության մեջ կատարվելիք ներդրումը կազմելու էր մոտ 85 միլիոն ռուբլի, ընդ որում 39,7 միլիոն ռուբլին ծախսվելու էր արտադրության՝ հանքահանույթը և պղնձաձուլական գործարանը տեխնիկական նոր սարքավորումով հասցնելու ուղղությամբ, իսկ մնացած գումարը հատկացվելու էր նոր օբյեկտների կառուցման, բանվորների կենցաղային և կուլտուրական պայմանների բարելավման նպատակներին։ Պղնձի արտադրությունը Ղափանի հանքերում 1933 թ. 7815 տոննայից 1937 թ. հասցվելու էր 34,6 հազար տոննայի, իսկ հանքաքարի հանույթը՝ 234,7 հազար տոննայից հասնելու էր 3.532,0 հազար տոննայի։

<sup>1</sup> «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 200։

<sup>2</sup> Տե՛ս նույն ակղում, էջ 261։

Այսօրիցու պղնձարդյունարերութեան մեջ նախատեսուում էր ներդնել 36 միլիոն ուրուց ավելի գումար: Այսօրիցու հին և նոր պղնձածուլական գործարանների արտադրանքը երկրորդ հնգամյակի վերջում հասնելու էր 66.130 տոննայի, առաջին հնգամյակում արտադրված 9654 տոննայի դիմաց: Այսօրիցու, առաջին հնգամյակում Այսօրիցու պղնձածուլարանի տված 10.368 հազար ուրու արտադրանքը երկրորդ հնգամյակի վերջում կազմելու էր ավելի քան 56,4 միլիոն ուրու:

Երկրորդ հնգամյակում առանձնակի տեղ էր գրավում նաև քիմիական արդյունաբերութեան զարգացումը: Այսօրիցու էր մի քանի խոշոր ձեռնարկութունների կառուցումը, որի շնորհիվ քիմիական արդյունաբերութունը ռեսուրսիկայում գրավելու էր առաջավոր տեղերից մեկը: Խոշոր շափով լայնանալու էր շինանյութերի արդյունաբերութունը: Նոր հսկայական վերելք էր տեղի ունենալու հիդրոէլեկտրակայանների արտադրութեան զարգացման բնագավառում: Այսօրիցու էր Մեան—Հրազդան կասկադի առաջնեկի՝ Քանաքեռի հսկայական շինարարութունը, որը գործարկվող Չորագետի երկրորդ և երրորդ ագրեգատների հետ միասին կազմելու էին քիմիական արդյունաբերութեան և արդյունաբերութեան մյուս ճյուղերի զարգացման կարևորագույն էներգետիկ բազան Հայաստանում:

Մի շարք շրջաններում կառուցվելու էին տեղական նշանակութուն ունեցող էլեկտրակայաններ:

Մեծ հեռանկարներ էին բացվում թեթև արդյունաբերութեան զարգացման համար: Այդ պատկերելու համար հարկ ենք համարում բերել մի քանի տվյալներ: Թեթև արդյունաբերութեան զարգացման թափը երկրորդ հնգամյակում բնորոշվում էր առաջին հերթին կապիտալ ներդրումների շափով, որը նախագծվում էր 162,4 միլիոն ուրու սահմաններում: Այդ ներդրումների կեսից ավելին՝ 89,5 միլիոն ուրուին արամադրվելու էր արդյունաբերական շինարարութեան նպատակներին, 47,2 միլիոն ուրուի ծախսվելու էր բնակարանային շինարարութեան վրա, կադրերի պատրաստման նպատակին հատկացվելու էր 12,1 միլիոն ուրուի, սոցիալ-կենցաղային և կուլտուրական շինարարութեան ուղղութեամբ նախատեսվում էր ծախսել 9 միլիոն ուրուի: Թեթև արդյունաբերութեան զարգացման ծավալի մասին է հաստատում նրա համախառն արտադրանքի շափը: 1932 թ. 23,7 միլիոն ուրու հասնող խառն արտադրանքի դիմաց ռեսուրսիկայի թեթև արդյունաբերու-

Յյունից 1937 թ. սպասվում էր 378,8 միլիոն ռուբլու արտադրանքը Միանգամայն ակներև է, որ թեթև արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց, ավելանալու էր բանվորների քանակը: Երկրորդ հնգամյա պլանը նախատեսում էր թեթև արդյունաբերության ձեռնարկությունների բանվորների թիվը 4900-ից հասցնել 27700-ի, կամ աճ ավելի քան 5,8 անգամ:

Թեթև արդյունաբերության մեջ աշխատող մի բանվորի միջին տարեկան արտադրանքը սառաջին հնգամյակի համեմատությամբ երկրորդ հնգամյակում աճելու էր 122,9%-ով, իսկ տարեկան միջին աշխատավարձը՝ 1932 թ. համեմատությամբ աճելու էր 62,6%-ով. պլանավորվում էր արտադրանքի ինքնարժեքը միջին հաշվով իջեցնել 33,2%-ով:

Թեթև արդյունաբերության մի շարք գործարանների կառուցման ավարտումը, գոյություն ունեցող ձեռնարկությունների վերակառուցումն ու ընդլայնումը զգալիորեն բարձրացնելու էր նրա համախառն արտադրանքի չափը, որը 1932 թ. մակարդակը գերազանցելու էր մոտ 16 անգամ:

Երկրորդ հնգամյակում խոշոր չափով դարգանալու էր նաև սննդի արդյունաբերությունը: Նախատեսվում էր ավարտել Երևանի մակարոնի, Հոկտեմբերյանի պահածոների գործարանները, Լենինականի մսի կոմբինատը, ընդարձակել Երևանի պահածոների գործարանը և ուրիշներ:

1933—1937 թթ. ժամանակամիջոցում ռեսպուբլիկայում հսկայական վերելք էր ընդունելու կոլտուրական շինարարությունը: Մեծապես բարելավվելու էր աշխատավորների բուժ-սպասարկումը, կենցաղային և կոմունալ պայմանները:

Բանվոր դասակարգի գլխավորությամբ, կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Սովետական Միության աշխատավորությունը 1933 թ. հունվարից ձեռնամուխ եղավ երկրորդ հնգամյա պլանի կենսագործման աշխատանքներին: Երկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության և կոլտուրական շինարարության բնագավառներում զրված վիթխարի խնդիրների կենսագործումը պահանջում էր ուժերի մարսիմալ լարում, մատասների գլխավոր մորիլիզացում:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը երկրի բանվոր դասակարգի, տեխնիկական ինտելիգենցիայի, տըն-

1 Տե՛ս «Յորհրդային Հայաստան», հունվար, 1933:

տեսլաբանների, կոլտնտեսային գյուղացիների, սպարտիական ու արհմիութենական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում էին այն կարևոր հանգամանքի վրա, որ ի տարբերություն առաջին հնգամյակի, երկրորդ հնգամյակը արդյունաբերության բնագավառում լինելու էր գերազանցապես նոր արտադրական ձևանարկությունները չուրացնելու հնգամյակ: գյուղատնտեսության բնագավառում՝ սովետիկներն ու կոլտնտեսությունները կազմակերպորեն ամրապնդելու հնգամյակ: Սակայն այդ հանգամանքը, անտարակույս, ոչ միայն չէր բացառում, այլ ենթադրում էր նոր, ծախվալուն շինարարության զարգացում: Իսկ այդ նշանակում էր, որ երկրորդ հնգամյակի ծրագրի կենսագործումը անհնարին կլիներ առանց նոր շինարարության լողունը նոր տեխնիկան և արտադրությունը չուրացնելու լողունով լրացնելու: Դրա հետ միասին սպարտիան մտանանշում էր, որ նոր ձևանարկությունների և նոր տեխնիկայի չուրացումը առավել մեծ դժվարությունների հետ է կապված, քան հին և վերանորոգված ֆաբրիկաների ու գործարանների օգտագործումը, որոնց տեխնիկան արդեն չուրացված էր: Հետևաբար պահանջվում էր ավելի մեծ ժամանակ նոր տեխնիկան ու արտադրությունը չուրացնելու, բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների որակը բարձրացնելու համար:

Երկրորդ հնգամյակում արդյունաբերության արտադրանքի աճը հիմնականում կատարվելու էր նոր ձևանարկությունների արտադրանքի թողարկման հաշվին, որոնց տեխնիկային դեռևս պետք էր տիրապետել, իսկ այդ իր հերթին զանգազեցնելու էր արտադրանքի աճը: Սրանից հետևում էր, որ երկրորդ հնգամյակի առաջին երկու-երեք տարիների ընթացքում չէր կարող լինել արդյունաբերության արտադրանքի աճի այնպիսի տեմպեր, ինչպիսին գոյություն ուներ առաջին հնգամյակում: Հետևապես արդյունաբերության բնագավառում շեշտը դրվում էր ոչ թե արտադրանքի քանակական աճի վրա, այլ նրա որակը լավացնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու վրա, գյուղատնտեսության բնագավառում՝ ոչ թե ցանքային տարածությունները լայնացնելու վրա, այլ բերքը բարձրացնելու, հողագործության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և աշխատանքի որակը լավացնելու վրա:

ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի և ԿԿԷ-ի 1933 թ. հունվարյան միացյալ պլենումը հաստատելով 1933 թ. երկրորդ հնգամյակի առաջին տարվա ժողովրդական տնտեսության պլանը նշեց, որ այն հանդիսանում է ՍՍՄՄ-ում սոցիալիստական հասարակարգի կառուցման

գործի հետագա զարգացման ծրագիր, ուստի այդ ծրագրի անսպասման կատարումը ապահովելու համար անհրաժեշտ է մոբիլիզացնել մեր բոլոր ուժերը, լավացնել կատարվող աշխատանքի որակը: «Երկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները՝ կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացումը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը էկոնոմիկայի և մարդկանց դիտակցության մեջ, ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը նորագույն տեխնիկական բազայի վրա, նոր տեխնիկայի և նոր ձեռնարկությունների յուրացումը, գյուղատնտեսության մեքենայացումը և նրա արդյունավետության բարձրացումը—ամբողջ սրության մը դնում են բոլոր բնագավառներում աշխատանքի որակը բարձրացնելու, առաջին հերթին կազմակերպական-պրակտիկ դեկավարության որակը բարձրացնելու հարցը»<sup>1</sup>:

Պարտիայի այս դիրքերի վրա դրվում է Հայաստանի պարտիական, հասարակական և տնտեսական կազմակերպությունների աշխատանքի հիմքում, որի կենսագործումը զգալի չափով բարելավում է տնտեսական շինարարության գործի կազմակերպումն ու ղեկավարությունը: Հայաստանի պարտիական, արհմիութենական և սովետական կազմակերպությունների մասսայական-քաղաքական ամբողջ աշխատանքը ուղղված էր երկրորդ հնգամյակի սլանային առաջադրանքների կատարումն ապահովելու, արտադրանքի որակը բարձրացնելու, արտադրության տիրապետման գործը կազմակերպելու նպատակին: Այդ խնդիրների կատարումը ապահովելու համար նոր, ավելի ուժեղ թափ է հաղորդվում սոցիալիստական մրցությանը և հարվածային շարժման առաջավոր մեթոդների արմատավորմանը արտադրության մեջ:

Համկ(բ)Պ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. միացյալ սլենդումի, XVII համագումարի որոշումները Հայաստանի բանվորների և աշխատավորների լայն մասսաների մեջ արտադրական նոր վերելք և աշխատանքային խանդավառություն են առաջացնում: Պլենումի և համագումարի արդյունքների մասսայականացման առթիվ գումարված ժողովներում և միտինգներում ընդունվում էին կոնկրետ պարտավորություններ: Նրևանի փայտամշակման առաջին և երկրորդ գործարանների բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կողմից ընդունված որոշման մեջ ասված էր, որ սոցիալիստա-

<sup>1</sup> «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 279—

կան մրցութեան ծավալման և աշխատանքի լավ կազմակերպման միջոցով կմտրելիվացվեն մեր բոլոր ուժերը և կկենսագործվեն պարտիայի գիրեկախիվները: Ելնելով այդ որոշումներից վերակազմվում և գործի են դրվում տեխնիկական տիրապետման խըմբակները, սիստեմատիկ պայքար է ծավալվում աշխատանքի կարգապահութունը բարձրացնելու համար, անխնայորեն արմատախիլ են արվում գործալքութունը, ուժեղացվում է պայքարը շվոտների և կազմալուծիչների դեմ: 1933 թ. դարձվում է արտադրողականութեան և աշխատանքի տեմպի բարձրացման տարի:

Այդպիսի կոնկրետ պարտավորութուններ են ստանձում նաև «Արարատ», Երևանի մեխանիկական, պահածոների, կաշիի, ծխախոտի և մյուս գործարանների բանվորները, Լենինականի տեքստիլագործները, Ալավերդու և Ղափանի հանքագործները, ռեսպուբլիկայի մյուս ձեռնարկութունների ինժեներատեխնիկական աշխատողներն ու բանվորները:

Հայաստանի մի քանի խոշոր շինարարութուններ Միութենական կառավարութեան որոշմամբ, մացվում են հարվածային կառուցումների շարքը, որոնց բանվորները և կառուցող մասնագետները նույնպես աշխատանքային բարձր տեմպերով աշխատելով պարտավորվեցին շինարարութունը ավարտել ընդունված ժամկետին և բարձր ցուցանիշներով: ՄՍՌՄ ժողկոմսովեաը 1933 թ. ապրիլին ընդունած իր որոշումով շինարարական կազմակերպութուններից պահանջեց ուշադրութունն ու տեխնիկական միջոցները առաջին հերթին կենտրոնացնել կապիտալ շինարարութունների այն օբյեկտների վրա, որոնց արագ գործարկումը ժողովրդական տնտեսութեան համար ուներ հատուկ նշանակութուն: Այդ որոշմամբ 1933 թ. նախատեսված կապիտալ շինարարութեան հարվածային կառուցումների ցանկի մեջ մտան Քանաքեուէսի հիդրոկայանի, Լենինականի մսի կոմբինատի կառուցումը և Ղուերի ջրանցքի շինարարութունը:

Հայկական ՄՍՌ-ում երկրորդ հնգամյակի առաջին երկու-երեք տարիներին կատարվող սոցիալիստական շինարարութեան մասըշտարի մասին պատկերացում ունենալու համար բերենք մի քանի ավլաչներ: 1933—1934 թթ. Հայաստանի ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագավառներում ներդրված գումարը կազմում է 312,2 միլիոն ռուբլի: Այդ նշանակում էր, որ երկրորդ հնգամյակի երկու տարիներին ներդրվում է մոտավորապես այնքան միջոցներ, որքան ներդրվել էր ամբողջ առաջին հնգամյակի ընթացքում: Եթե կապի-

տալ ներդրումների մեջ արդյունաբերության և էլեկտրաշինարարության բաժինը առաջին հնգամյակում իր տեսակարար կշիռով կազմել էր 42,7%, ապա երկրորդ հնգամյակի երկու առաջին տարիներին այն կազմում է 59,0%, որը հաստատում էր արդյունաբերության զարգացման ուղղությամբ կիրառվող պարտիայի գծի ճշտությունը, դիժ, որը ապահովում էր երկրի արտադրողական ուժերի արագ զարգացումը: Ինչ վերաբերում է արանսպորտին, ապա պետք է նշել, որ այստեղ շինարարությունը գգալիորեն հետ էր մնում և չէր բավարարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության հարաճուն զարգացող պահանջները, չնայած նրա փոխադրումների տարեցտարի աճող չափի յառկայությանը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես առաջին հնգամյակում, այնպես էլ երկրորդ հնգամյակի առաջին տարիներին, արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումները հիմնականում գնացել են ծանր արդյունաբերության գծով, որը կազմում էր ամբողջ ներդրումների 56,0%<sup>1</sup>: Այդ ապահովում էր ծանր արդյունաբերության առաջատար դերը ռեսպուբլիկայի ամբողջ արդյունաբերության մեջ և համապատասխանում Սովետական պետության և Կոմունիստական պարտիայի կողմից կիրառվող քաղաքականությանը:

1933—1934 թթ. արդյունաբերության և էներգետիկայի գծով կապիտալ ներդրումների մի ղգալի մասը ուղղված էր մի շարք խոշոր շինարարությունների կատարման և ավարտման նպատակին: Այսպես, օրինակ, երկու տարվա ընթացքում արդյունաբերության և էներգետիկայի լնագումարում ներդրված 184,1 միլիոն ուսրլուց Քանաբեռոգէսի շինարարության մեջ ներդրվեց 51 միլիոն ուսրլի, Կիրովի անվան կոմբինատի շինարարության գծով՝ 25 միլիոն ուսրլի, պղնձարդյունաբերության՝ 18 միլիոն ուսրլի, Ղարաքիլիսայի բիմիական կոմբինատի կառուցման մեջ՝ 2,4 միլիոն ուսրլի, ցեմենտի գործարանին տրվեց 7,3 միլիոն ուսրլի, Լենինականի մսի կոմբինատին 9,6 միլիոն ուսրլի և այլն<sup>2</sup>:

Այդ տարիներին գործարկվեցին արդյունաբերության մի շարք օբյեկտներ, որի շնորհիվ է՛լ ավելի բարձրացավ նրա առաջատար դերը երկրի ժողովրդական տնտեսության մեջ: Երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին գործող ձեռնարկությունների

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ, ԿԳԱ, ֆ. 40/113, դ. 2217, թ. 1—64:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ, ԿԳԱ, ֆ. 40/113, դ. 2217, թ. 6:

շարքն անցան Ղարաքիլիսայի Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Դավալուի ցեմենտի գործարանը, Երևանի կարի և ծխախոտի գործարանները: Նույն ժամանակամիջոցում շահագործման հանձնվեցին յոթ առանձին էլեկտրակայան, մոտ 18,2 հազար կիլովատ կարողությամբ: Միայն 1934 թ. ավարտվեցին և շահագործման հանձնվեցին Չորագէսի երկրորդ և երրորդ ազրեզատները և գյուղական մի քանի էլեկտրակայաններ: Չորագէսի հիդրոէլեկտրակայանի լրիվ գործարկման հետ միասին կառուցվեցին նրա բարձրացուցիչ և ցածրացուցիչ կայանները, ինչպես նաև ավարտվեց Չորագէս — Ղարաքիլիսա և Չորագէս — Ալավերդի բարձր լարման հաղորդման զիծը՝ 42 կիլոմետր ընդհանուր երկարությամբ: Այդ բոլորի հետևանքով 1932 թ. համեմատությամբ 1934 թվականին բավականաչափ ավելացավ սնուցման էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը, ինչպես և էլեկտրակայանների արտադրությունը, որը կազմեց 122,8 միլիոն կիլովատ ժամ, 1932 թ. 53,6 միլիոն կիլովատ ժամի զիմաց<sup>1</sup>: Արագ տեմպերով առաջ էր գնում Քանաքեռգէսի շինարարությունը: Հայկական ՍՍՌ էլեկտրիֆիկացման գործը հետզհետե լայն ծավալ էր ընդունում, որը հետևանք էր ոչ միայն երկրի հարուստ էներգետիկ հնարավորությունների լաճ օգտագործման, այլև էլեկտրակայանների փնջավորման ծրագրի հետագա իրականացման:

Մեծ աշխատանք է կատարվում երկրորդ հնգամյակի սկզբից աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու ուղղությամբ: Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու բնագավառում զգալի նվաճումներ են ձեռք բերվում արդյունաբերության որոշ ճյուղերի դժով, մասնավորապես սննդի արդյունաբերության ասպարեղում: Արդյունաբերական ձեռնարկություններում տեխնիկական վերականգնման հաջող իրականացումը, արտադրության առանձին պրոցեսների մեքենայացման բարձր մակարդակը, ձեռնարկությունների բանվորների տեխնիկական որակի բարձրացումը և արտադրության ղեկավարության բարելավումը ապահովում են շատ գործարաններում և ֆարբիկաներում արտադրողականության բարձրացման պլանային ցուցանիշների կատարումը: Չնայած այն հանգամանքին, որ արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում զգա-

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 70:

շիրեն ետ էին մնում, սակայն ընդհանուր առմամբ ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքի թողարկման շախիբ 1934 թ. մեծապես գերազանցում է առաջին հնգամյակի մակարդակը:

Այսպես, ռեսպուբլիկայի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը, հաշված 1926—1927 թթ. անփոփոխ գներով, առաջին հնգամյակի վերջում եղած արտադրանքի մակարդակը 1934 թ. գերազանցում է 47%-ով: Արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ 1934 թ. կազմում է 64,9%:

Զգալի թափ է ստանում արհեստագործական կոոպերացիայի ձևոնարկությունների աշխատանքը, ավելանում է նրանց արտադրանքը և արտադրվող ապրանքների տեսակները: Արհեստագործական կոոպերացիայի ընդհանուր արտադրանքը 1932 թ. 22,3 միլիոն ուբլուց 1933 թ. հասնում է 25 միլիոն ուբլու:

Արդյունաբերական ծավալուն շինարարության և բազմաթիվ նոր արդյունաբերական ձևոնարկությունների գործարկման հետեւանքով արագ թափով ավելանում էր ռեսպուբլիկայի բանվորների քանակը, 1932 թ. համեմատությամբ 1934 թ. տալով ավելի քան 13%-ի աճ:

Նրկրորդ հնգամյակի առաջին երկու տարիների ընթացքում արդյունաբերության զծով պլանային հիմնական առաջադրանքների կատարման ուղղությամբ ձևուք բերված հաջողությունները ապահովում էին հնգամյակի հետագա տարիների պլանների հաջող ավարտումը:

\* \* \*

Ինչպես տեսանք նախորդ էջերից, Կոմունիստական պարտիան և Սովետական Միության բանվոր դասակարգը, գյուղի սոցիալիստական վերափոխման գործում առաջին հնգամյակի ժամանակուշքըջանում խոշոր նվաճումների հասան կոլտնտեսային կորգի վերջնական հաղթանակը ապահովելու ասպարեզում: Կոլտնտեսային կորգի հաղթանակի հետեանքով դյուղում ստեղծված նոր իրագրության պայմաններում պահանջվում էր գյուղատնտեսության ղեկավարությունը իրականացնել նոր ձևով, նոր իրագրության համապատասխան: Այդ հարցը իր ամբողջ մեծությամբ կանգնում է պարտիայի և կառավարության առջև երկրորդ հնգամյակի հենց սկզբից: Խիստ կարևոր և անհետաձգելի է դառնում նոր տեխնիկայով գյուղատնտեսության հետագա հազեցման մակարդակի բարձ-

բացումը, կոլտնտեսությունների տնտեսական, կազմակերպական և քաղաքական ամրապնդումը, աշխատանքների ղեկավարության բարելավումը, գյուղատնտեսության մթերատվության բարձրացումը:

Կոլտնտեսային կարգի հազվեանակի սլայմաններում դասակարգային պայքարը գյուղում նոր ձևեր էր ընդունել: Ակնհեր էր, որ այլևս չէր կարելի սահմանափակվել ղեկավարման հին ձևերով, հարկավոր էր, որ պարտիան իր վրա վերցնի կոլտնտեսությունների ղեկավարությունը, պատասխանատվությունն աշխատանքը կազմակերպելու և ղլխավորելու, կադրերը ճիշտ դասավորելու, դասակարգային թշնամու դեմ պայքարելու և նրանցից կոլտնտեսությունները մարբելու գործում:

Թշնամին ջախջախված էր, բայց նա վերջնականապես չէր ոչնչացված. նա դարան էր մտել և փոխել կոլտնտեսության և Սովետական իշխանության դեմ պայքարի իր տակտիկան՝ ուղղակի գրոհից անցնելով քողարկված պայքարի, վնասարարության: Պարտիայի հունվարյան պլենումը նշեց, որ տնտեսապես ջախջախված, բայց դեռևս իր ազդեցությունը չկորցրած կուլակը և գյուղի մյուս հակասովետական էլեմենտները ամեն կերպ աշխատում են քայքայել կոլտնտեսությունները, ձախողել պարտիայի և կառավարության ձեռնարկումները գյուղատնտեսության բնագավառում, այդ նպատակի համար օգտագործելով որոշ կոլտնտեսականների անգիտակցությունը:

Հեռեապես, դասակարգային թշնամու դեմ հաջող պայքարելու համար նոր իրադրության համապատասխանորեն անհրաժեշտ էր փոխել նաև մեր տակտիկան՝ կոլտնտեսություններին ցույց տալ լուրջ աջակցություն, նրանց ապահովելով առաջադեմ և ընդունակ կադրերով, գործնական ղեկավարությամբ:

Ահա այդ նպատակով ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1933 թ. հունվարյան պլենումը որոշեց ՄՏԿ-ներին և սովխոզներին կից կազմակերպել քաղաքական բաժիններ: Կոլտնտեսություններին օգնելու համար 17 հազար փորձված պարտիական աշխատողներ ուղարկվեցին քաղբաժիններում աշխատելու: Պարտիան քաղբաժինների առջև լուրջ և կարևոր խնդիրներ դրեց՝ ամրապնդել սովխոզները և կոլտնտեսությունները, օգնել նրանց լուծելու բերքի բարձրացման, անասունների խնամքի բարելավման, դաշտային աշխատանքները բարձրորակ կազմակերպելու և ժամանակին իրենց պարտավորությունները պետության առաջ կատարելու խնդիրները: Քաղբաժինները պետք է ապահովեին պարտիական հսկողությունը սովխոզներում, ՄՏԿ-

ներում և կոլտնտեսութեաններում, հոգ տանեին կադրերը ճիշտ ընտրելու և նրանց արտադրութեան մեջ ճիշտ գասալորելու համար, կազմակերպելին ու գլխավորելին կոլտնտեսային մասսաների և սովխոզների բանվորների պայքարը կոլտնտեսային և պետական սեփականութեանը համարձակելիչներից պաշտպանելու, դասակարգային թշնամուն մերկացնելու, պարտիաչի և պետութեան բուրժուազացումները ժամանակին ու ճիշտ կենսագործելու համար: Դրա հետ միասին մասսաների դաստիարակութեանը, պարտիական և կոմերիտական աշխատանքի մակարդակի բարձրացումը և արտադրութեան մեջ կոմունիստների ու կոմերիտականների առաջավոր դերի ապահովումը քաղբաժինների կարևորագույն խնդիրներն էին:

Պլենումը իր որոշումներում սահմանադժեց պարտական ռաշոնական կոմիտեների և քաղբաժինների ֆունկցիաները, միևնույն ժամանակ նշելով, որ քաղբաժինները իրենց աշխատանքը պետք է զուգակցեն ռաշոնների հետ, նրանց հետ աշխատեն համաձայնեցված<sup>1</sup>:

ՄՏԿ-ների և սովխոզների քաղբաժինները, պարտիական շրջանային կոմիտեների հետ միասին, իրապես հսկայական աշխատանք ծավալեցին կոլտնտեսութեանները բուլշեփկյան, իսկ կոլտնտեսականներին ունենոր դարձնելու պարտիաչի լոզունգը կենսագործելու ուղղութեամբ: Նրանք կոլտնտեսային մասսաներին դաստիարակում էին Կոմունիստական պարտիաչի գաղափարներով, կոլտնտեսային կարգերին նվիրվածութեան ոգով: Քաղբաժինները ամրապնդեցին կոլտնտեսութեանները կազմակերպութեն և տնտեսապես, աճեցրին զգալի քանակով նոր կադրեր, կարգի զցեցին կոլտնտեսութեան տնտեսական ղեկավարութեանը, մեծապես բարձրացրին կոլտնտեսական մասսաների քաղաքական զգոնութեանը, դասակարգային թշնամու վնասարարութեանը՝ հացամթերումները միժեցնելու, կոլտնտեսութեան ունեցվածքը փչացնելու և ոչնչացնելու բոլոր փորձերը մերկացնելու գործում: Նրանք մտքիլիզացնում են կոլտնտեսականներին ազնվորեն աշխատելու և իրենց պարտավորութեանները պետութեան հանդեպ ճշտութեամբ կատարելու գործում:

Հունվարյան պլենումի որոշումների մասսայականացումը նոր բեկում է առաջացնում կոլտնտեսութեանները թշնամական տար-

<sup>1</sup> Տե՛ս «ՄՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», 111 մաս, էջ 233—344:

բերից մաքրելու և երկրորդ հնգամյակի առաջին դարնանացանը բաշխելու հաղթանակները գործի մեջ: Բազմազան է վերհիշել բազմաթիվ փաստերից լեռնա մեկը, որտեղի պարզ դառնա այն պայքարը, որ տեղի էր ունենում Հայաստանում: Այսպես, օրինակ՝ Համամուլուի (ներկայումս Սպիտակ) գյուղի կոլտնտեսության «դեկադարները» մերվելով կուլակային տարրերի հետ, աշխատում էին կոլտնտեսությունը պայթեցնել ներսից: Նրանք վատնում են կոլտնտեսության անասունները, զանազան ճանապարհներով պահեստներից յուրացնում են հսկայական քանակությամբ հացահատիկ և մթերքներ: Շնորհիվ պարտիական, պետական օրգանների ձեռնարկված միջոցառումների և կոլտնտեսականների զգոնության բարձրացման, կոլտնտեսության վնասարարները մերկացվում և պատժվում են: Ստալինյորդի մարզի Բեզենչուկի շրջանի կոլտնտեսականներին ուղղված իրենց նամակում Համամուլուի 26-ի անվան կոլտնտեսության անգամները գրում են. «Մեր կոլխոզը կազմակերպվել է 1927 թ. տաս չքավորական անտեսությունից. այդ մի չքավորական խմբակ էր... Այսօր մեր կոլխոզը բնոգրվում է արդեն 630 միջակ և չքավոր տնտեսություններ: Այժմ մենք ունենք 381 լծկան, հինգ տրակտոր, մեկ կալսիչ, շորս հնձող, երկու խուրճկաղ, երկու սիլոսահատ և մեկ անասկավորող մեքենա, ինչպես նաև այլ զլուղատնտեսական մեքենաներ: Ունենք 1750 հեկտար լավ հողեր, 118 կով, 62 մանր անասուն, 780 ոչխար»: Իսկ այնինչ, — ինչպես գրում էին կոլտնտեսականները, — «...1932 թվականին մենք ավելի շատ բան ունեինք...

Անցյալ տարի մենք շունեցանք աչքաբացություն և թույլ տվինք, որ մեր շարքերը մոտեն կուլակները, առետրականները, որոնք կոլտնտեսություն խցկվելով և ղեկավար դիրք զբաղելով սկսին թալանել նրա ունեցվածքը, փորձում էին քայքայել կոլխոզը»<sup>1</sup>:

Վնասարարների այդ խմբի կողմից կոլտնտեսությունը հասցված վնասի գումարը հսկայական չափերի էր հասնում: Մեկ տարվա ընթացքում վնասարարության պատճառով կոլտնտեսությունը կորցրնում է մոտ 1500 գլուխ անասուն, 389 ցինտեր հացահատիկ, 622 ցենտեր կարտոֆիլ և այլն: Կոլտնտեսությունը անխուսափելիորեն կքայքայվի, եթե պարտիական և սովետական կազմակերպությունները օգնության չհասնեն Համամուլուի կոլտնտեսականներին:

<sup>1</sup> «Յորհրդային Հայաստան», № 111, 1933:

Հունվարյան պլենումի արդյունքների մասսայականացումը բարձրացնում է ոչ միայն պարտիականների ու կոմկրիտականների զգոնությունը, այլև մոբիլիզացնում է կոլտնտեսականներին դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում: Կուլակային տարրերը դուրս են շարտվում կոլտնտեսությունից:

Հակակոլտնտեսային տարրերի դեմ պայքարն էլ ավելի մեծ ծավալ է ստանում հարվածային կոլտնտեսականների Համամիութենական առաջին համագումարից հետո:

1933 թ. փետրվարի 15—19-ը Մոսկվայում տեղի ունեցավ հարվածային կոլտնտեսականների Համամիութենական առաջին համագումարը, որը կոլտնտեսային շինարարության պատմություն մեջ մեծ նշանակություն ունեցավ: Համագումարը հանրագումարի բերեց մասսայական կոլտնտեսային շինարարության արդյունքները, ցույց տվեց, թե ինչպիսի հսկայական նվաճումներ են ձեռք բերել կոլտնտեսությունները անտեսության կազմակերպման և զարգացման ուղղությամբ այդպիսի պատմական կարճ ժամանակամիջոցում, թե ինչպես են նրանք պայքարել նոր սոցիալիստական գյուղի համար: Մեր երկրի առաջավոր կոլտնտեսությունների և ավելի քան 14,5 միլիոն կոլտնտեսային դյուղացիների անունից համագումարի մասնակից հարվածային կոլտնտեսականները իրենց ընդունած դիմումի մեջ պրում էին. «Արդեն մեր պրակտիկայով և փորձով հաստատվեցին Լենինի այն խոսքերը, թե միմիայն կոլտնտեսությունների միջոցով կարելի է դուրս բերել չբավոր, միջակ գյուղացիությունը դարավոր կարիքից ու աղքատությունից»<sup>1</sup>:

Հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարում արտասանած իր ճառում Ի. Վ. Ստալինը առաջ է քաշում կոլտնտեսականներին ունևոր դարձնելու պատմական լուղունգը: Նա ստել է, որ կոլտնտեսային շինարարության գործնական և շոշափելի արդյունքներն այն են, որ բազմամիլիոն դյուղացիությունը ոտք է դրել կոլտնտեսային ուղին, որը սակայն առաջին քայլն է, ուրի վրա չպետք է կանգ առնել, այլ պետք է առաջ շարժվել և կատարել երկրորդ քայլը, իսկ այդ քայլը պետք է լինի բոլոր կոլտնտեսականներին ունևոր դարձնելը:

Կոլտնտեսությունները ամրացնելու գործում մեծ էր կանանց դերը: Կոլտնտեսային շարժումը ղեկավար պաշտոններում առաջ էր քաշել բազմաթիվ ընդունակ և գործունյա գեղջիկուհիների, որոնք

<sup>1</sup> «Նորհրդային, Հայաստան», № 40, 1933:

կոլտնտեսային պրակտիկ աշխատանքներում արդեն իրենց դրսևորել էին որպես լավագույն կազմակերպիչներ ու ղեկավարներ: Ահա թե ինչու պարսիան դառնում էր, որ կանայք կոլտնտեսութուններում մեծ ուժ են, որ այդ ուժը պետք է ակտիվ աշխատանքի մեջ ընդգրկվի գյուղի սոցիալիստական շինարարության գործում:

Հարվածային կոլտնտեսականների Համամիութենական համագումարին մասնակցում էին նաև Հայաստանի հարվածային կոլտնտեսականների ներկայացուցիչները, որոնք համագումարին պատմում են հայ գյուղացու դառն անցյալի և ազատ ու կենսուրախ կոլտնտեսային ներկայի մասին, այն մասին, թե ինչ է տվել իրենց կոլտնտեսային կարգը: Հարվածային կոլտնտեսականների համագումարի պատգամավորներ, Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի Ստալինի անվան կոլտնտեսության կոլտնտեսականները, գրել են. «Առևների շուրջպարում տեղավորված մեր գյուղը նախկինում պաականում էր էջմիածնի վանքին: Արգավանդ հողերի մեծ մասը դառնում էր վանքի արամադրության տակ, իսկ մնացածը՝ «թագավորական» էր: Աշխատում էինք օրն ի րուն այդ հողերի վրա, կալի ժամանակ վանքը քերքի մեծ մասը բահրա էր վերցնում, իսկ «թագավորական»-ի մարդիկ շոքում էին մեր բղին ու մնացածը տանում որպես տուրք: Մեր արյունը ծծող կուլակներ էլ կային... որոնք կապալով հող էին վերցնում կամ դնում էին վանքից բահրայի իրավունքը և մեր քրախնքի հաշվին ուռչում-աուղում:

Մեզանից շատերը հողազուրկ էին, լծկան շունեին, կթան շունեին: Գյուղը խորթ մայր էր շատերի համար, թողնում էինք աուն ու տեղ... ցրվում էինք դեռ ու դեն՝ «մի փոր հացի» աշխատանք գտնելու: Անիծված օրեր էին»:

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, հայ ժողովրդի հիմնական մասը կազմող աշխատավոր գյուղացիությունը քայքայվում էր, նրա գրությունը ծանր էր ու եղևոնական: Եվ ահա «եկավ Սովետական իշխանությունը և նրա հետ էլ եկան պայծառ օրեր, — ասված է նամակում, — մեր գյուղն էլ հասավ կենինի խոսքը, որ միևնույն է մանր տնտեսությամբ կարիքից դուրս չես դա»<sup>1</sup>:

Հարվածային կոլտնտեսականների Համամիութենական համագումարի նախօրերին Հայաստանում շատ կոլտնտեսություններ աւ-

<sup>1</sup> «Մորհրդային Հայաստան», № 36, 1933:

րսալնդվել, առաջավոր էին դարձել: Համագումարի կողմից ընդունված և Սովետական Միության բոլոր կոլտնտեսականներին ու աշխատավոր գյուղացիներին ուղղված դիմումը, ինչպես և համագումարում պարտիայի ու կառավարության ղեկավարների կողմից առաջ քաշված ցուցումները, լուրջ խնդիրներ էին դնում տեղական պարտիական և սովետական կազմակերպությունների առջև, որոնց կենսագործումը դառնում է նրանց և կոլտնտեսականների անմիջական պարտականությունը: Այդ բոլորը մեծ արձագանք է գտնում ինչպես ամբողջ Միության, այնպես էլ Հայաստանի աշխատավորական լայն մասսաների մեջ: Լայն ծավալ է ստանում սոցիալիստական մրցությունը, որը հսկայական նշանակություն է ունենում գյուղատնտեսության բնագավառում երկրորդ հնգամյա պլանի դիրկտիվները կատարելու ուղղությամբ: Արտաշատի շրջանի հարվածային կոլտնտեսականների հավաքը քննելով հարվածային կոտրնտեսականների Համամիութենական առաջին համագումարի արդյունքները, որոշում է սոցիալիստական մրցության դուրս գալ Հայաստանի մյուս բամբակագործական և այգեգործական շրջանների հետ: Ախտայի շրջանի հարվածային կոլտնտեսականները դարնանացանի նախապատրաստման համար մշակում են կոնկրետ միջոցառումներ այն հաջողությամբ սկսելու և ավարտելու համար: «Ընդունելով հարվածային կոլտնտեսականների համագումարի կողք, մենք մտնում ենք բարձր լերքատվության, սերմացուի լրիվ դամբման, դարնանացանի հաջող նախապատրաստման ու կատարման համար հայտարարված Համամիութենական մրցության մեջ» — գրում են նրանք<sup>1</sup>:

Հայաստանի կոլտնտեսականները մեծ ջանքեր էին գործադրում համագումարի դիմումը գործի վերածելու համար: Այսպես, Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Երկիր (այժմ Նալբանդյան) գյուղի կոլտնտեսականները փետրվարի 23-ին քննության ղնելով համագումարի արդյունքները, մեծ աշխատանք են ձեռնարկում 1933 թ. արտադրական պլանները կատարելու համար: Այդ կոլտնտեսության գարնանանացանի պլանը կազմում էր 975 հեկտար, որից 750-ը միայն բամբակ: Գարնանացանը ժամանակին ու որակով ավարտելու համար նրանք որոշում են առաջին հերթին ամրապնդել բրիգադները. ամբողջ աշխատող ձևըը ղասավորվում է 18 բրիգադներում, բրիգադների ամրացնում են դաշտամասերը, գյուղատնտեսական գործիք-

<sup>1</sup> «Յուրհրդային Հայաստան», № 18, 1933:

ները և քաշող ուժը: Ժողովը յառաջնահերթ է համարում արագ կերպով ավարտել գյուղատնտեսական գործիքների վերանորոգման աշխատանքը և պարարտանյութի դաշտ փոխադրումը, այդ նպատակին տրամադրելով ամբողջ տրանսպորտը: Ինչպես Մեծ Շահրիարի, այնպես էլ մյուս կոլտնտեսությունները իրենց շարքերը մաքրում էին հակակոլտնտեսային տարրերից: Համամուլի 26 կոմիսարների անվան կոլտնտեսությունը փետրվարի 21-ի իր ընդհանուր ժողովում որոշում է կազմակերպել փորձնական դարնանացան. այդ օրը տեղի է ունենում կոլտնտեսականների միտինգ, որը բուռն զայրույթ և արտահայտում մերկացված և դատի հանձնված կոլտնտեսության թշնամիների դեմ և դատական օրգաններից պահանջում է խիստ պատժի ենթարկել դասակարգային թշնամու գործակալներին: Ախտայի շրջանի Ալափարա և Արզաքյանդ գյուղերի կոլտնտեսությունները համագումարի դիմումը կենսագործելու նպատակով փոխադարձ սոցմրցման պայմանագիր են կնքում դարնանացանի գործրկազմակերպելու համար: Նրանք միասնական կոչով դիմում են Հայաստանի կոլտնտեսականներին, հանձն են առնում պայքարել երկրորդ հնգամյակի դարնանացանը հաջողությամբ կատարելու, սոցիալիստական դաշտերի բարձր բերատվությունը ապահովելու համար: Նրանք կոչ էին անում բոլոր կոլտնտեսություններին հետևել իրենց օրինակին:

Կատարված հսկայական մասսայական-կազմակերպական աշխատանքների շնորհիվ ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները և աշխատավոր մենատնտեսները երկրորդ հնգամյակի առաջին զարնանացանը ավարտեցին հաջողությամբ, ժամկետից շուտ և հարվածայինների ռեսպուբլիկական համագումարին եկան զգալի նվաճումներով:

1933 թ. հունիսի 27-ին գումարվեց Հայաստանի հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարը, որը քննեց դարնանացանի արդյունքները և բերքահավաքի նախապատրաստության խընդիրները: Հայաստանի հարվածային կոլտնտեսականների համագումարը կոչ արեց ռեսպուբլիկայի բոլոր կոլտնտեսականներին և աշխատավոր գյուղացիներին ամրապնդել կոլտնտեսությունները, պայքարել բերքատվությունը բարձրացնելու և կոլտնտեսային սեփականությունը հափշտակումից պաշտպանելու, կոլտնտեսությունները վնասակար տարրերից մաքրելու համար:

Կոլտնտեսությունները ամրապնդելու, նրանց վարչատնտեսական ապարատը ավելի ճկուն ու գործունյա դարձնելու և այն խորթ

տարրերից մաքրելու նպատակով 1933 թ. ընթացքում անցկացվեց կոլտնտեսությունների վարչատնտեսական ապարատի ստուգում և դատում: Մինչև հոկտեմբերի 1-ը ստուգման և դատման ենթարկվեցին 769 կոլտնտեսային վարչական ապարատի 2143 աշխատողներ: Այդ ստուգման և դատման հետևանքով ոչ միայն աշխատանքից ազատվեցին իրենց շարժարացնող, կուլակային հովերով տարված և թշնամարար տրամադրված ավելի քան 400 աշխատողներ, այլև թարմացվեց և ուժեղացվեց կոլտնտեսային ղեկավար ապարատը: Այդպիսով, թե՛ հարվածային կոլտնտեսականների ռեսպուբլիկական համագումարը և թե՛ պարտիայի և Սովետական կառավարության կոլտնտեսային հարցերին նվիրված դիրեկտիվները զգալիորեն ամրապնդեցին կոլտնտեսությունները և հիմք հանդիսացան կոլտնտեսային նոր վերելքի համար:

1933 թ. ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների ամբողջ ցանքատարածությունը աշնանացանի հետ միասին կազմեց 164 հազար հեկտար, մոտ 18 հազար հեկտարով ավելի քան 1932 թ.<sup>1</sup> Յուրաքանչյուր կոլտնտեսականին ընկնող ցանքատարածությունը զգալի չափով բարձրացավ, որը բացատրվում էր ոչ միայն կոլտնտեսությունների մտած նոր կոլտնտեսականների քանակային աճով, այլև մինչ այդ շմշակված նոր հողային տարածությունների յուրացումով: Կոլտնտեսային կարգերի առավելությունների շնորհիվ, պարտիայի և կառավարության աջակցությամբ, անցյալում խոսպան և անօգտագործելի հողային զգալի տարածություններ նրկորոդ հնգամյակի տարիներին դարձան պիտանի դաշտեր և ոռոգման գործի կարգավորման հետևանքով օգտագործվեցին զլխավորապես բամբակենու ցանքատարածությունը լայնացնելու և խաղողի ու ստղատու այգիները ավելացնելու համար:

1930 թ. համեմատությամբ ռեսպուբլիկայի ընդհանուր ցանքատարածությունը 1934 թ. աճեց 12,5 %-ով: Յանքի և բիրքահավաքի ժամկետների կրճատման, ագրոտեխնիկական ձեռնարկումների կիրառման, գյուղատնտեսության մեքենայական բազայի ուժեղացման, ինչպես և կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման ու կորուստների դեմ ծավալված պայքարի շնորհիվ զբալիորեն բարձրացավ թե՛ տեխնիկական կուլտուրաների և թե՛ հացահատիկային մշակութային բերքատվությունը: Սոցիալիստական սեկտորը,

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿՄ, ֆ. 40Ը/113, գ. 2217, թ. 1—48:

մանավանդ տեխնիկական կուլտուրաների մշակութային շրջաններում, գերակշռող բարձրության հասավ:

1933 թ. բերքահավաքի կազմակերպված անցկացումը և բերքի բաշխման արդյունքները նոր հոսանք առաջացրին գեպի կոլանտեսությունները:

Պարտիայի XVII համագումարը Հայաստանի կոլանտեսությունները դիմավորեցին աննախընթաց նվաճումներով: Ռեսպուբլիկայի բազմաթիվ առաջավոր կոլանտեսություններ և մի շարք շրջաններ իրենց լավագույն ցուցանիշներով արժանացան համագումարի անվան կարմիր տախտակին: Առաջավոր շրջանների թվում էին Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Ղափանի, Լենինականի, Գորիսի շրջանները: Առաջավոր կոլանտեսություններից հարկ է նշել Սիսիանի շրջանի Բորիսովկայի կոլանտեսությունը, որը 1933 թ. բոլոր պետական պարտավորությունները կատարել էր ժամանակին: 1934 թ. սկզբներին այդ գյուղի աշխատավորության 85% -ը ընդգրկված էր կոլանտեսության մեջ: Նույն շրջանի Սայբալուի կոլանտեսությունը բարձրացրել էր հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, յուրաքանչյուր հեկտարից ստանալով 9,5 ցենտներ միջին բերք: Գյուղի աշխատավորական տնտեսությունների 87% -ը 1933 թ. վերջերին դառնում էր կոլանտեսության մեջ: Կոլանտեսությունը պլանավորված ժամկետներից շուտ, բոլոր գծերով կատարել էր պետական պարտավորությունները:

Պարտիայի XVII համագումարի նախօրյակին ուսպուբլիկայում այդպիսի առաջավոր, կազմակերպորեն ամրապնդված, անտեսական բարձր ցուցանիշներ ունեցող կոլանտեսությունների թիվը հարյուրների էր հասնում: Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ուղղությամբ երկրորդ հաջողություններ են ձեռք բերվում: Այդ հաջողությունները առաջին հերթին արտահայտվում էին գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման մակարդակով, հողագործության մեքենայական բազայի մակարդակի բարձրացումով, կոլեկտիվ տնտեսակարգի վերջնական հաղթանակով:

Կային կոլանտեսություններ, որոնք մեկ-երկու տարի առաջ գասվում էին հետամնացների շարքին, բայց 1933—1935 թթ. նրանցից շատերը դարձան առաջավոր, ամրացան թե՛ տնտեսապես, թե՛ կազմակերպորեն և թե՛ քաղաքականապես: Այդպես, օրինակ, էջ-

միաժնի շրջանի Փարաքար գյուղի կոլտնտեսությունը, որտեղ մինչև 1933 թ. վատ էր դրված աշխատանքի կազմակերպումը, բրիգադները մշտական կազմ չունեին՝ կոլտնտեսականներից շատերը աշխատում էին իրենց ցանկացած բրիգադներում, կարգապահությունը ընկած էր, աշխատանքի մեջ սոցիալիստական մրցությունը դեռևս չէր արմատավորվել: Այս թերությունների հետևանքով կոլտնտեսության դաշտերի և այգիների բերքաավելությունը զգալիորեն ցածր էր քան հարևան կոլտնտեսություններում: Կոլտնտեսությունը բամբակի հանձնման պլանը 1932 թ. կատարել էր միայն 44% -ով: Դրությունը արմատականորեն փոխվում է, երբ 1933 թ. անհրաժեշտ բարձրության վրա է դրվում աշխատանքի կազմակերպումը արտադրության բոլոր բնագավառներում, ամբաստում են բրիգադները և դառնում արտադրական հիմնական միավորներ, սոցմրցումը դառնում է աշխատանքի կազմակերպման և արտադրողականության բարձրացման գլխավոր մեթոդը: Այդ բոլորի շնորհիվ բարձրանում է աշխատանքային կարգապահությունը, կոլտնտեսականների սլատասխանատվությունն ու նրանց քաղաքական դիտակցությունը, որի շնորհիվ կոլտնտեսությունը 1933 թ. բամբակի հանձնման պլանը կատարեց 133% -ով, իսկ 1934 թ. 183% -ով: Կոլտնտեսությունը տնտեսական տարին փակում է բարձր ցուցանիշներով նաև մլուս մշակույթների դժով: Ոգևորված իրենց լավ աշխատանքի արդյունքներով Փարաքարի կոլտնտեսականները Հայաստանի Սովետների VIII համագումարին ներկայացրած իրենց զեկուլցիի մեջ մատնանշում էին.

«...Դաշնակցության օրոք արդյային կռիվների ռազմաբեմ դարձած, համատարած սովի և անելանելի կարիքի մեջ թաղված, հողից ու ջրից զրկված, Փարաքարի կուլակության դառնագին լճի տակ տառապող աշխատավոր գյուղացիությունը, շնորհիվ Կոմունիստական պարտիայի... Սովետական իշխանության հողատար վերաբերմունքի... անվերադարձորեն բռնել է ունևոր կյանքի ուղին: Այսօր ինչպե՞ս պայծառ է լուսավորում արևը մեր երկրում, ինչպես սիրուն են ու բերքով լի մեր դաշտերը: Եվ այդ բոլորը կատարվեց պարտիայի ղեկավարությամբ, կոլեկտիվ կյանքի, մեքենայացված կոլեկտիվ տնտեսության, հարվածայնության լայն ծավալման, դասակարգային թշնամու դեմ համառ պայքարի միջոցով»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ ԳԿԱ, ֆ. 112, գ. 835, թ. 80:

Այդ բոլորը ավելի ցայտուն կերպով կարելի է տեսնել կոլտըն-տեսային շինարարության դարգացման պինամիկայում 1932—1936 թթ.:

Այսպես, Հայաստանում 1932 թ. դոյություն ունեցող 892 կոլտնտեսություններից 1934 թվականին կար 957-ը, իսկ 1936 թ. հուլիսի 1-ի տվյալներով կոլտնտեսությունների քանակը հասնում էր 1066-ի: 1932 թվականին ռեսպուբլիկայում կոլեկտիվացված 63,1 հազար տնտեսությունների պիմաց 1934 թվականին կոլեկտիվացված էր 81,9 հազար տնտեսություն, կամ կոլեկտիվացման մակարդակը 37,9% -ից բարձրացել էր 45,2%, իսկ 1936 թ. հուլիսի 1-ին ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ընդգրկվել էին 151,5 հազար տնտեսություն, կամ 80,8%: Եթե 1932 թ. ցանքատարածությունների համայնացումը կազմում էր ռեսպուբլիկայի ամբողջ դյուրացիական ցանքերի 39,2%-ը և 1934 թ. 47,3%-ը, ապա 1936 թ. հուլիսին այն արդեն հասնում էր 85,6%-ի:

Առաջին հնգամյակի վերջում յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ միջին թվով կար 71 տնտեսություն, 1934 թ. կոլտնտեսությունները ավելի են խոշորանում՝ հասնելով 86 տնտեսության, իսկ 1936 թ. հուլիսի 1-ին՝ 142 տնտեսության: 1932 թ. մեկ կոլտնտեսությանն ընկնող միջին ցանքատարածությունը հասնում էր մինչև 177 հեկտարի, 1934 թ. 203 հեկտարի, իսկ 1936 թ. առաջին կեսի տվյալներով այն կազմում էր 317 հեկտար<sup>1</sup>:

Վերևում հիշատակված տվյալները ցույց են տալիս ամբողջ ռեսպուբլիկայի պատկերը, իսկ տեխնիկական կուլտուրաների և ալգեդործական շրջաններում կոլեկտիվացման միջին մակարդակը անհամեմատ ավելի բարձր էր քան ռեսպուբլիկական միջինը: Այսպես, օրինակ, դեռևս 1935 թ. հուլիսի տվյալներով կոլեկտիվացումը Հոկտեմբերյանի շրջանում կազմում էր 85,4%, Մեղրիի՝ 82,2, Գորիսի՝ 78,1, Լենինականի շրջանում՝ 76,1, Արտաշատի՝ 73,6, Ղափանի՝ 74,4 էջմիածնի շրջանում մոտ 68 տոկոս և այլն:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը Հայաստանում, այսպիսով, հիմնականում ավարտվում է երկրորդ հնգամյակի առաջին տարիներին՝ 1936 թ. հուլիսին: 1933 թ. սկսած կոլեկտիվացման պրոցեսը դնում էր մնացած անհատական տնտեսությունները, գյու-

<sup>1</sup> Թվական տվյալները բոլոր դեպքերում վերաբերվում են յուրաքանչյուր տարվա առաջին կեսին: Տե՛ս Հայկական ՍՍԲ ՊԿԱ, ֆ. 40դ:113, գ. 2217, Խ. 1—18:

սլի սոցիալիստական հատվածի մեջ աստիճանաբար ներգրավելու ուղիով, նրանց վերադաստիարակելու միջոցով: Այդ նշանակում էր, որ կոլտնտեսային կարգը վերջնականապես հաղթանակել էր: Այժմ խնդիրը զլխավորապես կայանում էր նրանում, որ իր բարձրության վրա զրվի կոլտնտեսային արտադրության կազմակերպումը, ամրացվի նրա դործնական ղեկավարությունը: Պարտիան այդ նպատակով 1933—1935 թթ. շարունակում է մեծ քանակությամբ ձևափոխական կադրեր ուղարկել գյուղ մշտական աշխատանքի, ուրոնց թիվը Հայաստանում հասնում էր մինչև 1500-ի:

1932—1935 թթ. կոլտնտեսությունները բավականաչափ ամրացան, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների եկամտաբերությունը զգալի չափով ավելացավ: Այդ նվաճումները ձևափոխական կոլտնտեսային սաբստանցը և վնասարարությունը ջախջախելու ու վերացնելու, կոլտնտեսային արտադրությունը լավ կազմակերպելու միջոցով:

Չնայած այդ բոլոր հաջողություններին, դեռևս մի շարք վայրերում գյուղական կազմակերպությունների կողմից արհեստական խոչընդոտներ էին ստեղծվում կոլեկտիվացման աճի դեմ: Այդ մասին Հայաստանի Կոմպարտիայի IX համագումարը (1934 թ.) պարտիական կազմակերպություններին ուղղակի ցուցում տվեց վճռական պայքար մղել այդպիսի երևույթների դեմ և անհապաղ վերացնել կոլտնտեսային աճի ամեն մի խոչընդոտ:

Համագումարը իր որոշումներում առանձնապես շեշտում էր, որ պետք է պայքարել ընթացիկ տարում՝ 1934 թ. Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը նոր՝ ավելի բարձր տնտեսական և քաղաքական մակարդակի հասցնելու համար, որը համապատասխանի երկրորդ հնգամյակի վիթխարի խնդիրներին:

Այդպիսով, պարտիայի XVII համագումարի այն դիրեկտիվը, որ գյուղատնտեսության բնագավառում պարտիայի, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ուղադրությունը երկրորդ հնգամյակի ժամանակաշրջանում պետք է բևեռել գյուղացիական անհատական տնտեսությունների մնացորդները աստիճանաբար կոլտնտեսությունները ընդգրկելու և նրանց վերադաստիարակելու վրա, հողագործության բերքատվությունը, անասնաբուծության մթերատվությունը և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու խնդիրների վրա՝ կիրառվում էին:

Պարտիայի և կառավարության կողմից, անասնաբուծության զարգացման դործը բարելավելու մասին մշակած մի շարք մի-

ըոցաւումների կենսագործման միջոցով երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին որոշ բեկում է առաջանում նաև անասնաբուծութիւնը՝ ռեսպուբլիկայում զարգացնելու ուղղութեամբ: Անասնաբուծութեան զարգացման համար նշանակալի դեր է ունենում ՀամԿ(Բ)<sup>Պ</sup> Կենտկոմի և Ժողկոմսովետի 1933 թվականի օգոստոսի 14-ի որոշումը՝ կովազուրկ կոլտնտեսականներին կովեր ձեռք բերելու գործում օգնելու մասին և Կենտկոմի 1934 թ. հուլիսյան սլէնումի որոշումները, նվիրված անասնաբուծութեան զարգացման ու այդ գործի քարելավման հարցերին:

Հարկ է հիշել, որ սլէնումը հատկապէս նշում էր, որ կոլտնտեսային աստիճանային ֆերմաները կոլտնտեսային անասնաբուծութեան զարգացման ամենից նպատակահարմար ձևն են, ուստի 1934 թ. ընթացքում կոլտնտեսութեան կազմակերպման ամբողջ հոտը պէտք է կենտրոնացվի այդպիսի ֆերմաներում: 1934 թ. կոլտնտեսային աստիճանային ֆերմաների թիվը ռեսպուբլիկայում արդեն զգալիորեն ավելանում է, հասնելով 650-ի, որոնք ընդգրկում էին ամբողջ հանրային հոտը: Զգալի քանակով կովազուրկ կոլտնտեսականներ բավարարվում են մթերատու անասուններով և մատուցանւթով:

Հայաստանում անասնաբուծութեան զարգացնելու գործում մեծ էր նաև մասնագիտացված կաթնատնտեսապահական սովխոզների դերը, որոնց քանակը 1934 թ. հասնում էր 8-ի: Այդ տարիներին կազմակերպվում են նաև երկու սլխարաբուծական սովխոզ:

Հայաւտանի պարտիական կազմակերպութեանները նշանակալի աշխտանք են կատարում անասնակերի բազայի լայնացման գործը կարգավորելու ուղղութեամբ: Զարկ է տրվում սիլոսացմանը, որը մինչև այդ բացակայում, կամ շատ չնչին տեղ էր զբաղում անասնակերի ընդհանուր բաղանսի մեջ: Սակայն այդ բոլորը դեռևս չէին ապահովում սոցիալիստական անասնաբուծութեան զարգացնելու բնագավառում պարտիայի և Սովետական կառավարութեան կողմից ընդունված և ընդհանրապէս երկրի առջև այդ ասպարեզում ծառայած խնդիրների լիակատար լուծումը: Հետևաբար այդ պրոբլեմի լուծումը հետագայում ևս շարունակում է մնալ պարտիայի և կառավարութեան ուղղութեան կենտրոնում:

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսութեան մեջ զգալի տեղ էին զբաղում և կարևոր նշանակութեան ունեին խաղողագործութեանն ու պտղաբուծութեանը: Փոքր Սարգարաբաղի և Ղւերի ջրանցքների ավարտումը նպաստավոր սլայմաններ էր ստեղծում նախկին ամա-

յի տարածութեան վրա կազմակերպելու մի քանի նոր պապարտ-  
ծական և խաղողագործական սովխոզներ: Հայաստանի համար  
արդունարերական կարևոր նշանակութիւն ունեցող այդ կուլտու-  
րաների վրա անցյալում պատշաճ ուշադրութիւն չէր դարձվում,  
նրանց բերքաւութիւնը ցածր էր:

Բամբակի, ծխախոտի, ճակնդեղի և այլ կուլտուրաների տարած-  
ութիւնների լայնացման ու այդ մշակութիւնների բերքաւութ-  
եան բարձրացման համար երկրորդ հնգամյակում անհրաժեշտ  
հեռանկարներ են բացվում: Գյուղատնտեսութեան կարևոր ճյուղի-  
րից մեկի՝ շերամապահութեան վրա դեռևս անհրաժեշտ ուշադրութիւն  
չէր դարձվում: Միայն 1933 թ. սկսած որոշակի միջոցառումներ են  
շորձադրվում շերամապահութիւնը զարգացնելու ուղղութեամբ:

Երկրորդ հնգամյակի առաջին տարիներին զգալիորեն ավելա-  
նում է գյուղատնտեսութեան մեքենայական բազան: ՄՏԿ-ների թի-  
ւը ռեսպուբլիկայում 1936 թ. հասնում է 22-ի, իսկ տրակտորային  
պարիի ընդհանուր կարողութիւնը հասնում է ավելի քան 14,8 հա-  
զար ձիու ուժի: Եթե ՄՏԿ-ները 1933 թ. իրենց սպասարկումով  
ընդգրկում էին ռեսպուբլիկայի կոլտնտեսութիւնների 48,4<sup>1</sup>/<sub>70</sub>-ը,  
այլա 1935 թ. ընդգրկված էր 56,8 տոկոսը: Համեմատարար  
բարձրանում է արակտորի տարեկան միջին բեռնվածութիւնը: Հա-  
յաստանի կոլտնտեսային դաշտերում 1934 թ. աշխատում էին 12  
կոմբայն, 123 կալտոզ մեքենա, 825 շարքացան, 180 խուրձկապ,  
27 հազարից ավելի գութան և այլ մեքենաներ ու գործիքներ: Հա-  
յաստանում գյուղատնտեսութեան մեջ մինչ այդ գործադրվող արտը  
գութանով փոխարինելու կառավարութեան գիրեկտիվը հիմնակա-  
նում իրականացվում է:



Ժողովրդական տնտեսութեան վերելքի բազայի վրա ուշխատա-  
վորների նյութական գրութեան և կենցաղային պայմանների բարե-  
լաւման ուղղութեամբ նոր առաջընթաց քալելը կատարվեցին 1933—  
1934 թթ.: Նշանակալի չափով ավելացան ռեսպուբլիկայի աշխա-  
տավարձի ֆոնդերը, զգալիորեն մեծացան ծախսվելիք ֆինանսա-  
կան միջոցները սոցիալական ապահովագրութեան, լուսավարու-  
թեան, առողջապահութեան, կոմունալ և բնակարանալին շինարա-  
րութեան ուղղութեամբ:

Հարկ է հիշատակել, որ 1934 թ. սոցիալական ապահովագրու-  
թեան բյուջեն 1929 թ. մակարդակը գերազանցեց հինգ անգամ,

բանվորների և ծառայողների տարեկան միջին աշխատավարձի մակարդակը՝ 2,5 անգամ: Կոմունալ տնտեսության մեջ առնչին հնգամյակում ներդրված կապիտալ միջոցների չափը 1933—1934 թթ. մեծապես ավելացավ: Նույնը պետք է ասել նաև լուսավորության և մյուս բնագավառների մասին: Երևանում մեծանում և քաղաքային տրանսպորտը՝ տրամվայը և ավտոբուսային պարկը, ավելանում է յուրաքանչյուր շնչին ընկնող էլեկտրաէներգիայի գործածության չափը, կառուցվում են հյուրանոցներ, կարգավորվում են փողոցները, ծավալվում է կանաչադարձումը: Նոր թափ և ստանում բնակարանային և հասարակական կարիքների համար շենքերի շինարարությունը: 1934 թ. շրջանային 17 կենտրոններում կառուցվում են բազնիքներ: Կոլտնտեսային մասսայի նյութական գրություն բարելավման շնորհիվ ծավալվում է անհատական բնակարանային շինարարությունը: Վերակառուցվում են բազմաթիվ գյուղեր: Այդ հաստատելու համար հիշատակենք միայն մի փաստ: Արտաշատի շրջանի Գյոդակլու (ներկայումս՝ Մրդավան) գյուղի կոլտնտեսության ընդհանուր ժողովը 1934 թ. դեկտեմբերին մի դիմում է ընդունում ուղղված Հայաստանի ճարտարապետներին՝ գյուղի վերակառուցման և բնակարանային շինարարության գործում իրենց օգնություն ցույց տալու վերաբերյալ: Իրենց դիմումի մեջ կոլտնտեսականները գրում են. «Դեկտեմբերի 1-ին բերքի բաշխում կատարելուց հետո մենք, կոլխոզնիկներս, հավաքվեցինք քննելու մեր կուլտուրական կյանքի կազմակերպման հարցերը:

Մենք պարտիայի ղեկավարությունից այս տարի հաստատուն կանգնել ենք ունևոր կյանքի ճանապարհի վրա...

Այս տարի մեր կոլտնտեսությունը կառուցել է հաճախի և կուլտուրայի պարկի, բազնիք, ծննդատուն, ուղում ենք կառուցել նաև ձմեռային ակումբ, կուլտուրական ձևի գոմ և ուրիշ շենքեր, գյուղը էլեկտրիֆիկացիայի է ենթարկված, բայց այս դեռ թիչ է:

Մեր նոր, ունևոր կյանքին համապատասխան, ուղում ենք ունենալ լավ կառուցված տներ, կուլտուրական, սոցիալիստական տիպի գյուղ...»<sup>1</sup>:

Այս դիմումը բացառություն չէր: Իրենց գյուղերի վերակառուցման և կուլտուրական շինարարության պլան են կազմում նաև բազմաթիվ այլ գյուղերի կոլտնտեսությունների վարչություն-

<sup>1</sup> «Շորհրդային Հայաստան», № 290, 1934:

ներն ու գյուղատվեստները: Այս բոլորը ասում էին գյուղի կուլտուրական վերելքի մասին և աշխատավորների քարեկեցութեան բարելավման մասին, որի համար Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ պայքարում էին մեր երկրի աշխատավորները:

Աշխատավորների նյութական դրութեան բարելավման և նրանց ղեկավարութեան բարձրացման շնորհիվ երկրորդ հնգամյակի տարիներին ավելի է ծավալվում ապրանքաշրջանառութունը, պետական և կոոպերատիվ մանրածախ առևտուրը:

Գյուղատնտեսութեան մեջ կուլտնտեսութեանների և սովխոզների տիրապետող դիրքը, նրանց տնտեսական մեծ նվաճումները պայմանավորում են հացամթերումների հաջող ընթացքը և հացի ազատ պետական գնման դործը, որոնք պետութեան տրամադրութեան տակ զնում են բավականաչափ նոր ռեսուրսներ քարտային սիստեմը վերացնելու համար: Այդ հիման վրա ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1934 թ. նոյեմբերյան պլենումը որոշում է ընդունում վերացնելու հացի և մի քանի այլ մթերքների քարտային սիստեմը: Դրա հետ միասին համապատասխան շափով ավելացվում է բանվորների և ծառայողների աշխատավարձը:

Կուլտնտեսային գյուղացիութեան նյութական դրութեան բարելավման և կուլտնտեսութեանների հետագա տնտեսական ամրացման գործում ղգալի նշանակութուն է ունենում ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերի 23-ի որոշումը՝ գյուղատնտեսական բանկի կողմից մինչև 1933 թ. հունվարի 1-ը կուլտնտեսութեաններին բաց թողնված գյուղատնտեսական վարկի պարտքերի վերացման մասին:

Հիշված որոշման համաձայն վերացվում են կուլտնտեսութեանների ունեցած պարտքերը և չվճարված տոկոսները՝ շուրջ 435 միլիոն 639 հազար ռուբլի գումարով: Հայաստանի կուլտնտեսութեանները այդ որոշումից շահում են 4 միլիոն 849 հազար ռուբլի:

Ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագաղառներում եղած հաջողութեանները 1930—1934 թթ. ձեռք են բերվում դասակարգային սուր պայքարի պայմաններում:

Սոցիալիստական հասարակարգի կառուցումը մեր երկրում, ջախջախված թշնամի դասակարգերի մնացորդների կողմից կատարվող դիմադրութեան էր հանդիպում: Նրանք փորձում էին ամեն կերպ թուլացնել մեր առաջընթացը:

Ամբողջ սովետական ժողովուրդը, այդ թվում նաև հայ ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ ջախջախելով

վնասմական տարրերի գիմադրությունը, հաղթահարելով գոյություն ունեցող զժվարությունները, տարեցտարի կատարում և գերակատարում էր ժողովրդական տնտեսութեան զարգացման երկրորդ հնգամյա պլանի հոյակապ խնդիրները, անշեղորհն առաջ էր գնում սոցիալիստական հասարակարգի կառուցումն ավարտելու ուղիով:

#### 4. ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1930—1934 թթ.

Առաջին հնգամյակի հսկայական տնտեսական, տեխնիկական և կազմակերպական խնդիրները կատարելու համար հարկավոր էր մաքսիմում ուշադրութեան նվիրել կուլտուրական շինարարութեան գործին, հասնել կուլտուրական ռեզյուլցիայի կենսագործմանը ամբողջ երկրում: Կուլտուրական ռեզյուլցիայի իրականացման համար անհրաժեշտ էր առաջին հերթին երկրում կիրառել ընդհանուր պարտադիր տարրական կրթութեան, վերացնել անգրագիտութեանը, բարձրացնել աշխատավորական լայն մասսաների ինչպես ընդհանուր, այնպիս էլ մասնագիտական-տեխնիկական կրթութեան մակարդակը: Անհրաժեշտ էր ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի համար բանվոր դասակարգից և ընդհանրապես աշխատավորներից պատրաստել մեծաքանակ մասնագիտական և գիտական կադրեր:

Պրակտարական գիտատուրայի՝ Սովետական իշխանութեան պայմաններում անսահման հնարավորութեաններ էին ստեղծվել մարդկության ստեղծած կուլտուրան օգտագործելու ժողովրդի բարորութեան, ազատ կյանքի համար: Վ. Ի. Լենինը խոսելով այդ պայմանների մասին նշում է, որ անցյալում մարդկային հանճարն ստեղծագործում էր միմիայն նրա համար, որպեսզի հասարակութեան մի փոքր մասին տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մեծամասնութեանը զրկի լուսավորութեանից ու զարգացումից: Իսկ այժմ սովետական կարգերում «տեխնիկայի բոլոր հրաշքները, — ասել է Վ. Ի. Լենինը, — կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականութեան»<sup>1</sup>:

Ցարական Ռուսաստանում երիտասարդ սերնդի մոտ 80% -ը դատապարտված էր անգրագիտութեան և հետամնացութեան, սրբ

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 590:

տիրող ճորտատիրական պետական կարգերի գոյութեան հետևանքն էր: Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ այնպիսի երկիր, որտեղ ժողովրդական մասսաները դատապարտված լինեին այնպիսի խավատի ու հետամնացութեան, ինչպիսին Ռուսաստանն է, եվրոպայում չկա: «Եվ ժողովրդական մասսաների, առանձնապես գյուղացիների այս վայրենացածութունը պատահական չէ, այլ անխուսափելի է կալվածատերերի ճնշման պարագայում...»<sup>2</sup>:

Հոկտեմբերյան ռեվոլյուցիան վերացրեց թուրթուր-կալվածատիրական կարգերը, հաստատեց աշխատավորների իշխանություն, որը կուտուրան ու տեխնիկան ի սույնս դրեց աշխատավոր մասսաներին լուսավորելու, կրթութուն տալու և նրանց համար քարեկիցիկ կյանք կառուցելու համար: Այդ ամենը առանձնակի թափ ու ծավալ ստացավ մեր երկրում հատկապես առաջին հնգամակի տարիներին և հետագա հնգամյակներում, հասնելով հսկայական բարձրության:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XVI համագումարը իր որոշումներում առանձնապես անհրաժեշտ համարեց մեծ թափ հաղորդել կուտուրական շինարարության ծավալմանը, դիրեկտիվ տալով ամբողջ երկրում, առանձնապես գյուղում, լայն աշխատանք սկսել կուտուրական ռեվոլյուցիան իրականացնելու ուղղությամբ:

1930 թ. մարտի 26-ին ՍՍՄԿ Կենտգործկոմի Նախագահությունը հատուկ դիմում ուղղեց թուր աշխատավորներին, անհրաժեշտ համարելով կուտուրական շինարարության գործը զարգացնել այնպիսի ռեվոլյուցիոն տեմպերով, ինչպիսի տեմպերով այդ ժամանակ զարգանում էր երկրի ամբողջ տնտեսական շինարարությունը:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը, կուտուրական շինարարության հերթական խնդիրներին նվիրված 1930 թ. հուլիսի 25-ի որոշման մեջ նշում էր, որ «արդի պայմաններում առանձին սրությունք առաջադրվում է ժողովրդական կրթության սխտեմը՝ մասսաների կուտուրական հասունացած պահանջներին, սոցիալիստական շինարարության արագ տեմպերին և կադրերի նախապատրաստման պրոբլեմներին համապատասխանեցնելու խնդիրը: Մասսաների կուտուրական սպասարկման բովանդակ գործին պետք է տրվի տնտեսական շինարարության տեմպերին համապատասխանող նոր թափ ու ծավալ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, երկիր, հատ. 19, էջ 153—154:

<sup>2</sup> «Երկրագալին Հայաստան», № 178, 1930:

Կուլտուրական շինարարության հարցերին վերաբերվող Կոմունիստական պարտիայի ու Սովետական իշխանության բուլսր դիրեկտիվներում ընդգծվում էր այն կարևոր հաճազամանքը, որ կուլտուրայի զարգացումը պետք է համապատասխանի ժողովրդական տնտեսության առաջընթացի արդի պահանջներին, պետք է սերտորեն կապված լինի սոցիալիստական շինարարության գործնական խնդիրների հետ և ուղղված լինի աշխատավորների բարեկեցությանն ու կուլտուրան բարձրացնելու համար:

Մեր ժողովրդի կուլտուրայի բարձրացման մասին Վ. Լ. Լենինի ցուցումների կենսագործումը իր ամբողջ կարևորությամբ պարտիայի առաջ է դրվում առանձնապես առաջին հնդամյակի ժամանակամիջոցում և հետագայում: Առանց բարձր կուլտուրայի անհնարին կլինոթր առաջ շարժել արտադրության նորագույն տեխնիկայի տիրապետման, սոցիալիստական արդյունաբերության և դյուղատնտեսության զարգացման գործը: «Երկրի արմատական սոցիալիստական վերակառուցումը պահանջում է բանվորական մասսաների կուլտուր-քաղաքական մակարդակի ընդհանուր վերելք»<sup>2</sup>—նշվում է պարտիայի XVI համագումարի որոշումներում: Համագումարը անհրաժեշտ է համարում, որ ամբողջ քաղաքական-լուսավորական և կուլտուրական աշխատանքը արհմիություններն ուղղեն առաջին հերթին զարգացնելու բանվորների սոցիալիստական գիտակցական վերաբերմունքը դեպի սոցիալիստական արտադրությունը:

Արդյունաբերության և դյուղատնտեսության հսկայական վերելքը, տնտեսության սոցիալիստական կայունթաձևի հաղթանակի ապահովումը, գործազրկության ու աղքատության ոչնչացումը և շահագործում ծնող պատճառների վերացումը 1930—1934 թթ. իր հերթին հսկայական ազդակ է հանդիսանում արմատապես բարելավելու աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանները, անհրաժեշտ ծաղկման հասցնելու սովետական ժողովուրդների բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան:

Հայաստանի պարտիական և սովետական կազմակերպությունները, դեկավարիելով Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Միութենական կառավարության գիրեկտիվներով, առաջնորդիելով անմահ Լենինի հանձարեղ ցուցումներով, առաջին հնդամյակում և հետագա տարիներին հսկայական աշխատանք կա-

<sup>1</sup> «ՍՄԿԳ-ն... բանաձևերում ու որոշումներում», 111 մաս, էջ 87:

տարեցին կոլտուրական շինարարության բնագավառում, աշխատավորների կենցաղային պայմանները էլ ավելի լավացնելու, արդյունարևության, գյուղատնտեսության, լուսավորության, տնտղապահության և մյուս ասպարեզներում մասնագիտական ու որակյալ կազմեր պատրաստելու ուղղությամբ:

Ժողովրդական լուսավորության բնագավառում առաջին հրնգամյակի ժամանակամիջոցում և երկրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին ծախսվեց հսկայական կապիտալ միջոցներ: Բավական է հիշել որ եթե 1928—1929 ուսումնական տարում Սովետական Հայաստանում դպրոցական շինարարությանը տրամադրվել էր 277,5 հազար ռուբլի, ապա 1932 թ. 1.237,0 հազար ռուբլի, կամ շուրս անգամ ավելի: Ամբողջ առաջին հնգամյակում լուսավորության բնագավառում կատարված ներդրումները կազմել են 11,4 միլիոն ռուբլի<sup>1</sup>: Այդ փաստը հաստատում է այն հոգատարության մասին, որ ցույց է տրվել լուսավորության գործին Հայաստանում:

Ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը ռեսպուբլիկայում ծավալվեց առաջին հնգամյակի սկզբից, իսկ յոթնամյակի ծավալում՝ 1932 թ.: Պայքարելով լիկվիդացնելու կոլտուրական աշխատանքի և տնտեսության պահանջների միջև գոյություն ունեցող որոշ խզումը, Հայաստանի պարտիական և պետական կազմակերպությունները միջոցառումներ են ձեռնարկում կենսագործելու վ. ի. Լենինի այն պահանջը, որ ուսուցման յուրաքանչյուր քայլ պետք է միացնել բանվորների և գյուղացիների աշխատանքի հետ: Իրականացնել պոլիտեխնիկական կրթությունը: Այդ առնչությամբ ժողովրդական կրթության սխտեմում ամրացվում է յոթնամյակի տեսակարար կշիռը, որպես պոլիտեխնիկական կրթության նախապատրաստության նախնական միևնույնում:

1928—1929 ուսումնական տարում ռեսպուբլիկայում եղած 846 տարրական, ոչ յրիվ և միջնակարգ դպրոցների դիմաց 1932—1933 ուսումնական տարում կար 1099 դպրոց: Եթե առաջին հնգամյակի սկզբում Հայաստանում գործում էր 62 ոչ լրիվ միջնակարգ դպրոց, ապա 1932—1933 ուսումնական տարում դրանց թիվը հասնում էր 302-ի: Չկրճատելով տարրական դպրոցների ցանցը, ընդհակառակը, այն ավելացնելով տասը նոր դպրոցներով, Հայաս-

<sup>1</sup> Տե՛ս «Соцстроительство АрмССР», стр. 21

ատանի կառավարությունը շեշտը դնում է 7-ամյա կրթական դպրոցների ցանցի լայնացման վրա:

Ռեուպուբլիկայի բոլոր դպրոցներում սովորողների թիվը հընգամյակի սկզբում 86.225-ից հնգամյակի վերջում հասնում է մոտ 179,2 հազարի<sup>1</sup>: Այդ թվում քաղաքներում սովորողների քանակը մոտ 24,2 հազարից հասնում է 34,7 հազարի, իսկ մնացած աշակերտությունը սովորում էր գյուղական վայրերում:

Դպրոցական ցանցի այդպիսի աճը նոր դպրոցական շենքերի շինարարության հսկայական պահանջ էր առաջացնում: Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում դպրոցական շինարարություն համարյա թե չէր կատարվել: Սովետական կարգերի հաղթանակից անմիջապես հետո մեծ ուշադրություն է դարձվում դպրոցական շենքերի կառուցման վրա, որը, սակայն, հսկայական ծախս է ստանում հնգամյակիների տարիներին: Միայն երկրորդ հնգամյակի առաջին տարիներին ավարտվում և շահագործման է հանձնվում 119 դպրոցական շենք 728 դասասենյակներով: Բացի այդ, 45 դպրոց կառուցվում է գյուղական սովետների և աղաքանակչության միջոցներով: 1934 թվականին ավարտվում է 116 կիսավար դպրոց և սկսվում է 60 նոր դպրոցների կառուցումը:

Մեծ դարգացում է ունենում նախադպրոցական ցանցը: Առաջին հնգամյակի սկզբում նախադպրոցական ցանցում ընդգրկված էր 4—6 տարեկան հասակ ունեցող երեխաների մոտ 12,2%-ը, իսկ 1932—1933 ուսումնական տարում 1692 մանկապարտեզներում և մանկահրապարակներում ընդգրկվում է այդ հասակի երեխաների 54,5%-ը: 1934—1935 ուսումնական տարում բոլոր ստացիոնար և սեզոնային նախադպրոցական ցանցում արդեն ընդգրկված էր երեխաների 75,7%-ը: Այդպիսի աճը բացատրվում էր նաև նրանով, որ կոլտնտեսությունները մեծ ուշադրություն էին դարձնում կոլտնտեսական աշխատանքում աշխատող կանանց երեխաներին մանկահրապարակներում և մյուս հաստատություններում տեղավորելու և աշխատող ձեռքերին երեխաների խնամքից, մանավանդ ամառային սեզոնում, թեթևացնելու հարցի վրա:

Ժողովրդական լուսավորության բնադավառում ձեռք բերված նվաճումների թվին էին պատկանում նաև ռեսպուբլիկայի ազգային փոքրամասնությունների մեջ ծավալված կուլտուր-լուսավորական աշխատանքների գծով եղած հաջողությունները:

<sup>1</sup> § 6 'a .Соцстроительство АрмССР, стр. 103—109.

Կենսագործելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները, Հայաստանի Կոմպարտիան և կառավարությունը անհրաժեշտ հողատարություն են ցուցաբերում ռեսպուբլիկայի ազգային փոքրամասնությունների՝ ուսաների, ազրբեջանական, քուրդ և մյուս աշխատավորների շրջանում կատարվելիք կուլտուրական շիջարարության հարցերին:

Ազգային փոքրամասնությունների համար դպրոցական շինարարությունը առանձնապես ծավալվում է առաջին հնգամյակի սկզբներին: Քրդական այբուբենի մշակումը և հրատարակումը հնարավորություն է տալիս ունենալ մանկավարժական տեխնիկում, որը զգալի դեր է կատարում քուրդ կազմերի պատրաստման ուղղությամբ ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի համար:

Առաջին հնգամյակի սկզբում գոյություն ունեցող 11 քրդական դպրոցի փոխարեն 1933—1934 ուսումնական տարում դործում էին 38-ը, իսկ աշակերտների թիվը 400-ից հասնում է մոտ 2100-ի:

1927—1928 ուսումնական տարում ազրբեջանական լեզվով գործող 98 դպրոցների դիմաց 1933—1934 ուսումնական տարում կար 215 դպրոց, սովորողների թիվը 1928 թ. համեմատությամբ ավելանում է 3,75 անգամ<sup>1</sup>:

Ազրբեջանական և քրդական լեզուներով գործող դպրոցների մանկավարժական կազմերի պակասը գլխավորապես լրացվում էր այդ նույն լեզուներով գործող տեխնիկումների միջոցով, որոնց բաց լնողած կազմերի թիվը 1930—1934 թթ. պրոցրեսիվ կերպով աճում է: Բացի այդ, որոշ քանակի կազմեր էին պատրաստվում Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում և մեր ռեսպուբլիկայի մյուս ուսումնական հաստատություններում:

Հսկայական ծավալ էր ստացել կուլտուր-լուսավորական և քաղաքատիրաւիչական աշխատանքը ազգային փոքրամասնությունների մեջ: Կինոն, ռադիոն, ակումբային աշխատանքը, մայրենի լեզվով գրականության հրատարակումը, պարբերական մամուլը և այլն ազրբեջանցի, քուրդ, ուսու և մյուս ազգերի աշխատավորների մեջ կարևոր դեր էին խաղում նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում: Կուլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը և հանրային աշխատանքի սկզբունքի հաղթանակը մեծապես փոխում են այդ ազգությունների ապրելակերպը, կենցաղը և այլն: Ազրբեջանական, քրդական և մյուս ժողովուրդները ամուր

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 2270, թ. 1—56:

կերպով ոտք են դնում սոցիալիստական տնտեսակարգի ուղին, ակտիվորեն մասնակցում սոցիալիզմի կառուցման գործին:

Կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման հիմնական նախադրյալներից մեկը աշխատավորների անգրագիտության վերացումն էր: Պարտիան և Սովետական իշխանությունը առաջին հրնգամյակի տարիներին մեծագույն եռանդով պայքար են ծավալում անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու համար: Այդ ուղղությամբ 1930—1934 թվականներին խոշոր աշխատանք է կատարվում նաև Հայաստանում: Հայաստանի սլարտիական, սկտական, սլրոֆիտիսեական, կոմերիտական և մյուս հասարակական կազմակերպությունների կողմից ձեռնարկված մասսոյական կազմակերպական աշխատանքի շնորհիվ 1926 թ. համեմատությունում 1931 թ. Հայաստանի ազգաբնակչության գրագիտության մակարդակը քարձրանում է 14,7% -ով, այսպիսով գրագիտների քանակը հասնելով 50,4 տոկոսի: Հետագա տարիներին այդ ուղղությունում կատարվող հսկայական աշխատանքի հետևանքով 1933 թ. ազգաբնակչության մեջ գրագիտության տոկոսը կազմում էր 81,6% , իսկ 1934 թ. այն հասնում է 95 տոկոսի:

Այդպիսով, Հայաստանի սլարտիական, սովետական և մյուս կազմակերպությունների առջև դրված խնդիրը՝ մինչև 1935 թ. վերջը ռեսպուբլիկայում լրիվ շափով վերացնել անգրագիտությունը՝ մոտենում է իր ավարտմանը:

Ինչպես վերևում նշել ենք, ժողովրդական տնտեսության արագ վերելքի հետ միասին իր ամբողջ կարևորությունում առաջ էր քաշվում մասնագիտական նոր կադրերի պատրաստման հարցը: Առաջին հնգամյա սլանով նախագծված ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում տեխնիկական հեղաշրջման իրականացումը անհնարին կլիներ կատարել առանց նորագույն տեխնիկական սիրապետած անհրաժեշտ մասնագիտական կադրերի պատրաստման: Հետևաբար նոր կադրերի պատրաստումը և երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակությունը դրվում են սլարտիայի առաջ ռթղես կարևորագույն խնդիրներ: Հայաստանում այդ տարիներին բացվում են մի շարք նոր քարձրագույն ուսումնական հաստատություններ, տեխնիկումներ, բանֆակներ և մասնագիտական այլ հաստատություններ:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 2272, թ. 18:

1930 թ. Հայաստանի սկետտկան Լամալսարանի բազայի վրա կազմակերպվում են առանձին մասնագիտական մի շարք ուսումնական հաստատություններ, այդ թվում Երևանի բժշկական, Գյուղատնտեսական, Շինարարական, (որը հետագայում վերանվանվեց Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական), Մանկավարժական, Ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտներ: 1932—1933 ուսումնական տարեմիջին Հայաստանում բարձրագույն դպրոցների թիվը հասնում էր 9-ի, իսկ տեխնիկումների և միջին մասնագիտական որակի կադրեր պատրաստող այլ դպրոցների քանակը հասնում էր 65-ի: Բացի այդ, կար 11 բանվորական ֆակուլտետ և 30-ի շուրջ ֆարգործուս:

Եթե առաջին հնդամյակի սկզբին բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին 1266 մարդ, իսկ տեխնիկումներում՝ 1852 մարդ, ապա 1932—1933 ուս. տարում բուհերում սովորում էին 3526, իսկ տեխնիկումներում՝ ավելի քան 7500 ուսանող: Բանֆակներում և ֆարգործուսներում սովորողների թիվը հասնում էր 6000-ի<sup>1</sup>: Ամեն տարի ռեսպուբլիկայի բուհերը և մյուս դպրոցները արդյունաբերության, գյուղատնտեսության, ժողովրդական լուսավորության և այլ բնագավառների համար տալիս էին հարյուրավոր մասնագետներ: Բացի ռեսպուբլիկայում պատրաստվող կադրերից, զդարի քանակով բարձրորակ մասնագետներ էին պատրաստվում միութենական կենտրոններում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Ռբրլիտիում և այլ քաղաքներում, որոնք սիստեմատիկորեն լրացնում էին ռեսպուբլիկայի մասնագիտական կադրերի պակասը: 1930—1934 թթ. Հայկական ՍՍՌ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսությանը ավելե են 1528 պանազան մասնագետ շրջանավարտներ, այդ թվում ճարտարաբաններ—246, գյուղատնտեսներ—213, տնտեսագետներ—152, բժիշկներ—285, անասնաբույժներ—247, մանկավարժներ—305:

Առաջին հնդամյակի վերջում ռեսպուբլիկայի տեխնիկումները և միջնակարգ կրթության մյուս ուսումնական հաստատությունները արդյունաբերության, արանսպորտի, կապի և շինարարության համար պատրաստել են միջին որակի 637 մասնագետ, իսկ սոցիալիս-

<sup>1</sup> ՀԽՍՀ Էտապարուբյան հաշվետվության նյութեր Սովետների V III համագումարին, էջ 118:

տական գյուղատնտեսությունը նույն ժամանակամիջոցում ստացել է միջին որակի ավելի քան 650 մասնազեռ:

Հողագործության ժողովրդական կոմիսարիատի գծով դրժող ուսումնական հաստատությունները, կոլտնտեսային-սովխոզային դպրոցները մինչև 1933 թ. գյուղատնտեսությանը ավել են մոտ 2300 բարձր և միջին որակի աշխատողներ: Զգալի էր մասսայական կադրերի պատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքը: Առաջին հնգամյակի տարիներին 45,8 հազար մարդ են պատրաստվել դաշտավարության, անասնաբուժության և այդեզործության համար, ինչպես նաև մեխանիկներ, արակտորիստներ, մեքենավարներ, կոլտնտեսության նախագահներ, հաշվային և այլ բնագավառների աշխատողներ:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ էլ ավելի ծավալուն դործ կատարվեց երկրորդ հնգամյակի ժամանակաշրջանում: Այդ տարիներին բանվորների, կոլտնտեսականների և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում աշխատողների տեխնիկա-կուլտուրական մակարդակը բարձրացնելու բնագավառում հսկայական միջոցառումներ իրականացվեցին: Ժողովրդական տնտեսությունը ստացավ մեծաքանակ ինժեներա-տեխնիկական կադրեր, բարձրորակ տնտեսավարներ և այլ աշխատողներ:

Առաջին հնգամյակում և երկրորդ հնգամյակի առաջին տարիներին նոր, ավելի բարձր վերելք ապրեցին Սովետական Հայաստանի գրականությունն ու արվեստը: Ռեսպուբլիկայի գրականությունը զարգանում էր սոցիալիստական ռեալիզմը ավելի ու ավելի մեծ շահով դրսևորելու, սոցիալիստական վերակառուցման համար մշտնջող պայքարը պատկերավորելու ուղիով: Սովետական Հայաստանի գրականության ֆրոնտի աշխատողները սկսում են վերակառուցել իրենց թեմատիկան, այն համապատասխանեցնելով սոցիալիզմի կառուցման նոր խնդիրներին:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ին «Գրական-դեզարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը հանդիսացավ ամբողջ սովետական գրականության, այդ թվում նաև Սովետական Հայաստանի գրականության զարգացման նոր էտապի ծրագիրը: Որոշման մեջ նշվում էր սովետական գրականության և արվեստի հետագա զարգացման ուղին: Այդ որոշման կենսագործման հիման վրա սովետահայ գրողների երկերում ավելի ու ավելի մեծ շահով են սկսում դրսևորել սոցիալիստական արդյունաբերությունը, կոլտնտեսային դյուղը, արտագրության առաջա-

վորները, սովետական մարդիկ: Այդպիսի թեմաներով հանդես են գալիս Ստ. Զորյանը՝ «Սպիտակ քաղաք» վեպով, Ն. Չարենցը «Համայնական գաշտերի սերմնացանները» և այլ երկերով, Արսպին՝ «Վուանի շողերով», «Զրվեժի ցուլքում» վիպակներով, Ն. Զորյանը՝ «Ռուշանի քարափը» պոեմայով, Գ. Սարյանը՝ «Ծրեք երգ» և այլ բանաստեղծություններով: Այդ առարկաներին սկսում են աչքի ընկնել մի շարք նոր աճող շնորհալի երիտասարդ գրողներ, որոնք արժեքավոր գործեր են տալիս նվիրված սովետական մարդու անձնուպաց աշխատանքին ու նրա պայքարին: Սովետական գրողների գործերում հետըզհետե ավելի ու ավելի լավ և մեծ չափով են սլատկերվում սովետական հայրենասիրության, սովետական ժողովուրդների բարեկամության և այլ թեմաներ:

1930—1934 թթ. ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի դրականության ուղին սովետական կուլտուրայի ու գրականության հետագա զարգացման և ծաղկման համար պարտիայի կողմից կանխանշված՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական ուղին էր:

1934 թ. օգոստոսին տեղի ունեցավ Հայաստանի Սովետական գրողների առաջին համագումարը, որը քննարկեց և ուրվագծեց սովետահայ գրականության հետագա զարգացման ուղիները: Մոսկվայում նույն ամսում գումարվեց սովետական գրողների Համամիութենական առաջին համագումարը, որի սրժումները կարեվորագույն նշանակություն ունեցան գրականության հետագա զարգացման համար:

1930—1934 թթ. ռեսպուբլիկայում զգալի թափ է ստանում հրատարակության գործը: 1934 թ. սպարդված գրականությունը իր ծավալով մոտ ութ անգամ գերազանցում էր 1928 թ. հրատարակված գրականության ծավալը: Այդ տարիներին հայերեն լեզվով լույս են տեսնում Մարրաի, Էնդելսի, Լենինի աշխատությունները: Զգալի ծավալ է ստանում զեղարվեստական գրականության հրատարակությունը: Հրատարակվում են ռուս, հայ, և համաշխարհային կլասիկ գրականության րազմաթիվ երկեր, ինչպես, օրինակ, ռուս գրականության կլասիկներ Պուշկինի, Տոլստոյի, Եչեգրինի, Գոստոևսկու, Տուրգենևի, Գոգոլի, Զեխովի, Գորկու և արևմտա-եվրոպական կլասիկների՝ Շեքսպիրի, Գյոթեի, Բալզակի, Ստենդալի և ուրիշների գործերը: Այդ նույն ժամանակում լույս են տեսնում Շիրվանզադեի գեղարվեստական երկերի լիակատար ժողովածուն՝ ութ հատորով, Հակոբ Պարոնյանի երկերը՝ չորս հատորով, Գ. Սուն-

դուկյանի, Մերենյի, Բումանյանի և ուրիշների գործերը: 1930—1934 թթ. Հայաստանի Հրատարակում է սովետական գրողներից Շոլիխովի «Հերկած խոսքան», Ֆադեևի «Ձախշախում» և շատ ուրիշ վեպեր:

Գեղարվեստական գրականության հրատարակության ծավալի մասին պատկերացում են տալիս հետևյալ տվյալները. եթե 1928 թ. հրատարակվել է 53 անուն գործ 194 տպագրական մամուլ ծավալով, ապա 1934 թ. հրատարակվել է 183 անուն 411 տպագրական մամուլ ծավալով: 1928—1934 թթ. ժամանակամիջոցում գեղարվեստական հրատարակությունների քանակը կազմում է 571 անուն 3426 տպագրական մամուլ ծավալով: Միայն 1934 թ. գեղարվեստական աշխատությունների տիրաժը կազմել է 800 հազար:

Առանձնապես աճում է մանկա-սպասանեկական գրականությունը: Զգալի էին նվաճումները պարբերական մամուլի հրատարակության դժով: 1934 թ. սեպտեմբրիկայում լույս էր տեսնում 50 թերթի և 20 ամսագիր:

Աննախընթաց հաջողություններ էին ձեռք բերվել կերպարվեստի և ճարտարապետության բնագավառում: Բարձրացել էր արվեստագետների գործերի իդեալական-գեղարվեստական բովանդակությունը, աճել էր նրանց ստեղծագործական վարպետությունը: Արվեստագետների հին կադրերն իրենց ստեղծագործություններում սկսում են ավելի մեծ չափով դրսևորել սոցիալիստական շինարարության թեման: Մեծ թափով էր զարգանում սովետահայ երաժշտությունը: Այդ ժամանակաշրջանում ստեղծվում են մի շարք օպերաներ և սիմֆոնիկ գործեր:

1930—1934 թթ. ղգալի վերելք ապրեցին թատրոնը, կինոն և ռադիոն: Աճեց Հայաստանի թատրոնի ստեղծագործական կարողությունը, բարձրացավ բեմադրությունների որակը, ավելացավ թատրոնների թիվը և հանդիսատեսների քանակը: Սունդուկյանի անվան Պետական թատրոնի գործունեությունն այդ տարիներին ապացույց է այն անընդհատ վերելքի, որ ունեցել է թատերական արվեստը Հայաստանում: Պետական թատրոնը իր ռեպերտուրայի մեջ ունեցել է բազմաթիվ արժեքավոր, կլասիկ բեմադրություններ: Այսպես, օրինակ, այդ տարիներին բեմադրվել են Մ. Գորկու «Հատակում», «Նոր Բուլիչև», «Դոստոևսկու և ուրիշները» հռչակավոր պիեսները, Շիրվանյանի «Պատվի համար», Սունդուկյանի՝ «Պեպո»-ն և այլն: Թատրոնը իր գոյության տասնամյակին լավ և բեղմնավոր աշխատանքի համար պարգևատրվեց «Աշխատանքային Կարմիր

Դրոշի» շքանշանով: Զգալի առաջադիմություն է ցուցաբերում 1928—1929 թթ. կազմակերպված Լենինականի պետական թատրոնը: Սովետական Հայաստանի կուլտուրայի խոշոր նվաճումներից մեկը հանդիսացավ ռեսպուբլիկայի օպերայի և բալետի պետական թատրոնի հիմնադրումը, որը տեղի ունեցավ 1933 թվականին: Այդ տարիվ Անգրֆեդերացիայի Գործադիր Կոմիտեի Նախագահության ողջույնի հեռագրում ասված էր, որ Երևանի պետական օպերայի և բալետի թատրոնի հիմնադրումը նոր փառավոր հաղթանակ է երկրի կուլտուրական շինարարության ասպարեկում:

Առաջին հնգամյակի սկզբին Հայաստանում կար 23 ստացիոնար կինոթատրոն, իսկ հնգամյակի վերջում զբաղեցրանց թիվը հասնում է 66-ի 1934 թ. Հայաստանում արգեն հաշվվում էր 110 ստացիոնար և շրջիկ կինոթատրոն: Այդ տարիներին հիմք է դրվում երկու հրնչուն կինոթատրոնների՝ Երևանում և Լենինականում: Առաջին հրնչամյակի տարիներին կինոնկարների դիտումը ընդգրկում է բազմաթիվ աշխատավորներ՝ մոտ 4,2 միլիոն մարդ: Միայն 1934 թ. կինոդիտողների թիվը կազմել էր 1.130 հազար մարդ: Մինչև առաջին հնգամյակը Հայկինոն նկարահանել էր չորս գեղարվեստական նկար, իսկ առաջին հնգամյակի ընթացքում՝ 15: 1933 թ. նկարահանվեց «Երկու պիշեր» պատմա-ռեուլյուցիոն գեղարվեստական նկարը, 1934 թ. «Գիքոր» կենցաղային նկարը, ինչպես նաև «Նամուս», «Զամանլու», «Անուշ» և այլ նկարներ:

Ռեսպուբլիկայի ռադիոֆիկացիան գլխավորապես ծավալվում է առաջին հնգամյակի սկզբից: 1929 թ. գոյություն ունեցող 220 կետից 1934 թ. այն հասնում է 13,364 կետի: Այդ տարիներին էլ սկսվում է գյուղի ռադիոֆիկացումը, որի կարևոր նշանակությունը գյուղի կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում կասկածից զուրս է:

Երկրի էկոնոմիկայի բոլոր բնագավառներում տեղի ունեցող սոցիալիստական շինարարության բուռն վերելքը, բարձրորակ կադրերի պատրաստումը անհրաժեշտ պայմաններ են ստեղծում գիտահետազոտական աշխատանքների զարգացման համար: 1930—1934 թթ. ռեսպուբլիկայում ընդարձակվում է գիտահետազոտական հիմնարկների ցանցը: 1934 թ. գործող գիտահետազոտական հիմնարկների թիվը հասնում էր 40-ի: Այդ հիմնարկների առաջ խնդիր էր դրվում զբաղվել ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման գործին նպաստող ակտուալ հարցերով: 1930 թ. կազմակերպվում է Կառուցումների ինստիտուտը, որը զբաղվում էր տեղական շինանյութերի ուսումնասիրման և շինարարության մեջ

նրանց օգտագործման հարցերով, 1931 թ. հիմնվում է Կիրառական-հանրաբանական ինստիտուտը, 1930 թ. էջմիածնում սկսում է աշխատել բամբակագործական ղոնալ կայանը, իսկ 1931 թ. ռեսպուբլիկական պտղաբանչարաբուժական ղոնալ կայանը: Բամբակենու ապրտեխնիկայի, նրա տեսակների ուսումնասիրման հարցերը հանդիսանում էին բամբակագործական ղոնալ կայանի աշխատանքի զլխավոր առանցքը: Կարևոր աշխատանք էր կատարում պտղաբանչարաբուժական ղոնալ կայանը, որը ղրաղվում էր զանազան պտուղների սելեկցիայի, տեսակների հետազոտության և նրանց ազրոտեխնիկայի հարցերով:

Հայաստանի Կուլտուրայի և պատմության ինստիտուտը ղրաղվում էր հայ ժողովրդի կուլտուրայի հարուստ պատմության ուսումնասիրությանը: Զգալի աշխատանք էր կատարում Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, որը թարգմանում և հրատարակում էր մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները: 1934 թ. կազմակերպվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Անղըր-կովկասյան Ֆիլիալի հայկական բաժանմունքը, որը շուտով զանում է Միոթենական ակադեմիայի Ֆիլիալը և ծավալուն աշխատանք է սկսում 1935 թվականից:

Ռեսպուբլիկայում գիտահետազոտական աշխատանքով էին ղրաղվում նաև Կուրորտոլոգիայի և Ֆիզիո-տերապիայի ինստիտուտը, Պետական համալսարանը, Մանկավարժական, Անասնաբուժական և մի շարք այլ բարձրագույն ուսումնական հիմնարկներ:

1930—1934 թթ. ղղալիորեն ընդարձակվում է քաղ. լուս. հիմնարկների ցանցը: Եթև 1929 թ. ակումքների թիվը հասնում էր 39-ի, խրճիթ-ընթերցարաններին՝ 163-ի և կարմիր անկյուններինը՝ 147-ի, աղղա 1933 թ. ռեսպուբլիկայում կար 90 ակումբ, 317 խրճիթ-ընթերցարան, մոտ 250 կարմիր անկյուն: Գյուղական շատ խրճիթ-ընթերցարաններ վեր են ածվում կոլտնտեսային ակումբների, բարձրանում է նրանց ղերը և փոխվում է աշխատանքի բովանդակությունը: 1934 թ. աչղալիսի ակումբների քանակը հասնում էր 162-ի<sup>1</sup>:

Ժողովրդական տնտեսության ղարգաջման և աշխատավորների նյութական պայմանների բարելավման հետ միասին ու նրանց պահանջներին համաձայն Հայաստանում առաջին հնղամյակում և

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, ղ. 2272, թ. 23:

երկրորդ հանդամյակի առաջին տարիներին սլանավորվում և բուռն զարգացում է ապրում առողջապահությունը:

Առողջապահության զլխավոր խնդիրը երկրորդ հնգամյակում հանդիսանում էր հիմնականում լիկլիդացնել համաճարակ հիվանդությունները, կազմակերպված պայքար մղել սրտկասեցնելու ընդհանուր հիվանդությունները, բարձրացնելու բուժ-սանիտարական հիմնարկների քանակական ու որակական աճը և դրանք վերակառուցել տեխնիկայես, հագեցնելով անհրաժեշտ սարքավորումով: Մինևույն ժամանակ այդ հիմնարկների առաջ խնդիր է դրվում արդյունաբերության մեջ կազմակերպված և կազմակերպվելիք առողջապահական կայանների միջոցով սլայքարիկ նվազեցնելու դժբախտ զեպքերը արտադրության մեջ, ապահովելու առողջապահական կանոնները Շխտում, դազդահի վրա և այլն:

Այնուհետև, առողջապահության հիմնարկների ու կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն էր է՛լ ավելի ծավալել սլայքարը ճահճատեղ (մալարիա) հիվանդության դեմ որպես սոցիալական շարիքի: Պարտիան ու կառավարությունը միջոցներ շէին խնայում Հայաստանի ազգաբնակչության միջից վերացնելու այդ հիվանդությունը: 1930—1934 թթ. զգալիորեն ավելանում են ճահճատեղ հիվանդության դեմ սլայքարող բուժ. հիմնարկների և նրանցում աշխատողների քանակը: Բացի այդ, տվյալ հիվանդության դեմ մղվող սլայքարին օգնում է նաև ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում գոյություն ունեցող ճահճների շորացումը:

Մոր և մանկան ու երիտասարդության առողջության սլաշտպանության դործը մեր երկրում ծավալվում է միայն Սովետական իշխանության օրով: Սովետական առողջապահության հաստատությունները ոչ միայն հսկայական աշխատանք են կատարում երևխանների ու մանուկների բուժման ուղղությամբ, այլև մեծ միջոցառումներ են դործադրում կանխելու այդ հիվանդությունները, սլաշտպանելու նրանց առողջությունը:

Հսկայական ուշադրություն է նվիրվում բարձր և միջին բուժ. կադրերի պատրաստման գործին: Բավական է միայն նշել, որ 1929 թ. ռեսպուբլիկայի բժիշկների քանակը 282-ից 1934 թ. հասնում է 527-ի: Հնգամյակի տարիներին լավ հիմքերի վրա է դրվում մանկամսուրային սպասարկման գործը: 1934 թվականին ռեսպուբլիկայի բոլոր այն ձեռնարկություններում, որտեղ շատ թեքիլ քանակով կանայք էին աշխատում, կազմակերպված էին մանկամսուրներ: Ռեսպուբլիկայի շատ կոլտնտեսություններում, մանա-

վանդ դաշտային աշխատանքների ժամանակամիջոցներում, դործում էին մանկամսուրներ և 1934 թ. նրանցում հղած տեղերի քանակը հասնում էր 14 հազարի, իսկ 1935 թ. նախատեսվում էր այն հասցնել 40 հազարի<sup>1</sup>։

Առաջին հնգամյակի տարիներին առողջապահության շինարարության բնագավառում հատկացվում է 110 միլիոն ռուբլի, իսկ երկրորդ հնգամյակի տարիներին այն համարյա թև քառապատկվում է։ Հատկացված գումարի մի զգալի մասը ծախսվում է կապիտալ շինարարության՝ հիվանդանոցների կառուցման վրա։ Ստացիոնար բուժհիմնարկների քանակը 1928 թ. համեմատությամբ 1932 թ. ավելանում է 11-ով։ Կարգավորվում է հիվանդանոցային դործը ռեսպուբլիկայում, ավելանում են կուրորտները և հանգստյան տները։ Առաջին հնգամյակի տարիներին հազարավոր բանվորներ բուժվում են Հայաստանի կուրորտներում և հանգստյան տներում։ Այս բոլորը միասին մեծապես բարելավում էին ռեսպուբլիկայի աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանները։

\* \* \*

Այսպիսով, 1930—1935 թթ. ժամանակաշրջանը Սովետական Միության, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ-ի համար պատմական հաղթանակների ժամանակաշրջան էր արդյունարերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, գիտության բնագավառում, աշխատավորների նյութական գրգռության և կենցաղային պայմանների բարելավման ատպարեզում։ Այդ ժամանակաշրջանում Կոմունիստական պարտիային, Սովետական իշխանությանը և բանվոր դասակարգին հաջողվում է արմատապես լուծելու պրոլետարիատի գիկատատուրայի ամենագլխարին խնդիրը՝ բազմամիլիոն մանր գյուղացիական արտադրությունը փոխադրելու հանրային, խոշոր տնտեսության արտադրության ուղու վրա։

Առաջին հնգամյա պլանի իրականացումը և երկրորդ հնգամյակի առաջին երկու-երեք տարիների պլանների կատարումն ու գերակատարումը մեր երկիրը դարձնում են առաջավոր ինդուստրիայի և սոցիալիստական գյուղատնտեսության երկիր։ Երկրի էկոնոմիկայի հիմնական բնագավառներում վերջնականապես «ով-ում»-ի հարցը լուծվում է հօգուտ սոցիալիզմի։

<sup>1</sup> ՏԼ՝ Հայկական ՍՍՌ ՊԿՍ, ֆ. 40/113, գ. 2215, թ. 1—23։

Երկրորդ հնգամյակի տարիներին Սովետական Միության բան-  
վոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և սովետական  
ինտելիգենցիան նոր, առավել բարձր առաջընթաց են կատարում  
սոցիալիստական էկոնոմիկայի բոլոր բնադավաճներում: Ժողովրդ-  
դական լայն մասսաները, բոլշևիկների պարտիայի Կենտրոնական  
Կոմիտեի ղեկավարությամբ հերոսական աշխատանք են կատարում  
ՍՍՄՄ-ում սոցիալիստական էկոնոմիկայի կառուցումն ավարտելու  
և սոցիալիստական շինարարության գործում նորանոր հաղթանակ-  
ների հասնելու համար:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ինստիտուտի կողմից

Գ լ ու խ չ ո Ր Բ Ր Դ—Սովետական Հայաստանը երկրի սոցիալիստական. ինդուստրացիան ժամանակաշրջանում (1926—1929) . . .	7—88
1. Սոցիալիստական ինդուստրացիան և դյուղատնտեսության վերակառուցման առաջին քայլերը Հայաստանում . . . . .	7—43
2. Սովետական Հայաստանի առաջին հնգամյա պլանի ընդունումը . . . . .	43—62
3. Աշխատավորության նյութական դրության բարելավումը և կուլտուրական շինարարությունը . . . . .	62—88
Գ լ ու խ ճ ի ն գ ե Ր Ո Ր Դ—Սովետական Հայաստանը գյուղատնտեսության կոլեկտիվացումը հիմնականում ավարտման ժամանակաշրջանում (1930—1935) . . . . .	89—218
1. Պայքար դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար . . . . .	89—109
2. Ամրոց ճակատով կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի ժալալուն հարձակումը: Պայքար առաջին հնգամյակի պլանի կատարման համար . . . . .	109—159
3. Առաջին հնգամյակի արդյունքները . . . . .	150—204
4. Կուլտուրայի և դիտուրթյան զարգացումը 1930—1934 թթ. 204—218	

ՎԱՍՊՊՈՒՐ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ,  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՄԲԱՏԻ ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՐՎԱԳԻՄԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Պատ. խմբագիրն էր

Հ. ԷԼՆԻՔԻԿՅԱՆ և Ե. ԽԱԼԵՅԱՆ

Հրատ. խմբագիր Ա. ԽԱՀԱՍՐՅԱՆ

Տեխ. խմբագիր Մ. ԿԱՓԷԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ Ա. ԱՂԱՆՅԱՆ

ՎՋ 01683: Հրատ. 1461: Տիրած 2000: Պատվեր 326: ԽՀԽ 326: Հանձնված է  
տրտագրության 12/Ն111 1957 թ.: Ստորագրված է տպագրության 4 11 1958 թ.:

Հրատ. 11,5 մամ., տպագր. 13<sup>2</sup> 1/2 մամ., թուղթ 60 x 92<sup>1</sup>/<sub>16</sub>

Գինը կազմում է 8 ու. 40 կ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ. տպարան, Երևան, Արուվյան 124:







[844]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034251

ЦЕНА

А 34251

БИБЛ. 80. 404.